



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՇՈՏ ՀԱՅՐՈՒՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ  
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ  
1918 ԹՎԱԿԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱՎՉՈՒԹՅՈՒՆ  
2013

ՀՏԴ 941 (479.25)  
ԳՄԴ 63.3 (2Հ)  
Հ 300

**Եվիրում եմ սիրելի քույրիկիս՝  
ԱՍՏՂԻԿԻ պայծառ հիշատակին**

**Հայրունի Աշոտ**

Հ 300 Հայկական խնդիրը Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ 1918 թվականին / Աշոտ Հայրունի.– Եր., ԵՊՀ, 2013, 192 էջ:

Աշխատությունում ամբողջականորեն լուսաբանվում են 1918 թ-ին հայկական խնդրի հանդեպ կայսերական Գերմանիայի ցուցաբերած դիրքորոշումն ու իրականացրած քաղաքականությունը: Հայ-գերմանական և գերմանա-թուրքական փոխհարաբերությունների համատեքստում ներկայացվում են հարցի առնչությամբ տեղի ունեցած զարգացումներն ու դրանց պատճառահետևանքային կապերը: Ուսումնասիրության միջոցով առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվում բազմաթիվ արժեքավոր սկզբնաղբյուրներ: Աշխատությունը նախատեսված է Առաջին աշխարհամարտի, Հայաստանի առաջին հանրապետության, հայ-գերմանական փոխհարաբերությունների պատմությամբ զբաղվող մասնագետների, մտավորականության, ուսանողության և ընթերցող լայն հասարակայնության համար:

ՀՏԴ 941 (479.25)  
ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 978-5-8084-1728-1

© Աշոտ Հայրունի, 2013  
© ԵՊՀ հրատարակչություն

**ՄՈՒՏՔ**

Առաջին աշխարհամարտի տարիներին հայկական խնդրի առնչությամբ կայսերական Գերմանիայի վարած քաղաքականության լուսաբանումն, անկասկած, ունի ոչ միայն գիտական, այլև քաղաքական նշանակություն և արդիական հնչեղություն, քանի որ էապես կարող է նպաստել Հայոց ցեղասպանության հարցում Գերմանիայի դերակատարման, համապատասխանատվության և մեղսակցության վերաբերյալ պատմագրության մեջ բազմիցս ի հայտ եկած՝ հաճախ միանգամայն իրարամերժ տեսակետների հստակեցմանն ու սրբագրմանը: Ավելին, հարցի համակողմանի քննությունը հնարավորություն է ընձեռում նաև պարզաբանել գերմանա-թուրքական ռազմաքաղաքական և դիվանագիտական հարաբերությունների պատմության՝ այդ կարևոր ժամանակահատվածի առայսօր չլուսաբանված էջերը և, ըստ այդմ, լույս սփռել ինչպես Հայոց ցեղասպանությանն առնչվող՝ բազմաթիվ հետկուլիսային իրողությունների, այնպես էլ գերմանացի և թուրք առանձին բարձրաստիճան գործիչների՝ հայկական խնդրի շուրջ ցուցաբերած դիրքորոշման վերաբերյալ:

Սույն մենագրությունը բովանդակում է աշխարհամարտի վերջին տարում 1918 թվականին հայկական խնդրի հանդեպ Գերմանիայի վարած արտաքին քաղաքականության ամբողջական քննական լուսաբանումը, երբ Հայոց ցեղասպանությունը թևակոխում էր իր երրորդ փուլը: Այդ ժամանակահատվածը բնութագրվում էր Կովկասում և տարածաշրջանում կատարվող բախտորոշ իրադարձություններով, Հայաստանի Հանրապետության ստեղծմամբ և այն անօրինակ մաքառումներով, որոնք հայ ժողովրդին և նրա նորաստեղծ պետականությանն ուղեկցեցին ողջ տարվա ընթացքում: Ըստ այդմ, բնականաբար, հարցը լուսաբանվում է ինչպես գերմանա-թուրքական, այնպես էլ հայ-գերմանական հարաբերությունների համատեքստում, ինչը հնարավորություն է ընձեռում առավել հանգամանալից իրազեկվել հայոց պատմության՝ այդ բարդ և պատասխանատու շրջանում տեղի ունեցած իրադարձություններին, դրանց պատճառահետևանքային կապերին և ազդեցություններին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության մի շարք բնութագրական բաղադրիչների, որոնց

իմացությունը կարող է նպաստել նաև հետագա տարիներին հանրապետության վարած արտաքին քաղաքականությունն առավել որոշակի և ընկալելի դարձնելու համար:

Աշխատությունը հենվում է հարուստ աղբյուրագիտական նյութերի վրա, որոնց շարքում նախ պետք է նշել Գերմանիայի արտոգործնախարարության քաղաքական արխիվում պահպանվող՝ Հայկական հարցին և ցեղասպանությանը վերաբերող գերմանական դիվանագիտական տեղեկագրերը<sup>1</sup>: Բնագրային լեզվով երեք ժողովածուներով հրապարակված այդ փաստաթղթերը հնարավորություն են ընձեռում ոչ միայն ամբողջացնել հայկական խնդրի շուրջ գերմանա-թուրքական և հայ-գերմանական առնչությունների ընդհանուր պատկերը, այլև իրազեկվել քննության ենթակա հարցերին վերաբերող՝ հարակից այլ կարևոր իրողությունների վերաբերյալ:

Այդ տեսանկյունից և, մասնավորապես, հայ-գերմանական փոխհարաբերությունների պարզաբանման հարցում մեծ կարևորություն ունեցան նաև Հայաստանի առաջին հանրապետության Բեռլինում և Կ. Պոլսում գործող պատվիրակությունների՝ ՀՀ Ազգային արխիվում պահպանվող տեղեկագրերը, զեկուցագրերն ու այլ թղթակցությունները, որոնք բովանդակում են արժեքավոր նյութեր այդ պատվիրակությունների գործունեության վերաբերյալ և միաժամանակ օգնում են առավել ստույգ և համակողմանիորեն լուսաբանել կայսերական Գերմանիայի հետ հայկական նորանկախ հանրապետության երկկողմ շփումների հիմնական արդյունքներն ու առանձնահատկությունները:

Ըստ անհրաժեշտության՝ օգտագործվել են նաև այս կամ այն չափով թեմային վերաբերող նախկինում լույս տեսած մի շարք աշխատություններ և այլ հրապարակումներ: Այդ շարքում սույն մենագրության համար, մասնավորապես, կարևոր նշանակություն ունեցավ պրոֆ. Հրանտ Ավետիսյանի «Հայկական հարցը 1918 թվականին» աշխատությունը<sup>2</sup>, որ-

տեղ հաղորդվում են արժեքավոր տեղեկություններ Հայկական հարցի և տարածաշրջանի աշխարհաքաղաքական իրադրության խնդրո առարկա ժամանակահատվածում տեղի ունեցած զարգացումների, Հայաստանի առաջին հանրապետության ներքին և արտաքին քաղաքական խնդիրների, Կ. Պոլսում և Բեռլինում գտնվող հայկական պատվիրակությունների աշխատանքների և հարակից այլ իրողությունների վերաբերյալ:

Մենագրությունը շարադրված է երեք գլուխներով, որոնցից առաջինն ընդգրկում է Բրեստի և Բաթումի պայմանագրերի միջև ընկած ժամանակահատվածը, երկրորդ գլուխը բովանդակում է հարցի լուսաբանումն ամռան ընթացքում, իսկ երրորդն ընդգրկում է աշնան ժամանակահատվածը: Այդ բաժանումը կատարված է ոչ միայն ժամանակային պարբերացմամբ, այլև, առաջին հերթին, ըստ այն տեղաշարժերի և զարգացումների, որոնք, իրադրության զարգացմանը զուգահեռ, ավելի կամ նվազ չափով ի հայտ են եկել հայկական խնդրի առնչությամբ Գերմանիայի վարած արտաքին քաղաքականության մեջ:

<sup>1</sup> St' u Deutschland und Armenien 1914-1918, Sammlung diplomatischer Aktenstücke, Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius, Potsdam, 1919. Հմմտ. Die Armenische Frage und der Genozid an den Armeniern. Dokumente aus dem politischen Archiv des des deutschen Auswärtigen Amts, zusammengestellt und eingeleitet von Prof. Dr. Wardges Mikaeljan, Jerewan 2004. Հմմտ. Der Völkermord an den Armeniern 1915/16, Dokumente aus dem Politischen Archiv des deutschen Auswärtigen Amts, Herausgegeben von Wolfgang Gust, Springe 2005:

<sup>2</sup> Ավետիսյան Հրանտ, Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997:

## ԳԼՈՒԽ ԱՈՒՋԻՆ

### ԲՐԵՍՏԻ ԵՎ ԲԱԹՈՒՄԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՄԻՋԵՎ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՅԱՏՎԱԾՈՒՄ

Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ստորագրումից հետո Հայաստանում թուրքական բանակի առաջխաղացման և դրան զուգորդող ու հաջորդող իրադարձությունների համատեքստում կայսերական Գերմանիայի ունեցած դերակատարումը դեռևս հանգամանալից չի լուսաբանվել, մինչդեռ առանց դրա չի կարող ամբողջանալ ինչպես այդ շրջանի իրադարձությունների գիտական քննությունը, այնպես էլ Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի փոխհարաբերությունների ընդհանուր համապատկերը:

Թվում է, թե Գերմանիան պետք է որոշակի պարտավորություններ կրեր Բրեստի պայմանագրով Թուրքիային հանձնված Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանների քրիստոնյա և, բնականաբար, նաև հայ ազգաբնակչության անվտանգության ապահովման հարցում<sup>1</sup>, քանի որ այն, մի կողմից, Օսմանյան պետության դաշնակիցն էր, նրա վրա իրական ազդեցություն ունեցող միակ տերությունը, և, մյուս կողմից, կարևոր դերակատարում էր ունեցել Բրեստ-Լիտովսկի պայմանագրի վավերացման և, բնականաբար, նաև հիշյալ շրջանները Թուրքիային հանձնելու գործում: Գերմանիայի կառավարությունը, ինչպես վկայում են գերմանական դիվանագիտական փաստաթղթերը, լիովին հասու էր վերոնշյալ վտանգներին և դրանք կանխարգելելու՝ իր որոշակի պարտավորվածությամբ: Ինչպես էր, սակայն, դա իր գործնական դրսևորումը ստանում:

Գերմանական կառավարությունը թուրքական զորքերի առաջխաղացման դեպքում հայկական կոտորածների բացառումը և թուրքական տիրապետության տակ անցած շրջաններում հայ բնակչության հանդեպ

<sup>1</sup> Բրեստի պայմանագրի և դրա կնքմանը նախորդող բանակցությունների մասին տես Ավետիսյան Հրանտ, Հայկական հարցը 1918 թ-ին, Երևան, 1997, էջ 41-108: Հմմտ. Ազատյան Հենրիկ, Բախտորոշ պայմանագրեր, Երևան, 2002, էջ 77-81:

լոյալ դիրքորոշման ցուցաբերումը դեռ Բրեստի պայմանագրի ստորագրումից առաջ, 1918 թ. հունվարին, Օսմանյան պետության արտգործնախարարի և ֆինանսների նախարարի հետ տեղի ունեցած հանդիպումներում դարձրել էր բանակցման խնդիր: Ինչպես այդ ժամանակ, այնպես էլ փոքր-ինչ ավելի ուշ՝ մի կողմից Օսմանյան Թուրքիայի Մեծ վեզիրի, արտգործնախարարի և նրա ներկայացուցիչ Հալիլ բեյի, իսկ մյուս կողմից՝ Գերմանիայի կանցլեր իշխան Գեորգ Ֆոն Հերտլինգի, պետքարտուղար Ռիխարդ Ֆոն Քյուլիմանի և դեսպան Յոհան Հայնրիխ Ֆոն Բեռնշտորֆի միջև կայացած բանակցություններում թուրքական կողմը չէր զլանում տալ ամենապերճ հավաստիացումները հայերի հանդեպ իր «խաղաղասիրական» մտադրությունների վերաբերյալ: «Երբ Բրեստ-Լիտովսկի զինադադարի հաստատումից հետո մոտեցել էր այն ժամանակ ռուսների կողմից գրավված՝ արևելյան Անատոլիայի գավառների ազատումը, - նշում էր Գերմանիայի արտգործնախարարության պետքարտուղարի տեղակալ Հիլմար Ֆոն դեր Բուլշեն հարցի շուրջ ռայխստագում իր կատարած պարզաբանումների ժամանակ, - մենք հայերի հանդեպ վարքագծի հարցի առնչությամբ անմիջապես կապվեցինք թուրք պետական այրերի հետ և նրանց ասացինք, թե Թուրքիայի ամենասեփական շահերի, նաև իր դաշնակիցների հետ նրա փոխհարաբերությունների առումով որքան կարևոր է, որ թուրքական զորքերի մտնելու ժամանակ հայ բնակչության հանդեպ անկարգությունները բացառվեն, և որ սկզբից ևեթ քրիստոնյա և մահմեդական տարրերի միջև խաղաղ փոխհարաբերությունների հիմքեր ստեղծվեն:

...Կայսերական կառավարությունը Հայկական հարցի նշանակությունը թուրքական կառավարության աչքերին դեմ անելու ոչ մի առիթ բաց չի թողել և կատարել է որոշակի առաջարկներ, թե ինչպես կարելի է խուսափել հետագա արյունահեղությունից և տևականորեն խաղաղ իրադրություն ստեղծել: Ես, մասնավորապես, շտապ կերպով խորհուրդ է տվել մուտք գործող զորամասերի կարգապահությունը պահպանել, հայ կանավորական ջոկատներին կամովի ենթարկվելու կոչ անել, և եթե նրանք կիետևեն այդ կոչին, նրանց տրամադրել համաճարում..., բացի այդ՝ նաև առնվազն վճիռ կայացնել ու սկսել դեպի կայսրության խորքերը բռնագաղթվածների վերադարձը, ինչը փոխադրամիջոցների հետ կապված՝ ներկայիս ռժվարությունների պայմաններում, անշուշտ, իրագործելի չէ: ...Հստակ հավաստիացումներ ստանալուց հետո մենք իրավունք ունենք հավատալ, որ (թուրքական - Ա. Հ.) կառավարությունը

վճռել է հայերի հանդեպ մեղմ լինել և կկարողանա անմեղ բնակչությանը առանձին հրոսակախմբերի գործողությունների համար պատասխանատու չդարձնել ու կանխել այնպիսի դեպքերը, ինչպիսիք տեղի են ունեցել 1915 թ-ին...»<sup>1</sup>:

Չնայած պետքարտուղարի տեղակալը չէր նշում այդ խոստումների իրականացման երաշխիքների կամ վերահսկման լծակների մասին, քանի որ դրանք չկային, և հարցի վերաբերյալ գերմանա-թուրքական երկխոսությունը կառուցվում էր բացառապես «հավաստիացումների» և «վստահության» հիմքի վրա, այնուամենայնիվ, ինչպես վկայում են դիվանագիտական տեղեկագրերը, գերմանական կառավարությունն ակնհայտորեն ոչ միայն չէր քաջալերում Բրեստի պայմանագրով թուրքիային հանձնվող շրջանների հայաթափումը, այլև դրանում ամենակի շահագրգռված չէր: Միաժամանակ Բրեստի պայմանագրի ընդունումը նա անխուսափելի էր համարում հայերի համար և ձգտում էր իր ազդեցությունը գործադրել հայկական կողմին թուրքական կառավարության երաշխիքների և հավաստիացումների հիման վրա պայմանագրի ընդունման մտքի հետ հաշտեցնելու համար:

Երբ Տրապիզոնում արդեն սկսվել էին բանակցությունները, և թուրքական կողմն Անդրկովկասյան սեյմին փորձում էր պարտադրել ընդունել Բրեստի պայմանագրի Անդրկովկասին վերաբերող հոդվածը, Գերմանիան իր հերթին մտահոգություն էր արտահայտում Անդրկովկասյան սեյմի, այդ թվում՝ հայկական կողմի ընդդիմության հանդեպ, և, անընդունելի համարելով, մի կողմից, թուրքիայի դեմ պատերազմելու, մյուս կողմից՝ անզլիացիների կամ որևէ այլ երրորդ ուժի աջակցությանն ապավինելու՝ հայկական շրջաններում ի հայտ եկող կոչերը, տարածաշրջանում «խաղաղ իրադրության» ստեղծման համար անհրաժեշտ էր համարում, որ հայերը հրաժարվեին ընդդիմության փորձերից, անկախության իրենց ձգտումներից, որոնց «անհուսալիությունը այժմ ստիպված են գիտակցել», և ընդառաջեին թուրքերի կողմից առաջարկվող հաշտությանը:

Հայկական կողմի մոտ այդ դիրքորոշումը ձևավորելու համար հարկ էր համարվում օգտագործել մինչև իսկ հայերի գերմանացի բարեկամ-

ների ազդեցությունն ու հեղինակությունը: «Մենք, – նշում էր Բուշեն մարտի 21-ին ռայխստագում ունեցած իր ելույթի ժամանակ, – գոհունակությամբ կողջունեմք, եթե հայերի գերմանացի բարեկամներն իրենց ազդեցությունը գործադրեին հայերին անօգուտ դիմադրությունից, ինչը հավասարազոր կլիներ ինքնասպանության, նախազուլաացնելու և նրանց համոզելու համար, որ թուրքերի հետ բանակցեն իրենց հպատակման մասին: Մոտակա համաներման վերաբերյալ կարգադրություն արձակելու համաձայնությունը կայացել է»<sup>1</sup>:

Հետագայում հայացքով իրադրությունը քննելիս, անշուշտ, կասկածի ենթակա չի կարող լինել, որ Անդրկովկասյան սեյմի և, բնականաբար, նաև դրա կազմի մեջ մտնող հայ գործիչների կողմից Բրեստի պայմանագրի ընդունումը ստեղծված իրադրությունում միակ իրատեսական քայլը կլիներ, քանի որ դրանով, չնայած Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանների հանձնմանը, այնուամենայնիվ, կարող էին կանխվել հետագա բոլոր չարիքները: Թուրքական պահանջը, սակայն, ինչպես սեյմի, այնպես էլ Հայոց ազգային խորհրդի կողմից մերժվեց, որից հետո, ինչպես հայտնի է, սկիզբ առան պատերազմական գործողությունները: Արդեն մարտի 13-ին թուրքերը մտել էին Երզրում, իսկ ապրիլի 10-ին գրավեցին նաև Սարիղամիշը: Նրանց գրավումներն ուղեկցվում էին տեղում մնացած հայերի կոտորածներով և այլ՝ ամենազարհուրելի ոճրագործություններով:

Ինչ վերաբերում էր նոր իրադրությունում երկու դաշնակիցների միջև իրականացվող երկխոսությանը, ապա թուրքական կառավարությունը, հավատարիմ մնալով իր ավանդական գործելակերպին, գերմանական դաշնակցին շարունակ հավաստիացումներ էր տալիս հայ բնակչության հանդեպ անկարգությունների բացառման և խաղաղ փոխհարաբերությունների հաստատման՝ իր ցանկությունների մասին<sup>2</sup>, իսկ Գերմանիան փորձում էր իր նմանապես արդեն ավանդական դարձած բարեկամական հիշեցումներով ու նախազուլաացումներով «նպաստել» դրանց իրագործմանը: Այդօրինակ նախազուլաացումների անարդյունավետու-

<sup>1</sup> Անդ:

<sup>2</sup> Վեհին փաշան մինչև իսկ հեռագրով Ամենայն հայոց կաթողիկոսին էր հավաստել, թե «Օսմանյան պետությունը խոստացել է ապահովել ժողովրդի ինչքը և պատիվը»: Տես Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Երևան 2000, էջ 36:

<sup>1</sup> St u Der Völkermord an den Armeniern 1915/16, Dokumente aus dem Politischen Archiv des deutschen Auswärtigen Amts, Herausgegeben von Wolfgang Gust, Springe 2005, էջ 567.

թյան մեծ փորձառություն ունեցող պաշտոնական Գերմանիան, անկասկած, որևէ հիմք չէր կարող ունենալ իր դաշնակցի խոստումներին հավատ ընծայելու համար, և, այնուհանդերձ, նա այդ հարցում թուրքական կողմի վրա ազդելու այլ ճանապարհ, քան բարեկամական դիվանագիտական երկխոսությունն էր, չէր տեսնում: Իսկ արդյոք ինչպիսի՞ ընթացք և արդյունք ուներ այդ երկխոսությունը:

Գերմանական կառավարությանը որոշակի անհանգստություն էր պատճառում Բրեստի պայմանագրի ստորագրումից հետո թուրքական շրջաններում վերստին սանձազերծված ազգայնամոլական և պանթուրքական տրամադրությունների շեշտակի վերելքը, որ հղի էր անկանխատեսելի հետևանքներով: Մարտի 17-ին գերմանական արտոգործնախարարությունը Բուխարեստում գտնվող պետքարտուղար Քյուլիմանին տեղեկացնում էր, որ Կոստանդնուպոլսում Մեծ վեզիրի բացակայությունը (որը նույնպես Բուխարեստում էր գտնվում) խիստ ցավալի էր, քանի որ թուրքական «բոլոր ազդեցիկ շրջանները հաղթանակի, նացիոնալիզմի և պանիսլամիզմի գլխապետույտի մեջ են», և միայն Թալեաթը կարող էր սանձերն իր ձեռքում հավաքել և, կատարելով հայերի հանդեպ նախկինում հանձն առած պարտավորություններին համապատասխանող հայտարարություններ, «հանդարտեցնել» հակահայկական տրամադրությունները: Ըստ այդմ՝ հեռագրում պետքարտուղարին առաջարկվում էր Թալեաթին դրդել, որ նա դեռ Բուխարեստից շտապ կերպով հրահանգներ ուղարկեր Կոստանդնուպոլիս հայերի հանդեպ իրագործվելիք քաղաքականության վերաբերյալ<sup>1</sup>:

Ինչպես տեղեկացվում էր պետքարտուղարի՝ մարտի 20-ի պատասխան հեռագրում, նա այդ մասին Թալեաթ փաշայի հետ զրույց էր ունեցել: Վերջինս, սակայն, նշել էր, որ այդ առումով նա Բուխարեստում շատ բան չէր կարող անել, սակայն Կ. Պոլիս վերադառնալուն պես մտադիր էր հրամանագիր հրապարակել համաներման մասին<sup>2</sup>:

<sup>1</sup> Deutschland und Armenien 1914-1918, Sammlung diplomatischer Aktenstücke, Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius, Potsdam, 1919, էջ 374-375:

<sup>2</sup> Անդ, էջ 377: Պետքարտուղար Ռիխարդ ֆոն Քյուլիմանը, որն այդ պաշտոնում նշանակվել էր 1917 թ. օգոստոսի 5-ին (հաջորդելով Արթուր Ցիմերմանին), այն վարեց մինչև 1918 թ. հունիսի 16-ը, որից հետո նրան փոխարինեց Պաուլ ֆոն Չինթցեն: Վերջինս, որպես պետքարտուղար, պաշտոնավարեց մինչև 1918 թ. հոկտեմբերի 7-ը, իսկ այնուհետև պետքարտուղար դարձավ Վիլհելմ Չայնրիխ Չուլֆը:

Դա, իհարկե, թուրքական նոր հայաջինջ գործողությունների համար ժամանակ չափելու նպատակ հետապնդող հերթական քայլ էր, քանի որ հետագայում ևս այդ՝ այսպես կոչված «համաներումը», որը թուրքերի կողմից գրավված շրջաններում պետք է դառնար հայերի դեմ ոտնձգությունների արգելման երաշխիք և միաժամանակ դեռևս կենդանի քստրյալներին հնարավորություն տար վերադառնալ իրենց հայրենի բնակավայրերը, երբևէ չիրագործվեց:

Հարկ է նշել, որ չնայած Գերմանիան մտադիր չէր հայերի դեմ թուրքական կամայականություններն ու վայրագությունները զենքի ուժով արգելել<sup>1</sup>, այնուհանդերձ այդ հարցում չէր որդեգրել նաև ծայրահեղ հաշտվողական կեցվածք: Արդեն մարտի 22-ին արտոգործնախարարությունը, վկայակոչելով Լիոնի հայկական լրատվական գրասենյակի տեղեկությունները, դեռ Բուխարեստում գտնվող պետքարտուղարին հեռագրում էր, որ Տրապիզոն մտնելուց հետո թուրքերը նոր վայրագությունների են դիմել. «Չեռացող հազարավոր ռուսների գնդակահարել կամ կենդանի այրել են: Հայերը աննկարագրելի չարչարանքների են ենթարկվում: Երեխաներին լցնում են պարկերը և նետում ծովը: Ծեր տղամարդկանց և կանանց խաչում ու խեղում են, բոլոր երիտասարդ աղջիկներն ու երիտասարդ կանայք տրվել են թուրքերի ձեռքը»<sup>2</sup>:

<sup>1</sup> Պաշտոնական Գերմանիան դեռ 1915 թ-ից հայ ժողովրդի բնաջնջման՝ թուրքական քաղաքականությանը փորձում էր հակազդել միայն Բ. Դռանն ուղղված, ըստ էության, ամուլ առարկություններով, բարեկամական նախագուշացումներով և հրաժարվում էր ի նպաստ հայերի կոշտ միջամտության դիմել՝ դա պատճառաբանելով Թուրքիայի հետ դաշինքի խզման անթույլատրելիությամբ, ինչն այդ դեպքում, իբրև թե, անխուսափելի էր դառնալու: Այդ «հիմնավորումը», սակայն, ինչպես ցույց է տալիս հարցի ուսումնասիրությունը, քննություն բռնել չէր կարող: Ընդհակառակը, առկա սկզբնաղբյուրները որոշակիորեն փաստում են, որ Գերմանիան կարող էր հաջողությամբ, առանց դաշինքը վտանգելու կանխել կամ կասեցնել ցեղասպանությունը: Այդ տեսակետը, որն, ի դեպ, միանշանակորեն պաշտպանում էր Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան իշխան Վոլֆ Մետեռնիխը, իր փաստարկումն է ստացել նաև Թուրքիայում գտնվող առանձին գերմանացի բարձրաստիճան գիմվորականների գործելակերպով: Այդ մասին ավելի մանրամասն իրազեկվելու համար տե՛ս Հայրուհի Աշոտ, Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը, Երևան 2002, էջ 257-266:

<sup>2</sup> Deutschland und Armenien 1914-1918... էջ 377:

Այնուհետև տեղեկացնելով, որ Կ. Պոլսի գերմանական դեսպանն այդ մասին տեղյակ է և համապատասխան առարկություններ է կատարել ԱԳՆ-ն պետքարտուղարին առաջարկում էր այդ հարցը բարձրացնել Թալեթի առաջ:

Եվս երկու օր անց արտգործնախարարությունից պետքարտուղարի տեղակալ ֆոն դեր Բուշեի կողմից Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը հաղորդվում էր, որ հայերի դեմ մամուլում սանձազերծված քարոզարշավի անմիջական հրահրողը, ըստ ստացված լուրերի, Էնվեր փաշան էր, և դեսպանությանը հանձնարարվում էր գեներալ ֆոն Ջեկտի միջոցով ազդել Էնվերի վրա՝ այդ քարոզարշավին վերջ տալու համար<sup>1</sup>:

Ապրիլի 3-ին Բուշեն Կոստանդնուպոլսի դեսպանին ուղարկված մեկ այլ հեռագրում հաղորդում էր, որ թուրքական զորքերը, նախկին ռուսական սահմանները հատելով, հասնում էին խիտ բնակեցված հայկական բնակավայրերին: Քանի որ դրանով «աճում էր անկարգությունների վտանգը», պետքարտուղարի տեղակալը դեսպանին հանձնարարում էր Բ. Դռան վրա ազդեցություն գործադրել, որպեսզի զորամասերի հրամանատարներին հրամայվեր խստագույն կարգապահություն պահպանել և խաղաղ բնակչության հանդեպ ցուցաբերել անաչառ վերաբերմունք:

Ապրիլի 15-ին Բաթումի, իսկ ևս 10 օր անց Կարսի գրավմանը հաջորդող իրադարձությունները, սակայն, վերստին վկայում էին, թե թուրքական կանոնավոր և անկանոն զորքերը որքան հետևողականորեն էին իրագործում հայության սպանող, և, ըստ էության, որքան անույլ էին գերմանական առարկությունները: Գերմանական կառավարությունն, այնուհանդերձ, շարունակում էր բացառապես զուսպ դիվանագիտական առարկությունների ճանապարհով ընթանալ նաև այն ժամանակ, երբ դեպքերը կատարելապես փաստարկում էին դրանց անարդյունավետությունը<sup>2</sup>. մի ճանապարհ, որից նրան չչեղեցին նույնիսկ հայ ժողովրդի՝ արտերկրի բարեկամներից հնչող թախանձագին կոչերը, խնդրանքներն ու նախազուշացումները: Ինչ վերաբերում էր հայկական կողմին, վերջինս իր հերթին գործադրում էր բոլոր ջանքերը՝ թուրքական զորքերի հետագա առաջխաղացումը և հայ ժողովրդի լիակատար

<sup>1</sup> Աճր:

<sup>2</sup> Դա որոշակիորեն թելադրված էր նաև հետագայում մեղսակցության մեղադրանքներից խուսափելու նպատակով:

բնաջնջումը կանխելու նպատակով ձեռք բերելու Գերմանիայի աջակցությունը:

Ինչպես դեռ մարտի 6-ին հայտնի հրապարակախոս դր. Վիկտոր Նաումանի կողմից կանցլեր ֆոն Յերտլինգին ուղղված հեռագրում էր նշվում, մի շարք հայեր (որոնց անունները չեն հիշատակվում) դիմել էին նրա միջնորդությանը՝ Գերմանիայի կառավարության ուշադրությունը թուրքիային հանձնվող տարածքների հայ բնակչության համար ստեղծված տագնապալի և վտանգավոր իրադրության վրա հրավիրելու և Գերմանիայի պաշտպանությունը հայցելու համար:

Անդրադառնալով 1915-16 թթ. 1,5 միլիոն հայերի բնաջնջման փաստին, որի պատասխանատվությունը Անտանտի պետությունների կողմից արդեն իսկ նաև Գերմանիային էր վերագրվում, Վ. Նաումանը կանցլերին մատնանշում էր պաշտպանիչ միջոցառումների չիրագործման դեպքում Օսմանյան պետությանը հանձնված տարածքներում գտնվող հայության մնացորդների սպանդի անխուսափելիությունը և դրանից բխող ծանր հետևանքները: «Այն, որ նոր սպանդ կսկսվի, եթե մենք դրա դեմ ոչինչ չձեռնարկենք, թուրքերի ներկայիս գրգռված տրամադրության պարագայում ինքնին հասկանալի է,– նշում էր նա:– Բայց դրանից առաջին հերթին մենք կվնասվենք, քանի որ աշխարհը, եթե նույնիսկ անիրավացիորեն, մեզ դրա համար պատասխանատու կդարձնի: ...Ես այս խնդրանքը կատարում եմ՝ ոչ միայն մարդասիրության շահերից ելնելով, այլև՝ որպես գերմանացի հայրենասեր...»<sup>1</sup>:

Մարտի 19-ին արտգործնախարարությանը մի ուղերձ է հղում նաև Գերմանա-հայկական ընկերությունը, որը ստորագրել էին դր. Պաուլ Ռոիրբախը, Էվալդ Շթիրը և պրոֆ. դր. Մարտին Ռադեն: Նրանք ԱԳՆ-ին մատնանշում էին, որ եթե Գերմանիան ազդու կերպով չմիջամտեր դեռ կենդանի աքսորյալներին իրենց հայրենիքը վերադառնալու հնարավորություն ընձեռելու և Չայաստանում թուրքական բանակի ու հայ կամավորականների միջև բռնկված մարտերի դադարեցման համար, ապա ստեղծված իրավիճակը հանգեցնելու էր թուրքիայում հայ ժողովրդի լիակատար բնաջնջմանը:

<sup>1</sup> St'u Die Armenische Frage und der Genozid an den Armeniern. Dokumente aus dem politischen Archiv des des deutschen Auswärtigen Amts, zusammengestellt und eingeleitet von Prof. Dr. Wardges Mikaeljan, Jerewan 2004, էջ 475:

ԱՊՆ-ին վերստին հիշեցնելով այն, թե արևմտահայության աքսորի և բնաջնջման առնչությամբ Գերմանիայի դեմ արդեն իսկ ինչպիսի մեղադրանքներ էին հնչում, ուղերձի հեղինակները նախազգուշացնում էին, որ եթե գեթ հիմա գործուն քայլ չձեռնարկվեր հայության մնացորդների փրկության համար, ապա աշխարհը Գերմանիային մեղսակից էր համարելու հայ ժողովրդի բնաջնջման հարցում: Այդ քայլը նրանք համարում էին պատերազմից առաջ Օսմանյան պետության և մեծ տերությունների միջև համաձայնեցված բարեփոխումների փաթեթի իրականացումը:

Նամակագիրները հարկ էին համարում նաև ընդգծել, որ եթե Գերմանիայի կողմից որևէ ազդու միջամտություն տեղի չունենար, ապա Յայկական հարցը վերջինիս համար հետագա խաղաղության բանակցություններում մի շատ «անհաճո» թեմա էր դառնալու, մինչդեռ եթե վերոնշյալ փաթեթի իրականացմամբ հայկական կողմին գոհացում տրվեր, ապա հետագայում թշնամիներն այլևս չէին կարող Գերմանիայի դեմ օգտագործել հայկական հիմնահարցը<sup>1</sup>:

Գերմանիայի կառավարությանն ուղղված ողջամիտ կոչերը չէին դադարում: Ապրիլի 2-ին կանցլերին ուղղված իր նամակում Քյոլնի արքեպիսկոպոս Յարթմանը նույնպես, շեշտելով 1915 թ. հայերի կոտորածների առնչությամբ աշխարհում բազմիցս ի հայտ եկած պընդումները Գերմանիայի համապատասխանատվության վերաբերյալ, նրան կոչ էր անում անել ամեն բան հայերի հանդեպ թուրքական հետագա ոճրագործությունները կանխելու համար: «Ոչ միայն իմ հավատակիցների հանդեպ ցավակցությունը, այլև ամենից առաջ Գերմանիայի անվան պատվազրկման իմ մտահոգությունն է ինձ դրդել այս ուղերձը հղել Ձերդ Գերագանցությանը»<sup>2</sup>, – նշում էր նա:

Իսկ ապրիլի 13-ին Մոսկվայից, Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի կողմից Չիչերինի և Կարախանի ստորագրությամբ Գերմանիայի արտգործնախարարությանն ուղարկվեց հետևյալ հեռագիրը. «Թուրքական զորամասերի կուտակումը կովկասյան ճակատում ուղեկցվում է հայ ազգաբնակչության զանգվածային բնաջնջմամբ: ... Պայմանագիրը, որը մենք հարկադրված էինք բրեստում ստորագրել, Արդահանի, Կարսի և Բաթումի շրջանների բնակչությանն է թողնում իրենց ճակատագրի ընտրությունը: Այդ շրջաններում

<sup>1</sup> Անդ, էջ 478:

<sup>2</sup> Անդ, էջ 481:

տեղի ունեցող դեպքերն ապացուցում են, որ հայ ժողովրդի ոչնչացման 10 տարի ի վեր իրագործված քաղաքականությունը շարունակվում է նաև այժմ: Թուրքական ճակատում գերակշռությունը Ռուսաստանի կողմն էր, որը միայն այն պատճառով հարկադրվեց հանձնել Արդահանը, Կարսը և Բաթումը, քանի որ Գերմանիան Թուրքիայի դաշնակիցն էր: Այն ոճրագործությունների պատասխանատվությունը, որոնց այսօր ենթարկվում է հայ ազգաբնակչությունը թուրքական զորամասերի գրաված տարածքներում, ընկնում է Գերմանիայի վրա, որի ուղղակի աջակցությամբ է Թուրքիան այդ շրջանները պահանջել: Արտաքին գործերի կոմիսարիատը... անհրաժեշտ է համարում, որ Գերմանիան արագ և եռանդուն կերպով միջամտի Կովկասում տեղի ունեցող դեպքերին կանխելու համար խաղաղ բնակչության հետագա ոչնչացումն ու մորթումը, ինչպես դա Արդահանում է եղել»<sup>1</sup>:

Մեկ օր անց, ապրիլի 14-ին, Նիկողայոս Ադունցի և Յակոբ Ջավրիկի ստորագրությամբ նաև Յայոց ազգային խորհրդի կողմից է մի հեռագիր ուղարկվում Գերմանիայի արտգործնախարարությանը, որտեղ դարձյալ շեշտվում էր կատարվող ոճրագործությունների համար Գերմանիայի համապատասխանատվության հանգամանքը: «Յայաստանը... նոր տառապանքների է մատնվել, – նշված էր հեռագրում: – Թուրքական զորքերը, օգտագործելով ռուսական զորքերի նահանջը, անմիջապես ներխուժեցին անպաշտպան երկիրը՝ բնաջնջման ենթարկելով ոչ միայն բուլբուլ թուրքահայերին, այլև ռուսահայերին: Յակառակ խաղաղության պայմաններին, որոնցով ճանաչվում է բուլբուլ կովկասյան շրջանների ինքնորոշման իրավունքը, թուրքական բանակը, ավերելով երկիրը և ոչնչացնելով քրիստոնյա բնակչությանը, առաջանում է Արդահանի և Կարսի դեմ: Յայերի հետագա ճակատագրի պատասխանատվությունն ամբողջովին ծանրանում է Գերմանիայի վրա, քանի որ նրա պնդումով ռուսական զորքերը դուրս բերվեցին հայկական շրջաններից: Այժմ նրանից է կախված թուրքական զորքերին սովորական դարձած անկարգություններից ետ պահելը, որոնք տեղի են ունենում վրեժխնդրության և կատաղության հողի վրա: Դժվարությամբ կարելի է հաշտվել այն մտքի հետ, որ մի մշակութային պետություն, ինչպիսին Գերմանիան է, որն իր դաշնակցի՝ Թուրքիայի վրա ազդելու հնարավորություն ունի, կթուլատրի, որ Բրեստի խաղաղության պայմանագիրը հայ ժողովրդի համար, որը պատերազմի մեջ իր կամքին հակառակ է ներքաշվել, դառ-

<sup>1</sup> Անդ, էջ 483-484:

նա անհամար տառապանքների աղբյուր: Այդ պատճառով Ազգային խորհուրդը հավատում է, որ Դուք նոր սարսափներից առաջ հայ ժողովրդի պաշտպանության նպատակով թուրքական իշխանությունների դեմ կծեռնարկեք անհրաժեշտ և միայն Ձեզ համար հնարավոր միջոցառումները»<sup>1</sup>:

Մարտի 13-ին, իսկ այնուհետև նաև մայիսի 17-ին կանցլերին ուղերձներ հղեց նաև Հայաստանի օգնության շվեյցարական միությունը: Մեկ անգամ ևս հիշատակելով 1915 թ. հայ ժողովրդի զանգվածային սպանող՝ միությունն իր տազնապն ու մտահոգությունն էր արտահայտում այն առնչությամբ, որ թուրքական լրատվամիջոցները հասարակայնությանը տեղի ունենալիքի մասին ճիշտ նույն ձևով էին նախապատրաստում, ինչպես 1915 թ-ին: «Առանձին հայ ղեկավարների իրական կամ կարծեցյալ դաժանությունները այնպես են ներկայացվում, որ եվրոպացի ընթերցողը մնացյալ ամեն բան պետք է ըմբռնի՝ որպես թուրքական պետության ինքնապաշտպանություն,– նշված էր մայիսի 17-ի ուղերձում:– 1915 թ-ին այնպես եղավ, որ այդ «օրինական ինքնապաշտպանությունը» հասցրեց ընդհուպ հարյուր հազարավոր կանանց ու երեխաների ոչնչացմանը: Սարսափելի մոտ է այն եզրակացությունը, որ 1918 թ-ին հետևելու են նույն նախերգանքն ու վերջաբանը: ...Մենք չենք կարող հավատալ, որ Գերմանիայի պաշտպանությունը ձեռք բերելու՝ բոլոր խնդրանքները պետք է անօգուտ լինեն, ...որ Գերմանիայի կողմից պաշտպանված Թուրքիան իր գերմանական սպաների կողմից ղեկավարվող բանակն օգտագործում է քրիստոնյաներին ամենանողկալի ձևով հալածելու համար: ... Մենք համոզված ենք, որ քրիստոնյա գերմանական կայսրությունը Արևելքի քրիստոնյաների հանդեպ իր պատասխանատվությանը գիտակից է և իրեն թույլ չի տա թուրքական ժխտումների հիման վրա հասպաղել: Մեր այդ հույսի չիրականացումը Շվեյցարիայում, որտեղ բողոքականներն ու կաթոլիկները երկյուղ են ապրում հայերի համար, զգետնող տպավորություն կգործի, առաջին հերթին Շվեյցարիայի ժողովրդի հենց այն հատվածի վրա, որը Գերմա-

<sup>1</sup> Պետքարտուղարի տեղակալը, հեռագիրն իր հերթին ուղարկելով Կ. Պոլսի գերմանական ղեկավանին, նրան հրահանգում էր այդ մասին տեղեկացնել թուրքական կառավարությանը և միաժամանակ վերջինիս մատնանշել թուրքական կողմի «գործելակերպի վտանգավորությունը»:

նիայի հանդեպ ըմբռնում ունի և նրա հակառակորդների պրոպագանդայի համար մատչելի չէ»<sup>1</sup>:

Ինչևէ, չնայած հայության հանդեպ թուրքական բանակի կողմից իրագործվող վայրագությունների վերաբերյալ բոլոր տեղեկություններին և նախազգուշացումներին, պաշտոնական Գերմանիան, ինչպես նշվեց, փորձում էր բացառապես դիվանագիտական խողովակներով ազդել թուրքական պաշտոնական շրջանների վրա: Դրա վկայությունն է, օրինակ, պետքարտուղարի տեղակալի կողմից ապրիլի 15-ին դեսպան Բեռնշտորֆին ուղարկված հեռագիրը, որտեղ վերջինիս հանձնարարվում էր ստուգել թուրքական կողմի նորագույն ոճրագործություններին վերաբերող տեղեկությունների իսկությունը և միաժամանակ ամօժամբ հաղորդումներ կատարել թուրքական կողմից գրավված տարածքներում տեղի ունեցող դեպքերի վերաբերյալ: «Քանի որ Բրեստի պայմանագրի Կարսին, Արդահանին և Բաթումին վերաբերող որոշումը Թուրքիայի համար մենք ենք ուժի մեջ մտցրել,– նշում էր Բուշեն,– մենք կհայտնվենք ծայրահեղ անախորժ դրության մեջ, եթե այժմ բարձրացված մեղադրանքները համապատասխանում են իրականությանը: Մենք պարտավոր ենք պահանջել, որ Թուրքիան մեզ վարվի քրիստոնյա բնակչության հետ և ամեն տեսանկյունից հարգի նրանց իրավունքները: Մենք նաև իրավունք ունենք պահանջել, որ թուրքերը մեզ իրազեկեն նշված տարածքներում տեղի ունեցող ամեն բանի մասին: Ձերդ Գերագանցությունը պետք է այդ նպատակով Մեծ վեզիրի և արտգործնախարարի հետ զրուցի և Թալեաթ փաշային հիշեցնի Բուխարեստից վերադարձից հետո հայերի համար համաներում հրապարակելու իր խոստումը: Ներկա պահին այդ միջոցառումը մեզ խոստանում է հանգստացուցիչ ազդեցություն գործել ամենուրեք արդեն ուժգին գրգռված հասարակական կարծիքի վրա: Այն նաև չպետք է անտեսի նախկին ռուսական տարածքներում բնակվող հայերին»<sup>2</sup>:

Դեսպանը ճշգրտորեն կատարում է հանձնարարությունը՝ Մեծ վեզիրին տեղեկացնելով, որ եթե Թուրքիան կամենում էր, որ Գերմանիան աջակցեր Կովկասում Թուրքիայի քաղաքականությանը, ապա պետք է գերմանական կողմին երաշխիք տար հայկական խնդրի առնչությամբ: Թալեաթն իսկույն ևեթ նրան հավաստիացնում է, որ այդ հարցին վերա-

<sup>1</sup> Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., էջ 499-500:

<sup>2</sup> Deutschland und Armenien 1914-1918..., էջ 379:

բերող իր խոստումն այլևս կարող է գաղտնի չպահվել, և դեսպանին լիազորում է արտագործնախարարությանը տեղեկացնել համաներման մոտալուտ հրապարակման մասին՝ միաժամանակ ավելացնելով, որ ինչպես համաներումը, այնպես էլ դրա հետ միասին խաղաղ հայ բնակչությանը դրամական փոխհատուցման և հայրենիք վերադառնալու իրավունքի տրամադրման հարցերի կանոնարկումը գտնվում են նախապատրաստման փուլում<sup>1</sup>:

Զբավականանալով այդ հաղորդումով՝ գերմանական արտագործնախարարությունը ապրիլի 26-ին պահանջում էր այդ համաներման հրապարակումից առաջ իրեն տեղեկացնել, թե արդյոք վերադարձի իրավունքը միայն քցսորյալների<sup>2</sup>ն, թե՞ նաև Ռուսաստան փախած հայերին էր վերաբերում, և արդյոք ի՞նչ նպատակների համար էր նախատեսված փոխհատուցում կատարել<sup>2</sup>:

Դեսպանն այդ հարցի առնչությամբ նոր հանդիպում է ունենում Թալեաթի հետ, որը տեղեկացնում է, թե համաներումը միայն Թուրքիայում գտնվող հայերին է վերաբերելու, քանի որ երկրում չգտնվողներին հետ վերադարձնելը «վտանգավոր» կլիներ: Իսկ ինչ վերաբերում էր դրամական նվիրատվությանը, ապա այն, իբրև թե, պետք է կատարվեր ունեզրկված հայերի կրած վնասների փոխհատուցման համար: Ինչպես Թալեաթն էր նշում, հայերը, ըստ հնարավորին, պետք է ընտրություն կատարեին իրենց նախկին ունեցվածքի և մի որոշակի դրամազխի միջև<sup>3</sup>:

Ուշագրավ է, որ Թալեաթի պատասխանը չէր բավարարում գերմանական արտագործնախարարությանը, որը ցանկալի էր համարում հայրենիք վերադառնալու թույլտվություն հատկացնել նաև արտագաղթած հայերին: Այդ նպատակով մայիսի 6-ին ԱԳՆ-ն նոր հեռագիր է ուղարկում դեսպանին՝ նրան հանձնարարելով գեներալ Օտտո ֆոն Լոսովին առաջարկել, որ նա, որպես իրեն տրված հրահանգների փաթեթի հավելում, փորձի հաղթահարել արտագաղթածներին վերադարձի թույլտվություն տալու վերաբերյալ թուրքական «տարակույսները»: Նշելով, որ նրանց վերադարձի թույլտվության հատկացման ցանկությունը հայկական կողմն է արտահայտել ԱԳՆ-ն այդ առնչությամբ ավելացնում էր, որ

<sup>1</sup> Անդ, էջ 380:

<sup>2</sup> Անդ:

<sup>3</sup> Անդ, էջ 380-381:

այդ հայերի՝ Կովկասում կուտակված լինելը հողի և կենսամիջոցների բացակայության պայմաններում կհանգեցներ ընդհարումների տեղի ոչ հայկական բնակչության հետ<sup>1</sup>:

Գերմանիան Թուրքիայի հետ իր դիվանագիտական երկխոսության ընթացքում պարբերաբար ընդգծում էր կնքված պայմանագրերից ածանցվող պարտավորությունների պահպանման և տեղական բնակչության նկատմամբ վայրագությունների բացառման անհրաժեշտությունը: Բաթումի բանակցությունների նախօրեին, ապրիլի 30-ին, գերմանական արտագործնախարարությունը բանակցություններին հետևող գերմանական ներկայացուցչությանն ուղղված ցուցումների 3-րդ կետում, մասնավորապես, նշում էր, որ հարկավոր էր թուրքական կառավարությանը դրդել, որ նա Բրեստի պայմանագրով Թուրքիային տրված այն տարածքներում, որտեղ հայերը փակ համայնքներում էին ապրում, նրանց տեղական ինքնավարություն, իսկ երկրի մյուս շրջաններում իրենց եկեղեցական և մշակութային գործերը կարգավորելու լիաժեք ազատություն տրամադրեր<sup>2</sup>:

Թուրքական կառավարությունը, Գերմանիայի նախագուշացումների և առաջարկների առնչությամբ տալով համապատասխան հավաստիացումներ, սակայն լավ գիտակցելով, որ Գերմանիան վերոնշյալ խնդիրների պատճառով երբևէ ուժի դիրքերից չէր խոսի, ոչ միայն այդ առաջարկների իրականացման ուղղությամբ որևէ գործուն քայլ մտադիր չէր ձեռնարկել, այլև. ընդհակառակը, շարունակում էր խորանալ հայկական տարածքներում առաջանալով դեպի Երևան<sup>3</sup>:

«Հայերի հետ բանակցելու որևէ շարժառիթ չկա, — արդեն ապրիլի 13-ին արտագործնախարարությանը հաղորդում էր դեսպան Բեռնշտոր-

<sup>1</sup> Անդ, էջ 382:

<sup>2</sup> Անդ, էջ 381:

<sup>3</sup> Թուրքական դեմագոգիան որևէ սահման չէր ճանաչում: Հատկանշական է, որ մարտի կեսերին, երբ Թալեաթը խոստանում էր, այսպես կոչված, «համաներում» և վերադարձի հնարավորություն տրամադրել քցսորյալներին, 4-րդ բանակային կորպուսի հրամանատար Ալի Իսհան փաշան իր տարածաշրջանում; մասնավորապես Մամուրեթ-ուլ-Ազիզի վիլայեթում տեղահանում և վտարում էր հայերի վերջին մնացորդներին: Չնայած մայիսի 15-ին կանցլերը և դեսպանությունը Հալեպի հյուպատոս Ռոսլերի միջոցով տեղեկացվեցին այդ մասին, այնուհանդերձ համապատասխան եզրահանգում կատարելու ցանկություն չդրսևորեցին: Stb. Deutschland und Armenien 1914-1918..., էջ 383:

Ֆր.— քանի որ թուրքերի՝ անակնկալ արագությամբ հաջորդող ռազմական հաջողությունները նրանց դարձրել են իրենց նախկին տարածքի, ինչպես նաև Բաթումի, Արդահանի և Կարսի սանջակների մեծագույն մասի տերը: Կովկասի հարավային շրջաններում ապրող հայերի հետ բանակցություններն ինքնին կսկսվեն, քանի որ այդ դեպքում հարցը վերաբերում է նաև Կովկասյան հանրապետությանը»<sup>1</sup>:

Երբ թուրքական բանակը Բրեստի պայմանագրով Թուրքիային հատկացված տարածքների գավթումից հետո շարունակեց առաջանալ, գերմանական կողմում, որն ակնհայտորեն այդ հանգամանքի հետ հաշվի չէր նստել, ի հայտ եկան լուրջ տագնապներ և անհանգստություններ նաև այն պատճառով, որ Գերմանիան թուրքերի առաջխաղացմամբ և գրավումներով վտանգված էր տեսնում նաև Անդրկովկասում իր սեփական տնտեսական շահերը: «Ախալքալաքի, Ալեքսանդրապոլի և Երևանի զուտ հայկական շրջանների, Բրեստի պայմանագրի շրջանակներն էապես գերազանցող տարածքների գրավման՝ թուրքական չափ չճանաչող պահանջը, — մայիսի 15-ին ԱԳՆ-ին հեռագրում էր գեներալ-լեյտենանտ ֆոն Լոսովը, — միայնակ կերպով Կովկասի տնտեսական շահագործման և Անդրկովկասում նույնպես հայերի լիովին բնաջնջման նպատակ է հետապնդում: Թուրքերը, առանց ինձ նախապես տեղեկացնելու և իմ համաձայնությունը ստանալու, ամսի 13-ի երեկոյան վերջնագրի ձևով պահանջել են իրենց տրամադրել Կարս-Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղին: Ես դրա դեմ բողոքել եմ: Իմ միջնորդական առաջարկությունը, որի հիման վրա կարևորագույն և ամենահրատապ հարցերը սկզբունքորեն մեկ ժամում կարելի է կարգավորել, հետևյալն է.

1. Թուրքերը պետք է Բրեստի պայմանագիրը ճանաչեն՝ որպես հիմք:

2. Թուրքական մեծամտությունը շոյելու և նրանց ետդարձը դյուրացնելու համար Ախալքալաքի մահմեդական շրջանը սահմանների կարգավորման ձևով փոխանակվում է Բաթումից հյուսիս ընկած վրացական տարածքի և Կարսի շրջանի զուտ հայկական արևելյան մասի հետ, ընդ որում՝ Կարսի ամրոցը մնում է թուրքերին...»<sup>2</sup>:

Գեներալն այնուհետև ավելացնում էր, որ հենց որ այդ առաջարկն ընդունվեր, գերմանացիների վերահսկողության ներքո Կարս-Ջուլֆա

հատվածում թուրքական զորքերի փոխադրումը կարող էր սկսվել: Այդ պատճառով նա խնդրում էր ուղարկել մի հանձնաժողով, որն իր հետ միասին Թիֆլիսում կգրառվեր երկաթուղուն առնչվող խնդիրներով, ինչպես և մի գերմանական գումարտակ, որն Ալեքսանդրապոլից մինչև Ջուլֆա բոլոր կայարաններում կստանձներ կարգ ու կանոնի վերահսկումը: Դա, նշում էր նա, համապատասխանում էր նաև կովկասցիների ցանկությանը և նրանց պահանջն էր, քանի որ նրանք թուրքերի հանդեպ մեծ անվստահություն ունեին և վճռականաբար մերժում էին թուրքական կողմից երկաթուղու ղեկավարումը կամ դրա վրա ազդեցություն ունենալը:

Դեսպան Բեռնշտորֆն իր հերթին այդ առնչությամբ հավելում էր, որ Դալիլը և Վեհիբը իր հետ սկզբունքորեն նույն կարծիքին են, մինչդեռ էնվերը շարունակում էր իր տեսակետը պնդել և պահանջում էր իսկույննեթ վերջնագիր ներկայացնել: «Եթե Կովկասում պետք է խուսափել մի նոր արյունահեղ պատերազմի բռնկումից, — այդ առնչությամբ նշում էր Բեռնշտորֆը, — ապա դեսպանը պետք է Մեծ վեզիրին անհապաղ հայտարարի, որ գերմանական բանակի գլխավոր հրամանատարությունը էնվերի պահանջը բնավ չի կարող պաշտպանել և բողոք է բարձրացնում դաշնակիցների շահերը մեծապես վնասող թուրքական գործելակերպի դեմ»<sup>1</sup>:

Գերմանական կառավարությունը, սակայն, հակված չէր ընդունելու ֆոն Լոսովի առաջարկը և Թուրքիային պարտադրելու պահպանել Բրեստ-Լիտովսկի պայմանագրի պայմանները, մինչդեռ հայկական կողմը իրադրության վատթարացմանը զուգընթաց ավելի և ավելի էր փորձում ապավինել Գերմանիայի աջակցությանը թուրքական նոր վայրագությունները և կոտորածները կանխելու համար: Այդ նպատակով Դալիլը ազգային խորհրդի կողմից ապրիլի երկրորդ կեսին մի պատվիրակություն ուղարկվեց Բեռլին, որի կազմում էին Արշակ Ջամալյանը, Լիպարիտ Նազարյանը (ՀՀԴ անդամ) և Գևորգ Մելիք-Ղարազյոզյանը (ժողովրդական կուսակցության անդամ)<sup>2</sup>:

<sup>1</sup> Անդ, էջ 498:

<sup>2</sup> Պատվիրակությունը նախ ուղևորվեց դեպի Մոսկվա: Նրա երկու անդամները՝ Ա. Ջամալյանը և Գ. Մելիք-Ղարազյոզյանը, Մոսկվա հասան մարտի 25-ին, որտեղ ապրիլի 7-ին նրանց միացավ նաև Լ. Նազարյանը: Նրանք այնտեղ հանդիպումներ ունեցան Խորհրդային Ռուսաստանի՝ ազգությունների ժողովում Ի. Ստալինի, ռազմական գծով ժողովում Լ. Տրոցկու, արտաքին գործերի ժողովում

<sup>1</sup> Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., էջ 483:

<sup>2</sup> Անդ, էջ 497-498:

ճանապարհին, մինչև Բեռլին հասնելը, պատվիրակությունը «քաղաքակիրթ աշխարհին» մի սրտառուչ կոչ հղեց, որն ապրիլի 20-ին հրապարակվեց Լիոնի ռադիոհաղորդագրությամբ: «Վերջին երեք օրերի կտորածներից և արտաքսումներից հետո, – նշված էր այդ կոչում, – որոնք այնպիսի վայրագությամբ ու դաժանություններով իրագործվեցին, ինչպես մինչ այդ պատմությունը չէր տեսել, ... Դայաստանը կանգնած է մի նոր աղետի առաջ, որը հանդիսանալու է թուրք կառավարողների կանքով մի ամբողջ ժողովրդի բնաջնջման ավարտը: Բոլոր վայրերում, որտեղ նրանք մուտք են գործում, հայերին սիստեմատիկ կերպով մորթում են: Արդյոք քաղաքակիրթ աշխարհը թույլ կտա<sup>1</sup>, որ բազմահազար ծերերը, այրիներն ու որբերը շարունակեն մատնվել այդ բռնակալների կրքերին, որոնց ձեռքերը դեռ կարմիր են իրենց հայրերի, եղբայրների և

տեղակալ Լ. Կարախանի և այլոց հետ: Չիչերինը, Տրոցկին, Կարախանը և այլ ղեկավար գործիչներ նրանց ցույց տվեցին գործնական աջակցություն, իսկ մասնավորապես, Կարախանը նրանց տրամադրեց անցագրեր և այլ փաստաթղթեր, որոնցով նրանք մինչև իսկ առանց ստուգման կարող էին սահմանն անցնել: «Առաջին գործս եղավ տեսնվել Տրոցկու հետ, – գրում էր Ա. Ջամալյանը մարտի 28-ին Ա. Ախարոնյանին ուղարկված զեկույցում: – Ես կարծում եմ, – ասաց Տրոցկին, որ հայկական կազմակերպությունները պետք է եռանդով բողոքեն այդ (Բրեստի – Ա. Դ.) դաշնագրի դեմ և պետք է կոչ անեն Եվրոպայի հասարակական կարծիքին օգնության գալու հայ ժողովրդին: Մասնավորապես, այդ բանը պետք է անեն Բաթումի և Կարսի ազգային և հասարակական կազմակերպությունները: Մեր հարցին... , թե ինչպես պետք է մեր բողոքն ուղարկենք Եվրոպայի ժողովուրդներին, նա ասաց, թե կարող ենք օգտվել անթել հեռագրից, որը ինքը մեր տրամադրության տակ կղնի: Դաջորդ օրը գնացի Կարախանի մոտ անցագրի խնդիրը կարգավորելու, որ ամենադժվար հարցն էր: Նրան հայտնեցի Տրոցկու և այդ խորհրդի մասին և հարցրի նրա կարծիքը: Կարախանն էլ կարծում էր, որ պետք է դիմել Եվրոպայի հասարակական կարծիքին: Իմ հարցին, թե ինչ ձևով պետք է կատարել դիմումը, նա պատասխանեց, թե կարող ենք գրել կամ պատվիրակություն ուղարկել: Այս վերջին արտահայտությունից էլ բռնեցի և ասացի. մեր ազգային խորհուրդն էլ այդպիսի միտք է հղացել, և հիմա չգիտեմք, թե ինչպես պետք է պատվիրակությունը գնա Եվրոպա...: Նրա հարցին, թե ուր ենք ուզում գնալ պատասխանեցի, թե ամեն տեղ, մինչև անգամ Գերմանիա: Փոքր-ինչ մտածելուց հետո նա պատասխանեց, որ ինքը կկարգադրի մեզ անձնագրեր տալ: Այդ կարգադրությունը կատարվեց անմիջապես: ... Այս և մնացած այլ խնդիրներում Կարախանը մեզ չափազանց մեծ աջակցություն ցույց տվեց, այնպես որ ես չգիտեմ, թե առանց նրա օգնության մեր գնալու խնդիրն ինչպես կլուծվեր»: Տեն Ավետիսյան Դ., Դայակական հարցը..., էջ 177-178: Դմտ. ԴԴ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 132, ք. 1-4:

երեխաների արյունով: Նահատակների անունից, որոնց ոսկորները ծածկում են Դայաստանի դաշտերը, ամենասուրբ զգացումների, արդարության, մարդկայնության և առաքինության անունից, կանանց և անպաշտպան երեխաների անունից պատվիրակությունն իր կոչն է ուղղում բոլոր քաղաքակիրթ ժողովուրդներին, որպեսզի նրանք իրենց ծայրը բարձրացնեն, քանի դեռ չափազանց ուշ չէ, և իրենց միջամտությամբ արգելեն մի հին ազգի բնաջնջման շարունակումը, որն այնքան ծառայություններ է մատուցել քաղաքակրթությանը, որն իր աշխատանքով և բնական ծիրքերով հանդիսանում է առաջադիմության տարր և հարյուրամյակներ ի վեր լավագույն միջնորդն է եղել Արևմուտքի մշակույթի ու Արևելքի ժողովուրդների միջև»<sup>1</sup>:

Բեռլին հասնելուց հետո՝ ապրիլի 28-ին, նրանք մի ուղերձ են հանձնում արտգործնախարարությանը, որտեղ գերմանական կառավարության ուշադրությունը հրավիրում էին հայության ճգնաժամային դրության վրա, և խնդրում էին ազդու կերպով միջամտել արգելելու համար ինչպես հայերին, այնպես էլ Կովկասի տարածքի բարոյությանը սպառնացող աղետը: Դաջորդ օրը պատվիրակությունը ԱԳՆ-ին ուղղված մեկ այլ ուղերձում, ընդգծելով, որ միայն գերմանական կայսրությունն էր ի վիճակի կասեցնել թուրքական ոճրագործությունները, մատնանշում էր այն միջոցառումները, որոնց իրագործման դեպքում հնարավոր կլինեք ապահովել Կովկասի հայ բնակչության անվտանգությունը: Ըստ այդմ՝ նախ անհրաժեշտ էր իսկույնեթ կանգնեցնել թուրքական բանակի առաջխաղացումը: Այնուհետև՝ իրագործել Կարսի, Արդահանի և Բաթումի բնակչության ինքնորոշման իրավունքն այն կարգով, որ հաշվի առնվեք ազգային պատկանելության գործոնը, և քվեարկության իրավունք տրվեք նաև փախուստի դիմած բնակիչներին: Բացի այդ՝ հարկավոր էր թուրքերին արգելել որևէ պատրվակով խախտել Բրեստի պայմանագրով ամրագրված սահմանները: Թուրքերը իրավունք չպետք է ունենային միջամտելու Կովկասի ներքին գործերին: Դարկավոր էր ապահովել այն հայերի անվտանգությունը, որոնք բնակություն կհաստատեին Թուրքահայաստանում կամ կցանկանային վերադառնալ այնտեղ գտնվող իրենց բնակավայրերը: Այնուհետև ընդգծելով, որ առաջին երեք առաջարկները համապատասխանում էին Բրեստի պայմանագրի որոշումներին՝ պատվիրակությունը հույս էր հայտնում, որ պայմանագի-

<sup>1</sup> Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., էջ 486-487:

որ ստորագրած Գերմանիան դրա ուսնահարունը չէր հանդուրժի: Վերջում պատվիրակությունը խնդրում էր առանց ժամանակ կորցնելու մի գերմանական հանձնաժողով ուղարկել տեղում իրադրությունը քննելու, վերոնշյալ առաջարկներին ընթացք տալու և վերահսկողություն իրականացնելու համար<sup>1</sup>:

Մայիսի 4-ին պատվիրակությունը հայերի դրության և փախստականների վերադարձի հարցի վերաբերյալ ևս մի հուշագիր ներկայացրեց ԱԳՆ-ի գաղտնի խորհրդական Գյոպերտին՝ միաժամանակ խնդրելով նրա միջնորդությունը կանցլերի հետ տեսակցություն ունենալու համար: Գուշագրում, հակիրճ և ազդու կերպով ներկայացնելով այն ուրբերությունները, որոնք հայերն ապրել էին ինչպես աշխարհամարտի բռնկումից հետո, այնպես էլ թուրքական վերջին ներխուժման օրերին, պատվիրակությունը դարձյալ Գերմանիայի աջակցությունն էր հայցում թուրքական զորքերի դեմ հուսահատ պայքար մղող հայությանն օգնելու համար: «...Մեր ժողովրդին առանձնակի ցավ պատճառեց, որ այդ անմարդկայնությունները կատարվում են Գերմանիայի դաշնակցի կողմից,– նշվում էր հուշագրում,– Գերմանիայի, որին մենք սովորել էինք ակնածանքով վերահայաց նայել, որի մեծ մշակույթը մեզ համար այնպես օրինակելի և ուղենշային էր, ինչպես Առաջավոր Ասիայի ոչ մի այլ ժողովրդի համար չի եղել, որի լեզուն մեր դպրոցներում առանձնահատուկ սիրով էր ուսուցանվում, որի համալսարաններում մեր ամենանշանակալից գործիչները ստացել են իրենց կրթությունը, և որի՝ հայերեն թարգմանված գիտական ու բանաստեղծական բազմաթիվ գործերը մեր մտավորականության ամբողջ սերունդներ են ոգեշնչել ու կրթել...»<sup>2</sup>:

Գուշագրի հեղինակներն, ընդգծելով, որ թուրքական կառավարությունը ձեռնամուխ էր եղել հայ ժողովրդի լիակատար բնաջնջմանը, գերմանական կառավարության ուշադրությունը հրավիրում էին նաև այն հանգամանքի վրա, որ թուրքական զորքերի դեմ հայ ժողովրդի հուսահատ և վճռական պայքարը կարող էր վերածվել անանցանելի լեռներից մղվող փոքրամասշտաբ, սակայն տևական պատերազմի, որի հետևանքներն անհնար էր կանխատեսել:

<sup>1</sup> Անդ, էջ 487-488:

<sup>2</sup> Անդ, էջ 495:

Պատվիրակությունը Հայկական հարցի, Օսմանյան պետությունում հայերի դրության, թուրքերի կողմից Բրեստի պայմանագրի խախտման և Անդրկովկաս ներխուժելու և հայերին սպասվող նոր հաշվեհարդարի վերաբերյալ Գերմանա-հայկական ընկերության միջոցով ապրիլի 23-ին, մայիսի 3-ին և 4-ին ուղերձներ հղեց նաև ռայխստագին, նրա առանձին անդամների և մի շարք հեղինակավոր քաղաքական գործիչների<sup>1</sup>:

Ուշագրավ է, որ ռայխստագի պատգամավորների հետ պատվիրակության ունեցած մի հանդիպման ժամանակ ներկաների վրա մեծ ազդեցություն էին գործել գերմանացի հայտնի հրապարակախոս դր. Պաուլ Ռոհրբախի ցուցաբերած հայանպաստ դիրքորոշումն ու պարզաբանումները: «Երբ դոկտոր Պաուլ Ռոհրբախը,– նշում էր այդ մասին Գ. Մելիք-Ղարաբաղյանը,– կրկին բացատրեց, համապատասխան խոսքերով, դրության լրջության մասին, որն առաջացել էր շնորհիվ գերմանական կառավարության ձեռք առած անբավարար միջոցների՝ զսպելու կուլտուրայից զուրկ թուրքական կառավարությանը, որը չի ծանաչում Գերմանիայի բարոյական պատասխանատվությունը պատմության առջև՝ ամբողջ հայ ազգի ոչնչացման առթիվ, մի քրիստոնյա ազգի բարձր կուլտուրական զարգացումով, խորհրդակցությանը մասնակցող ռայխստագի անդամների վերաբերմունքը փոխվեց դեպի պատվիրակության հիմնավորումները»<sup>2</sup>:

Կանցլերի հետ տեսակցության պատվիրակության խնդրանքը մերժվեց: Նրանք կարողացան հանդիպել միայն պետքարտուղարի տեղակալ ֆոն դեր Բուլշեին և գաղտնի խորհրդական Գյոպերտին:

Բուլշեի հետ հանդիպումը տեղի ունեցավ մայիսի 4-ին: Ողջունելով Հայոց ազգային խորհրդի կողմից հայ ժողովրդի համար խիստ ծանր շրջանում Գերմանիայի հանդեպ վստահության տածումը և նրա աջակցությանն ապավինելու ձգտումը՝ Բուլշեն պատվիրակությանը հավաստիացնում էր, որ գերմանական կառավարությունը շահագրգռված էր հայերի՝ խաղաղության մեջ ապրելու և քրիստոնյա ու մահմեդական բնակչության միջև տևական խաղաղության հաստատման հարցում: Վստահեցնելով, որ թուրքական կառավարությունը նույնպես կիսում էր

<sup>1</sup> Տե՛ս Ավետիսյան Հ., Հայկական հարցը..., էջ 178:

<sup>2</sup> Տե՛ս «Kaukasische Post», 1918 թ. հուլիսի 20-ի համարը: Գմմտ. «Մշակ», 1918 թ. օգոստոսի 10-ի համարը: Գմմտ. ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 120, թ. 86:

այդ ցանկությունը, նա միաժամանակ քննադատաբար անդրադարձ էր կատարում թուրքական առաջխաղացման ժամանակ երզնկայի շրջանում, իբրև թե, հայերի կողմից թուրք բնակչության դեմ կիրառված բռնություններին, որոնց մասին նա, անկասկած, տեղեկացել էր թուրքական ապատեղեկատվության միջոցով<sup>1</sup>:

Պետքարտուղարի տեղակալը, այնուամենայնիվ, մտադիր չէր հայկական կողմի հետ երկկողմ քննարկումներ ծավալել նրան հուզող խնդիրների վերաբերյալ, ուստի, պատվիրակության անդամներին տեղեկացնելով, որ ապրիլի 22-ին Անդրկովկասում նոր իշխանություն «անդրֆեդերացիա» էր ստեղծվել<sup>2</sup>, նա նրանց խորհուրդ էր տալիս «այսուհետև իրենց ցանկություններն ու առաջարկությունները... արտահայտել անդրկովկասյան կառավարության միջոցով»<sup>3</sup>:

Այն, որ Գերմանիան այդ շրջանում շարունակում էր անքննադատ կերպով վերարտադրել և պաշտպանել թուրքական տեսակետները, վկայում էր Գերմանիայի արտգործնախարարության կողմից պատվիրակությանը հանձնված մայիսի 8-ի հուշագիրը, որտեղ նշվում էր, թե թուրքական զորքերը ներխուժման ժամանակ, որպես կանոն, խիստ կարգապահություն էին պահպանում, չեզոք և հակառակորդ երկրների մամուլից ստացվող տեղեկությունները որոշակի դիտավորությամբ էին հորինվել, իսկ եթե առանձին վայրերում մարտեր են սկսվել բնակչության զանազան տարրերի միջև, ապա թուրքական զորքերը դրանում

<sup>1</sup> Ավետիսյան Գ., Հայկական հարցը..., էջ 183-184:

<sup>2</sup> Պատվիրակության անդամների Բեռլին ժամանելու օրը, ապրիլի 22-ին, Անդրկովկասյան սեյմը հայտարարել էր Ռուսաստանից Անդրկովկասի անջատման և Անդրկովկասի դաշնային հանրապետության ստեղծման մասին, ինչի մասին նրանք տեղեկանում են միայն պետքարտուղարի հետ հանդիպման ժամանակ: Ցավոք՝ պատվիրակությունը Բեռլինում, առհասարակ, զուրկ էր թարմ տեղեկություններ ստանալու հնարավորությունից, ինչն էապես խոչընդոտում էր նրա գործունեությունը և դժվարացնում էր նաև գերմանական կառավարության կողմից սեփականված թուրքական ապատեղեկատվության հերքումը: Պատվիրակության անդամների գործունեությունը որոշակիորեն կաշկանդված էր նաև, բացի Գերմանիայի պաշտոնական ներկայացուցիչներից, ոչ ոքի և առավել ևս մամուլին իրենց՝ Գերմանիա գալու նպատակների մասին չտեղեկացնելու վերաբերյալ Գերմանիայի ԱԳՆ-ի կողմից կատարված հրահանգով: Տե՛ս ԳԳ ԱԱ, ֆ. 220, ց. 1, գ. 120, թ. 86:

<sup>3</sup> Ավետիսյան Գ., Հայկական հարցը..., էջ 184:

պատասխանատու չէին կարող լինել: Միաժամանակ հավաստվում էր, թե թուրքերն իրենց արշավանքները դադարեցրել էին և մտադրություն չունեին խախտել այն սահմանները, որոնք ընդունված էին Բրեստի պայմանագրով<sup>1</sup>:

Ինչպես փաստում է Գյոպերտի կողմից մայիսի 21-ին հեղինակված նոթագրությունը, նրա հետ հանդիպումը նույնպես պատվիրակությանը ոչինչ չէր տվել: Նա տեղեկացրել էր, որ թուրքերի կողմից «ռազմական պատճառներով» Արդահանի, Կարսի և Բաթումի սահմաններն անցնելը գերմանական զինվորականության կողմից համարվել է «իրավացի», և որ «այս ու այնտեղ» հայերի հետ տեղի ունեցած ընդհարումների առնչությամբ թուրքական կառավարության հետ տեղի էր ունենում հեռագրերի փոխանակություն: Միաժամանակ Գյոպերտը պատվիրակության անդամներին հայտնում է, որ մոտակա շրջանում Կովկաս էր ուղարկվելու Թուրքիայի ու թուրքերի լավ գիտակ գնդապետ բարոն Կրես ֆոն Կրեսենշտայնը, որին առանձնահատուկ կերպով խնդրվել էր զբաղվել հայերի հարցերով, և հայ պատվիրակները հայրենիք վերադառնալուց հետո կարող էին հարկ եղած դեպքում դիմել նրան, ինչպես և գեներալ ֆոն Լոսովին<sup>2</sup>:

Հայոց ազգային խորհուրդը կարիք չունեց, իհարկե, սպասել Գյոպերտի ցուցումներին՝ ֆոն Լոսովին դիմելու համար: Բաթումի բանակցություններին մասնակցող հայ պատվիրակները բազմիցս հանդիպումներ են ունենում նրա հետ և մինչև իսկ խնդրում են նրան գրավել Կովկասի հայկական շրջանները: «Մենք եղանք Լոսովի մոտ, – գրում էին Գ. Օհանջանյանը և Ս. Պապաջանյանը, – նրա օգնությունը խնդրեցինք հայերի պաշտպանության գործում: Նա խոստացավ այդ մասին հեռագրել կայսր Վիլհելմին և խնդիր հարուցել զինվորներ ստանալու համար, նաև ասաց, որ եթե հայերը որոշեն պատվիրակություն ուղարկել Գերմանիա, ապա ինքը նրան կվերցնի իր հետ: Առանձին հույսեր նա

<sup>1</sup> Անդ:

<sup>2</sup> Deutschland und Armenien 1914-1918..., էջ 388: Կրես ֆոն Կրեսենշտայնը Կովկաս մեկնելուց առաջ ստացավ գեներալ-մայորի կոչում, իսկ մայիսի կեսերին ժամանելով Թիֆլիս՝ ստանձնեց Վրաստանում Գերմանիայի պաշտոնական ներկայացուցիչ պարտականությունները: Տե՛ս Խատիսյան Ալեքսանդր, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ 1968, էջ 92: Նա իր թղթակցությունները հիմնականում ստորագրում էր «ֆոն Կրես» անվանաձևով:

չտվեց... Մենք 23-ի գիշերը ուղարկեցինք գրավոր դիմում խնդրելով գրավել Կովկասի հայկական շրջանները»<sup>1</sup>:

Լոսովը, բնականաբար, որքան էլ ըմբռնունով էր մոտենում հայերի համար ստեղծված լրջագույն կացությանը, չէր կարող հույսեր տալ, քանի որ նա զինվորական էր, կատարող և նույնիսկ մեծ ցանկության դեպքում, բայց առանց համապատասխան հրահանգների, չէր կարող կոշտ միջամտության նախաձեռնություն հանդես բերել: Եվ այնուամենայնիվ, ինչպես վկայում են սկզբնաղբյուրները, նա իրապես հայ պավիրակներին կեղծ խոստումներ չէր տվել և գերմանական կառավարությանն ուղղված իր բարեխիղճ ու մանրագին տեղեկատվության միջոցով ձգտում էր ձեռք բերել այդ հրահանգները: Ինչպես նա տեղեկացնում էր իր արտգործնախարարությանն ուղղված մայիսի 23-ի հեռագրում, անդրկովկասյան պատվիրակության հայ ներկայացուցիչները մի շարք այլ հայ վստահված անձանց հետ միասին իր հետ արդեն բազմիցս հանդիպումներ էին ունեցել, ընդունել էին, որ մինչև պատերազմը իրենք քաղաքականապես դեպի Ռուսաստանը և Անգլիան էին կողմնորոշվել, ինչի համար, սակայն, ինչպես գեներալն էր նշում, նրանց մեղադրել չէր կարելի:

Նրանք ֆոն Լոսովին միաժամանակ հանդիսավորապես վստահեցրել էին, որ եթե հայերի փրկությունը Գերմանիայի միջոցով տեղի ունենա, ապա իրենք ընդմիջտ կապված կլինեն Գերմանիայի հետ: Դա մատնանշելով որպես կարևոր նախադրյալ Հայկական հարցի առնչությամբ ողջ աշխարհում Գերմանիայի դեմ տարվող պրոպագանդան «մեկ հարվածով» չեզոքացնելու համար՝ գեներալը դարձյալ կառավարության ուշադրությունը հրավիրում էր հայերի համար ստեղծված ճգնաժամային իրադրության վրա: «Ինչպես ես շարունակ տեղեկացնում եմ, թուրքական քաղաքականության նպատակը հայկական շրջանների մշտական գրավումը և հայերի բնաջնջումն է, – հայտարարում էր նա, – Թալեաթի և Էնվերի բոլոր երկուստեք հավաստիացումները կեղծ են: Կոստանդնուպոլսում հաղթանակել է ծայրահեղ հակահայկական ուղղությունը: Թուրքական ծրագիրն այսօր պարզ է. նրանք վստահ են, որ կստանան Ախալցխայի մահմեդական շրջանը: Ախալքալաքի լիովին հայկական շրջանը նրանք փորձում են, փաստերը քողարկելով, ներկայացնել՝ որպես Ախալցխայի շրջանին պատկանող տարածք: Ալեքսանդրապոլ քա-

ղաքը նրանք գրավել են: Նրանք ուզում են զավթել դեպի Զուլֆա տանող երկաթուղին, ներառյալ երկաթուղուց հարավ ընկած 25 կմ-անոց մի գոտի՝ այն երբեք չվերադարձնելու դիտավորությամբ, թաթար բնակչության համաձայնությամբ զավթել Ելիզավետպոլի և Բաքվի նահանգները, միաժամանակ շարժվել դեպի Բաքու՝ այնտեղից բուլշևիկներին քշելու և այնտեղ ամրանալու համար: Ճակատում Ախալքալաքից հարավ գտնվող թուրքական զորամասերը առաջանում են Թիֆլիսի և Երևանի դեմ: Քուրդ և թաթար կամավորները, որոնք ուղեկցում են բանակին, բնակավայրերում թալանում և սպանում են հայերին: Բոլոր հայ տղամարդիկ առևանգվում են: Հայկական զորամասերը նահանջում են դեպի արևելք՝ առճակատումներից խուսափելու համար: Հայ բնակչությունը փախչում է դեպի արևելք և շուտով ստիպված կլինի հանդիպել թաթարներին, ինչը պետք է կոտորածների հանգեցնի: Հայ բնակչության համար այլևս տեղ չի մնում, որի վրա նա կարողանա ապրել: Դա պետք է հասցնի պարտիզանական կռվի, ինչն Ալեքսանդրապոլ-Զուլֆա գծի վրա անհնար է դարձնելու փոխադրումն ու մատակարարումը, որոնք մեր շահերից են բխում: Ես ենթադրում եմ, որ թուրքերը հենց այդ դիտավորությունն ունեն: Հայոց ազգային խորհրդի կողմից լիազորված պատվիրակությունը խնդրում է Գերմանիայի պաշտպանությունը հայ ժողովրդի լիովին բնաջնջումը կասեցնելու համար, խնդրում է հայկական տարածքի մնացորդը գերմանական հովանավորության տակ վերցնել: Այդ մասին պաշտոնական գրությունը իմ ձեռքում է: Անհրաժեշտ է Թուրքիայի վրա իսկույններ հաստատուն ճնշում գործադրել, եթե հայերի բնաջնջումը պետք է արգելվի: Խնդրում եմ հնարավորինս շուտ մի ռազմանավ ուղարկել, մի գումարտակ դեպի Փոթի և հրահանգներ հայկական պաշտոնական դիմումի առնչությամբ: Անհրաժեշտ է անհապաղ գործել»<sup>1</sup>:

Գեներալ ֆոն Լոսովը, որը փոքր-ինչ ավելի ուշ Թիֆլիս ժամանած գեներալ ֆոն Կրեսի միասին ակնհայտորեն թուրքական կողմին հակադրելու՝ գերմանական բանակի անենաարմատական թևն էր ներկայացնում, վերոնշյալ հաղորդագրությունից մեկ օր առաջ մեկ այլ հեռագրով արդեն տեղեկացնում էր, որ թուրքական արշավանքի հետևանքով Անդրկովկասյան «կոնֆեդերացիան» փլուզվել էր, Ելիզավետպոլում և մյուս թաթարական շրջաններում թուրքական դրոշներ էին կանգ-

<sup>1</sup> ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թ. 112:

<sup>1</sup> Deutschland und Armenien 1914-1918... էջ 388-389:

նեցված, և որ թուրքական կանոնավոր ու անկանոն ուժերն արշավում էին Երևանի վրա: «Կոստանդնուպոլսի նոր թուրքական իմպերիալիզմի նպատակը ամբողջ Կովկասի նվաճումն է, – հայտարարում էր նա իր հեռագրում, – Թալեաթի և կոմիտեի նպատակը հայերի լիակատար բնաջնջումն է: Կոստանդնուպոլսում գտնվող պատերազմի վաշխառումների նպատակը Թուրքիայի կողմից գրաված կովկասյան պետությունների հյուսիսարևմտյան մասերի հաշտության հաստատումն է: Դեպի Պարսկաստան զորքերի փոխադրումները միայն պատրվակ են թուրքական բոլոր պահանջները հարկադրելու համար: Թուրքերը ... ուզում են Կովկասը թալանել առանց որևէ գերմանական...»<sup>1</sup>:

Այնուհետև տեղեկացնելով, որ Վրաստանը, մայիսի վերջին իր անկախությունը հռչակելով, արտագործնախարար Չխենկելիի միջոցով պաշտոնապես խնդրելու էր Գերմանիայի հովանավորությունը, և որ հայկական պատվիրակությունը գերմանական կայսերը և Թուրքիայի քրիստոնյա դաշնակիցներին աղերսագին խնդրում էր հայ բնակչությանը ջարդերից պաշտպանել, ֆոն Լոսովը ցուցումներ էր խնդրում Վրաստանի խնդրանքի հանդեպ դիրքորոշում ցուցաբերելու համար: Անձամբ նպատակահարմար համարելով բավարարել Վրաստանի խնդրանքը, որի միջոցով Կովկասում Գերմանիայի ներկայությունը կապահովվեր, իսկ թուրքերի՝ Վրաստանում ամրանալու հավանականությունը կբացառվեր, Լոսովը մատնանշում էր, որ հայերը նույնպես կամենում էին անկախացումից հետո Վրաստանի նման խնդրել Գերմանիայի հովանավորությունը:

Հատկանշական է, որ մայիսի 23-ին, արտագործնախարարությանն ուղարկելով ֆոն Լոսովի վերոնշյալ հեռագիրը, դեսպան Բեռնշտորֆը նշում էր, որ գեներալ ֆոն Չեկտն արդեն կատարել էր համապատասխան բոլոր կարգադրությունները, ինչի հետևանքով ինքն անձամբ ի վիճակի չի եղել Թուրքիայի կառավարության մոտ հաջողությամբ առարկություններ կատարել «այդ միջոցառումների» կապակցությամբ: Միաժամանակ դեսպանը հավաստիացնում էր, որ կատարվածը չէր դատապարտում, այլ ավելի շուտ հակված էր ընդունելու ֆոն Չեկտի դիրքորոշումը:

<sup>1</sup> Բնագրում միտքը մնում է անավարտ: St'u Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., էջ 501:

Դժվար չէ նկատել, որ այստեղ հարցը վերաբերում էր թուրքական առաջխաղացման և ոճրագործությունների առնչությամբ գերմանական ռազմական ներկայացուցչության երկու տարբեր դիրքորոշումների, և որ, ի տարբերություն ֆոն Լոսովի, որը Թուրքիայի դեմ հարկադրանքի միջոցառումներ գործադրելու կողմնակից էր, գեներալ ֆոն Չեկտը ներկայացնում էր գերմանական զինվորականության առավել լոյալ և հանդուրժողական թևը: Եվ պատահական չէ, որ դեսպանը, որին չէր հաջողվել վերոնշյալ նախազգուշացումների ճանապարհով որևէ կերպ ազդել թուրքական կողմի վրա, պատասխանատվությունը իրենից վանում էր անձամբ ևս իր համերաշխությունը հայտնելով ֆոն Չեկտի տեսակետներին<sup>1</sup>:

Դեսպանի մատնանշմամբ՝ ներկա իրադրությունը չէր լինի, եթե կովկասցիները ժամանակին հետևեին անմիջապես խաղաղություն հաստատելու՝ իր խորհրդին, մինչդեռ այժմ, ըստ նրա, դրա համար չափազանց ուշ էր: Այժմ նա առաջարկում էր մի հերթական առևտուր կատարել Թուրքիայի հետ. թուրքական կառավարության կովկասյան քաղաքականության հարցում Գերմանիայի տևական աջակցությունը երաշխավորելու դիմաց Թուրքիայից պահանջել, որ նա գրավոր կերպով Կովկասում, որոշակի բնագավառներում Գերմանիայի տնտեսական շահերի գերակայությունն ընդունելու երաշխիքներ տար<sup>2</sup>:

Թուրքական ոճրագործությունների հանդեպ Բեռնշտորֆի հանդուրժողական դիրքորոշումն առավել ընկալելի դարձնելու համար արժե, թերևս, նշել, որ երբ մայիսին Թիֆլիս ժամանեց գեներալ ֆոն Կրեսը, որը տեղի ունեցող իրադարձությունների և հայ ժողովրդին սպառնացող բնաջնջման վտանգի վերաբերյալ օբյեկտիվ տեղեկատվությանը զուգահեռ ԱԳՆ-ին ուղղված իր թղթակցություններում նաև այն տեսակետն էր զարգացնում, որ Գերմանիան պետք է հնարավորինս արագ ազդու միջոցներ ձեռնարկեր թուրքերին կանգնեցնելու համար, դեսպանը արտագործնախարարությանն առաջարկում էր Կրեսին ուղարկել Կ. Պոլիս՝ նրա և ֆոն Չեկտի քայլերը համապատասխանեցնելու համար, որոնք «եթե ձեռք ձեռքի տված» չաշխատեին, կարող էին ի հայտ գալ «անկանխատեսելի հետևանքներ»<sup>3</sup>:

<sup>1</sup> Աճդ, էջ 501:

<sup>2</sup> Աճդ, էջ 502:

<sup>3</sup> Աճդ, էջ 511:

Ինչևէ, ինչպես վկայում են գերմանական դիվանագիտական տեղեկագրերը, գերմանական բարձրաստիճան զինվորականության մի նշանակալից մասը ամենևին էլ իրավացի չէր համարում թուրքական բանակի կողմից Բրեստի պայմանագրով նախատեսված սահմանների խախտումը, և Գյոպերտի կողմից հայ պատվիրակությանը տրված հավաստիացումն իրականությանը չէր համապատասխանում: Այնուհանդերձ Գերմանիայի պաշտոնական քաղաքականությունը հեղինակվում և մշակվում էր կանցլերի գրասենյակում, որն ամենևին էլ մտադիր չէր հրաժարվել իր ավանդական գործելակերպից, այն է Թուրքիայի հետ հարաբերությունները չվտանգել և միաժամանակ փորձել պաշտոնական ու ոչ պաշտոնական նախազգուշացումների միջոցով իրեն ապահովագրել թուրքական ոճրագործությունների համար մեղսակից և համապատասխանատու դառնալու վտանգից: Դրա առավել ցցուն օրինակը կարելի է համարել գեներալ Լոսովի վերոնշյալ ասիական գից հետո, մայիսի 26-ին, արտգործնախարարության կողմից Կոստանդնուպոլսի դեսպանին ուղղված հրահանգը, որտեղ նրան մասնավորապես հանձնարարվում էր Բ. Դռանը «բարեկամաբար, սակայն որոշակի ձևով, բանավոր կերպով» հայտնել, որ գերմանական կայսերական կառավարությունն իրեն վերապահում էր Կովկասում տեղի ունեցող բոլոր իրադարձությունները վերահսկելու իրավունք և պահպանում էր իր դիրքորոշումը Արդահանի, Կարսի և Բաթումի շրջանների ներսում կամ դրանցից դուրս իրագործված այն միջոցառումների առնչությամբ, որոնք չեն համապատասխանում Բրեստ-Լիտովսկի խաղաղության պայմանագրին: Հրահանգվում էր նաև հայտնել, որ կայսերական կառավարությունը Կովկասում թուրքական զորքերի հետագա առաջխաղացումը և նշված երեք շրջաններից դուրս թուրքական քարոզչության ծավալումը չէր կարող ոչ պաշտպանել, և ոչ էլ հավանություն տալ դրանց, որ Գերմանիան վրացական կառավարությանը ճանաչում էր՝ որպես օրինական կառավարություն և սկզբունքորեն ճանաչում էր Վրաստանի անկախությունը օսմանյան կառավարությանը կոչ անելով նույնը անել և հարգել Վրաստանի սահմանները, իսկ Վրաստանի ճշգրիտ սահմանագծումը պետք է տեղի ունենար Գերմանիայի մասնակցությամբ:

Ինչ վերաբերում էր Հայաստանին, ապա գերմանական կառավարությունը օսմանյան կառավարությանը խնդրում էր գրաված տարածքներում ապահովել պատշաճ վերաբերմունք հայերի նկատմամբ և իրեն իրավունք էր վերապահում ավելի մանրամասն առաջարկներ կատարել

այդ ուղղությամբ: Հրահանգի 5-րդ կետով օսմանյան կառավարության ուշադրությունը հրավիրվում էր այն հանգամանքի վրա, որ Թուրքիան Գերմանիայի դեմ գոյություն ունեցող քաղաքական պայմանագրերից չէր կարող պաշտպանության կամ աջակցության պահանջներ բխեցնել այնպիսի ռազմական կամ դիվանագիտական գործողությունների համար, որոնք նա նախաձեռնում էր՝ առանց Գերմանիայի համաձայնության կամ հակառակ Գերմանիայի խորհրդի: Գերմանիան այդօրինակ ինքնիշխան ձեռնարկումները մերժում էր և պարտավոր էր հետևանքները թողնել Թուրքիայի վրա: Իսկ եթե ուժերի կամայական փոշիացման հետևանքով Թուրքիայի ընդհանուր դրությունը վատանար, և պայմանագրային կարգով վավերացված նպատակները հարցականի տակ դրվեին, ապա Թուրքիան պետք է միայնակ կերպով հաշվի նստեր այդ իրադրության հետ: Նմանապես նաև Գերմանիան չէր կարող հետագայում քողարկել Թուրքիային, եթե նրա կողմից Կովկասի քրիստոնյա բնակչության նկատմամբ անկարգություններ կատարվեին:

Արտգործնախարարությունը, բացի այդ, դեսպանին հանձնարարում էր գեներալ Լոսովի հետ համաձայնեցմամբ Բ. Դռանը առաջարկներ կատարել Վրաստանի սահմանագծման և հայերի հանդեպ պատշաճ վերաբերմունքի ցուցաբերման առնչությամբ՝ նշելով, որ ԱԳՆ-ն չէր կարող բավարարվել հայերի վերաբերյալ թուրքական կողմից տրվող հավաստիացումներով, և որ անհրաժեշտ էր, առնվազն, գերմանացի սպաների կամ քաղաքացիական պաշտոնյաների միջոցով գրաքննության չենթարկված տեղեկատվություն ստանալ<sup>1</sup>:

Հատկանշական է, որ գերմանական կառավարությունը, մի կողմից, խուսափում էր վերոնշյալը Բ. Դռանը գրավոր կերպով ներկայացնել և կանենում էր բավարարվել միայն «բարեկամաբար, սակայն որոշակի ձևով, բանավոր կերպով կատարվող պարզաբանմամբ», մյուս կողմից՝ մայիսի 26-ին նույն տեքստը հեռագրում էր Վիեննա՝ առաջարկելով, որ նույն աներ նաև Ավստրիայի կառավարությունը, որպեսզի թուրքական կառավարությանը պարզ դառնար, որ դա երկու դաշնակիցների միասնական մոտեցումն էր: «Մենք ոչ մեր սեփական ժողովրդի, ոչ էլ աշխարհի առջև չենք կարող պատասխան տալ այն բանի համար, որ թողել ենք, որ Բրեստի պայմանագրի որոշումները, որոնք մեր օգնությամբ են ուժի մեջ մտցվել, չարաշահվեն՝ որպես Կովկասի քրիստոնյաներին

<sup>1</sup> Աճդ, էջ 502-504:

հալածելու ազատությունը երաշխավորող փաստաթուղթ».— նշված էր Վիեննա ուղարկված հեռագրում<sup>1</sup>:

Սայիսի 27-ին դեսպանն այդ առնչությամբ արդեն հանդիպում էր ունեցել Մեծ վեզիրի, արտգործնախարարի և էնվերի հետ, որոնք հերքել էին ֆոն Լոսովի արտահայտած տեսակետները՝ հայտնելով, որ իրենք մտադիր չեն նվաճել ամբողջ Կովկասը, այլ, իբրև թե, ուզում են հնարավորություն ունենալ իրենց գործերն անվնաս ուղարկելու Պարսկաստան և Միջագետք: Նրանք դեմ չէին արտահայտվում Վրաստանից թուրքական գործերն ամբողջովին դուրս բերելու առնչությամբ, սակայն իրենց առաջխաղացումը պատրվակում էին այն հանգամանքով, թե կովկասցիները Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը երբևէ չէին ճանաչել, և որ իրենք նպատակ ունեին նրանց հարկադրել ճանաչել դա: Ինչ վերաբերում էր հայերին, ապա դեսպանը մատնանշում էր, որ այդ հարցը հեշտությամբ կկարգավորվի, երբ գերմանացի սպաներ կուղարկվեն Կովկաս:

Բեռնշտորֆը միաժամանակ առաջարկում էր իրեն լիազորել հնարավորինս շուտ նախաձեռնելու Կովկասի վերաբերյալ բանակցությունների մեկնարկում դաշնակիցների և թուրքիայի կառավարության միջև: Գեներալ ֆոն Կրեսի թիֆլիս ժամանելուց հետո, նշում էր նա, դարձյալ հնարավորություն կստեղծվեր այնտեղից ուղղակի կերպով հավաստի տեղեկություններ ստանալ, որոնք կարող էին հիմք դառնալ բանակցությունների համար<sup>2</sup>:

Արտգործնախարարությունը հենց նույն օրը՝ մայիսի 27-ին, իր ընդառաջումն էր հայտնում այդ առաջարկի կապակցությամբ՝ նշելով, որ բանակցությունների նպատակը Անդրկովկասյան դաշնության, իսկ եթե վերջինս արդեն գոյություն չուներ, ապա Վրաստանի և թուրքիայի միջև փոխհամաձայնության ձեռքբերումը պետք է լիներ, և, բացի այդ, քանի

<sup>1</sup> Sten Deutschland und Armenien 1914-1918..., էջ 390-391:

<sup>2</sup> Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., էջ 505: Գեներալ ֆոն Լոսովը, որը մինչ այդ գտնվում էր Բաթումում, կարճ ժամանակով մեկնել էր Կոնստանդա, իսկ գնդապետ ֆոն Կրեսը դեռ չէր ժամանել Թիֆլիս: Դեսպանի այդ տեղեկությունը կատարվել էր միայն հավուր պատշաճի, քանի որ Կովկասում գտնվող գերմանական զինվորականները, բնականաբար, նույնիսկ մեծ ցանկության դեպքում չէին կարող գործել առանց հրահանգների, իսկ դրանք հետագայում էլ բացակայում էին:

որ Հայկական հարցը նույնպես նշանակալից դեր պետք է խաղար, հայ պատվիրակները այդ բանակցությունների միջոցով իրենց հարցերն ավելի լավ կարող էին կարգավորել, քան Գերմանիա մեկնելով:

Այս խոսքերն ինքնին վկայում են, թե որքան անօգուտ էին հայ պատվիրակների Բեռլինում գործադրած ջանքերը: Նրանք դիմել էին նաև Բեռլինում Ավստրո-Յունգարիայի դեսպանությանը՝ Վիեննա մեկնելու և ավստրիական կառավարության հետ հանդիպումներ ունենալու համար: Երբ, սակայն, ի պատասխան նրանց տեղեկացվեց, որ արտգործնախարար Բուրյանը չէր կարող նրանց ընդունել<sup>1</sup>, նրանք իրենց առաքելությունը համարեցին ավարտված և մայիսի 30-ին, վերջին ուղերձը հղելով արտգործնախարարությանը, բռնեցին վերադարձի ճանապարհը: Ուղերձում տեղեկացնելով, որ թուրքական գործերն արդեն ներխուժել են Երևանի նահանգ և առաջանում են դեպի Երևան ու Էջմիածին՝ պատվիրակությունն ընդգծում էր, որ եթե դաշնակիցները նրանց չկանգնեցնեն, ապա հայերը ստիպված կլինեն կենաց ու մահու պայքարի դուրս գալ, «և եթե նրանց հուսահատ դրությունը նրանց մղի հուսահատ ձեռնարկների, որոնք ամբողջ Կովկասը կվերցնեն բոցերի մեջ, ապա դրա պատասխանատվությունը իրենք չէ, որ պիտի կրեն»<sup>2</sup>:

Իսկ այն բանից հետո, նշված էր ուղերձում, երբ թուրքերը բազմիցս գերմանական կառավարությանը խոստացել էին Կովկասի սահմանները չանցնել, մինչդեռ Բաթումի բանակցությունները չավարտված՝ դրժեցին իրենց խոստումը, հայերն այլևս հավատ չէին կարող ընծայել թուրքական խոստումների հանդեպ: Պատվիրակությունը նաև նախազգուշացնում էր, որ, հակառակ պատերազմում չեզոք դիրքորոշում ունենալու իր մտադրությանը, հայկական կողմը հարկադրված էր լինելու ընդունել ցանկացած օգնություն, որ երկրի կողմից էլ որ դա ցուցաբերվեր, և ի վերջո դարձյալ իր հույսն էր արտահայտում առ այն, որ գերմանական կառավարությունը ազդու քայլերի կդիմեր՝ թուրքական առաջխաղացումը կանգնեցնելու համար<sup>3</sup>:

Իսկ ինչպե՞ս էր Գերմանիայի դեսպանն անձամբ հնարավոր համարում խնդրի կարգավորումը ստեղծված ճգնաժամային պայմաններում: «Երբ արդեն Կովկասյան հանրապետությունը լուծարվել է, իմ կարծի-

<sup>1</sup> Sten Ավետիսյան Հ., Հայկական հարցը..., էջ 188:

<sup>2</sup> Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., էջ 510:

<sup>3</sup> Անդ:

քով այլ բան չի մնում, քան Հայաստանը միացնել Վրաստանին՝ վերցնելով գերմանական զորքերի պաշտպանության ներքո, – գրում էր Բեռն-շտորֆը մայիսի 31-ին: – Դրա համար, սակայն, պետք է առկա լինի փոխհամաձայնություն: Այլապես Կովկասում կբռնկվեն ռասայական և կրոնական պատերազմներ, որոնք կշարունակվեն այնքան ժամանակ, մինչև այլևս ոչ ոք չի մնա: Թուրքերը բոլոր օրինական և անօրինական միջոցներով կպայքարեն անկախ Հայաստանի գաղափարի դեմ: Նրանք չեն ուզում իրենց սահմանի մոտ մահացու թշնամի ունենալ: Կովկասի ներկայիս իրադրության պայմաններում կարելի է ընդունել, որ հայերն ամենուրեք, որտեղ թվական գերակշռություն ունեն, սպանելու են թուրքերին, և հակառակը նույնպես տեղի կունենա այնտեղ, որտեղ մեծամասնությունը թուրքեր են»<sup>1</sup>:

Վերոնշյալ տեսակետին հակառակ՝ թուրքական կառավարությունը ձգտում էր Հայաստանը տեսնել ոչ թե Վրաստանի, այլ Ադրբեջանի կազմում, անշուշտ, հասկանալի է, թե ինչ պատճառներով: Ինչպես Բեռն-շտորֆը արտգործնախարարությանը տեղեկացնում էր իր հունիսի 1-ին ուղարկած տեղեկագրում, Թալեաթը և Էնվերն իրեն իրազեկել էին, թե Հալիլը խաղաղություն էր հաստատել Վրաստանի և, այսպես կոչված, «Հարավկովկասյան հանրապետության» հետ, որի բնակչությունը պետք է «բաղկանար հայերից և թաթարներից»<sup>2</sup>:

Եթե նույնիսկ դեպքերից առաջ անցած Թալեաթի և Էնվերի այդ տեղեկությունն իրականությանը չէր համապատասխանում, ապա ամեն դեպքում դա բացահայտում էր Անդրկովկասի հայության և հայկական տարածքների հետ այդ եղանակով վերջնական հաշվեհարդար տեսնելու՝ թուրքական կողմի դիտավորությունը: Տվյալ տեղեկությունը, ամենայն հավանականությամբ, նպատակ ուներ պարզել Գերմանիայի վերաբերմունքն այդ առնչությամբ, և վերջինիս նաև, ըստ հնարավորին, հաշտեցնել այդ գաղափարի հետ:

Պաշտոնական Գերմանիան, սակայն, ինչպես վկայում է ԱԳՆ-ի կողմից հունիսի 3-ի ամսաթվով Կ. Պոլսի դեսպանին հասցեագրված հանձնարարականը<sup>3</sup>, ակնհայտորեն դեմ էր Թալեաթի և Էնվերի առաջարկած

լուծմանը: «Խաղաղության պայմանագրերը, որոնք Թուրքիան կստորագրի առանց համաձայնեցնելու իր դաշնակիցների հետ, մեր կողմից չեն կարող ճանաչվել, – նշված էր այնտեղ, – քանի որ դրանք կհակասեն 1916 թ. սեպտեմբերի 28-ի գերմանա-թուրքական պայմանագրի 3-րդ հոդվածով ամրագրված անջատ հաշտության կնքման արգելքին: Մենք կարող ենք միայն այնպիսի պայմանագրերն ընդունելի համարել, որոնք չորս դաշնակիցների մասնակցությամբ են կնքվում: Չերդ Գերագնությունը ես խնդրում եմ Բ. Դռանը դա տեղեկացնել: ...Բոլոր կողմերից, Իսպանիայի թագավորից, Շվեյցարիայից, ինչպես նաև բոլորովին վերջերս այստեղ եկած Հայոց ազգային խորհրդի պատվիրակների կողմից մեզ խնդրանքներ են ուղղվում հայերին օգնելու համար, և այն ամենի համար, ինչ պատահում է նրանց հետ, մեզ պատասխանատու են համարում:

Մենք, որպես Բրեստի պայմանագրի համաստորագրող, որը թուրքերի առջև բացել է ճանապարհը դեպի Արդահան, Կարս և Բաթում, չենք կարող խուսափել այդ պատասխանատվությունից: Մեր միանգամայն վստահելի հեղինակությունների և հայ պատվիրակների տեղեկությունները համապատասխանում են այն հարցում, որ թուրքերը, հաշվի չառնելով իրենց բոլոր խոստումները, ծրագրված կերպով ոչնչացնում են Կովկասի հայերին կամ բարեհաճ պասիվությամբ թուլատրում են դա անել: Այդ իրավիճակում մենք պարտավոր ենք պնդել, որ թուրքական կառավարությունը ոչ միայն, իր խոստումներին համապատասխան, հետագա առաջխաղացումը անմիջապես և վերջնականապես դադարեցնի, այլև այսուհետ առանց հապաղման նաև ազդու երաշխիքներ ստեղծի՝ արդեն գրաված տարածքներում հայերին կանոնավոր և անկանոն գործասերի կամայականություններից պաշտպանելու համար:

...Ինչպես գեներալ Լուդենդորֆն է գեներալ ֆոն Չելսիին հեռագրել, Թուրքիան չի կարող ակնկալել, որ մենք նրան գերմանական արյունով կամ գերմանական ծախսերով դարձյալ թուրքական տարածք կտրամադրենք, որի պաշտպանումը... նա անձամբ արհամարհում կամ

<sup>1</sup> Անդ, էջ 511:

<sup>2</sup> Անդ, էջ 512:

<sup>3</sup> Անդ, էջ 514-515: Կայսերական Գերմանիայի քաղաքական արխիվում գտնվող այդ գրության սկզբնամասում Քյուլիմանը հայտնում է, որ մտադիր էր

դա ուղարկել Կ. Պոլսի դեսպանին: Արդյոք այն ուղարկվել է, թե ոչ, հաստատապես անհնար է ասել: Եթե, սակայն, նկատի առնենք, որ արխիվում բացակայում է նաև դեսպանի պատասխան հաղորդագրությունը, իսկ ընդամենը մեկ օր անց հայկական և թուրքական կողմերի միջև ստորագրվեց Բաթումի պայմանագիրը, ապա կարելի է ենթադրել, որ այն չի ուղարկվել:

վտանգում է: Մի նման վտանգում կարելի է տեսնել նաև հայերի դեմ իրագործվող անկարգություններում, քանի որ դրանով ամբողջ քաղաքակիրթ աշխարհը թուրքիայի և նրա դաշնակիցների վրա կգայրանա, և դրա հետևանքով կդժվարանա կորցրած տարածքները դիվանագիտական ճանապարհով վերստին ձեռք բերելու հեռանկարը»<sup>1</sup>:

Սարդարապատում, Բաշ Ապարանում և այլ շրջաններում հայ ժողովրդի մղած հերոսական պայքարը, այնուհանդերձ, թուրք զավթիչներին պետք է հարկադրեր հրաժարվել Հարավկովկասյան հանրապետության ստեղծման դիտավորությունից և ուղղակի բանակցությունների մեջ մտնել հայկական կողմի հետ: Չնայած Հայաստանի Հանրապետությունը, Գերմանիայից որևէ շոշափելի աջակցություն չստանալով, հարկադրված էր հունիսի 4-ին ընդունել թուրքական կողմի պայմաններն ու ստորագրել Բաթումի պայմանագիրը, այնուամենայնիվ նա դրանով նաև ինքնահաստատեց իրեն՝ փաստելով իր գոյության անժխտելի իրավունքը:

Բաթումում կնքված պայմանագրով, ի թիվս այլ հոդվածների, Երևանի նահանգից Թուրքիային էին անցնում Սուրմալուի գավառն ամբողջությամբ, Ալեքսանդրապոլի և Էջմիածնի գավառների մեծ մասը և Երևանի ու Շարուր-Ղարալագյազի գավառների մի մասը: Այդպիսով Հայաստանին հատկացվում էր ընդամենը մոտ 10.000 քառ. կմ տարածք: Հայաստանը պետք է զինաթափվեր և դիվանագիտական հարաբերություններ չստեղծեր Թուրքիայի դեմ պատերազմական դրության մեջ գտնվող պետությունների հետ: Թուրքիան իրավունք էր ստանում իր զորքերը փոխադրել հանրապետության երկաթուղով, որի համար բոլոր երկաթուղային կայարանները պիտի գտնվեին թուրքերի հսկողության տակ: Թուրքիայի հետ կնքված այդ պայմանագիրը, փաստորեն, Բրեստ-Լիտովսկի պայմանագրի համեմատ շատ ավելի ծանր պայմաններ ուներ<sup>2</sup>:

<sup>1</sup> Անդ:

<sup>2</sup> Բաթումի պայմանագրի տեքստին ամբողջությամբ ծանոթանալու համար տես Ազատյան Գ., Բախտորոշ պայմանագրեր..., էջ 86-90:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

### ԳԵՐՄԱՆԱ-ԹՈՒՐԶԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Նորաստեղծ Հայաստանի Հանրապետության կառավարությունը Բաթումի պայմանագրի վերանայման և դրանով ամրագրված սահմանների փոփոխման, ինչպես և Երևանում ու Կովկասում կուտակված՝ օրհասական վիճակում գտնվող հարյուր հազարավոր հայ փախստականների դրության կարգավորման համար փորձում էր ապավինել կայսերական Գերմանիայի աջակցությունը: Այդ նպատակով Հայոց ազգային խորհրդի կողմից Բեռլին ուղարկվեցին Համո Օհանջանյանը և Արշակ Ջուրաբյանը, որոնք լիազորված էին այնտեղ հանդես գալու՝ որպես Հայաստանի կառավարության պատվիրակություն<sup>1</sup>:

Հունիսի 8-ին հանրապետության կառավարության անունից, Հ. Օհանջանյանի և Ա. Ջուրաբյանի ստորագրությամբ գերմանական արտոգործնախարարությանը ներկայացվեց մի ընդարձակ հուշագիր, որտեղ ամփոփ կերպով շարադրվում էին ինչպես Արևմտյան Հայաստանի ամայացման, արևմտահայության բնաջնջման իրողություններն<sup>2</sup>,

<sup>1</sup> Դեռ մայիսի 28-ին Համո Օհանջանյանին Բեռլին մեկնելու և այնտեղ հայկական շահերը պաշտպանելու խորհուրդ էր տվել նա գեներալ ֆոն Լոսովը: Տես Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. ..., էջ 20:

<sup>2</sup> Հատկանշական է, որ հուշագրում Արևմտյան Հայաստանում տիրող ընդհանուր պատկերը ներկայացնելիս վկայակոչվում էր Պաուլ Վայթի ճանապարհորդական տեղեկագիրը: 1918 թ. ապրիլին գերմանական կառավարության հանձնարարականով գրող, հրապարակախոս Պ. Վայթը մի շարք այլ անձանց հետ միասին ճանապարհվեց Արևմտյան Հայաստան՝ ծանոթանալու համար այնտեղ տիրող ընդհանուր իրավիճակին: Հուսալով նրա և իր ուղեկիցների միջոցով մեղմացնել հայ ժողովրդի հանդեպ իրագործված ոճրագործությունների առնչությամբ Թուրքիային ուղղվող մեղադրանքները՝ թուրքական կառավարությունը ոչ միայն պատրաստակորեն աջակցեց այդ ճանապարհորդության ձեռնարկմանը, այլև գործադրեց բոլոր միջոցները «հայերի իրագործած ոճրագործությունների» մասին նրանց ապատեղեկատվություն մատակարարելու և ապակողմորոշելու համար: Պ. Վայթը, սակայն, ճանապարհորդության ըն-

այնպես էլ Կովկասում կուտակված հայ փախստականների և, առհասարակ, կովկասահայության ծանր ու ողբերգական դրությունը:

Հուշագրում թվարկվում էին նաև Բաթումի պայմանագրով Թուրքիային տրված շրջանները, և ներկայացվում էին համապատասխան վիճակագրական տվյալներ դրանցում առկա բնակչության կազմի վերաբերյալ: Միանշանակորեն ընդգծվում էր, որ 10.000 քառ. կմ. և 350.000 բնակչություն ունեցող Հայաստանի Հանրապետությունը ի վիճակի չէր ոչ միայն ապաստան տրամադրել թուրքական բանակի առաջխաղացման և բազմաթիվ տարածքների պայմանագրային զիջման հետևանքով ի հայտ եկած՝ շուրջ 800.000-ի հասնող փախստականներին, այլև անգամ կերակրել իր բուն բնակչությանը: Ուշագրավ է, որ հուշագրի հեղինակները հայ ժողովրդի համար ստեղծված այդ ծանր ու ողբերգական իրադրության շարունակման դեպքում բացառում էին Կովկասում տևական խաղաղության հաստատման հնարավորությունը. հանգամանք, որի հանդեպ կովկասյան տարածաշրջանում իր տնտեսական շահերին և ազդեցության ոլորտների ձևավորմանը հետամուտ Գերմանիան չէր կարող անտարբեր գտնվել: «Իրենց բնօրրանից փախած հայերը ստիպված կլինեն իրենց համար բնակության նոր շրջաններ որոնել,– նշված էր հուշագրում,– և քանի որ ոչ մի տեղ ազատ տարածք չկա, նրանք զենքի ուժով կներխուժեն հարևան ժողովուրդների տարածքները. մի իրողություն, որը նրանց, ինչպես և հարևան ժողովուրդներին մեծագույն վտանգների կենթարկի և... կհասցնի անկախատեսելի աղետների: Ամբողջ Կովկասը կներքաշվի արյունոտ բախումների մի վայրի քաոսի մեջ, որի հետևանքներից այն տասնամյակ-

թացքում Արևմտահայաստանի զանազան շրջաններում և քաղաքներում հնարավորություն ունեցավ շփման մեջ մտնել տեղի բնակիչների հետ, ըստ հնարավորին հստակ պատկերացում կազմել կատարվածի մասին, և վերադարձից հետո պատրաստեց մի ընդարձակ տեղեկագիր, որտեղ միանգամայն իրատեսորեն էր ներկայացվում հայության բնաջնջումից հետո Արևմտյան Հայաստանի ամայացած բնակավայրերում տիրող ընդհանուր պատկերը: Այդ տեղեկագիրը, որի արժանահավատությունը, բնականաբար, պետք է անառարկելի համարվեր, հունիսի 20-ին ուղարկվեց նաև Գերմանիայի կանցլեր իշխան ֆոն Դերտլինգին: Պ. Վայթցի տեղեկագրի ամբողջական տեքստին ծանոթանալու համար տես՝ Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., էջ 531-544:

ներ շարունակ չի կարողանա ձերբազատվել՝ իր տնտեսական և մշակութային կյանքը դարձյալ կանոնավորելու համար»<sup>1</sup>:

Հուշագրի հեղինակներն այդ հեռանկարն անխուսափելի էին համարում, եթե գեթ «վերջին ժամին» մի զորեղ ուժ չմիջամտեր իրավիճակը կարգավորելու համար: Այդ կարգավորումը, ինչպես նշում էին նրանք, կարող էր լինել Բրեստի պայմանագրով նախատեսված թուրք-հայկական սահմանի վավերացումը, ինչը հայերին հնարավորություն կտար գոյատևել մի տարածքի վրա, որ հազարամյակներ ի վեր եղել էր նրա հայրենիքի մեկ հատվածը: Իսկ ինչ վերաբերում է վերոնշյալ «զորեղ ուժին», ապա դա, հուշագրի հեղինակների հավաստմամբ, կարող էր սոսկ Գերմանիան լինել: «Միայն հզոր Գերմանիան է ի վիճակի կործանումից փրկել մի ժողովրդի, որն Ասիայի դարպասների մոտ հարյուրամյակներ ի վեր ներկայացրել է քրիստոնեական կրոնն ու եվրոպական մշակույթը»,– նշում էին նրանք:

Վերջում ընդգծվում էր նաև Կովկասի տնտեսական զարգացման հեռանկարայնությունը և այն բազում հնարավորությունները, որոնք կարող էին ծառայեցվել Գերմանիայի տնտեսական ծրագրերի իրականացմանը: Եթե, սակայն, Թուրքիային թույլատրվեր նվաճել Կովկասը, ապա Կովկասի տնտեսական զարգացման հնարավորությունները «սաղմի մեջ կխեղվեին»: «Թուրքական կառավարությունը,– ընդգծվում էր հուշագրում,– որն անկարող է իր սեփական երկրում նպաստել տնտեսական զարգացմանը, առավել անպիտան կլինի նվաճված տարածքը տնտեսապես զարգացնելու հարցում, և Կովկասի տնտեսական կյանքը շատ շուտով կկործանվի, ինչպես դա արդեն տեղի է ունեցել Թուրքիայում»<sup>2</sup>:

Վերոնշյալ պարզաբանումներն, անկասկած, հիմնավորապես կշռադատված էին, քանի որ եթե Գերմանիայի կառավարությունը կարող էր այդուհետև ևս հայության ճակատագրի հանդեպ անտարբեր գտնվել, ապա տարածաշրջանում իր հեռանկարային տնտեսական շահերն անտեսել չէր կարող: Այլ խնդիր է, անշուշտ, թե այդ շահերի վերաբերյալ հայկական և գերմանական կողմերի պատկերացումներն ինչ չափով էին միմյանց համապատասխանում:

<sup>1</sup> Անդ, էջ 519-520:

<sup>2</sup> Անդ, էջ 520:

Ինչևէ, եթե նկատի առնենք այն հանգամանքը, որ թուրքական կառավարությունը մինչ այդ գրեթե ամենևին հոգ չէր տանում իր կովկասյան գործողությունները Գերմանիայի հետ համաձայնեցնելու մասին, և մինչև իսկ կովկասյան ժողովուրդների հետ հաշտության պայմանագրերը կնքվել էին առանց գերմանական կողմի մասնակցության<sup>1</sup>, ապա ակնհայտ է, որ Թուրքիան բացահայտորեն կամենում էր տարածաշրջանում հանդես գալ իբրև միակ կամ առնվազն հիմնական գերակա ուժն ու թելադրող կողմը, մինչդեռ Գերմանիան հակված չէր դա հանդուրժելու: Դա էր, թերևս, պատճառը, որ այդ նույն օրերին պաշտոնական Գերմանիան իր թուրք դաշնակցի գործողությունների հանդեպ որոշեց դրսևորել համեմատաբար վճռական, կարելի է ասել, անախադեպ կոշտ դիրքորոշում:

Գներալ ֆոն Լոսովը երկաթուղու վերահսկողության համար արդեն հունիսի առաջին կեսին Փոթի-Թիֆլիս-Ալեքսանդրապոլ երկաթուղագծի երկայնքով տեղադրել էր գերմանական զորախմբեր, ինչը թուրքական երրորդ բանակի հրամանատարության կողմից մեծ դժգոհությամբ ընդունվեց, և մինչև իսկ գերմանական բանակի գլխավոր շտաբի պետ գեներալ Էրիխ Լուդենդորֆն իր՝ հունիսի 8-ին էնվերին ուղարկած հեռագրում հարկ էր համարում ընդգծել, որ թուրքական բանակի հրամանատարությունը գերմանական զորամասերի հանդեպ պատշաճ հարգանք և ուշադրություն չէր ցուցաբերում:

Ինչպես տեղեկացվում էր Թիֆլիսի գերմանական հյուպատոսության հունիսի 19-ի տեղեկագրում, վերոնշյալ երկաթուղագծի աշխատանքն ամբողջությամբ վերահսկվում էր գերմանացիների կողմից, և թուրքերն իրենց փոխադրումները կարող էին միայն նրանց համաձայնության դեպքում իրագործել: Միաժամանակ նշվում էր, որ Կալազերան վայրից հյուսիս ընկած տարածքում թուրքական զորքերը մինչև իսկ կրակ են բացել գերմանական զինվորի վրա, որոնք այն փոխադարձել են: Ուշագրավ է նաև էնվերի կողմից Լուդենդորֆին ուղարկված այն տեղեկու-

<sup>1</sup> Հունիսի 30-ին Գյոպերտը Բեռլինում գտնվող հայկական պատվիրակությանը հայտնել էր, որ Գերմանիան Բաթումում հունիսի 4-ին կնքված պայմանագիրը չէր ընդունում, քանի որ դա տեղի էր ունեցել առանց Գերմանիայի մասնակցության և, ըստ այդմ, հակասում էր պայմանագրերի կնքման վերաբերյալ դաշնակիցների՝ համատեղ կերպով ընդունված համաձայնությանը: Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 656, թ. 42:

թյունը, որ Ղարաքիլիսիայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում գեներալ ֆոն Լոսովի նախաձեռնությամբ կռվող հայերին միացել են նաև կովկասյան տարածաշրջան ուղարկված գերմանական ջոկատներ, որոնք ճակատամարտի ավարտից հետո թուրքերի կողմից զինաթափ են արվել և ետ են ուղարկվել<sup>1</sup>: Այս ամենը ցույց է տալիս, թե այդ օրերին Կովկասում որքան ընդգծում են եղել գերմանա-թուրքական հակասությունները, որոնք, բնականաբար, իրենց դրսևորումը պետք է ստանալին նաև երկու կողմերի պաշտոնական դիվանագիտական երկխոսության մեջ:

Հունիսի 8-ին գեներալ Լուդենդորֆը էնվեր փաշային ուղարկեց մի հեռագիր՝ պահանջելով ճանաչել Բրեստի պայմանագրով հաստատված սահմանները: «Թուրքիան, առանց հաշվի առնելու իր դաշնակիցներին, խախտել է Բրեստում կնքված պայմանագրի՝ Անդրկովկասին վերաբերող կետերը. — նշում էր նա հեռագրում: — Գերմանական կառավարությունը դրա դեմ արդեն բողոք է հայտնել և մատնանշել նման վարքագծի հետևանքները: Ես ավելորդ չեմ համարում Ձերդ Գերազանցությանը հավաստիացնել, որ լիովին համամիտ եմ գերմանական կառավարության քայլերի հետ: ... Ձերդ Գերազանցությանը ես կրկին խնդրում եմ հարգել Բրեստի պայմանագրով հաստատված սահմանները, հակառակ դեպքում ես պետք է ինձ այլ որոշումների ազատություն վերապահեմ: Պայմանագրերը, որոնք Թուրքիայի և անդրկովկասյան պետությունների միջև կնքվել են՝ շրջանցելով Գերմանիան, Ավստրիան և Բուլղարիան, ես սկզբից ևեթ չեմ կարող ճանաչել: Ինչպես Ձերդ Գերազանցությանը հայտնի է, ես միշտ ջերմորեն պաշտպանել եմ Ձեր շահերն ու ցանկությունները: Ես պետք է Ձերդ Գերազանցությանը պարզ կերպով հայտնեմ, որ այսուհետև ոչ միայն չեմ կարող դա անել, այլև, որ Թուրքիայի՝ պայմանագրին հակասող գործելակերպը ինձ համար բացառում է Ձերդ Գերազանցության հետ ցանկացած համագործակցությունը»<sup>2</sup>:

Հաջորդ օրը հունիսի 9-ին, էնվեր փաշային հեռագիր ուղարկեց նաև գերմանական բանակի գլխավոր հրամանատար ֆելդմարշալ Պաուլ ֆոն Հինդենբուրգը, որտեղ մասնավորապես նշվում էր. «Բանակի գլխավոր հրամանատարության անունից ես Ձերդ Գերազանցությանը խնդրում եմ հրամայել, որ բոլոր թուրքական զորքերը ետ քաշվեն կով-

<sup>1</sup> Անդ, էջ 527-528:

<sup>2</sup> Տե՛ս Deutschland und Armenien 1914-1918..., էջ 393-394:

կասյան տարածքից՝ բացառությամբ Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանների»<sup>1</sup>:

Այն, որ Թուրքիան մտադիր չէր հեշտությամբ տեղի տալ գերմանական պահանջներին և, սակայն, չէր կամենում նաև բարդացնել իր հարաբերությունները դաշնակցի հետ, կարող է վկայել, օրինակ, Էնվերի կողմից հունիսի 10-ին գեներալ Լուդենդորֆին ուղարկված հեռագիրը, որն, ի դեպ, նաև Թուրքիայի պանթուրքական նպատակների նորովի բացահայտման ուշագրավ վկայական է: «Ղրիմի օպերացիայի ժամանակ գերմանական գլխավոր շտաբը մեր զորքերի մասնակցությունը ցանկալի չհամարեց, - նշում էր Էնվերը հեռագրում, - և չնայած մենք նույնպես այդ հարցում շահագրգռված էինք, մեր մասնակցության համար չպնդեցինք ու ընդունեցինք գերմանական գլխավոր շտաբի տեսակետը: Պարզ և հստակ է, սակայն, որ մենք առաջին հերթին կովկասյան հարցում համաշահագրգռություններ ունենք: Չնայած այդ իրողությանը, գերմանացիները պատրաստվում են, առանց մեզ նախապես տեղեկացնելու, Թիֆլիս-Փոթի երկաթուղագծի համատեղ օգտագործման համար երկու գերմանական գումարտակ ուղարկել Վրաստան և այդ գծի վրա գերմանական ռազմագերիներից կազմված զորամասեր տեղադրել: Այլապես ևս մեր դաշնակցի կողմից բոլոր որոշումները կայացվում են միայն այստեղի դեսպանի հետ միասին:

Մեզ, ըստ այդմ, ապշեցնում է, որ մեզ ուժգին կերպով հետաքրքրող մի երկրամասում մի նման կարևոր հարցի վերաբերյալ մեր տեսակետներն ու կարծիքները չեն լսվում: Այդ պատճառով և արդյունքը հետևյալն է. մեզ ասել էին, որ Ղարաքիլիսայի մոտ հայերի դեմ տեղի ունեցած մի մարտում նրանց հետ մեր դեմ հանդես են եկել նաև գերմանական հատուկ նշանակության ջոկատները: Ես դա սկզբում հնարավոր չհամարեցի, այլ ընդունեցի՝ որպես հայերի բանեցրած խորամանկություն: Փաստը, այնուհանդերձ, հաստատվում է: Դրանից հետո ես այդ ջոկատները զինաթափել և ետ են ուղարկել: Ինչպես մեզ թվում է, այդ իրադարձությունները ինքնուրույն կերպով նախաձեռնել է գեներալ Լոսովը: Այդօրինակ գործելակերպը վրացիներին և հայերին հավատ կներշնչի, որ, իբրև թե, թուրքական և գերմանական կառավարությունները կովկասյան հարցում միասնական չեն: Այդ պատճառով խիստ անհրաժեշտ է կովկասյան հարցի վերաբերյալ մտքերը մեզ ժամանա-

<sup>1</sup> Անդ, էջ 394:

կին հաղորդել դաշնակիցների միջև երկպառակությունից խուսափելու համար:

Մենք Գուրիեստանում մեծ հետաքրքրություններ չունենք, սակայն հայերը գտնվում են մեր և Արևելքում գտնվող մուսուլմանական զանգվածների միջև: Այդ վիճակը մեզ հարկադրում է սոսկ դիտորդներ չմնալ: Այդ պատճառով ես նորին գերազանցություն գեներալ Լուդենդորֆին թախանձագին խնդրում եմ այդ հարցերի վերաբերյալ իր տեսակետը ժամանակին և ճշգրիտ կերպով տեղեկացնել ինձ»<sup>1</sup>:

Ինչևէ, այս և մյուս սկզբնաղբյուրները որոշակիորեն փաստում են, որ մայիս-հունիս ամիսներին գերմանա-թուրքական փոխհարաբերություններում ի հայտ էին եկել զգալի լարվածություն և հակասություններ, որոնց շարժառիթը Կովկասում թուրքական կողմի վարած ինքնիշխան քաղաքականությունն էր, իսկ առավել ցայտուն դրսևորումներից մեկը՝ գերմանական ջոկատների զինաթափումն ու վտարումը, որ տեղի էր ունեցել, իբրև թե, Ղարաքիլիսայի մարտերում հայերին օգնություն ցուցաբերելու պատճառով<sup>2</sup>:

Գերմանական կողմի վերոնշյալ պահանջները չիրականացան, ըստ որում ոչ միայն այն պատճառով, որ Թուրքիան մտադիր չէր դրանց հեշտությամբ տեղի տալ, այլև, որ Գերմանիան ևս դրանց իրագործմանը հետևողականորեն հետամուտ չինելու մտադրություն չունեցր: Դրանք վերջինիս անհրաժեշտ էին առաջին հերթին թուրքական կառավարությանը սաստելու, նրա գործողությունները վերահսկելի, ուղղորդելի դարձնելու և միաժամանակ նաև իր դիրքերը Կովկասում ամրապնդելու համար: Քանի որ Գերմանիան մտադիր չէր ընդունել Կովկասում Թուրքիայի ինքնիշխանության հավակնությունները, երկու կողմերն ի վերջո ձեռք են բերում պայմանավորվածություն, որ Քառյակ միության բոլոր պետությունների ներկայացուցիչների մասնակցությամբ Կոստանդնուպոլսում հրավիրվի մի համաժողով՝ Կովկասին վերաբերող սահմանալին և մյուս բոլոր խնդիրները համատեղ կերպով վճռելու համար:

<sup>1</sup> Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., էջ 527-528:

<sup>2</sup> Թուրքական ուժերի կողմից Ղարաքիլիսայում և Ղազրգանանում գտնվող գերմանական պահակային ջոկատների զինաթափման մասին փոքր-ինչ միջնորդավորված կերպով հաղորդում է նաև գեներալ Ֆոն Կրեսը՝ հունիսի 11-ին արտգործնախարարությանն ուղարկած իր հեռագրում, որտեղ նա միաժամանակ նշվում է, որ զինաթափված ջոկատներին ուղարկել են Կարս: Անդ, էջ 529:

Գերմանական արտոգործնախարարությունը դեռ հունիսի 5-ին Յաաստանի Հանրապետության պատվիրակությանը տեղեկացրել էր Կովկասում թուրքերի առաջխաղացումը կասեցնելու, նաև թուրքերի կողմից գրաված շրջաններում հայ բնակչությանը հետապնդումներից ապահովելու նպատակով գերմանական կառավարության ծեռնարկած «ազդեցիկ» միջոցառումների<sup>1</sup>, ինչպես և վերոնշյալ համաժողովի հրավիրման պայմանավորվածության մասին, որտեղ, ինչպես արտոգործնախարարությունն էր հայտնել, նախատեսված էր թուլատրել վրացական ներկայացուցչության մասնակցությունը, իսկ հայերի մասնակցության հնարավորությունը դեռ անորոշ էր մնում, քանի որ Կովկասյան Հայաստանում տիրող իրադրությունն, իբրև թե, դեռ բավականաչափ պարզ չէր:

Հունիսի 10-ին պատվիրակությունն արտոգործնախարարությանը մի նոր ընդարձակ ուղերձ ներկայացրեց, որտեղ, իր երախտագիտությունը հայտնելով վերոնշյալ նպատակներով միջոցառումների ծեռնարկման, ինչպես նաև Բրեստի պայմանագրի պահանջների գործադրման գերմանական կողմի մտադրության համար, այն միաժամանակ մանրագնին պարզաբանումներ էր կատարում Հայաստանի Հանրապետությունում առկա իրադրության մասին՝ ընդգծելով նախատեսված համաժողովին ԳԳ ներկայացուցիչների մասնակցության անհրաժեշտությունը: Դա հիմնավորելու համար պատվիրակությունը ուղերձում նշում էր, որ Վրաստանի և Հայաստանի կառավարությունների ձևավորումը տեղի է ունեցել նույն ճանապարհով, և որ երկու երկրներում կառավարման գործառույթն իրականացնող հայկական և վրացական Ազգային խորհուրդների միջև որևէ եական տարբերություն չկար: Ինչպես վրացական Ազգային խորհուրդն էր ընտրվել Ռուսաստանի բոլոր վրացիների կողմից, այնպես էլ Հայոց ազգային խորհուրդը Ռուսաստանի բոլոր հայերի կողմից, որոնց 95 տոկոսը բնակվում էր Կովկասում:

Պատվիրակությունը հարկ էր համարում ընդգծել, որ թուրքահայերը, նույնիսկ նրանք, ովքեր Կովկասում էին գտնվում, ընտրություններին չէին մասնակցել և իրենց համար առանձին Ազգային խորհուրդ էին ստեղծել: Ըստ այդմ Հայոց ազգային խորհուրդը ներկայացնում էր ոչ թե ողջ հայ ազգը, այլ բացառապես կովկասյան Հայաստանի հայերին, այ-

<sup>1</sup> Նման միջոցառումների իրագործման ակնառու փաստեր, ըստ էության, չկան:

սինքն, այն տարածքի, որը գտնվում էր իր ենթակայության ներքո: Հայոց ազգային խորհուրդը, պատվիրակության հավաստմամբ, որպես կառավարման մարմին, ոչնչով չէր զանազանվում վրացականից: Առկա միակ զանազանությունն ուներ ոչ թե որակական, այլ թվային նշանակություն, եթե նկատի առնվեր, որ Վրաստանի սահմաններից դուրս գտնվող Ռուսաստանի վրացիների թվաքանակը անհամեմատ ավելի փոքր էր, քան Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող հայերինը: «Այն հանգամանքը, - նշվում էր ուղերձում, - որ Հայոց ազգային խորհուրդը ներկայումս փաստորեն Կովկասյան Հայաստանում է կառավարման գործառույթ իրականացնում և իր խնդիրը չի համարում (ավելի, քան միայն բարոյական տեսանկյունից) ներկայացնել այդ տարածքից դուրս գտնվող հայերին, մեզ հիմք է ընծեռում խնդրելու, որ նրան նույնպես թույլատրվի պաշտոնական ներկայացուցչություն ուղարկել՝ համաժողովին մասնակցելու համար: Մենք դա համարում ենք անխուսափելիորեն անհրաժեշտ, քանի որ համաժողովում պետք է վճռվի Կովկասի ճակատագիրը, և որչափ աննպատակահարմար, նույնչափ և անարդարացի կլինի հայերին, որոնք կազմում են Անդրկովկասի ամբողջ բնակչության ոչ պակաս, քան մեկ երրորդ մասը, թույլ չտալ մասնակցել մի համաժողովի, որը վերջնական որոշումներ պետք է կայացնի Կովկասում առկա խնդիրների լուծման համար»<sup>1</sup>:

Այնուհետև ներկայացվում էին մանրամասն թվական տվյալներ Կովկասի տարբեր շրջանների հայ բնակչության վերաբերյալ և մի գունավոր քարտեզ, որի վրա միասնական, ընդհանուր տարածքով սահմանագծված էին Երևանի նահանգը (Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի, Էջմիածնի, Երևանի, Սուրմալուի, Շարուր-Ղարալազյազի և Նախիջևանի շրջաններով), Թիֆլիսի նահանգից Ախալքալաքի շրջանը և Բորչալուի մի մասը, Ելիզավետպոլի նահանգից Ջանգեզուրի ամբողջ տարածքը և Ղազախի, Ելիզավետպոլի, Ջևանշիրի, Շուշիի և Կարիագինոյի (Ջեբրախի) շրջաններից առանձին հատվածներ: Պատվիրակությունը միաժամանակ տեղեկացնում էր, որ Ռուսաստանի տիրապետության ժամանակ և նաև դրանից հետո այդ տարածքը համարվել է Կովկասում հայկական շահագրգռությունների տարածք, և ներկայումս էլ դրա բնակչության ավելի քան երկու երրորդը հայեր էին: Նշվում էր, որ այդ տարածքը, որտեղ բնակվում էին 1,3 միլիոն հայեր և միայն 400.000

<sup>1</sup> Անդ, էջ 522:

մահմեդականներ, ապագա կովկասյան Հայաստանին հատկացվելու դեպքում կմիավորեր կովկասաբնակ հայության մեծագույն մասին, որից դուրս թաթարական բնակատարածքներում միայն 300.000-400.000, իսկ վրացականում միայն 300.000 հայեր կմնային, և հիմք կդառնար կենսունակ հայկական պետություն ստեղծելու համար:

Այնուհետև ուղերձում տեղեկացվում էր, որ թաթարները, թուրքական զորքերի առաջխաղացումից քաջալերված, իրենց պահանջները մեծացրեցին և թուրքական կողմի վերջնագրից երկու օր առաջ սահմանների վերանայման պահանջ առաջադրեցին, որի արդյունքում Հայոց ազգային խորհուրդը հարկադրված եղավ վերոնշյալ տարածքից նրանց զիջել Ջևհազի, Կարիազի, Շուշի, Ելիզավետպոլի, Դարալագյազի, Ջանգեզուրի, Նախիջևանի, Սուրմալուի շրջանները և Երևանի շրջանի մի մասը: Դրա վերաբերյալ համաձայնագրի կնքումից հետո հայկական կողմի տրամադրության տակ մնում էր միայն 25.000 քառ. կմ. տարածություն մոտ 800.000 հայ և 100.000-150.000 մահմեդական բնակչությամբ:

Հայկական կողմին, սակայն, ինչպես նշվում էր ուղերձում, վիճակված չէր տնօրինել նույնիսկ այդ զգալիորեն կրճատված տարածքը: Թուրքական կողմի վերջնագրի ներկայացումից հետո այն վերստին անդամահատվեց, որից հետո, ինչպես հայտնի է, հայկական կողմի տրամադրության ներքո մնաց միայն 10.000 քառ. կմ. տարածք, որը մեծ մասամբ պատված էր ջրով և անանցանելի լեռներով: Նշելով, որ տարածքների նման «անհամամասն» բաժանման դեպքում Կովկասում բացառվում էր տևական կայուն իրավիճակի ստեղծումը, և որ հայկական կողմին հատկացված վերոնշյալ փոքրիկ հողակտորի վրա անհնար էր կենսունակ պետություն ստեղծել, պատվիրակությունը պնդում էր, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ծայրահեղ դեպքում կարող էր ընդունելի համարել վերոնշյալ 25.000 քառ. կմ. մակերես ունեցող տարածքը, որը, չնայած նույնպես խիստ աննպաստ, բայց ամեն դեպքում ընդունելի տարբերակ էր:

Վերջում, տեղեկացնելով, որ թուրքերը Բաթումի բանակցությունների ժամանակ «ռազմավարական առումով» մեծ կարևորություն էին տալիս այդ տարածքի՝ արդեն իսկ անդամահատված շրջանների սեփականացմանը, պատվիրակությունը նշում էր, որ Բրեստի պայմանագրով հաստատված սահմանները կարող էին, ըստ այդմ, փոփոխվել: Մասնավորապես ընդգծվում էր, որ այդ շրջանների փոխարեն կարող էր հայ-

կական կողմին Արփաչայի աջ ափին հատկացվել 20 կմ լայնություն և 50-60 կմ երկարություն ունեցող մի հողակտոր, որը ներկայումս էլ բնակեցված էր փախստական հայերով, և որի վրա գտնվում էին Աճիի ու այլ պատմական քաղաքների ավերակները: Հարկ էր համարվում նաև ընդգծել, որ այդ ավերակները պատմական մեծ նշանակություն ունեին, և դրանց պահպանումը բխում էր համաշխարհային հնագիտության շահերից<sup>1</sup>:

Պատվիրակությունը հունիսի 15-ին, 18-ին, հուլիսի 2-ին և 5-ին գերմանական արտգործնախարարությանը հանձնեց չորս նոր հուշագրեր և, որոնցում հիմնականում ներկայացվում էր Կովկասում կուտակված փախստականների ծանր ու ողբերգական դրությունը<sup>2</sup>: Հունիսի 2-ի հուշագրում տեղեկացվում էր, որ թուրքերի կողմից գրավված բնակավայրերից զանգվածային փախուստի դիմած հայերի թիվն արդեն հասնում էր 600.000-ի, ընդ որում՝ այդ թվաքանակը թուրքահայ փախստականներին չէր վերաբերում: Գրեթե բացառապես բաց երկնքի տակ գտնվող այդ փախստականների ծանր վիճակի ներկայացման հետ մեկտեղ

<sup>1</sup> Աճ, էջ 526:

<sup>2</sup> Պատվիրակությունն իր պատրաստած վերոնշյալ քարտեզն այլ նյութերի հետ միասին հանձնեց նաև ռայխստագի պատգամավորներին ու առանձին ակամավոր հասարակական գործիչների: Դրանք տպագրվեցին Պ. Ռոհրբախի խմբագրությամբ հրատարակվող՝ ԱԳՆ-ի Արևելյան քաղաքականության հանձնաժողովի ամսագրում առանձնատիպի տեսքով: Տես Ավետիսյան Հ., Հայկական հարցը..., էջ 261: Ինչպես իր զեկուցագրերից մեկում տեղեկացնում էր Օհանջանյանը, իրենք հուշագրերը և քարտեզը Չխենկելուց վերցրած որոշ դիվանագիտական նյութերի հետ միասին տպագրել էին նաև առանձին գրքով: Այն, սակայն, ԱԳՆ-ն չթույլատրեց լայն հասարակական շրջաններում տարածել հայերի և թուրքերի փոխադարձ թշնամանքը չորրորդելու պատճառաբանությամբ: Աճ, հմմտ. ՀՀ, ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 656, թ. 43: Ռայխստագի պատմագրավորների շրջանում պատվիրակության կողմից տարածված նյութերը հանգեցրեցին որոշակի դրական արծագանքների: Մասնավորապես՝ հունիսի 24-ի և 25-ի նիստերում մի շարք պատգամավորներ Գուստավ Շտրեգենմանը, Հուգո Հազեն, Վետարպը և այլք, իրենց ելույթներում անդրադարձան հայկական խնդրին ցուցաբերելով բավականին հստակ և իրատեսական մոտեցում և նշելով, որ անհրաժեշտ էր միջամտել՝ կանխելու համար թուրքերի հետագա վայրագությունները հայերի հանդեպ: Այդ մասին ավելի մանրամասն տես Ավետիսյան Հ., Հայկական հարցը..., էջ 261-262:

նշվում էր, որ մոտավորապես ծնունդ, սովահարության և արդեն իսկ սկսված համաճարակների պայմաններում նրանք դատապարտված էին մահվան:

Այդ փախստական զանգվածին սպառնացող վտանգները կարող էին կանխվել միայն նրանց իրենց հայրենի բնակավայրերը վերադարձնելու դեպքում, բայց նաև ընդգծվում էր, որ դա անհնար էր լինելու այնքան ժամանակ, քանի դեռ թուրքերը դրանք շարունակում էին գրավված պահել: «Նրանք վախենում են, որ թուրքերի կողմից կկալանավորվեն և կառանգվեն, ինչպես դա տեղի է ունեցել իրենց՝ ետ մնացած ազգակիցների հետ, երբ 16 տարեկանից մեծ տղամարդիկ զորակոչվեցին ու անհետացան,– նշվում էր հուշագրում:– Փախստականները միայն այն ժամանակ կվերադառնան, երբ թուրքերը տվյալ տարածքն ազատած կլինեն: Մենք հնարավորություն ունեցանք տեղեկանալու, որ գերմանական կառավարությունը վճռակա՞նորեն է տրամադրված և քայլեր է ձեռնարկել թուրքական զորքերին դրդելու, որ նրանք ազատեն մինչև Բրեստի պայմանագրով հաստատված սահմաններն ընկած հայկական տարածքը: Կովկասում մեր ազգային գոյատևման այդ ազդու պաշտպանությունը մեզ համակում է խորը երախտագիտությամբ և թույլ է տալիս վստահաբար նայել ապագային: Մեզ մնում է խնդրել, որ տարածքի ազատումը, քանի որ դա արդեն վճռված է, նկատի առնելով հայ փախստականների երերուն դրությունը և նրանց շուտափույթ վերադարձի անհրաժեշտությունը, տեղի ունենա առանց ուշացման՝ փախստական հայերին մեծագույն վտանգներից և կորուստներից պահպանելու համար»<sup>1</sup>:

Կա՛մ, թերևս, պատվիրակությունն էր անհիմն լավատեսությունն ցուցաբերում, կա՛մ գերմանական արտգործնախարարությունն էր շտապել նրան ներշնչելու այդ լավատեսությունը: Բրեստ-Լիտվսկի սահմանների ճանաչման հարցը, ինչպես արդեն նշվել է, գերմանա-թուրքական երկխոսության օրակարգում փոխարինվեց Կոստանդնուպոլսում դաշնակից պետությունների մասնակցությամբ մի համաժողովի հրավիրման ծրագրով, որն, իբրև թե, պետք է կարգավորեր Կովկասում առկա

<sup>1</sup> Deutschland und Armenien 1914-1918..., էջ 402: Պատվիրակությունն իր հուշագրերում անդրադարձ էր կատարում նաև Գերմանիայում և Ավստրո-Յուգոսլավիայում գտնվող մոտ 10.000 հայ ռազմագերիների դրությանը՝ խնդրելով նրանց վերադարձնել հայրենիք: Տե՛ս ԳԳ, ֆ. 200, ց. 1, գ.80, ք. 152-153:

բոլոր սահմանային և հարակից այլ խնդիրները: Համաժողովը, սակայն, ինչպես շուտով կպարզաբանվի, հետագա ամիսներին ևս շարունակելով մնալ օրակարգում, այդպես էլ չիրագործվեց: Երկու դաշնակիցները մրցում էին Կովկասում գերիշխանության և տնտեսական շահութաբերության առավել լայն գոտիներ ձեռք բերելու համար, որոնց թվում կարևոր տեղ էր զբաղեցնում նաև Բաքուն իր նավթահանքերով<sup>1</sup>: Գերմանիան արդեն հունիսին շտապում էր Կովկասում ամրագրել իր ազդեցության և գերիշխանության ոլորտները, ինչը Թուրքիայի հետ որոշակի փոխըմբռնում ապահովելու համար պետք է իրականացվեր տնտեսապես անհեռանկար և փոքրիկ տարածքում կուտակված հայ ժողովրդի հանդեպ որևէ համձնառություն չստանձնելու, այսինքն՝ նրան դարձյալ բախտի քմահաճույքին թողնելու գնով:

Գերմանական կառավարությունը գեներալ ֆոն Ջեկտի միջոցով Թուրքիայից պահանջեց հրաժարվել Բաքվի վրա հարձակվելու՝ իր ծրագրից և դադարեցնել այդ նպատակով Ելիզավետպոլսում զորքեր կենտրոնացնել: Միաժամանակ Գերմանիան հունիսին Վրաստանը պաշտոնապես ճանաչեց որպես իր պաշտպանության ներքո գտնվող երկիր՝ լիակատար վերահսկողություն իրականացնելու համար այնտեղ ուղարկելով գերմանական զորամիավորումներ<sup>2</sup>, իսկ Հայաստանի Հան-

<sup>1</sup> Դեռ հունիսի երկրորդ կեսին Թիֆլիսի գերմանական հյուպատոսությունը, Բեռլին ուղարկելով Թուրքիայի հետ հայերի և վրացիների, ինչպես և հյուսիսկովկասյան լեռնականների կնքած պայմանագրերի պատճենները, զուգահեռաբար իր կողմից տեղեկացնում էր, որ ներկայումս կարևորագույն խնդիրը պետք է համարվեր Բաքվի գրավումը, քանի որ ողջ Կովկասի տնտեսական կյանքը մագլթային վառելիքի վրա էր հիմնված, իսկ դրա առկա պաշարները կբավարարեին ոչ ավել, քան 10 օր:

<sup>2</sup> Կովկասի հարցում Գերմանիայի քաղաքական դիրքորոշումը զգալիորեն որոշակիացավ 1918 թ. հուլիսի 2-ին և 3-ին կայսր Վիլհելմ II-ի նախագահությամբ կայացած՝ մի շարք պետական գործիչների և բանակի գլխավոր հրամանատարության համատեղ խորհրդակցությունում, որտեղ, փաստորեն, վճռվեց Վրաստանը դարձնել հենակետ Գերմանիայի համար, սահմանների կարգավորման հարցում պաշտպանել Վրաստանի պահանջները և, միաժամանակ, Բաքվի նավթային պաշարներին տիրանալու նպատակով միջոցներ ձեռնարկել Բաքվի վրա թուրքերի հարձակումը կանխելու համար: Տե՛ս Советско-германские отношения от переговоров в Брест-Литовске до Раппальского договора, т. 1, М. 1968, с. 269.

րապետության կառավարությունը, չնայած նմանապես Գերմանիայի հովանավորությունը ստանալու՝ իր բազում խնդրանքներին, լավագույն դեպքում ցավակցություն և հուսադրող խոստումներ էր ստանում:

Հայ ժողովրդի ճակատագրի հանդեպ Գերմանիայի ձեռնպահությունը, բնականաբար, թուրք ոճրագործներին շարունակում էր գործելու լայն ազատություն ընձեռել: Ինչպես, օրինակ, Վրաստանում գերմանական ջոկատների հրամանատարի ժամանակավոր պաշտոնակատար կապիտան ֆոն Եգան-Կրիգերն էր հունիսի 15-ին տեղեկացնում, թուրքական զորքերն ու սպաներն առաջացող գերմանական զորքերին ճանապարհի տալու և հարավային Վրաստանի տարածքն ազատելու ժամանակ դաժան ոճրագործություններ էին կատարում հայ բնակչության հանդեպ՝ միաժամանակ նրանց դեմ գրգռելով նաև տեղացի թաթարներին<sup>1</sup>:

Ինչևէ, չնայած թուրքական կառավարությունը մեծ դժգոհությամբ ընդունեց Վրաստանում գերմանական վերահսկողության հաստատման իրողությունը, այնուհանդերձ նա այլընտրանք չուներ, քանի որ Գերմանիան այդ հարցում վճռականորեն էր գործում: Ինչպես տեղեկացնում էր դեսպան Բեռնշտրոֆն արտգործնախարարությանն ուղարկած իր՝ հունիսի 24-ի հեռագրում, Հալիլն իր գլխավոր շտաբի պետի գերմանացի տեղակալին հաղորդել էր, որ 10-րդ գերմանական հետևակային գունդն արդեն հասել էր Վրաստան: «Գերմանացի սպաները,– հաղորդել էր Հալիլը,– հայտարարել են, որ կարգելեն թուրքական զորքերի կողմից Վրաստանի սահմանի խախտման յուրաքանչյուր փորձ: Ալեքսանդրապոլից հարավ ընկած շրջանում գերմանացիները պետք է թուրքերին հարկադրած լինեն ազատել թուրքական նոր սահմանի ներսում ընկած մի բնակավայր: Թուրքական հրամանատարն այնտեղ գերմանական հետագա առաջխաղացմանը կընդդիմանա զենքի ուժով»: «Ինքը՝ Հալիլը,– այդ առթիվ ավելացնում էր դեսպանը,– երկյուղ է կրում, որ լուրջ խառնաշփոթ կառաջանա»<sup>2</sup>:

Ինչ վերաբերում էր հայկական կողմին, ապա խոստացված համաժողովին մասնակցելու նպատակով Հայոց ազգային խորհրդի կողմից հունիսի 13-ին Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ Կոստանդնուպոլիս ուղարկվեց ՀՀ կառավարությունը ներկայացնող մի պատվիրակություն,

<sup>1</sup> Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., էջ 530:

<sup>2</sup> Անդ, էջ 544-545:

որն այնտեղ ժամանեց հունիսի 19-ին<sup>1</sup>: Գրեթե միաժամանակ Կ. Պոլիս մեկնեցին նաև վրացական պատվիրակները Գեգեչկորու ղեկավարությամբ, որոնց հետևեցին թաթարներն ու հյուսիսային Կովկասի ներկայացուցիչները:

Հայ պատվիրակները հունիսի 22-ին այնտեղ հանդիպումներ ունեցան Մեծ վեզիրի՝ Թալեաթ փաշայի, ռազմական նախարար Էնվեր փաշայի, արտգործնախարար Նեսիմի բեյի, ծովային նախարար Ջեմալ փաշայի, արդարադատության նախարար Հալիլ բեյի և մի քանի այլ պաշտոնյաների հետ: Նրանք Թալեաթի հետ հանդիպման ժամանակ նրան ուղղված ողջույնի խոսքում իրենց երախտագիտությունն արտահայտեցին անկախ Հայաստանի Հանրապետության ստեղծման համար և միաժամանակ ներկայացնելով հանրապետության բնակչության ծանր կացությունն ու զաղթականների անհուսալի վիճակը, խնդրում էին հանրապետությանն այնպիսի սահմաններ հատկացնել, որ այն կարողանար կենսունակ դառնալ<sup>2</sup>:

<sup>1</sup> Պատվիրակությանը անդամակցում էին Ա. Խատիսյանը, Մ. Պապաջանյանը, Գ. Ղորղանյանը, Հ. Քոչարյանը, Տ. Միրզայանը, Լ. Լիսիցյանը, Ա. Աղաբաբյանը և, որպես սպասավոր, Ա. Հարությունյանը: Տես պատվիրակության օրագրությունը՝ ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 12, թ. 1-2: Հմմտ. Խատիսյան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը..., էջ 95: Պատվիրակությունը Կ. Պոլիս ուղարկվեց Հայոց ազգային խորհրդի հունիսի 12-ի որոշումով, այն բանից հետո, երբ ստացվել էր Թալեաթ փաշայի ամունից Հալիլ բեյի ուղարկած հետևյալ հեռագիրը. «Մեր դաշնակիցների ներկայացուցիչները ուզում են բարեկամական դաշն կապել Կովկասի պետությունների հետ և արդեն Պոլսում են: Խնդրում են ժամանել նաև Հայաստանի ներկայացուցիչներին՝ Պոլսում բանակցություններ սկսելու»: Տես անդ, ց. 1, գ. 120, թ. 40:

<sup>2</sup> Պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ նաև Ավստրո-Հունգարիայի դեսպանի պաշտոնակատար Սցիլասի, ռազմական գլխավոր ներկայացուցիչ Յ. Պոմյանկովսկու, Բուլղարիայի և չեզոք երկրների դեսպանների, ինչպես նաև Հռոմի Պապի ներկայացուցչի հետ: Տես անդ, գ. 12, թ. 56-70, հմմտ. անդ, ց. 2, գ. 34, թ. 1-3: Բնութագրական է, որ Կ. Պոլիսի պատվիրակությանը նույնպես թուրքական կառավարության կողմից խոչընդոտվում էր տեղի ունեցած տեսակցությունների և դրանցում շոշափված թեմաների հապարակումը թուրքական և հայկական մամուլում: Տես այդ մասին պատվիրակության գլխավոր քարտուղար Հակոբ Քոչարյանի տեղեկությունը Հայոց ազգային խորհրդին, անդ, ֆ. 222, ց. 1, գ. 12, թ. 58:

Բեռնշտորֆի հետ հունիսի 23-ին կայացած մի գաղտնի առանձնագրույցում, նույն խնդրանքը նրան ևս ներկայացնելով, պատվիրակներն ավելացրեցին, որ հանրապետությունը պետք է այնպիսի սահմաններ ունենար, որ ի վիճակի լիներ ընդունել 600.000 փախստական հայերին և ապահովել նրանց գոյատևումը: «Ի միջի այլոց, նրանք գործածում էին մեր դաշնակիցների և նոր բարեկամների մեջ ներկայումս սովորական դարձած մեթոդը՝ Կովկասում գրեթե յուրաքանչյուր շրջան և յուրաքանչյուր վայր ներկայացնելով՝ որպես բացառապես հայերով բնակեցված, - ԱԳ-ին ուղղված իր՝ հունիսի 23-ի տեղեկագրում նշում էր Բեռնշտորֆը: - Անուամենայնիվ, երևում է, որ այդ պարոնները բարի կամքով են համակված և նաև հայկական հանրապետության օրինական ներկայացուցիչներն են, եթե, իհարկե, նման հանրապետության մասին կարող է խոսք լինել»<sup>1</sup>:

Դեսպանը, ելնելով պատվիրակության հետ իր զրույցների արդյունքներից կամ առաջնորդվելով իր ստացած տպավորություններով, ավելացնում էր, որ հայերը դեմ չէին լինի միանալ Վրաստանին, իսկ վրացիները, ըստ երևույթին, դեմ էին այդ միացմանը: Վերջիններս, այնուհանդերձ, այն տեսակետն էին արտահայտել, նշում էր Բեռնշտորֆը, որ դա միայն հայկական սահմանների ընդարձակման դեպքում կարող էր հնարավոր լինել, քանի որ վրացիները չէին կամենում իրենց մոտ փախստականներ ունենալ: Սա, ինքնին, նշանակում է, որ Հայաստանը Վրաստանին միացնելու գաղափարը ոչ միայն առկա էր դեսպանի ծրագրերում, այլև նա այդ մասին մինչև իսկ (ակնհայտորեն առանց հայկական կողմի գիտության) Վրաստանի ներկայացուցիչների հետ նախնական զրույցներ էր վարել:

Զնայած դեսպանը չի մատնանշում, թե ինչի հիման վրա էր կարծում, որ հայերը դեմ չէին լինի միանալ Վրաստանին, այնուհանդերձ դա պարզ է դառնում Կ. Պոլսի հայկական պատվիրակության մի հեռագրից: Դեսպանի այդ «անձնական» դիրքորոշումը նրանց հայտնի էր դարձել հունիսի 23-ի վերոնշյալ հանդիպման ժամանակ: Ըստ պատվիրակության հեռագրային զեկույցի՝ դեսպանը նրանց հաղորդել էր, որ Գերմանիան «կանգնած է Բրեստի դաշնագրի տեսակետի վրա», իսկ «...ինչ վերաբերում է Վրաստանի և Հայաստանի միացնելուն, - նշել էր նա, - ինձ այդ միտքը թելադրում է այն հանգամանքը (դա իմ անձնական կար-

<sup>1</sup> Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., էջ 545:

ծիքն է), որ, ինչպես ասում են, Վրաստանը առանց հայերի և հայկական ուժերի ու կապիտալի չի կարող գոյություն ունենալ»<sup>1</sup>:

Եթե նկատի առնվի, որ Գերմանիան առանձնահատուկ նշանակություն էր տալիս Վրաստանում իր դիրքերի ամրապնդմանը և ստանձնել էր նաև նրա հովանավորությունը, ապա դեսպանի տեսակետն իրականում նշանակում էր ոչ թե Հայաստանի և Վրաստանի միացում, այսինքն ոչ թե հայ-վրացական դաշնության ստեղծում, այլ Հայաստանի միացում Վրաստանին: Դեսպանը, փաստորեն, անձամբ Կովկասը միայն երկու՝ թաթարական և վրացական պետությունների միջև բաժանելու, իսկ հայկական տարածքները վերջինիս միավորելու կողմնակից էր: Ինքնին հասկանալի է, որ այս տարբերակը Կովկասում իր տնտեսաքաղաքական շահերը հետապնդող Գերմանիայի համար ուներ որոշ «առավելություններ»: Նախ՝ դրանով կբացառվեր Թուրքիայի հետ հարաբերությունների վտանգումը, որն ամեն կերպ կընդդիմանար հայկական քիչ թե շատ կենսունակ պետության ստեղծմանը և, բնականաբար, կողջուններ հայկական պետականության վերացումը: Միաժամանակ Գերմանիան այդ եղանակով կկարողանար, առանց թուրք դաշնակցի հետ հարաբերությունները վտանգելու, տիրել Կովկասի մեծագույն մասին՝ իր գերիշխանությունը և վերահսկողությունը տարածելով ոչ միայն բուն Վրաստանի, այլև հայկական այն տարածքների վրա, որոնք ներառվելու էին Վրաստանի կազմում: Եվ վերջապես, ինչպես զրույցի ժամանակ անթաքույց կերպով նշել էր դեսպանը, այդ դեպքում Վրաստանն իրոք հայկական «ուժերի» և կապիտալի միջոցով ծաղկում կապրեր, ինչը վերջին հաշվով ծառայելու էր նաև Գերմանիայի շահերին: Ուստի՝ ինքնին հասկանալի է, թե ինչու էր Բեռնշտորֆը հետևողականորեն պաշտպանում այդ տեսակետը՝ անշուշտ, բոլոր դեպքերում այն ներկայացնելով որպես իր անձնական կարծիքը:

Ուշագրավ է, որ հայ պատվիրակները հունիսի 23-ի առանձնագրույցի ժամանակ չէին առարկել դեսպանի այդ «անձնական դիրքորոշման» դեմ, ինչը վերջինիս հիմք էր տվել արտգործնախարարությանը հաղորդել, թե նրանք դրա հետ համաձայն են: Դրա պատճառն ակնհայտորեն այն էր, որ դեսպանն իր դիրքորոշումը ներկայացրել էր սքողված կերպով՝ որպես «կոնֆեդերացիայի կամ ֆեդերացիայի կամ մեկ այլ միջոցով» հայերի և վրացիների միջև լուրջ մերժեցում ի հայտ բերելու

<sup>1</sup> ԳԳ ԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 13, ք. 1:

մտադրություն<sup>1</sup>: Գիտակցելով, թե դա ինչի էր հանգեցնելու, պատվիրակները երեք օր անց՝ հունիսի 26-ին, դեսպանին բողոք են ներկայացնում գերմանական աջակցությամբ «զուտ հայկական շրջանները Վրաստանին միացնելու» մտադրությունների դեմ, որոնց մասին նրանք արդեն կարդացել էին նաև Թիֆլիսի մամուլում<sup>2</sup>:

Հունիսի 25-ին Գեգեչկորին Չխենկելիի պահանջով Կոստանդուպոլսից մեկնել էր Բեռլին: Երկյուղ կրելով, որ նրա մեկնումը սահմանների առնչությամբ գաղտնի համաձայնություն կնքելու նպատակ էր հետապնդում՝ Խատիսյանը դեսպանից կամենում էր տեղեկանալ, թե արդյոք ինքն էլ չպետք է գնար Բեռլին: Բեռնշտորֆը, սակայն, նրան հայտնում է, որ սահմանների հաստատումը պետք է առաջիկա համաժողովի գլխավոր խնդիրը լիներ, և Խատիսյանին խորհուրդ է տալիս առժամանակ հանգիստ սպասել<sup>3</sup>: Հունիսի 26-ին արտգործնախարարությանն ուղղված իր տեղեկագրում դեսպանը միաժամանակ պարզ և անթաքույց ներկայացնում էր իր նկատառումները Կովկասի սահմանների հաստատման մասին: «Ես որքան ավելի եմ զրուցում համաժողովի մասնակիցների հետ, — նշում էր նա, — այնքան ավելի եմ հանգում այն համոզմանը, որ Անդրկովկասը միայն երկու՝ քրիստոնեական և մուսուլմանական կետերի բաժանելու դեպքում այնտեղ կարող է խաղաղության և կայունության հեռանկար լինել: Բաթումը և Բաքուն պետք է լինեն ազատ նավահանգիստներ: Այնուհետև վրացիները և հայերը կարող են մեզ մոտ, իսկ մահմեդականները՝ թուրքերի մոտ հենարան գտնել: Չնայած վրացիները վերոնշյալ լուծման դեմ մի քիչ կըմբոստանան, սակայն ի վերջո տեղի կտան՝ ընդունելով, որ իրենք տնտեսության մեջ հայերի կարիքն ունեն, և նաև կկամենան նրանցից շատերին ներառել իրենց պետության կառավարման մեջ»<sup>4</sup>:

<sup>1</sup> Տե՛ս այդ մասին Ա. Սիարոնյանի տեղեկությունները, անդ, ց. 1, գ. 13, թ. 9-12:

<sup>2</sup> Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., էջ 546:

<sup>3</sup> Ինչպես հաղորդում էր Երևանի ազգային խորհրդի անդամ Մկրտիչ Մուսիսյանը, Վեհիբ փաշան հունիսի 24-ին իր հետ իր ունեցած զրույցի ժամանակ նույնպես հավաստել էր, որ Կ. Պոլսի համաժողովը կայանալու էր ոչ ուշ, քան երկու շաբաթվա ընթացքում: Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. ..., էջ 48:

<sup>4</sup> Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., էջ 546-547:

Հունիսի 27-ին Կովկասյան համաժողովի նախապատրաստման հարցերը քննարկելու համար դեսպանին այցելեցին նաև երկու թուրք պաշտոնյաներ՝ Նեսիմի բեյն ու Հալիլ բեյը: Նրանց այցելության բուն նպատակը, ինչպես Բեռնշտորֆն էր նույն օրը արտգործնախարարությանն ուղարկած իր տեղեկագրում հաղորդում, համաժողովում քննարկվելիք հարցերի կապակցությամբ գերմանական կողմի հետ մի միասնական դիրքորոշման մշակումն էր: Ըստ այդմ նրանք կամենում էին Կովկասյան պետությունների միջև սահմանները գերմանական դաշնակցի հետ նախապես որոշարկել և միաժամանակ Գերմանիայի աջակցությունը ստանալ մյուս դաշնակիցներին և Կովկասցիներին այդ սահմանների ճանաչումը հարկադրելու համար: Ընդ որում՝ նրանք այդ սահմանները պատկերացնում էին, առնվազն, Բաթումի պայմանագրով կատարված սահմանագծմամբ: Այդ հանգամանքը, ինչպես խոստովանում էր դեսպանը, նրա համար առանձնահատուկ դժվարություններ էր հարուցում, քանի որ Գերմանիան Կովկասում Թուրքիայի առաջխաղացման և նրա կողմից հաստատված սահմանների առնչությամբ արդեն կոշտ առարկություններ էր կատարել:

Դեսպանն, ի պատասխան, իր թուրք այցելուներին տեղեկացնում է, որ համաժողովի վերաբերյալ Բեռլինից դեռ ոչ մի ցուցում չի ստացել, և որ զրույցում շոշափված բոլոր հարցերը կներկայացնի արտգործնախարարությանը: Բայց և այնպես նա զրույցի ընթացքում պաշտպանում է Բրեստ-Լիտովսկի պայմանագրով ամրագրված պահանջները և ընդգծում «էթնոգրաֆիական» սահմաններ ստեղծելու անհրաժեշտությունը: Այնուհետև, որպես իր անձնական տեսակետը, նա մատնանշում է նաև Կովկասը քրիստոնեական և մահմեդական հատվածների բաժանելու նպատակահարմարությունը, որի դեպքում, ըստ նրա, կարելի էր հասնել «իսկական խաղաղության»:

Բեռնշտորֆի թուրք զրուցակիցները նրա վերջին տեսակետի հետ համաձայն էին, բայց այն համոզումն էին արտահայտում, որ «հայերը վրացիներին բոլոր տեսանկյուններից գերազանցում են», ուստի վրացիները դրան չէին համաձայնի, քանի որ այդպիսով կհայտնվեին հայերի իշխանության ներքո: «Թուրքերի մոտ շարունակ առկա է Հայաստանի հանդեպ պաթոլոգիական խորշանքն ու երկյուղը», — այդ առթիվ նշում էր դեսպանը: — «Ես նրանց ասացի, որ եթե հայերն ինչ-որ տեղ երջանիկ ու գոհ ապրեն, և բոլորը գնան այնտեղ, ապա իրենք պետք է դրա համար ուրախ լինեն, քանի որ այդ դեպքում այդ չարաբաստիկ

(այսինքն՝ հայկական – Ա.Յ.) հարցը վերջապես խաղաղ հանգուցալուծման կգար»<sup>1</sup>:

Ինչևէ, թուրքական կառավարությունը, չկարողանալով իրեն հետաքրքրող հարցերի շուրջ դեսպանի հետ սկզբունքային համաձայնության գալ և այդ իսկ պատճառով երկյուղ կրելով, որ համաժողովում դիվանագիտական ծախսողում կունենա, այդուհետ այլևս չէր շտապում համաժողովը հրավիրել, մինչդեռ Կովկասում կուտակված փախստականների անհուսալի դրությունը թույլ չէր տալիս հապաղել, և Կոստանդնուպոլսում գտնվող հայկական պատվիրակությունը ջանքեր էր գործադրում թուրքական կառավարությունից զիջումներ ծեռք բերելու, նաև բանակցագործընթացն իրողություն դարձնելու համար: Թուրքական կողմը, սակայն, պատվիրակության առաջադրած խնդրանքներին և հարցադրումներին որոշակիորեն չէր պատասխանում: Թալեաթը միայն խոստանում էր պատվիրակության խնդրանքներն ու առաջարկությունները քննարկման դնել կառավարության միստում, նաև խնդրում էր համապատասխան փաստաթղթերի պատճենները ներկայացնել արտգործնախարարին՝ դրանք միստում ներկայացնելու համար, բայց իրականում գործում էր անվերջ ձգձգումների մեթոդը, և սայլը տեղից չէր շարժվում: Նա և մյուս թուրք պաշտոնյաները միաժամանակ շարունակ հավաստում էին հայերի հետ լավ հարաբերությունների, համագործակցության և փոխըմբռնման հաստատման՝ իրենց պատրաստակամությունը՝ առաջ քաշելով թուրք-հայկական դաշինքի՝ «սրտակից համաձայնության» կնքման և դրա շրջանակներում բոլոր հարցերի շուրջ համաձայնության գալու գաղափարը<sup>2</sup>: Ենվերը մինչև իսկ պարզ-

<sup>1</sup> Անդ, էջ 548: Հատկանշական է, որ թուրք պատվիրակները նաև շարունակ պնդում էին, թե Գերմանիան կարիք չուներ Կովկասին վերաբերող հարցերի առնչությամբ Ռուսաստանին հաշվի առնելու, քանի որ թուրքական կողմը մտադրություն չուներ կովկասցիների հետ դաշինք կնքել, այսինքն՝ որևէ պատասխանատվություն ստանձնել, եթե նրանք ռուսների հետ կոնֆլիկտային իրավիճակում հայտնվեին:

<sup>2</sup> Ավետիսյան, Գ., Հայկական հարցը..., էջ 265: Ենվերը պատվիրակության հետ հանդիպման ընթացքում չէր գլանում նաև պնդել, թե թուրքական գործերը Կովկասում, իր հրամանի համաձայն, իրենց միանգամայն «վայելուչ» էին պահում՝ միաժամանակ հիշատակելով երգումի շրջանում թուրքերի նկատմամբ հայերի գործադրած «բռնությունները», որոնց հետևանքով թուրքերը փախել էին «Տրապիզոնից մինչև Ուրֆա և Ադանա»: Նույնը կրկնում էին Ջեմալը փաշան, Նեսիմի և Հալիլ բեյերը: Վերջինս նաև շեշտում էր, որ Բաթումում ամեն բան վերջացել էր, և մնում էին միայն «ձևականությունները»: Անդ:

րոշ հայտարարում էր, որ եթե այդ դաշինքը չկնքվեր, ապա հայերի հետ ոչ մի հարց չէր քննարկվի: Մեղադրելով հայերին Ռուսաստանի և Անգլիայի հետ հույսեր կապելու համար նա ՀՀ կառավարությունից պահանջում էր հրաժարվել չեզոքության քաղաքականությունից, թուրքիայի հետ լինել «ոչ միայն լավ հարևաններ, այլև լավ դաշնակիցներ», նրա հետ մտնել կոնֆեդերացիայի մեջ և կնքել «սրտակից համաձայնություն»:

Ոչ միայն Ենվերը, այլև Թալեաթը, Նեսիմին, երիտթուրքական կոմիտեի ղեկավարներ Բեհաեդդին Շաքիրը, Ռիզա բեյը, ծովակալ Ռաուֆ բեյը և մյուս թուրք գործիչները, որոնց հետ պատվիրակությունը հանդիպումներ էր ունենում, շռայլելով շողոքորթ խոստումներ՝ գաղթականության վերադարձը թույլատրելու և հայերին հուզող այլ հարցերում, ջանում էին հայերին ետ պահել այլ պետությունների հետ շփումներից և մինչև իսկ չէին թաքցնում իրենց դժգոհությունը Բեռլինում հայկական պատվիրակության գտնվելու կապակցությամբ պնդելով, որ հայերը պետք է միայն իրենց հետ հարաբերություններ հաստատեին<sup>1</sup>: Ինչպես իրավամբ նշում է Հրանտ Ավետիսյանը, «Թուրքիայի ղեկավար շրջանները, գործնականում չլուծելով հայկական պատվիրակության առաջադրած ոչ մի հարց, քարոզչական մեքենայով ստեղծում էին թյուր կարծիք եվրոպական հասարակության մեջ թուրք-հայկական բարեկամության, դրանից հայերի բավարարված լինելու, համատեղ գործելու մասին»<sup>2</sup>: Իսկ հայերի հետ, այսպես կոչված, դաշինքի կնքմամբ նրանք հույս ունեին հայկական կողմին զրկել գործունեության ազատությունից, իր խնդիրների լուծման նպատակով օտարերկրյա պետություններին դիմելու և նրանց աջակցությունից օգտվելու հնարավորությունից:

Կ. Պոլսի հայկական պատվիրակության համար հուլիսի երկրորդ կեսին որոշակիորեն պարզ էր, որ թուրքերը, բարեկամության ցույցեր կատարելով և խոստումներ շռայլելով հանդերձ, գաղթականների վերադարձը շարունակում էին արգելել՝ հետապնդելով շատ որոշակի քաղաքական նպատակ, այն է՝ թուրքացնել հայկական բնակավայրերը մինչև նախատեսված համաժողովի իրականացումը<sup>3</sup>: Չկարողանալով խոսել ուժի դիրքերից և չվայելելով որևէ պետության աջակցությունը՝ պատվի-

<sup>1</sup> Անդ, էջ 264-265:

<sup>2</sup> Անդ, էջ 266:

<sup>3</sup> Տե՛ս այդ մասին Ա. Սիարոնյանի՝ հուլիսի 19-ին տեղեկությունը Հայոց ազգային խորհրդին, ՀՀ ԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 12, թ. 104:

րակությունը չէր կարող սկզբունքային, ամուր դիրքորոշում որդեգրել թուրքերի հետ վարվող բանակցություններում քննարկվող՝ հայերի համար կենսական նշանակություն ունեցող հարցերի առնչությամբ, չէր մերժում Թուրքիայի հետ դաշինքի կնքման հնարավորությունը<sup>1</sup> և միաժամանակ փորձում էր իր հնարավորությունները գործադրել Գերմանիայի աջակցությունը ձեռք բերելու համար: Ինչպես տեղեկացնում էր Բեռնշտորֆը ԱԳՆ-ին ուղղված իր հուլիսի 8-ի տեղեկագրում, Ահարոնյանը նրա մոտ իր գանգատներն էր հայտնել Հայաստանում տիրող պայմանների, փախստականների մեծ զանգվածի հետևանքով ի հայտ եկած սովի և անիշխանության կապակցությամբ: Մինչդեռ վրացիները Գերմանիայից օգնություն են ստանում, նշել էր նա, իսկ Ադրբեջանի թաթարները վայելում են թուրքերի պաշտպանությունը, Հայաստանը թողնվել է իր հույսին: Նա դեսպանին նաև հաղորդել էր, որ հայկական կառավարությունը Թիֆլիսում գերմանացիներից օգնություն էր խնդրել և ի պատասխան տեղեկացվել, որ գերմանական ազդեցությունը տարածվում էր միայն Վրաստանի վրա: Իր տեղեկագրում Բեռնշտորֆը խորհուրդ էր տալիս Վրաստանում Գերմանիայի պաշտոնական ներկայացուցիչ գեներալ ֆոն Կրեսին հանձնարարել, որ հնարավորության դեպքում նա այնտեղ հայերի հետ բանակցություններ սկսեր: Դա Կոստանդնուպոլսում անելը նպատակային չէր լինի, որովհետև, ըստ Բեռնշտորֆի, այնտեղ գտնվող հայ պատվիրակները «այն աստիճան երկչուտ են, որ թուրքերի դիմաց նույնիսկ չեն համարձակվի շարժվել»<sup>2</sup>:

<sup>1</sup> Ուշագրավ է, որ թուրքական քարոզչամեքենան, օգտվելով դրանից, այդուհետ եռանդով լուրեր էր տարածում այն մասին, թե թուրքական կառավարությունը հայերի հետ համաձայնության է եկել Բաթումի պայմանագրի շրջանակներում երկկողմ շփումներով բոլոր հարցերը լուծելու և թուրք-հայկական դաշինք ձևավորելու առնչությամբ, և որ նրանց միջև սկզբունքային անհամաձայնություններ չկային: Բեռլինում գտնվող հայկական պատվիրակությունը գեներալ ֆոն Լոսովի և այլ անձանց կողմից ստանում էր նախագուշացումներ թուրք-հայկական նման դաշինքի կնքման առնչությամբ: Նրանք նշում էին, որ Բաթումի պայմանագրի վավերացման մասին խոսք անգամ լինել չէր կարող, որ Գերմանիան թուրքերից խստորեն պահանջել էր ազատել Բրեստի պայմանագրին հակառակ գրաված բոլոր տարածքները, և որ «տաճիկներին երբեք չի կարելի վստահել ու հավատալ նրանց խոսքին»: Տես անդ, ֆ. 200, ց. 1, գ. 11, թ. 39-42, 86-91:

<sup>2</sup> Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., էջ 552:

Քանի որ նախատեսված համաժողովի իրականացումը շարունակում էր անորոշ մնալ, դեսպանն այդ պատճառաբանությամբ թերևս կամենում էր նաև իրենից վանել Կ. Պոլսում բանակցագործընթաց սկսելու պատասխանատվությունը՝ այն տեղափոխելով Թիֆլիս:

Ինչևէ, Կովկասում ազդեցության ոլորտների գրավման հարցում երկու դաշնակիցների միջև առկա հակասությունները շարունակում էին սրված մնալ, չնայած, անշուշտ, երկու կողմերից և ոչ մեկը դիվանագիտական երկխոսությունը և դաշինքը վտանգելու մտադրություն չուներ: Բարեբախտաբար Կովկասում երկու՝ վրացական և թաթարական պետություններ ստեղծելու վերաբերյալ Բեռնշտորֆի վերոնշյալ տեսակետը չորդեգրվեց պաշտոնական Գերմանիայի կողմից, որն իր բանակային հրամանատարության միջոցով, ինչպես արդեն նշվել է, արդեն իսկ կոշտ առարկություններ էր կատարել թուրքական ուժերի կողմից Բրեստի պայմանագրի պահանջները խախտելու առնչությամբ: Պետք է նշել, որ, ի տարբերություն Գերմանիայի քաղաքական ղեկավար շրջանների, բանակային հրամանատարությունն անհամեմատ ավելի պարզ և որոշակի դիրքորոշում էր ցուցաբերում Թուրքիային և Կովկասին վերաբերող խնդիրներում և հունիսյան օրերին թերևս հույս ուներ, ստանալով պաշտոնական Գերմանիայի հավանությունը, Թուրքիային իրոք ետ մղել Կովկասից՝ այդ տարածաշրջանին, նաև Բաքվին ու նրա նավթային հարստություններին միայնակ տիրելու համար: Համենայն դեպս, այդ դիրքորոշումը Գերմանիայի բարձրագույն զինվորական շրջաններում ուներ իր կողմնակիցները:

Ուշագրավ է, որ Վրաստանում գերմանական զորամասերի ժամանակավոր հրամանատար կապիտան Եզան-Կրիզերը մինչև նոր հրամանատարի՝ գեներալ-մայոր ֆոն Կրեսի ժամանումը օդանավով մի սպայի էր ուղարկել Բաքու այնտեղ գտնվող գերմանացի և ավստրիացի ռազմագերիներին Թիֆլիս փոխադրելու նպատակով բանակցություններ վարելու համար՝ նրան միաժամանակ բանավոր կերպով հանձնարարելով Բաքվի հայ բնակիչներից և հատկապես հայկական կայազորից ձեռք բերել մի խնդրագիր թուրքերի հարձակման դեպքում գերմանական կողմից պաշտպանություն ստանալու և Բաքվում գտնվող (նավթային) պաշարները գերմանական կողմի պաշտպանությանը հանձնելու վերաբերյալ: Միաժամանակ բանագնացը պետք է նախապատրաստական աշխատանք տաներ Բաքվում տիրող սովը մեղմելու նպատակով վրա-

ցական ընտանի կենդանիների և բաքվի նավթային պաշարների փոխանակություն կազմակերպելու համար<sup>1</sup>:

Զնայած օդանավով ուղարկված բանազնացն այլևս չվերադարձավ, և նրա ճակատագիրը այդպես էլ մնաց անհայտ, այնուհանդերձ այս դեպքը ինքնին վկայում է, որ Կովկասում գտնվող գերմանական զինվորականությունը ամենևին չահագրգռված չէր թուրքական ուժերի կողմից Բաքվի գրավման հարցում և վերոնշյալ խնդրագրի ձեռքբերմամբ ձգտում էր նախադրյալներ ստեղծել դա թույլ չտալու համար: «Ես համոզված եմ, որ մենք դեռ երկար պետք է պայքարենք թուրքերի ակտիվ և պասիվ դիմադրության դեմ, մինչև նրանք կհրաժարվեն Կովկասից մի քանի միլիարդ Կոստանդնուպոլսի հանցախմբի համար կորզելու պլանից, — նշում էր գեներալ Լոսովը բարձրագույն հրամանատարությանն ուղղված իր հուլիսի 6-ի տեղեկագրում:— Պանիսլամական և պանթուրանական իմպերիալիստական քաղաքականությունը, որի դրոշի տակ պետք է կատարվի Կովկասի հյութաքամումը, հենց իր էնվերի կողմից է ռազմական միջոցներով գործի դրվել: ...Կովկասում Գերմանիայի բազմաթիվ տնտեսական շահեր վտանգված են, առանձնապես նրանք, որ կապված են մանգանի, նավթի, բրդի և հատկապես բամբակի հետ, որոնց կարիքը մենք կունենանք, եթե հետագա տնտեսական պատերազմում չենք կամենա պարտվել: Այդօրինակ կարևոր տնտեսական շահերը կարող են պաշտպանվել միայն զուգահեռաբար առկա քաղաքական շահերի պաշտպանման դեպքում: Եթե թուրքերը քաղաքականապես վճռորոշ դերակատարում ունենան, ապա մեր տնտեսական շահերը տանուլ կտրվեն: Պետք է թուրքերին կրկին ու կրկին հայտարարվի, որ մենք բնավ չենք մտածում Կովկասում մեր տնտեսական և քաղաքական շահերը զոհաբերել նրանց հեղինակության պահպանման համար: Մանավանդ, որ հեղինակության այդ ամբողջ խնդիրը միայն կողոպուտի պատրվակ է»<sup>2</sup>:

Ինչ վերաբերում էր, մասնավորապես, Հայաստանին, ապա Լոսովը այդ հարցի շուրջ ևս Գերմանիայի շահերն ու թուրքիայի ցանկությունները համատեղելի չէր համարում. «Այն, որ թուրքիան միայն մի փոքրիկ Հայաստան կկամենա հանդուրժել, հասկանալի է, — նշում էր նա:— Արդյոք, սակայն, Գերմանիան կարո՞ղ է այն մեղադրանքներից հետո,

<sup>1</sup> Անդ, էջ 549:

<sup>2</sup> Անդ, էջ 550:

որոնք մեր հանդեպ թուրքահայերի բնաջնջման պատճառով կատարվում են, հետայսու համաձայնել նաև ռուսահայերի ոչնչացման հետ, պետք է վճռեն քաղաքական շրջանները»<sup>1</sup>:

Լոսովի դիրքորոշումը հստակ էր նաև սահմանների վերջնական կարգավորման ժամանակ Բրեստ-Լիտովսկի պայմանագրով հաստատագրված սահմաններից դուրս նոր տարածքների զիջման՝ թուրքական կառավարության կողմից արտահայտվող պահանջների առնչությամբ: Նրա համոզմամբ՝ հնարավոր նոր տարածքային զիջումները պետք է սահմանափակվեին միայն Բաթումի, Արդահանի, Կարսի շուրջ (որոնց վերջնական քաղաքական կարգավիճակը միայն հանրաքվեից հետո էր պարզ դառնալու), մասնավորապես, հյուսիսային և արևելյան կողմերում թուրքիային մի տարածքային գոտու հատկացմամբ, և որևէ այլ զիջում պետք է բացառվեր<sup>2</sup>:

Իր տեղեկագրում Լոսովը միաժամանակ առաջարկում էր Գերմանիայից դրամի, ածխի և ռազմական պիտույքների ներկրումը թուրքիա նույն կարգի դանդաղկոտությամբ և զլացումով կատարել, ինչպես թուրքերն էին գերմանացիների հետ վարվում Կովկասին վերաբերող հարցերում, և, բացի այդ, գերմանական նավատորմի միջոցով գրավել Սև ծովի ռուսական նավատորմի մի քանի նավեր, այդ թվում, ըստ հնարավորին, մի մեծ հածանավ՝ թուրքերին ցույց տալու համար, որ Սև ծովում դրության փաստական տերը Գերմանիան էր:

Ֆոն Լոսովն, անշուշտ, միակ բարձրաստիճան զինվորականը չէր, ով պաշտպանում էր թուրքիային Բրեստի պայմանագրի ընդունումը հարկադրելու և Կովկասից նրան ետ մղելու տեսակետը: Ինչպես արդեն պարզաբանվել է, այդ հարցում հունիսից միատեսակ դիրքորոշում էին որդեգրել նաև ֆելդմարշալ Հինդենբուրգը և գեներալ Էրիխ Լուդենդորֆը: Հարկ է նշել, որ բացառություն չէին կազմում նաև գեներալ Ֆոն Ջեկտը<sup>3</sup> և Կովկասում գտնվող մյուս բարձրաստիճան զինվորականը՝

<sup>1</sup> Անդ:

<sup>2</sup> Անդրադառնալով թուրք պատվիրակ Նեսիմի կողմից կատարված այն ակնարկին, որ սահմանների կարգավորման նպատակով Կոստանդնուպոլսում նախատեսված համաժողովը կարող էր Բեռլինում տեղի ունենալ, Լոսովն իր նույն տեղեկագրում համոզարարելի էր համարում դա ընդունել:

<sup>3</sup> Ֆոն Ջեկտը նույնպես թուրքիայից պահանջել էր կանգնեցնել իր զորքերի առաջխաղացումը: Տե՛ս Կ. Պոլսի գերմանական դեսպանի՝ հուլիսի 8-ի հեռագիրը: Անդ, էջ 552:

գեներալ ֆոն Կրեսը: Վերջինս հուլիսի 3-ին 4. Պոլսի գերմանական դեսպանին և հուլիսի 8-ին դեսպանի կողմից գերմանական արտգործնախարարությանն ուղարկված իր հեռագրում առաջարկում էր, որ դաշնակից պետությունները 4. Պոլսի համաժողովում ցուցաբերեին հետևյալ նպատակաուղղված դիրքորոշումը. Վրաստանին, որն, ըստ իր կարծիքի, անդրկովկասյան երեք պետություններից «ամենակենսունակն» էր, անհրաժեշտ էր բանակցությունների ընթացքում առաջնայնություն տալ և վիճահարույց դեպքերում սահմանների հաստատումը կատարել Վրաստանի օգտին: Նա նաև առաջարկում էր ճանաչել Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի անկախությունը, հրաժարվել նախկին Անդրկովկասյան հանրապետության օրինակով այդ երեք պետությունները միասնական պետության վերածելուց և դրա փոխարեն ձգտել, որ ստեղծվեին համատեղ մաքսային ընկերություններ, ապահովվեր երկաթուղու, փոստի և հեռագրատան միասնական օգտագործումը:

Ընդհանուր նշանակության կարևոր խնդիրների լուծման համար գեներալը հարկ էր համարում ստեղծել մի խառը հանձնաժողով, որում պետք է ներգրավվեին նաև դաշնակից պետությունների ներկայացուցիչները, և որի նստավայրը պետք է լիներ Թիֆլիսը: Այնուհետև նա առաջարկում էր Թուրքիայի հետ Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի սահմանները հաստատագրել Բրեստի պայմանագրի պահանջների հիման վրա: Թուրքական կառավարությունը Բաթումի և Արդահանի շրջաններում պետք է անհապաղ ժողովրդական հանրաքվե անցկացնեի, որի ղեկավարումն առաջարկվում էր հանձնարարել խառը հանձնաժողովների: Ըստ ֆոն Կրեսի՝ 4. Պոլսի համաժողովի միջոցով անհրաժեշտ էր վերջնականապես ամրագրել Կովկասյան պետություններին բաժանող սահմանները, ընդ որում, ըստ հնարավորին, առաջնայնություն պետք է տրվեր Վրաստանի շահերի պաշտպանությանը: Նա նաև առաջարկում էր, որ Բաքուն դառնար ազատ քաղաք-պետություն: Վրաստանը պետք է համարվեր գերմանա-ավստրո-հունգարական, Ադրբեջանը՝ թուրքական, իսկ Բաքուն՝ ռուսական շահերի ոլորտ, ընդ որում՝ Բաքվում և նրա մերձակայքում գտնվող բոլոր նավթագործարանները պետք է շահագործվեին միջազգային ընկերությունների միջոցով, իսկ արդյունքի բաշխումը դրանում շահագրգիռ կողմերին պետք է կատարվեր նախապես ամրագրված ու փոխհամաձայնեցված չափանիշների հիման վրա: Ֆոն Կրեսի կարծիքով ռուսները պետք է պարտավորվեին անգլիացիներին հեռացնել Բաքվից, իսկ եթե նրանք ի վիճակի

չէին դա անել, ապա կարելի էր թուրքական զորքերին թույլ տալ ներխուժել Բաքու:

Գեներալն անհրաժեշտ էր համարում առնվազն մինչև Թերեք և Կուբան գետերն ընկած հյուսիսկովկասյան տարածաշրջանին նույնպես անկախություն շնորհել, իսկ եթե Ռուսաստանը չհամաձայներ դրան, ապա պետք էր փորձել այդ տարածաշրջանին հնարավորինս լայն ինքնավարություն պարգևել և այնտեղից ետ մղել բուլղակյան զինված ուժերին<sup>1</sup>:

Ինչպես ակնհայտ է դառնում վերոնշյալ և բազմաթիվ այլ գերմանական դիվանագիտական տեղեկագրերից, գերմանացի գրեթե բոլոր բարձրաստիճան զինվորականները համակարծիք էին այն հարցում, որ Թուրքիայի հետ կովկասյան պետությունների սահմանները պետք է վճռվեին՝ համաձայն Բրեստ-Լիտովսկի պայմանագրի պահանջների, իսկ թուրքական զորքերը պետք է ետ քաշվեին այդ սահմաններից այն կողմ: Ինչպես արդեն պարզաբանվել է, դեռ հունիսին գեներալ Լուդենդորֆն ու ֆելդմարշալ Հինդենբուրգը հանդես եկան էնվերին ուղղված համապատասխան խիստ պահանջներով, իսկ գեներալ ֆոն Կրեսը մինչև իսկ առաջարկում էր Բաքուն դարձնել ռուսական ազդեցության ոլորտ և, ըստ այդմ, փաստորեն համագործակցել խորհրդային Ռուսաստանի հետ: Չնայած այդ հարցում բարձրաստիճան զինվորականների միջև առկա համերաշխությանը, պաշտոնական Գերմանիան, սակայն, հակված չէր ցուցաբերել նույն հետևողականությունն ու վճռականությունը, որից և վարպետորեն կարողացավ օգտվել Թուրքիան: Ավելին, որքան էլ կարող է տարօրինակ թվալ, գերմանական կառավարությունն այդ օրերին Կովկասի իրադրության վերջնական կանոնավորման որոշակի ծրագիր դեռևս չուներ, և, ինչպես վկայում էր հենց ֆոն Կրեսն իր տեղեկագրերից մեկում, Կովկասում գտնվող գերմանական բարձրաստիճան զինվորական, ինչպես և դիվանագիտական շրջանները, հաճախ չստանալով համապատասխան ցուցումներ ու հրահանգներ և «տեղեկացված չլինելով» «կայսրության կողմից վարվող քաղաքականության մասին», հարկադրված էին գործել ինքնուրույն ըստ սեփական տրամաբանության թելադրանքի<sup>2</sup>:

<sup>1</sup> Անդ, էջ 553-554:

<sup>2</sup> Անդ, էջ 549:

Թուրքիան կարողացավ վարպետորեն օգտվել այդ հանգամանքից՝ իրեն ուղղված պահանջները չկատարելու, զանազան պատրվակներով Կովկասում իր դիրքերն ամրապնդելու և միաժամանակ դեպի Բաքու իր առաջխաղացումը շարունակելու համար: Սուզալ բեյի հրամանատարության ներքո գտնվող 5-րդ թուրքական կովկասյան դիվիզիան դեռ հունիսի 13-ին Սադախլուից մեկնել էր Ելիզավետպոլ, որտեղ Էնվերի եղբայր Նուրի փաշայի ղեկավարությամբ կուտակվում էին նաև թուրքական այլ զորամիավորումներ՝ վերակազմվելով մի, այսպես կոչված, «խլամական բանակի», որի հիմնական խնդիրներից մեկը պետք է լիներ Բաքվի գրավումը<sup>1</sup>: Թուրքական այդ նախապատրաստություններին գերմանական կողմն, ըստ էության, իրազեկ չէր եղել: Վերջինս այնտեղ թուրքական մեծաքանակ ուժերի կուտակման և Բաքվի ուղղությամբ նրանց առաջխաղացման մասին տեղեկանում է միայն այն ժամանակ, երբ հուլիսի սկզբին Քուրդամիր և Կարամարյան բնակավայրերի մոտ ուժգին մարտեր են բռնկվում (Նուրի փաշայի հրամանատարության ներքո գտնվող) թուրքական զորքերի և հայկական զինված ուժերի միջև:

Նուրին գերմանական կողմից իրեն ուղղված պահանջների անտեսման այդ փաստն այնուհետև փորձում էր պատճառաբանել այն պատրվակով, թե ինքը Բաքվի բուլչակիների ստեղծած սպառնալից իրավիճակի և հարձակումների հետևանքով է հարկադրված եղել իր զինված ուժերն այնտեղ ավելացնել՝ հասցնելով մեկ դիվիզիայի: Նման պատրվակը, սակայն, չէր կարող որևէ կերպ հավատարժան համարվել: «Ես համոզված եմ, – այդ առնչությամբ նշում էր Բեռնշտորֆն իր հուլիսի 8-ին ԱԳՆ-ին ուղարկված հեռագրում, – որ Նուրին ժամանակին ստացել էր առաջխաղացումը դադարեցնելու վերաբերյալ գեներալ ֆոն Ջեկտի հրամանը, և կարծում եմ, որ նա կամ ինքնիշխան կերպով է շարունակում նվաճողական պատերազմ վարել, կամ զաղտնի հրահանգներ է ստացել իր եղբորից, որոնց նրան դրողում են դա անել: Նման գործելակերպը և Բաքվի ուղղությամբ թուրքական հետագա առաջխաղացումը անպայմանորեն արգելելու համար ես կկամենայի դարձյալ պաշտպանել գե-

<sup>1</sup> Տե՛ս Կարապետյան Սիեր, Հայաստանը 1912-1920 թվականներին, Երևան 2003, էջ 243: Թուրքական զորքերը Ղարաբլիխայի վրայով անցնում էին Դիլիջան, այնուհետև՝ Ղազախ, որտեղից շարժվում էին դեպի Բաքու: Տե՛ս Խատիսյան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը..., էջ 93:

ներալ ֆոն Կրեսի այն առաջարկը, որ մենք թուրքական կառավարությունից մի գրավոր համաձայնություն պահանջենք այն մասին, որ նրանք առանց մեր համաձայնության ոչ մի դեպքում չձեռնարկեն որևէ հարձակում կամ առաջխաղացում Բաքվի վրա: Քանի որ, ըստ վերջին լուրերի, ռուսական մի զնդապետի ղեկավարությամբ Աստրախանից Բաքու են հասել 1000 մարտիկներ, հավանաբար պետք է թուրքական կառավարությանը համձնարարել տեղեկություն հրապարակել այն մասին, որ Քուրդամիրի վրա թուրքական առաջխաղացումը տեղի է ունեցել ոչ թե Բաքվի դեմ հարձակվելու դիտավորությամբ, այլ պաշտպանական նպատակներով»<sup>1</sup>:

Չնայած երկու դաշնակիցների միջև առկա վերոնշյալ հակասություններին և լարվածությանը, Հայաստանի Հանրապետության և բազմաժողովրդային փախստականների ծանր ու անելանելի դրությունը շարունակում էր մնալ նույնը: Հակառակ Բաթումի պայմանագրին և այն բանին, որ Թուրքիան ծանաչել էր Հայաստանի Հանրապետությունը, թուրքական կողմը Թիֆլիսում գտնվող Հայոց ազգային խորհրդին, ինչպես և Վրաստանի տարածքում գտնվող հայ փախստականներին թույլ չէր տալիս վերադառնալ հայրենիք: Հայաստանի Հանրապետությունն ամբողջովին մեկուսացված էր, իսկ այնտեղ կուտակված փախստականները մատնված էին սովահարության: Այդ իրավիճակում հանրապետության ղեկավարությունն այլ ելք չէր տեսնում, քան շարունակել ջանքեր գործադրել Գերմանիայի աջակցությունը ձեռք բերելու, նրա օգնությամբ անելանելի դրությունից դուրս գալու և սովահար փախստականներին փրկելու համար:

Գերմանիայից օգնություն խնդրելու համար հունիսի երկրորդ կեսին, իր կյանքը բազմիցս վտանգելով, ծիով հատելով թաթարական հրոսակների կողմից վերահսկվող լեռնաշղթաները, Երևանից Թիֆլիս մեկնեց Մեսրոպ Եպիսկոպոսը, որը նախկինում եղել էր հայոց եկեղեցու Թիֆլիսի թեմակալը և, իր կրթությունը ստացած լինելով Դորպատում, վարժ տիրապետում էր գերմաներենին: Նա այնտեղ հանդիպում ունեցավ գեներալ ֆոն Կրեսի հետ՝ նրան նկարագրելով հայության աղետալի դրությունը: Ըստ նրա տեղեկությունների՝ եթե հայերին չթույլատրվեր վերադառնալ Սարդարաբադ-Իզդիրի և Դարվալայի շրջանները և այնտեղ գտնվող բերքը հավաքել, ապա առնվազն կես միլիոնի հասնող

<sup>1</sup> Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., էջ 552-553:

փախստականներին սովամահություն էր սպասում: «Չավատարժան և վաստակաշատ եպիսկոպոսի նկարագրությունները ցնցող են,– գրում էր Ֆոն Կրեսը հուլիսի 10-ին արտագործնախարարությանն ուղարկած իր հեռագրում:– Ողջ հայ ազգը ամբողջական մեկուսացման միջոցով սովամահ անելու՝ թուրքերի դիտավորությունը պարզ և ակնհայտ է: Եսաղը հայ փախստականներին և Չայոց ազգային խորհրդին վերադառնալու թույլտվություն տալու իմ խնդրանքը չնչին պատրվակներով մերժել է: Մարդկայնությունը և քաղաքականությունը շտապ կերպով պահանջում են կենտրոնական տերությունների կողմից ամենաուժեղ ճնշումը գործադրել թուրքերի վրա»<sup>1</sup>:

Չաջորդ օրը՝ հուլիսի 11-ին, Ֆոն Կրեսը մի նոր ընդարձակ տեղեկագիր ուղարկեց, այս անգամ ուղղակիորեն կանցլեր Ֆոն Չերտլինգին, որում, ազդու և սրտառու կերպով ներկայացնելով հանրապետության և փախստական հայության համար ստեղծված օրհասական դրությունը, նա վերստին ընդգծում էր թուրքիայի վրա կոշտ ճնշման գործադրման անհրաժեշտությունը: Տեղեկագրում, համաձայն հայ պատվիրակի տեղեկությունների, նաև հաղորդվում էր, որ հազարավոր փախստականներ շաբաթներ ի վեր միայն խոտ էին ուտում, սովահար մարդկանց մեջ բռնկվել էին համաճարակներ, որոնք անհաշիվ զոհեր էին խլում, և եթե նրանց չթույլատրվեր վերոնշյալ շրջաններում գյուղատնտեսական բերքը հավաքել, ապա համընդհանուր սովամահությունն անխուսափելի էր:

Գեներալը միաժամանակ ընդգծում էր Չայոց ազգային խորհրդին և Վրաստանում անմխիթար դրության մեջ գտնվող հայ փախստականներին հայրենիք վերադառնալու հնարավորություն ընձեռելու անհրաժեշտությունը և, հենվելով եպիսկոպոսի տեղեկությունների վրա, հաղորդում էր թուրքերի կողմից 17-ից 60 տարեկան 14.000 հայերի բռնի կերպով հավաքելու և առանց վարձատրության, միայն մի կտոր (200 գրամ) չոր հացի դիմաց հարկադիր կերպով աշխատեցնելու փաստը: «Եպիսկոպոսը հայ ազգի անունից և, որպես քրիստոնյա եկեղեցու սպասավոր, դիմում է Երևանի մեծություն կայսրին և գերմանական կառավարությանը,– նշում էր Ֆոն Կրեսն իր տեղեկագրում:– Նա ընդգծում է, որ միայն Գերմանիան է ի վիճակի թուրքիային ստիպել, որ նա հրաժարվի իր կողմից հանցավոր կերպով իրագործվող՝ հայ ազգի չնչին մնացորդ-

<sup>1</sup> Deutschland und Armenien 1914-1918..., էջ 402-403:

ներին սիստեմատիկ կերպով սովամահ անելու քաղաքականությունից: Գերմանիան պարտավոր է գիտակցել, որ պատմության առջև պատասխանատվություն է կրելու, եթե իր իշխանությունը չօգտագործի մի քրիստոնյա ազգի մահմեդականների կողմից բնաջնջվելուց պաշտպանելու համար: Ես, որպես իմ անձնական նկատառումը, կկամենայի Ձերդ Գերագանցությանը հաղորդել, որ այն բոլոր տեղեկություններից եւ տեղեկագրերից հետո, որոնք ես այստեղ ստացել եմ, չի կարող կասկածի ենթակա լինել, որ թուրքերը սիստեմատիկ կերպով ձեռնամուխ են եղել մի քանի հարյուր հազար հայերին, որոնց նրանք մինչև այժմ դեռ կենդանի են թողել, սիստեմատիկ սովամահության միջոցով բնաջնջելուն:

Իմ իրավասության մեջ չի մտնում Ձերդ Գերագանցության ուշադրությունը հրավիրել այն պարտավորությունների վրա, որոնք Գերմանիան, որպես քրիստոնյա ազգ, պետք է իրագործի քրիստոնյա հայերի հանդեպ, ինչպես և այն տպավորության վրա, որ կստանան մեր հասարակական կարծիքը և ամբողջ քրիստոնյա աշխարհը, եթե մենք հայերին կործանումից չփրկենք: Ես, սակայն, կարող եմ Ձերդ Գերագանցության ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ եթե մեզ չհաջողվի հայերին թուրքերից պաշտպանել, ապա Կովկասում և շրջակա տարածքներում մեր հեղինակությունը մեծ վնասներ կկրի, և ես պետք կգծվարանա այն տնտեսական ու քաղաքական ծրագրի իրագործումը, որին մենք այստեղ հետամուտ կլինենք: Մեզ վճռականաբար կմեղադրեն այն բանում, որ բարի կամք չենք ցուցաբերել, կամ կընդունեն, որ մենք թուրքերին մեր կամքը թելադրելու ուժ և իշխանություն չունենք: Մենք բազմաթիվ և իրենց մեծ հարստության հետևանքով խիստ ազդեցիկ հայկական ծագում ունեցող վրացիներին կդարձնենք մեր անհաշտ թշնամիները, և մեր դեմ մի առանձնապես ազդու պրոպագանդայի նյութ կտանք մեր հակառակորդներին:

Այդ պատճառով ես Ձերդ Գերագանցությանը որքան հնազանդորեն, նույնքան թախանձագին խնդրում եմ բոլոր հնարավոր միջոցներով և հնարավորինս արագ ազդու ճնշում գործադրել թուրքական կառավարության վրա, որպեսզի նա անմիջապես իր զորքերը Չայաստանից ետ քաշի, փախստական հայերին թույլատրի վերադառնալ իրենց հայրենիքը և հոգ տանի, որ հայերը անարգել և առանց իրենց կյանքն ու ունեցվածքը վտանգելու կարողանան բերքը հավաքել, նաև, որ հարկադիր

աշխատանքի ուղարկված հայերն անմիջապես ազատվեն ու վերադառնան իրենց հայրենիքը»<sup>1</sup>:

Գեներալ ֆոն Կրեսը հուլիսի 15-ին Մեսրոպ եպիսկոպոսի և մի զինվորական բժշկի ուղեկցությամբ այցելում է նաև Բակուրիանիի անտառները, որտեղ թուրքական զորքերի մայիսյան առաջխաղացման հետևանքով երկու օրվա հեռավորության վրա գտնվող Ախալքալաքից փախել և անմխիթար պայմաններում ճամբարել էին շուրջ 40.000 հայեր: Հուլիսի 16-ին արտագործնախարարությանն ուղարկված հեռագրում, նկարագրելով այդ հայերի գրկանքները, որոնց մեծագույն մասը ուտեստի չնչին իսկ պաշար չունեն, նրանց մեջ տիրող սովահարությունը, համատարած սովամահության սպառնալիքը և բռնկված համաճարակների աճը, որոնց պատճառով Վրաստանի կառավարությունը հրաժարվում էր նրանց վերաբաշխել Վրաստանի շրջաններում, ֆոն Կրեսը հույժ անհրաժեշտ էր համարում պայմաններ ստեղծել, որ նրանք կարողանային վերադառնալ և հավաքել մի քանի օրից հասունացող բերքը, որն այլապես, քանի որ թուրքերն ի վիճակի չէին այն հավաքել, մնալու էր դաշտերում: Նա միաժամանակ ընդգծում էր դաշնակիցների կողմից այդ մարդկանց հացահատիկով ապահովելու անհրաժեշտությունը՝ չնռանալով վերստին հիշեցնել, որ, բացի այդ, Թիֆլիսում նույնօրինակ հուսահատ դրության մեջ գտնվում էին 30.000 հայ փախստականներ, իսկ ևս 500.000-ը՝ Երևանում ու նրա շրջակայքում, որոնք բոլորն էլ արագ և ազդու միջամտության բացակայության դեպքում դատապարտվելու էին կործանման<sup>2</sup>:

Գեներալ Ֆոն Կրեսի կոչերն ու տեղեկությունները, սակայն, նույնպես որևէ նկատելի տեղաշարժ չարձանագրեցին գերմանական կառավարության քաղաքականության մեջ: Վերջինս շարունակում էր հայերին վերաբերող խնդիրների շուրջ իր թուրք դաշնակցի հետ խոսել հորդորների լեզվով, որոնք թուրքերի կողմից զանազան պատրվակներով շարունակ մերժվում էին: Ֆոն Կրեսի վերոնշյալ հեռագրի հիման վրա արտագործնախարարությունը դիմում է թուրքական կողմին՝ Ախալքալաքից փախած հայերին վերադարձի հնարավորություն ընձեռելու համար: Բաթումում գտնվող Եսադ փաշան, սակայն, ինչպես տեղեկացվում էր պետքարտուղարի կողմից բանակի հրամանատարությանն ուղղված

հուլիսի 13-ի հեռագրում, մի գրությամբ նրան պատասխանել էր, թե փախստականների վերադարձը դեպի Ախալքալաք ներկայումս անհնար էր, քանի որ, իբրև թե, այդ շրջանի բնակչությունը դեռ սաստիկ վրդովված էր հայերի կողմից այնտեղ կատարված «ոճրագործությունների հետևանքով»<sup>1</sup>:

Թուրք պաշտոնյայի պատասխանի խաբեությունն, իհարկե, պարզաբանման կարիք չունի: Ըստ նրա տեղեկության կարելի էր ընթադրել, որ Ախալքալաքի բնակչության մեծամասնությունը մահմեդականներ էին, որոնց հանդեպ փախստական հայ փոքրամասնությունը հանցավոր արարքներ էր կատարել: Այդ պատասխանն, այնուհանդերձ, թերևս բավարարում էր պաշտոնական Գերմանիային, քանի որ փախստականների հանդեպ հարուցված արգելքները շարունակում էին պահպանվել:

Ինչևէ, ստեղծված միանգամայն աննպաստ իրավիճակում թուրք-թաթարական շրջափակման մեջ գտնվող Հայաստանի Հանրապետությունը 4. Պոլսում և Բեռլինում գտնվող իր պատվիրակությունների միջոցով շարունակում էր ջանքեր գործադրել Գերմանիայի աջակցությունը ստանալու համար: Կոստանդնուպոլսի պատվիրակությունը հուլիսի սկզբին մի հեռագիր ուղարկեց Բեռլինում գտնվող պատվիրակությանը, որն այն ներկայացրեց արտագործնախարարությանը, իսկ պետքարտուղար Բուշեն իր հերթին այն, առանց որևէ կից հանձնարարականի, ուղարկեց բանակի գլխավոր հրամանատարությանը՝ բարոն ֆոն Լերսներին: Այնտեղ նշվում էր, որ Հայոց ազգային խորհուրդն ամեն օր տազնապալի տեղեկություններ էր ստանում թուրքական զորքերի կողմից գրավված Լոռու շրջանից: Թուրք-թաթարական հրոսակների կողմից կատարվող կողոպուտն ու սպանությունները շարունակ ավելի մեծ չափեր էին ընդունում, և Բաթումի պայմանագրի ստորագրումից հետո միայն Ղարաքիլիսայում 2000 տղամարդիկ, կանայք և երեխաներ արդեն սպանոյի զոհ էին դարձել: Նաև տեղեկացվում էր, որ Հայոց ազգային խորհուրդը պատվիրակությանը հանձնարարել էր այդ ամենի դեմ բողոքել և պահանջել, որ թուրքական զորքերն ազատեն գրավված վիճակում պահվող հայկական տարածքը<sup>2</sup>:

Բեռլինի պատվիրակությունը, ի հաստատումն իր կողմից արտագործնախարարությանը ներկայացված տեղեկագրերի հավաստիության,

<sup>1</sup> Աճդ, էջ 403-404:

<sup>2</sup> Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., էջ 556:

<sup>1</sup> Աճդ, էջ 555:

<sup>2</sup> Աճդ:

հուլիսի 15-ին ԱԳՆ-ին ներկայացրեց նաև քաղվածքներ վերջին օրերին ստացված նամակներից ու տեղեկություններից: Դրանք սկսվում էին Հայոց ազգային խորհրդի նախագահ Ա. Ահարոնյանի՝ հունիսի 11-ի նամակից բերված քաղվածքներով, որոնցում տեղեկացվում էր, որ թուրքական առաջխաղացման հետևանքով հայ բնակչությունը հարյուր հազարներով փախուստի էր դիմել: Ախալքալաքի շրջանն արդեն ամբողջությամբ դատարկված էր, քաղաքը հրկիզված և փլատակված էր: Շրջանի՝ 80.000-ի հասնող բնակչությունը փախել էր և ապաստանել Բակուրիանի կիրճերում: Նշվում էր նաև, որ Սուրմալուից, Ալեքսանդրապոլի և Կարսի բոլոր գրավված շրջաններից, Էջմիածնից և մյուս այն տարածքներից, որտեղ ներխուժել են թուրքերը, բնակչությունը զանգվածային փախուստի էր դիմել և տասնյակ հազարներով ոչնչացել: Այն փաստը, որ թուրքերը Ալեքսանդրապոլ քաղաքից և շրջակայքից ողջ հայ երիտասարդությանը հավաքել և թուրքիայի խորքն էին տարել, այնպիսի սարսափ է հարուցել, գրում էր Ազգային խորհրդի նախագահը, որ ոչ մի փախստական այլևս չէր կամենում վերադառնալ թուրքերի կողմից նվաճված շրջանները: «Այնպես է երևում, որ Գերմանիան Վրաստանի հանդեպ լուրջ և վճռական պարտավորություններ է ստանձնել, որոնք ազնվորեն և արհաբար իրականացնում է, մինչդեռ մեր խնդիրը դեռ կախված է օդում, – նշում էր Ահարոնյանը նամակում: – ...Հայ ժողովուրդը փախուստի ճիրաններում կործանվում է, ինչպես կործանվել է թուրքահայաստանում: Գերմանիան, որը հարկադրված էր թուրքահայաստանում հայերի հանդեպ իրականացված այդ սոսկալի ոճրագործությունը հանդուրժել, քանի որ նրա ձեռքը չէր հասնում, այժմ մի՞թե կամենում է հանդուրժել, որ նաև այստեղ՝ Կովկասում հայ ժողովուրդը սովի և փախուստի միջոցով բնաջնջվի, քանի որ այժմ Գերմանիայի ձեռքը հասնում է, և նա կարող է հրաշք գործել, եթե ցանկանա: Այստեղի գերմանական ներկայացուցիչը իշխան ֆոն Շուլենբուրգը մեր հանդեպ բարյացակամորեն է իրեն պահում, բայց նա Բեռլինից ցուցումներ չի ստացել ի նպաստ մեզ գործելու համար, այնպես, ինչպես գործում է ի նպաստ Վրաստանի: ...Թուրքերը փաստորեն այսօր տիրում են ողջ Ադրբեջանին: Նրանք տիրում են նույնիսկ հայկական շրջաններին, որոնք խաղաղության վերջին պայմանագրից հետո չպետք է թուրքական տիրապետության տակ լինեին: Թուրքական զորքերը նվաճված են պահում Լոռին, Ղազախը, Բորչալուն: Մենք Երևանից տեղեկություններ չունենք: Մենք կտրված ենք: Երկաթուղին և հեռագրատունը չեն գոր-

ծում: Վիճակն անտանելի է: Մենք նույնիսկ խաղաղության հաստատման լուրը չկարողացանք հայտնել գեներալ Նազարբեկովին: Մենք կտրված ենք նաև Բաքվից: Մենք փորձում ենք մեր հայկական հանրապետության կառավարությունը կազմել, բայց Երևան մեկնելու ոչ մի հնարավորություն չկա: Մեր ժողովուրդը անտեր է, մեր փախուստը՝ անվերջ, մահացությունը՝ ահռելի չափերի: Մենք պետք է որոշակիորեն և իսկույն ևեթ իմանանք՝ Գերմանիան կամենու՞մ է մեզ պաշտպանել, թե՞ ոչ»<sup>1</sup>:

Ահարոնյանի նամակի հետ միասին գերմանական արտգործնախարարությանը ներկայացվեցին նաև քաղվածքներ Թիֆլիսում տպագրվող «Հորիզոն» թերթի հրապարակումներից, որտեղ պատմվում էր Կարսի ամրոցի կայազորի սպաներին վիճակված դժխեմ ճակատագրի և հայ փախստականների ծանր դրության մասին<sup>2</sup>:

Ուշագրավ է, որ, ինչպես նաև վերևում է հիշատակվել, ի տարբերություն գերմանական կանցլերի և արտգործնախարարության կողմից հայկական ողբերգությունների հանդեպ ցուցաբերվող անտարբեր և անգործունյա կեցվածքի, գերմանական բանակի հրամանատարությունը, իր վերոնշյալ բարձրաստիճան գինվորականներից ստանալով համապատասխան դրդումներ, որպես կանոն, ավելի ակտիվ և արմատական դիրքորոշման ցուցաբերման միտում էր հանդես բերում: Հուլիսի առաջին կեսին բանակի գլխավոր հրամանատարության շտաբում տեղի ունեցավ կովկասյան պետություններին և Պարսկաստանին վերաբերող մի քննարկում, և ընդունվեցին մի շարք որոշումներ, որոնց կիրառումը կարող էր էապես փոփոխել Հայաստանի Հանրապետության և Կովկասում կուտակված հայության անելանելի դրությունը: Գեներալ Լուդևիգ ֆոն Նույնպես իր համաձայնությունը տվեց այդ որոշումների գործադրմանը՝ ֆոն Լոսովին հանձնարարելով արտգործնախարարության պետքարտուղարին այդ մասին զեկուցել և խնդրել նրան հոգ տանել, որ այդ որոշումների առնչությամբ ռազմական և քաղաքական իշխանությունների փոխհամաձայնությունն ապահովվեր:

Այդ որոշումներում, որոնք Լոսովը հուլիսի 15-ին ուղարկեց արտգործնախարարությանը, մասնավորապես նշվում էր, որ ներկայումս, երբ արդեն ավարտվել էին Վրաստանի հետ բանակցությունները, պետք

<sup>1</sup> Deutschland und Armenien 1914-1918..., т. 405-406:

<sup>2</sup> Անդ, էջ 406-408:

է բանակցություններ սկսվեին Հայաստանի, Ադրբեջանի և Հյուսիսային Կովկասի հետ: Ընդ որում Հայաստանի և Ադրբեջանի հետ կայանալիք բանակցություններում նույնպես հնարավոր էր համարվում այդ երկրների հետ Բաթումում Թուրքիայի կնքած պայմանագրերի վերանայումը: Քանի որ այդ երկրների պետական-կառավարման մարմինները դեռ լիարժեք ձևավորված չէին, ապա, ըստ բանակի գլխավոր հրամանատարության, այդ երկրների հետ բանակցությունները պետք է ժամանակավոր բնույթ կրեին: Բոլոր դեպքերում հնարավոր էր համարվում, որ Հայաստանի և Ադրբեջանի հետ կնքված թուրքական պայմանագիրը փոխարինվեր մի ընդհանուր ժամանակավոր պայմանագրով, որը կամրագրեր այդ նոր «պետական կազմավորումների» և դաշնակից պետությունների քաղաքական ու տնտեսական փոխհարաբերությունները<sup>1</sup>:

Հայաստանի առնչությամբ, մասնավորապես, արտահայտվում էր նաև գերմանական բանակի հրամանատարության ձգտումը հասնելու այն բանին, որ ավստրո-հունգարական բանակի գլխավոր հրամանատարությունը Հայաստան ուղարկեր մի քանի գումարտակներ և մարտկոցներ այնտեղ նույն առաքելությամբ հանդես գալու համար, ինչպես գերմանացիները՝ Վրաստանում: Ընդ որում ընդծվում էր, որ այդ զինված ուժերի առաջնագույն խնդիրներից մեկը պետք է լիներ ապահովել հայերի անվտանգությունը թուրք-թաթարական կոտորածների սպառնալիքից: Բացի այդ՝ ցանկալի էր համարվում, որ դաշնակիցների օգնությամբ հայկական զինված ուժերը կազմակերպվեին ու դարձյալ գործածունակ դառնային, ճիշտ այնպես, ինչպես գերմանացիները կամենում էին դա անել Վրաստանում<sup>2</sup>:

Այս փաստաթուղթը, որպես հայկական խնդրի առնչությամբ գերմանական բանակի գլխավոր հրամանատարության կողմից ցուցաբերված հստակ և միասնական դիրքորոշման աննախադեպ վավերագիր, կարող էր միանգամայն փոխել Հայաստանի Հանրապետության և այնտեղ կուտակված փախստական հայության ծանր դրությունը, եթե միայն համապատասխան ըմբռնում գտներ նաև Գերմանիայի քաղաքական շրջաններում: Քանի որ վերոնշյալ որոշումներն ունեին ոչ միայն ռազմական, այլև քաղաքական նշանակություն, գեներալ Լուինդենդորֆն այդ որո-

<sup>1</sup> Անդ, էջ 409: Դեռ պետական որևէ կառույց չունեցող հյուսիսկովկասցիների հետ պայմանագրի կնքումը համարվում էր ղեկավարագործելի խնդիր:

<sup>2</sup> Անդ, էջ 409-410:

շումների փաթեթին կցված մի գրությամբ միաժամանակ ընդգծում էր, որ բանակի գլխավոր հրամանատարությունը ցանկանում էր «վերադառնալ» կովկասյան հարցերին վերաբերող զուտ ռազմական բնույթի հանձնառություններին, իսկ քաղաքական ղեկավարման գործը կամենում էր թողնել բացառապես արտգործնախարարությանը: Ուշագրավ է, որ նա նաև պետքարտուղարին խնդրում էր իրեն օգնել այդ հարցում, ինչն, անշուշտ, կարող էր միայն երկու հանգամանքներով բացատրվել. կամ բանակի գլխավոր հրամանատարությունը իրավասու էր իրեն նաև քաղաքական խնդիրներ առաջադրել ու լուծել, սակայն այս դեպքում խուսափում էր դրանից, և կամ գեներալը դրանով պետքարտուղարին անուղղակիորեն հիշեցնում էր քաղաքական ղեկավարության կողմից հարցի հանդեպ համապատասխան ըմբռնման և ակտիվ գործելակերպի ցուցաբերման անհրաժեշտությունը: Մեր կարծիքով՝ առավել հավաստի է երկրորդ շարժառիթը:

Գերմանիայի քաղաքական ղեկավարությունն, այնուհանդերձ, այդ ըմբռնումը չէր ցուցաբերում, իսկ Բեռլինում գտնվող հայկական պատվիրակությունը շարունակում էր գործադրել բոլոր ջանքերը քաղաքական և տնտեսական մեկուսացման մեջ գտնվող Հայաստանի Հանրապետության դրության բարելավման, Բաթումի պայմանագրով նախանշված սահմանների վերանայման, թուրքերի կողմից գրավված հայկական տարածքների հայ բնակչությանը հետագա կոտորածներից փրկելու և բազմահազար փախստականներին իրենց բնակավայրերը վերադարձնելու նպատակով Գերմանիայի աջակցությունը ստանալու համար: Ընդ որում՝ պատվիրակությունը սերտորեն համագործակցում էր Կոստանդնուպոլսում գտնվող՝ Ա. Ահարոնյանի ղեկավարած պատվիրակության հետ:

Հուլիսի 7-ին Թիֆլիսում գտնվող Հայոց ազգային խորհուրդը մի հեռագիր էր ուղարկել Կ. Պոլսի պատվիրակությանը՝ ահազանգելով թուրքական ուժերի կողմից գրավված հայկական տարածքներում թուրք-թաթարական հրոսակախմբերի կողմից հայ բնակչության հանդեպ իրագործվող հալածանքների և սպանդի մասին: Միաժամանակ պատվիրակներին հանձնարարվում էր այդ առնչությամբ բողոք բարձրացնել՝ պահանջելով, որ թուրքերը հեռանան անօրինաբար նվաճած տարածքներից:

Այդ հեռագրի տեղեկությունների հիման վրա, որը Կ. Պոլսի պատվիրակությունն ուղարկել էր նաև Բեռլին, Բեռլինի պատվիրակությունը Օ-

հանջանյանի և Ջուրաբյանի ստորագրությամբ հուլիսի 15-ին վերստին մի ընդարձակ գրավոր ուղերձ է ներկայացնում Գերմանիայի արտգործնախարարությանը: Այնտեղ մասնավորապես ընդգծվում էր, որ Լուռնում Սանահինի հարավային շրջանում, ինչպես և այլ վայրերում հայերի սպանդ և կողոպուտ էր տեղի ունենում, իսկ Ղարաքիլիսայում Բաթումի պայմանագրի ստորագրումից հետո կոտորածների զոհ էին դարձել շուրջ 2000 տղամարդիկ, կանայք և երեխաներ: Այդ ամենը պատվիրակությունը բնութագրում էր որպես հայերի ծրագրված զանգվածային բնաջնջման նոր փուլի նախասկիզբը, որ խիստ նման էր Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած նախճիրին և հանդիսանում էր թուրքական կառավարության հայասպանող քաղաքականության շարունակությունը:

Ներկայացնելով փրկվելու նպատակով փախստական դարձած, լեռներում և անտառներում դեգերող հարյուր հազարավոր հայերի ծանր ու զրկալից դրությունը՝ պատվիրակությունը նշում էր, որ այն չէր կարող բարելավվել, ընդհակառակը, շարունակ ավելի կվատթարանար, քանի դեռ թուրքերը նրանց բնակավայրերը գրավված էին պահում: «Յուրաքանչյուր շաբաթ, երբ ազատումը ձգձգվում է, ավելի է ծանրացնում դրությունը, հաղորդվում էր ուղերձում, խճճում իրավիճակը և մղում դեպի մի իրադրություն, որի վտանգները փախստականների ծակատագրի և մեր ազգի գոյության համար ակնհայտ են: Մենք կխնդրեինք նաև մեզ թույլ տալ մատնանշել, որ թուրքական գրավման հետ կապված՝ հայերի հանդեպ իրագործվող տևական անկարգությունները հասկանալիորեն բոլոր երկրներում մեր ազգակիցների մոտ ուժգին հուզումներ և երկյուղներ կհարուցեն և կարող են անցանկալիորեն խափանել հայկական պրոպագանդայի չափավորման՝ մեր ակցիան»<sup>1</sup>:

Այնուհետև տեղեկացվում էր, որ քանի դեռ թուրքերը գրավված էին պահում հայկական տարածքները, նրանք շարունակ ուղիներ կգտնեին կազմակերպված թուրք-թաթարական հրոսակախմբերի միջոցով հայերի բնաջնջման՝ իրենց քաղաքականությունը շարունակելու համար: Ուղերձի հեղինակներն իրավացիորեն այդ ուղիներից մեկը համարում էին հայրենի բնակավայրերից հայերի զանգվածային վտարման և, ըստ այդմ, նրանց սովահարության դատապարտելու իրողությունը, որի համար և, նրանց հանդգնամբ, թուրքերը վճռականորեն խոչընդոտում էին ու կշարունակեին խոչընդոտել նրանց վերադարձը: Որպես դրա խոսում

<sup>1</sup> Աճ, էջ 411-412:

օրինակ մատնանշվում էր Էսադ փաշայի գրություններից մեկը, որով վերջինս Ախալքալաքից հեռացած հայերի վերադարձը անհնար էր համարում՝ դա պատճառաբանելով այն հերյուրանքով, թե իբր տեղի բնակչությունը նրանց հանցագործությունների պատճառով վրդովված էր: Պատվիրակությունն, ի մերկացումն այդ «հիմնավորման», հարկ էր համարում մատնանշել, որ Ախալքալաքի բնակչությունը գրեթե բացառապես հայկական էր, և մահմեդականները, որոնց պետք է վերաբերեր այդ վրդովմունքը, խիստ աննշան տարր էին կազմում բնակչության մեջ: Դա էլ ավելի ակնհայտ դարձնելու համար ուղերձում բերվում էին վիճակագրական տվյալներ Ախալքալաքի բնակչության ազգային կազմի վերաբերյալ, այն է՝ 82.775 հայեր, 9.930 քրիստոնյա վրացիներ, 5.400 մահմեդականներ և 800 քրդեր:

Պատվիրակությունը թուրքական զավթիչների հեռացումը և հայերի հալածանքների դադարեցումը հնարավոր էր համարում միայն Գերմանիայի գործուն միջամտության դեպքում: «Հայերի վերաբերմամբ թուրքերի կործանարար դիտավորություններին ժամանակին և ազդու կերպով հակազդելու միակ միջոցը մեր տարածքի շուտափույթ ազատումն է և մեր սահմանների առնչությամբ Բրեստի պայմանագրի պայմանների իրագործումը, նշվում էր ուղերձում: Միայն Գերմանիայի եռանդուն միջամտությունը կարող է թուրքերին հարկադրել ետ քաշել իրենց գնդերը: Նկատի առնելով հարածուն հուզումներն ու խուճապը, որոնք առաջ են բերում մեր տարածքի վրա թուրքական զորքերի մնալն ու անկարգությունները, մենք, բոլոր ձևերով բողոքելով թուրքական անկարգությունների դեմ, ամենաթախանձազին կերպով կրկնում ենք մեր շատ կարևոր խնդրանքը՝ թուրքական նվաճումների շուտափույթ վերացման միջոցով մեր ժողովրդին ծանր հետևանքներով հղի արմատահանումից և դարանակալ վտանգներից փրկելու մասին, քանի դեռ չափազանց ուշ չի լինի»<sup>1</sup>:

Վերջում պատվիրակությունը խնդրում էր, որ մինչև տարածքների ազատումը մի ռազմական արշավախումբ ուղարկվեր, որը կվերահսկեր այդ գործընթացը և միաժամանակ հայերին զերծ կպահեր նոր հալածանքներից:

Բեռլինի պատվիրակությունն, անկասկած, չէր բավարարվում միայն արտգործնախարարությանը ուղերձներ և խնդրագրեր ներկայացնելով

<sup>1</sup> Աճ, էջ 412:

և փորձում էր ծեռք բերել նաև զանազան այլ ազդեցիկ անձանց կամ կազմակերպությունների աջակցությունը: Դրա խոսույն օրինակն էր հուլիսի 22-ին Գ. Օհանջանյանի ստորագրությամբ Բեռլինի միսիոներական ընկերության տնօրեն դր. Կարլ Աքսենֆելդին ուղարկված նամակը<sup>1</sup>, որտեղ, Բրեստի պայմանագրի պահանջների կատարումը վերստին համարելով ստեղծված իրավիճակի կարգավորման միակ իրատեսական ճանապարհը, հեղինակը միաժամանակ ընդգծում էր, որ այդ նպատակով Գերմանիայի կողմից կատարվող որևէ միջամտություն չէր կարող բացասաբար անդրադառնալ երկու դաշնակիցների փոխհարաբերությունների վրա, քանի որ խոսքը վերաբերում էր մի պայմանագրի, որը ստորագրվել էր ինչպես Թուրքիայի, այնպես էլ Գերմանիայի կողմից, առավել ևս, որ վերջին հանգամանքը Գերմանիային պետք է պարտավորեցներ վերահսկել պայմանագրի պահանջների կատարումը: Բացի այդ՝ կարևոր էր համարվում, որ մինչև այդ պահանջների կատարումը, այն է՝ մինչև թուրքական զորքերի հեռացումը հայերը պաշտպանված լինեին նոր հետապնդումներից, ինչը կարող էր հաջողվել միայն հայկական զավառներում գերմանական զորաջոկատներ տեղակայելու միջոցով:

Դա, ըստ Գ. Օհանջանյանի, թուրքերի կողմից թշնամական քայլ չէր կարող համարվել: Ավելին, եթե նկատի առնվեր, որ, ըստ թուրքական պաշտոնական տեղեկատվության, թուրքերը զրավված տարածքներում, իբրև թե, ցուցաբերում էին խիստ կարգապահություն, և խաղաղությունը խախտվում էր միայն հայկական «բանդաների» գործունեության պատճառով, ապա թուրքական կողմը պետք է ուրախ լիներ, եթե կարգ ու կանոնի վերականգնման նպատակով գերմանական զորամիավորումներ տեղակայվեին տարածաշրջանում: Հենց միայն գերմանական զինուժի ներկայությունը, ինչպես նշում էր նամակագիրը, բավական կլիներ հայերին հանգստացնելու, նրանց հալածանքները դադարեցնելու և անվտանգությունն ապահովելու համար:

Օհանջանյանի համոզմամբ՝ դրա համար անհրաժեշտ էր ուղարկել ոչ ավելի, քան 2.000-3.000 մարդ, որոնք պետք է տեղաբաշխվեին Ալեքսանդրապոլի, Ախալքալաքի, Սուրմալուի, Նախիջևանի, Երևանի, Էջմիածնի, Շարուր-Ղարալագյազի և Ելիզավետպոլի շրջաններում: Նա-

մակում էապես կարևորվում էր նաև գերմանական կողմի միջամտությունը դեպի կովկասյան Հայաստան պարենի առաքումը դյուրացնելու և այդ նպատակով ճանապարհների անվտանգությունն ապահովելու առնչությամբ<sup>1</sup>:

Նույնպիսի բնույթ և նպատակաուղղվածություն ուներ նաև Կ. Պոլսում գտնվող հայկական պատվիրակության գործունեությունը, որը գլխավորում էր Ա. Ահարոնյանը: Դեսպան Բեռնշտորֆը հուլիսի 18-ին ԱԳՆ-ին ուղղված իր տեղեկագրում գրում էր, որ Ահարոնյանը վերստին զանազան բողոքներ էր ներկայացրել իրեն: Դրանք առաջին հերթին վերաբերում էին հայ փախստականների անելանելի դրությանը, որի առնչությամբ դեսպանն, իր մատնանշմամբ, արդեն բազմիցս Մեծ վեզիրի մոտ միջնորդության հայտ էր ներկայացրել: Բացի այդ՝ Ահարոնյանը խնդրել էր, որ Հայաստանը վերցվեր ավստրիական կամ գերմանական ոստիկանական ուժերի հսկողության ներքո: «Նա ինձ հետ միասին այն կարծիքին է, որ համաժողովի որոշումները ջրի մեջ նետված քարեր կլինեն, եթե տվյալ տարածքները չզրավվեն գերմանական կամ ավստրիական զորքերով», – նշում էր դեսպանը<sup>2</sup>:

Բեռնշտորֆն իր հուլիսի 25-ի տեղեկագրում կրկին նշում էր, որ տեղի հայկական պատվիրակությունը գերմանական կամ ավստրիական զորքեր Հայաստան ուղարկելու խնդրանքներով ամեն օր «հեղեղում» էր իրեն: Պատվիրակությունն ընդգծել էր, որ եթե դա տեղի չունենար, ապա հայ փախստականներն իրենք հուսահատ վիճակում ջրկատներ կկազմեին թուրքերի և թաթարների դեմ պայքարելու համար: Ըստ Բեռնշտորֆի՝ Ահարոնյանը հայերի համար ստեղծված ծանր դրության վերաբերյալ հուշագիր էր ներկայացրել Մեծ վեզիրին, ինչպես և իրեն՝ դեսպանին (որն այն ուղարկել էր Բեռլին): Ի պատասխան Թալեաթը չէր հապաղել դարձյալ հայ բնակչության անվտանգության ապահովման իր սովորական դարձած խոստումները շռայլել: Դրանց, սակայն, դեսպանն ինքն էլ խիստ թերահավատորեն էր վերաբերում՝ նշելով, որ «դրանք իհարկե չեն իրագործվելու, քանի որ տեղական թուրքական ռազմական և քաղաքացիական իշխանությունները Կոստանդնուպոլ-

<sup>1</sup> Die Armenische Frage und der Genozid an den Armeniern... էջ 556-558: Պատվիրակությունը կանոնավոր կապ էր պահպանում Կ. Աքսենֆելդի հետ:

<sup>1</sup> Աճ, էջ 558:

<sup>2</sup> Deutschland und Armenien 1914-1918..., էջ 413-414:

սից ուղարկված ցուցումներին, ինչպես հայտնի է, չեն հետևում, առավել ևս, եթե գիտեն, որ դրանք հետևանք են գերմանական ճնշման»<sup>1</sup>:

4. Պոլսի գերմանական դեսպանի տեղեկագրերից այն տպավորություն է ստեղծվում, որ կարծես թե և՛ թուրքական կառավարությունը, և՛ առավել ևս Գերմանիան, հակառակ թուրքերի կողմից գրաված տարածքներում հայ բնակչության հետապնդումները վերացնելու և օրինականություն հաստատելու իրենց բարի ձգտումներին, անգոր էին դրանք իրագործել և կարգի հրավիրել այդ տարածքներում գտնվող թուրք-թաթարական զինված ուժերին: Թալեաթի վերոնշյալ խոստումներն, իհարկե, նորույթ չէին և վկայում էին թուրքական կառավարության ավանդական գործելակերպի հետևողական շարունակումը, իսկ ինչ վերաբերում է պաշտոնական Գերմանիային, ապա վերջինիս երևութային անձեռն-հասությունը նույնպես նշանակում էր ոչ այլ ինչ, քան թուրքական հայահալած քաղաքականության հանդեպ գերմանական կառավարության կողմից վաղուց որդեգրված անույնաբան ճանաչողական և առարկությունների քաղաքականության անփոփոխ շարունակումը, չնայած գերմանական կառավարությունը, ինչպես հարկն է, իրազեկ էր հայ ժողովրդի համար ստեղծված ծանր ու անելանելի դրությանը, և ավելին, հաճախակի ստանում էր նաև սթափություն ցուցաբերելու, կոշտ միջամտության դիմելու կոչեր:

Յուլիսի 17-ին ԱԳՆ-ում հայկական խնդրի շուրջ կատարված մի զեկույցում, օրինակ, նշվում էր, որ Յայաստանի Յանրապետության տարածքը մեծ մասամբ գրավված էր թուրքերի կողմից, կառավարությունը գտնվում էր երկրից դուրս Թիֆլիսում, իսկ բնակչությունը մասամբ քշվել էր լեռները և մասամբ էլ փախել Վրաստան: «Յայերի վիճակն այնպիսին է, որ պետք է ինչ-որ բան ձեռնարկել, — հաղորդվում էր զեկույցում: — Յայերի տրամադրության տակ գտնվող տարածքը այնքան սահմանափակ է, որ նրանց համար հնարավոր չէ այնտեղ ապրել, և նրանք ներկա իրավիճակի շարունակման դեպքում դատապարտված են կործանման: Այդ պատճառով անհրաժեշտ է լինելու թուրքերին հարկադրել ետ քաշվել նրանց Բրեստ-Լիտովսկի պայմանագրով հատկացված սահմանից այն կողմ և հայկական տարածքում, թերևս, նրանց թողնել միայն երկաթուղու վերահսկողությունը՝ դեպի Ջուլֆա և Թավրիզ ռազմական փոխադրումներն անարգել կատարելու համար»<sup>2</sup>:

<sup>1</sup> Աճ, էջ 414:

<sup>2</sup> Աճ, էջ 413:

Այնուհետև նշվում էր, որ հայերը միայն այն ժամանակ կարող էին իրենց բնակավայրերը վերադառնալ, երբ նրանց պաշտպանություն կտրամադրվեր թուրքական նոր հարձակումների կամ թաթարական հրոսակների դեմ: Իսկ դա հնարավոր էր միայն այն դեպքում, եթե երկիրը գրավվեր վստահելի, այն է՝ գերմանական զորամասերի կողմից: Նաև ընդգծվում էր, որ ռուսական կառավարությունը Յայաստանում գերմանական զորքերի ներկայությունը հավանաբար առանց որևէ առարկության կհանդուրժեր, եթե նրան պարզաբանվեր, որ այդ միջոցառումը ձեռնարկվել է միայն մարդասիրական մղումներով, հայ ժողովրդի մնացորդին փրկելու նպատակով: Ձեկուցման մեջ միաժամանակ ընդգծվում էր, որ հայերի վերադարձը պետք է տեղի ունենար շտապ կերպով, որպեսզի հնարավոր լիներ խնդրի առարկա շրջաններում բերքը գեթ մասամբ փրկել և Յայաստանը զերծ պահել սովահարությունից:

Վերոնշյալն ինքնին ցույց է տալիս, որ թուրքերին ետ մղելու և նրանց գրաված տարածքներում գերմանական զորքեր տեղակայելու հարցը արտգործնախարարությունում որոշակի կշռադատման, այնուամենայնիվ, ենթարկվել է՝ չունենալով, սակայն, որևէ գործնական արդյունք, չնայած այն բանին, որ հայերի անհուսալի դրության վերաբերյալ ահագանգեր էին ստացվում նույնիսկ արտերկրից: Մոսկվայում Գերմանիայի հավատարմատար Ռիցլերն իր հուլիսի 25-ի հեռագրում ԱԳՆ-ին տեղեկացնում էր, որ հայ պատգամավոր Ջավրիևը նրան ազդու պարզաբանումներ է ներկայացրել հայության «անտանելի դրության» մասին: Տեղահանված և փախստական հայերի օրհասական վիճակը ներկայացնելու հետ մեկտեղ նա հավատարմատարին հայտնել էր, որ Բաքվում փաստացի իշխանությունը հայերի ձեռքում էր, իսկ տեղական բուլշևիկյան կառավարությունը կախման մեջ էր գտնվում նրանցից, և եթե գերմանական կողմը հայերին օգնելու որևէ քայլ չկատարեր, ապա նրանք հուսահատության մեջ որևէ այլ պետությունից օգնություն կխնդրեին:

Քաջատեղյակ լինելով Բաքվի նավթահանքերին տիրանալու՝ Գերմանիայի շահագրգռություններին՝ Ջավրիևն ակնհայտորեն փորձել էր վերոնշյալն օգտագործել, որպես խաղաթուղթ, գերմանական կողմին հայօգնության քայլերի դրդելու համար: Նա միաժամանակ հավատարմատարին ակնարկել էր, որ հայերի միջոցով կարելի էր հասնել Բաքվի հարցի՝ Գերմանիայի համար ցանկալի կարգավորման, եթե վերջինիս միջամտությամբ և երաշխիքների ներքո փախստական հայերին հնարավորություն տրվեր վերադառնալ նախկինում ռուսական տիրույթում գտնվող իրենց բնակավայրերը:

Ուշագրավ է, որ Ռիցլերը նույն հեռագրում հայտնում էր մեկ այլ աղբյուրից ևս իրեն հասած տեղեկությունն այն մասին, որ Բաքվում փաստացի իշխանությունը գտնվում էր հայերի ձեռքում, և «կասկածից դուրս» էր համարում այն հանգամանքը, որ Բաքուն նրանց կողմից պարբերաբար ավերածությունների, կենթարկվեր, եթե Գերմանիան նրանց հետ փոխըմբռնման չհասներ<sup>1</sup>:

Գերմանական ռազմական շրջաններից նույնպես շարունակում էին ի հայտ գալ հայ ժողովրդի անհուսալի դրության վերաբերյալ ահազանգեր և ի նպաստ նրանց միջամտելու կոչեր: Ֆոն Կրեսը հուլիսի 19-ին արտագործնախարարությանն ուղարկած իր հեռագրում հայտնում էր, որ եթե Գերմանիան թուրքական կառավարությանը իսկույն ևեթ չհարկադրեր թույլատրել, որ հայ փախստականները վերադառնային, ապա զոնե անհրաժեշտ էր հասնել այն բանին, որ մեծ քանակությամբ տղամարդիկ ժամանակավորապես հայրենիք վերադառնային բերքահավաքը կատարելու համար: Այլապես, ընդգծում էր գեներալը, կամ հարյուր հազարավոր մարդիկ սովամահ կլինեին, և կամ նրանց պարենի մատակարարումը պետք է ստանձնեին Գերմանիան և իր «արբանյակները»: Ֆոն Կրեսը միաժամանակ հայտնում էր, որ թուրքական կողմի հաղորդած տեղեկությունը, թե իբր Հայոց ազգային խորհուրդը վերադարձել է Երևան, ճիշտ չէր, և որ այդ հարցում խոչընդոտները հենց իր բացառապես թուրքիայի կողմից էին հարուցվում: Նա բազմիցս ընդգծում էր, որ ի նպաստ հայերի միջամտելու համար անհրաժեշտ էր գործել խիստ շտապողաբար, և որ Կոստանդնուպոլսում կայանալիք համաժողովում թուրքիան պետք է հարկադրվեր թույլատրել հայ փախստականների վերադարձը: Նա նաև շեշտում էր, որ Հայաստանը չափազանց փոքր էր «այդ բոլոր մարդկանց» կերակրել կարողանալու համար<sup>2</sup>:

Մի քանի օր անց՝ հուլիսի 20-ին, գեներալը նորից է հեռագրում ԱԳՆ-ին էլ ավելի սաստկացնելով իր ահազանգը: «Ես իմ պարտքն եմ համարում, – մասնավորապես գրում էր նա, – մեկ անգամ ևս մատնանշել, որ մենք բոլոր պարագաներում պետք է հասնենք այն բանին, որ թուրքերը փախստական հայերին անմիջապես թույլատրեն վերադառնալ և հավաքել իրենց բերքը: Եթե անտեսենք անգամ մարդկայնության պահանջը, ապա պետք է զոնե հաշվի առնենք, որ մեր հեղինակությունը

և Արևելքում մեր ազդեցությունը մեծագույն կորուստ կկրեն, եթե մենք մեզ այնքան թույլ դրսևորենք, որ չկարողանանք թուրքերի մոտ գտնվող կես միլիոն քրիստոնյաների փրկել սովամահությունից: Հասարակական կարծիքը և պատմությունը հայերի բնաջնջման մեղքը մեզ կվերագրեն, և այն ըմբռնումը, որ մենք 1915 թ. հայկական սարսափներից մեղսակից ենք, նոր սնունդ կստանա: Չերդ Գերագանցությանը ես խնդրում եմ այս առումով այնտեղի կառավարության վրա ազդու ճնշում գործադրել: Ավստրո-հունգարական պաշտոնակատարը կստանա համապատասխան ցուցում: Ես խնդրում եմ բանակի գլխավոր հրամանատարությանը՝ նույն առումով ազդեցություն գործադրել էնվեր փաշայի վրա»<sup>1</sup>:

Գեներալ ֆոն Կրեսը գործադրում էր իր ողջ ազդեցությունն ու հնարավորությունները՝ փախստական հայերին վերադարձի թույլտվություն հատկացնելու նպատակով իր կառավարությանը գործուն քայլերի մղելու համար: Հուլիսի 26-ին նա Թիֆլիսից ԱԳՆ-ին կրկին հեռագրով տեղեկացնում էր, որ հայերը շարունակ դիմում էին իրեն խնդրելով իրենց փախստական հայրենակիցներին սովամահությունից փրկել և թուրքական կառավարությանը հարկադրել թույլատրելու նրանց վերադարձը հայրենիք: Ապա հայտնելով, որ իր այդ հարցին վերաբերող բազմաթիվ հեռագրերը մնացել էին անպատասխան՝ նա խնդրում էր իրեն շտապ կերպով տեղեկացնել, թե արդյոք կայսերական կառավարությունը հայերի համար քայլեր ձեռնարկու՞մ էր, և եթե այո, ապա ինչպիսի՞ հաջողությամբ: «Եթե անգամ անտեսվի մարդկայնության պահանջը, – նշում էր գեներալը, – ապա այդ հարցը առնչվում է մեր քաղաքական հեղինակությանը: Եթե մենք հայերին այս անգամ նույնպես չկարողանանք օգնել, ապա կհաստատվի այն կասկածը, որ մենք մեղսակից ենք 1915 թ-ի կոտորածներում»<sup>2</sup>:

Գեներալը հաշվված օրեր անց՝ հուլիսի 31-ին, կանցլերին ուղարկեց նաև հոգևորական Արսեն Բիրփյանցի կողմից ուղարկված մի գրություն՝ նրան ներկայացնելով որպես Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ: Այնտեղ նշված էր, որ Ախալքալաքի շրջանից հեռացած հայ փախստականների սննդի պաշարն ամբողջովին սպառվել էր, նրանց բոլորի դրությունը «ձայրահեղ կրիտիկական» էր, տեղի էին

<sup>1</sup> Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., էջ 559:

<sup>2</sup> Deutschland und Armenien 1914-1918..., էջ 414-415:

<sup>1</sup> Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., էջ 560:

<sup>2</sup> ԱՆԳ, էջ 561:

ունեցել սովամահության բազմաթիվ դեպքեր, ինչն արդեն առանց բացառության բոլորին էր սպառնում: «Արցունքների մեջ մենք խնդրում ենք պատասխանել, թե արդյոք Բակուրիանիի անտառներում գտնվող սովյալները երկաթ են ստիպված լինելու սպասել», - գրում էր Ա. Բիրոյանը<sup>1</sup>:

Ճոն Կրեյթը, ինչպես նշվել է, միակ բարձրաստիճան գերմանացի զինվորականը չէր, որն անհրաժեշտ էր համարում ի նպաստ հայերի գործուն միջամտություն ցուցաբերել, և արժե ընդգծել, որ ինչպես ամռան սկզբին, հուլիսին ևս գերմանական զինվորականության տեսակետն այս հարցում շատ ավելի պարզորոշ ու միանշանակ էր, քան քաղաքական ղեկավարության: Յուլիսի 30-ին ֆելդմարշալ Յինդենբուրգն իր հերթին էնվերին ուղարկեց մի հեռագիր, որում նա վերջինիս բավական ազդու կերպով կոչ էր անում փախստական հայերին անհապաղ վերադարձի հնարավորություն տալ: «Միմյանց համապատասխանող տարբեր տեղեկություններ վկայում են հայ փախստականներին Չայաստան վերադառնալու թույլտվության հատկացման հույժ անհրաժեշտությունը, որպեսզի նրանք կարողանան բերքը հավաքել, - մասնավորապես նշում էր նա: - Այլապես հարյուր հազարավոր մարդիկ սովամահ կլինեն, քանի որ այլ կերպ նրանց պարենի տրամադրումն անհնար է: Անհրաժեշտ է մեծագույն շտապողականություն ցուցաբերել: Ձերդ Գերագանցության հետ միասին ես այն կարծիքին եմ, որ մենք բնակչության դեմ չէ, որ ուզում ենք պատերազմ վարել: Ձերդ Գերագանցությունը նաև կհասկանա այն, որ ես այստեղ, որպես քրիստոնյա, հանդես եմ գալիս իմ 500.000 հավատակիցներին անխուսափելի մահից փրկելու համար: Ի շահ մարդկայնության՝ ես Ձերդ Գերագանցությանը խնդրում եմ հրաման արձակել, որ այդ դժբախտները կարողանան իրենց հայրենիքը վերադառնալ: Ես չեմ կասկածում, որ Ձերդ Գերագանցությունը, այժմ իմ միջոցով հայերի դրության մասին տեղեկացվելով, ոչ մի պահ չի հապաղի՝ կատարելու խստագույն կարգադրություն և վերահսկելու դրա իրականացումը»<sup>2</sup>:

Մինչև իսկ զինվորականության շրջանից հնչող ահազանգերը և միջամտության կոչերը զորու չեղան պաշտոնական Գերմանիային դրդել հայ ժողովրդի հանդեպ թուրքական կամայականությունների դեմ նախազուշացումների և հորդորների իր ավանդական քաղաքականու-

<sup>1</sup> Անդ, էջ 564:

<sup>2</sup> St'u Deutschland und Armenien 1914-1918..., էջ 416:

թյունը փոխել և դիմել առավել ազդու քայլերի: Թե այդ քաղաքականությունն որքան ամուլ էր, և թուրքական կողմն էլ, դա գիտակցելով, հաճախ ունայն խոստումների, իսկ երբեմն էլ բացահայտ հակադրման միջոցով որքան հեշտությամբ էր ընդդիմանում դրան, որոշակիորեն փաստում են Կ. Պոլսի գերմանական դեսպանության և ԱԳՆ-ի միջև փոխանակված թղթակցությունները:

Չատկանշական է, որ արտագործնախարարությունը ֆոն Կրեյթի վերոնշյալ՝ հուլիսի 19-ի և 20-ի երկու հեռագրերը միասին, առանց որևէ կից հանձնարարականի հուլիսի 27-ին ուղարկեց դեսպան Բեռնշտորֆին: Վերջինս հուլիսի 30-ին ԱԳՆ-ին տեղեկացնում էր, որ Մեծ վեզիրը և Նեսիմի բեյը վերջապես վճռել էին Կովկասի հարցի շուրջ հստակ դիրքորոշում ցուցաբերել<sup>1</sup>: Ըստ դեսպանի միայն մեկ հարցում թուրքական կողմը լիովին տեղի էր տվել Գերմանիայի պահանջին, այն է՝ Ռուսաստանին նկատի առնելով, հրաժարվել առաջիկա համաժողովում կամ, ավելի ստույգ, այնտեղ կնքվելիք պայմանագրերում Կովկասի նորաստեղծ հանրապետությունները ճանաչելուց: Ինչ վերաբերում էր հայ փախստականներին, ապա թուրքական կողմը Բեռնշտորֆին տեղեկացրել էր, թե մտադիր էր անմիջապես զբաղվել նրանց վերադարձը կազմակերպելու հարցով: Յիշյալ թուրք պաշտոնյաները հայտնել էին, թե իրենց մեծ դժվարությամբ հաջողվել էր կոտրել էնվերի դիմադրությունը, որը, ռազմական դրդապատճառներ վկայակոչելով, փորձում էր առարկել դրա դեմ: Վերջինս նաև պահանջել էր, որ Ախալքալաքի շրջանի փախստականների վերադարձի խնդիրը կազմեր բացառություն, համաժողովում չարժարժվեր, քանի որ այնտեղ, իբրև թե, միայն նորակազմ և թույլ թուրքական ջոկատներ էին գտնվում, որոնց կարգապահության

<sup>1</sup> Անդ, էջ 415-416: Յուլիսի երկրորդ կեսին գերմանա-թուրքական հարաբերություններում որոշակի լարվածություն էր ստեղծվել նաև Վրաստանի առնչությամբ, որի հետևանքով Վրաստանում գտնվող գերմանական ներկայացուցիչները հանձնարարելի էին համարում նոր գերմանական զորամասեր ուղարկել Թիֆլիս: Գերմանական զինվորական բարձրագույն հրամանատարությունը դա, ինչպես պարզ է դառնում Բեռնշտորֆի տեղեկություններից, համարել էր անհրազորելի, և դեսպանը, հուլիսի 27-ին տեղեկացնելով, որ Մեծ վեզիրը և Նեսիմի բեյը դեռ հապաղում էին, ի պատասխան իր հարցումների, Կովկասի հարցում պաշտոնական հստակ դիրքորոշում ցուցաբերել, գտնում էր, որ դեպի Վրաստան գերմանական նոր ուժեր ուղարկելուց կարելի էր հավանաբար խուսափել, եթե ավստրիական զորամասեր ուղարկվեին Չայաստան: St'u Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., էջ 561-562:

վրա «չէր կարելի հույս դնել»: Բացի այդ՝ նշված թուրք պաշտոնյաները հայտնել էին, թե հայերը հեռանալուց առաջ այնտեղ «ոճրագործություններ» էին կատարել, և որ վտանգ կար, թե իբր թուրքերը դրա համար վրեժխնդիր կլինեին:

Թուրքական կողմը Բեռնշտորֆի հետ առանձնագրույցում միանգամայն անդրդվելի էր մնացել սահմանանների կարգավորման հարցում՝ հայտնելով, թե խնդիրը տվյալ դեպքում վերաբերում էր Թուրքիայի սահմաններին, որն, ըստ այդմ, մյուս դաշնակիցների համեմատությամբ Կովկասում շատ ավելի կարևոր, «կենսական» շահեր ուներ: Բացի այդ՝ ըստ նշված պաշտոնյաների, Թուրքիայի հեղինակությունը Կովկասում անվերադարձ կկորչեր, եթե Թուրքիան հարկադրված լիներ իր դաշնակիցների հովանավորությունը վայելող կովկասյան պետությունների առջև նահանջել: Առաջին հերթին հենց սեփական սահմանների վերջնական հաստատագրման նպատակով թուրք պատվիրակությունը հայտնել էր իր շահագրգռվածությունը համաժողովը հնարավորինս շուտ սկսելու հարցում՝ միաժամանակ ընդգծելով, որ իր կառավարությունը ցանկացած հարցում պատրաստ էր հետևել Գերմանիային, եթե վերջինս հավանություն տար թուրքական կողմից առաջարկվող սահմաններին:

Դեսպանի վերաբերմունքը թուրքական պահանջի հանդեպ միանշանակ դրական էր: Նրա կարծիքով՝ գերմանական կողմը չէր կարող հեշտությամբ ընդդիմադիր դիրքորոշում ցուցաբերել, քանի որ Էնվերին արդեն մի անգամ սահմանների կարգավորման հարցում ընդառաջելու հավաստիացում կատարվել էր<sup>1</sup>: Բացի այդ, դեսպանի կարծիքով, գերմանական կողմը որևէ հնարավորություն չունեի թուրքերին զիջումներ հարկադրելու համար: «Մենք արդեն զուր կերպով սպառնացել ենք ռեպրեսիվ միջոցների բոլոր ձևերով, – նշում էր նա: – Եթե մենք իրոք այդ ռեպրեսիվ միջոցները գործադրենք, ապա օգտակար կլինենք մեր թշնամիներին՝ խանգարելով թուրքերի և մեր պատերազմավարունը, և բացի այդ, ի վերջո, թուրքերին կնդենք մեր թշնամիների զիրկը...»<sup>2</sup>:

<sup>1</sup> Առկա սկզբնաղբյուրներում չի տեղեկացվում, թե դա երբ և ինչպես է կատարվել:

<sup>2</sup> Տե՛ս ինտերնետային ցանցում՝ Revidierte Lepsius-Edition....

<http://www.armenocide.de/armenocide/armgende.nsf/WebStart-De?OpenFrameset,1918-07-30-DE-001-V> փաստաթուղթը: Այդ հարցի առնչությամբ տե՛ս 6-րդ ժամոթագրության մեջ կատարված պարզաբանումը:

Դեսպանն իր տեսակետը համոզիչ և ընդունելի դարձնելու համար հարկ էր համարում մինչև իսկ նշել, թե, ըստ Կովկասում եղած բոլոր փորձագետների վկայությունների, այնտեղ ամենևին էլ տնտեսական շահույթի մեծ աղբյուրներ չկային, ինչպես սկզբնապես ենթադրվում էր: Կովկասի տարածքի ամենահարուստ հատվածն Ադրբեջանն է, ընդգծում էր նա, և այնտեղից թուրքերին հենց միայն բնակչության մեջ իշխող տրամադրությունների պատճառով հնարավոր չէր լինի դուրս մղել: Աղքատ Վրաստանը գրեթե ոչինչ չէր կարող առաջարկել և, ըստ դեսպանի, կարծես առանձնապես ուրախ էլ չէր գերմանացիների ներկայության համար: Իսկ ինչ վերաբերում էր հայերին, ապա «նրանք մեզ երբեք չեն մերի այն բանի համար, որ մենք թուրքերի դաշնակիցներն ենք», ընդգծում էր Բեռնշտորֆը՝ այդպիսով փաստորեն բացառված համարելով նաև այն ակնկալիքների իրականացումը, որոնք կարող էին կապված լինել հայերի հետ:

Ինչ վերաբերում էր նավթին, ապա, դեսպանի համոզմամբ, սահմանների կարգավորումն այդ հարցի հետ որևէ կապ չունեի, և առկա իրավիճակն էլ այնպիսին էր, որ Գերմանիան Բաքվի հարցին կարող էր «նպաստավոր լուծում տալ» միայն ռուսների, թուրքերի և Ադրբեջանի բնակիչների հետ բարեկամական բանակցությունների միջոցով: Իսկ այն դեպքում, եթե Գերմանիայի կառավարությունը չհամաձայներ ընդառաջել սահմանների կարգավորման՝ թուրքական կառավարության ցանկություններին, ապա, դեսպանի համոզմամբ, ուրիշ ոչինչ չէր մնա անելու, քան ավելի շատ գործառնաբեր ուղարկել Չայաստան ու Վրաստան և թուրքերի հետ խոսել ուժի դիրքերից: «Եթե մենք չենք ուզում թուրքերի հետ համաձայնել, ապա պետք է Կովկասում ուժի քաղաքականություն վարենք, – գրում էր Բեռնշտորֆը: – Իսկ առայժմ այնտեղ թուրքերն են դրության տերը, և ոչ թե մենք: Իմ կարծիքով, սակայն, նման գործելակերպը ժամանակի ընթացքում կհասցնի այն բանին, որ մեր դաշինքը և ավանդական արևելյան քաղաքականությունը կփլուզվեն»<sup>1</sup>:

Բեռնշտորֆի այս գրությունը լրացուցիչ մեկնաբանության կարիք, թերևս, չունի: Կովկասին վերաբերող հարցերում Թուրքիայի պահանջներին համաձայնելու՝ նրա դիրքորոշումը, ամեն բանից զատ, փաստում էր նաև նրա անտարբերությունը բազմաազար մարդկանց ճակատա-

<sup>1</sup> Տե՛ս Revidierte Lepsius-Edition..., 1918-07-30-DE-001-V փաստաթուղթը:

գրի հանդեպ: Իսկ թուրքերին գրաված հայկական տարածքներից ետ մղելու կամ գոնե հայ փախստականներին իրենց բնակավայրերը վերադարձնելու համար Գերմանիայի աջակցությունը ստանալու՝ հայկական կողմի խնդրագրերը<sup>1</sup>, չնայած գերմանական զինվորական շրջաններից և այլ կողմերից հնչող ողջախոհության կոչերին, պետք է շարունակեին մնալ «ծայն բարբառո անապատի», քանի որ Գերմանիայի կառավարությունը հայկական խնդրում թուրքիայի հանդեպ իր վաղեմի հանդուրժողական քաղաքականությունը փոփոխելու մտադրություն (նույնիսկ հայության համար ստեղծված այդ անասելի ծանր շրջանում) չէր ցուցաբերում:

Հայաստանի Հանրապետության դրությունը ամռան երկրորդ կեսին ևս շարունակում էր ծայրահեղ ծանր մնալ: «Հայաստանը, ավելի շուտ, գաղթականական կայան էր,– գրում էր Սիմոն Վրացյանը:– Ամբողջ երկրում շուրջ 450.000 գաղթական էր թափված, որից մոտ 40.000-ը Երևանում, շատերը՝ փողոցների և ավերակ շենքերի մեջ: Հաց չէր ճարվում... Սարսափելի էր որբերի վիճակը... Մարդիկ մեռնում էին անմռունչ, հարյուրներով, հազարներով: Ժողովուրդը սպառվում էր վառվող մոմի պես: ...Կեց անսվա ընթացքում սովից ու հիվանդություններից Հայաստանում մեռավ 180.000 մարդ»<sup>2</sup>:

Այդ իրադրությունում հանրապետության կառավարությունը շարունակում էր ջանքեր գործադրել Բրեստի պայմանագիրը կյանքի կոչելու,

<sup>1</sup> Հուլիսի 29-ին Բեռլինի հայկական պատվիրակությունը Համո Օհանջանյանի ստորագրությամբ մի նոր ուղերձ հանձնեց ԱԳՆ-ին, որտեղ հաղորդում էր, որ թուրքական զորամասերը, փոխանակ ետ քաշվելու, շարունակ ավելի էին խորանում հայկական տարածքներում և արդեն գրավել էին նաև Երևանի մերձակայքում գտնվող երկու գյուղեր: Շարունակելով բողոքել առ այն, որ թուրքերը հայ փախստականներին չէին թույլատրում վերադառնալ իրենց բնակավայրերը՝ այդպիսով մատնելով սովամահության, պատվիրակությունը դարձյալ ընդգծում էր, որ փախստական հայերին կործանումից փրկելու միակ ճանապարհը թուրքերի գրաված հայկական տարածքների ազատումն էր, իսկ մինչև այդ ազատումը՝ հայերին հետապնդումներից պաշտպանելու, փախստականների վերադարձը և նրանց անվտանգությունը վերահսկելու նպատակով գերմանական զորամասերի ուղարկումը: Տես Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., էջ 562-563:

<sup>2</sup> Տես Վրացյան Սիմոն, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 199-200:

սովահարության մատնված փախստականներին իրենց բնակավայրերը վերադարձնելու և հանրապետության տնտեսա-քաղաքական մեկուսացումը վերացնելու նպատակով Գերմանիայի աջակցությունը ստանալու համար: Հուլիսի 26-ին Բեռլինի պատվիրակությունը տեսակցություն ունեցավ պետքարտուղար ֆոն Հինթցեի հետ: «Ընդունելությունը շատ սիրալի էր, բայց պաշտոնական,– գրում էր այդ առթիվ Հ. Օհանջանյանը ՀՀ կառավարությանն ու Ազգային խորհրդին ուղղված՝ իր հուլիսի 27-ի զեկուցագրում:– Մեր կարծ, բայց լրիվ զեկուցումից հետո՝ մեր հայրենիքի դրության մասին, նախարարն ասաց, որ այսօր նա միայն ծանոթանում է մեզ հետ, իսկ գործի էությանը և խնդիրներին դեռևս ժամանակ չի ունեցել ծանոթանալու, բայց և այնպես, ավելացրեց նա, եղեք հանգիստ, մեր սրտին մոտ է հայ ժողովրդի ցավը և վիճակը, նամանավանդ, այն հարյուր հազարների դրությունը, որոնց մասին դուք ինձ պատմեցիք, և մենք կանենք ամենը, ինչ հնարավոր է ձեր հայրենիքին օգնելու համար...»<sup>1</sup>:

Օգոստոսի 2-ին Բեռլինի հայկական պատվիրակությունը օգնության մի գրավոր խնդրագրի հետ միասին գերմանական արտգործնախարարությանը ներկայացրեց քաղվածքներ Կ. Պոլսում գտնվող հայկական պատվիրակությունից ստացված տեղեկագրերից, որոնք ահազանգում էին բազմահազար հայ փախստականների ծայրահեղ ծանր դրությունը և թուրքական զորամասերի ու թաթարական հրոսակների կողմից հայերի հանդեպ իրագործվող բռնությունների շարունակական աճը: Այդ քաղվածքներում ընդգրկված էր նաև հետևյալ հատվածը Ա. Ահարոնյանի՝ հուլիսի 20-ի նամակից. «Դուք այդտեղ չեք կարող պատկերացնել, թե ինչպիսի ահռելի չափերի է հասել մեր ազգի փախուստը, և որքան

<sup>1</sup> Տես ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 656, թ. 95-96: Հուլիսի երկրորդ կեսին Ա. Իսահակյանը նույնպես մեկնեց Բեռլին՝ հանդիպելով Գյոպեյտի և այլ գերմանացի պետական գործիչների հետ: Նա հանդիպումների ժամանակ հեղքում էր Շվեյցարիայում իր կողմից հակազերմանական քարոզչության վարման վերաբերյալ Գերմանիայում տարածված լուրերը և միաժամանակ փորձում էր Գերմանիայի քաղաքական շրջաններին դրդել՝ ի նպաստ հայերի հանդեպ գալու: Ըստ Իսահակյանի՝ Գերմանիան, չնայած Բրեստի պայմանագրի սահմանագիծը վերահաստատելու բարի կամքին, չէր կարողանա թուրքիային դա հարկադրել, եթե վերջինս չկամենար տեղի տալ: Տես Ա. Իսահակյանի կողմից իր հանդիպումների մասին Ա. Ահարոնյանին ուղարկված զեկուցագրերը, անդ, թ. 121-124, 146-147:

սոսկալի է դրանից առաջ եկած թշվառությունը: Երևանից մինչև Դիլիջան և Նոր Բայազետ ճանապարհներին փախստականների մի ամբողջ ծով է: Թիֆլիսի և Վլադիկավկազի միջև գտնվող ռազմական ճանապարհը լեփ-լեցուն է փախչող հայերով: Ախալքալաքի 80.000 հայերը խոնաված են Բակուրիանի կիրճերում՝ մատնված օտար իշխանությունների պաշտոնական և ոչ պաշտոնական կամայականություններին: Ղարաքիլիսիայի հովիտները լի են փախստականներով: Այնտեղ են գտնվում Կարսի և Ալեքսանդրապոլի շրջանների բոլոր հայ բնակիչները: Քաաշի և Բորչալուի թաթարները, ոգևորված թուրքական զորամասերի ներկայությունից, նրանց անմարդկային կոտորածների են ենթարկել: Նրանք միայն Ղարաքիլիսայի շրջանում սպանել են 2.000 հայերի: Աշագազերաիլի կայարանում հայ որբերը, որոնցով լի էին շատ վագոններ, իրենց ուսուցչուհիների հետ միասին սպանդի են ենթարկվել: Ղարաքիլիսայից Թիֆլիս ձգվող երկաթուղագիծը դարձել է մեր ազգի կառավարման: Փախստականների թվով կես միլիոնից ավելի բազմությունը զրկանքների և թշվառության մեջ մահվան բաժին է դառնում ամեն օր և ամեն ժամ: Եթե շատ շուտով մեր տարածքը մինչև Բրեստի սահմանը չազատվի, մեր ժողովուրդը կորած է...»<sup>1</sup>:

Պատվիրակության կողմից ԱԳՆ-ին ներկայացված մյուս քաղվածքը կատարված էր ՀՀ արտգործնախարար Ա. Խատիսյանի՝ հուլիսի 23-ի նամակից: Այնտեղ նշված էր, որ թուրքական կառավարությունը փախստականների առնչությամբ ՀՀ կառավարության ուղարկած նոտային դեռ չէր պատասխանել, չնայած խոստացել էր հարցը երեք օրում քննել: Նաև տեղեկացվում էր, որ թուրքական զորքերն իրենց շատ անվայելուչ էին պահում, և հաճախ հենց իրենք էին Ղարաքիլիսայում, Լոռիում, Ախալքալաքում ու այլ վայրերում հայերի կոտորածներ իրականացնում, ինչի հետևանքով Լոռիից փախստականների զանգվածները լեռներով գնում էին Դիլիջան, իսկ այնտեղից՝ Նոր Բայազետ ու Երևան: Միաժամանակ նշվում էր, որ թուրքերը Ղազախից թաթարներին տեղափոխում էին Կարսի շրջանը՝ փախուստի մեջ գտնվող հայերի բնակավայրերում վերաբնակեցնելու համար<sup>2</sup>:

<sup>1</sup> Deutschland und Armenien 1914-1918..., էջ 417-418:

<sup>2</sup> Անդ, էջ 418: Արտգործնախարարությանը հանձնված թվով երրորդ քաղվածքը ներկայացնում էր Կ. Պոլսում գտնվող հայկական պատվիրակության քարտուղար Քոչարյանի՝ հուլիսի 20-ի տեղեկությունն այն մասին, որ դեպի Բա-

Օգոստոսի 5-ին Հ. Օհանջանյանը գերմանական ԱԳՆ պետքարտուղարին ներկայացրեց ևս մի ընդարձակ ուղերձ, որտեղ դարձյալ ուշադրություն էր հրավիրվում հայերի ծանր դրության վրա, և միաժամանակ կատարվում էին առաջարկներ, որոնց իրագործման դեպքում նրանք վերջնական կործանումից կփրկվեին: Ուղերձում վերստին մատնանշվում էր, որ հայ ժողովրդին համաշխարհային պատմության մեջ անմխադեպ փորձություններ վիճակվեցին, և Թուրքիայի մոտ երկու միլիոն հայերից կենդանի էին մնացել հազիվ կես միլիոնը:

Օսմանյան պետության տարածքում հայերի բնաջնջման ընդհանուր սահմանեցուցիչ պատկերի ներկայացումից հետո անդրադարձ էր կատարվում այն ծանր կացությանը, որում գտնվում էին Կովկասի հայերը: Նշվում էր, որ Բրեստի պայմանագրի ստորագրման ժամանակ հայերն ակնկալում էին, որ դրանով որոշակիորեն կհատուցվեին հայ ժողովրդի հանդեպ իրագործված ոճրագործությունները, և կբացառվեր արդեն տեղի ունեցած անլուր սարսափների որևէ կրկնություն, մինչդեռ պայմանագիրը, խլելով հայերից նրանց հայրենիքի մեծագույն մասը, չկասեցրեց թուրքերի հետագա առաջխաղացումը, որոնք գրավեցին նաև կովկասյան Հայաստանի կեսից ավելին, իսկ այդ տարածքների ավելի քան 600.000 հայերը բնաջնջումից փրկվելու համար փախստական էին դարձել իրենց ունեցվածքը մատնելով թուրքական կողոպուտին: «Հայ փախստականների հոսքը և մահացությունը նրանց մեջ օրեցօր ավելանում են, - նշված էր ուղերձում, - հայերի սպանություններն ու կոլոպտումը մեծ չափերով աճում են: Մահմեդական հրոսակները, քաջալերված թուրքերի ներկայությունից, անարգել իրագործում են իրենց անկարգությունները: Մեր ժողովրդի վերջին մնացորդը՝ մի ազգի, որը հարյուրամյակներ ի վեր Ասիայի դարպասների մոտ ներկայացրել է քրիստոնեական կրոնն ու եվրոպական մշակույթը, դատապարտված է

քու և Երևան երթևեկությունը դեռ վերականգնված չէր: Հաստատված էր այն փաստը, որ Շիրակի դաշտավայրից բազմաթիվ հայեր կալանավորվել և ուղարկվել էին Թուրքիա: Թուրքերը ելիզավետապոլում գտնվող հայերից խլել էին նրանց զենքը, իսկ Վլադիկավկազ տանող զինվորական ճանապարհը արգելափակված էր: Ավագակների հրոսակները շարունակում էին ավարառությունը Ախալքալաքի շրջանում, որի բնակչությունը դեռ վերադարձի հնարավորություն չուներ: Ավելի քան 600.000-ի հասնող փախստական հայերի մեջ իրենց հունձն էին կատարում սովը և համաճարակները: Միաժամանակ նշվում էր, որ հայերը Բաքվից հեռացնում էին իրենց ընտանիքներին: Անդ:

կործանման, եթե նրան շատ շուտով օգնություն չցուցաբերվի: Օգնել կարող է միայն Գերմանիան: Այն բանից հետո, երբ կովկասյան Հայաստանը հռչակել է իր պետական անկախությունը, նա օգնության ակնկալիքով և վստահությամբ լի դիմում է հզոր Գերմանիային և խնդրում է պաշտպանական միջամտություն՝ Թուրքիային Բրեստի պայմանագրի պայմանները հարգել տալու, այդ կերպ կովկասյան հայերին Թուրքիայի իրենց հայրենակիցներին վիճակված ճակատագրից փրկելու և նոր հայկական պետությանը գոյատևման ու անարգել զարգացման հնարավորություն ընձեռելու համար»<sup>1</sup>:

Ուղերձում չորս կետերով ներկայացվում էին նաև այն միջոցառումները, որոնց գործադրումը կհանգեցներ հարցի որոշակի կարգավորման: Նախ անհրաժեշտ էր համարվում զորամասեր ուղարկել Հայաստան՝ հայերին նոր հարձակումներից ու կոտորածներից պաշտպանելու, փախստականներին իրենց հայրենի բնակավայրերը վերադարձնելու, ինչպես նաև թուրքերից հայկական տարածքների պատշաճ ազատումն ապահովելու և վերահսկելու համար: Այդ առնչությամբ երախտագիտորեն անդրադառնալով գերմանական ԱԳՆ-ի այն տեղեկությունը, որ Գերմանիան թուրքական կողմին դրդել էր փախստականների վերադարձի դեմ իր մերժողական կեցվածքից հրաժարվել, պատվիրակությունն ուղերձում միաժամանակ ընդգծում էր, որ հայերը ոչ մի կերպ չէին համաձայնի վերադառնալ թուրքական ազդեցության ուղորտ, քանի դեռ նրանց անվտանգությունը երաշխավորված չէր: Քանի որ դա, ըստ ուղերձի հեղինակների, միայն գերմանական կամ ավստրո-հունգարական զորամասերի առկայության դեպքում կարող էր իրականություն դառնալ, նրանք թախանձագին խնդրում էին ըստ հնարավորին շուտ զորամասեր ուղարկել՝ նշելով, որ յուրաքանչյուր օր «անչափելի արյան հեղում» և նմանապես «անչափելի ունեցվածքի կորուստ» էր նշանակում:

Ուղերձում մատնանշվող հաջորդ հրատապ միջոցառումը պետք է լիներ մայրաքաղաք Երևանում գերմանական դիվանագիտական ներկայացուցչի նշանակումը, որի ներկայությունը թուրքական շրջաններում հայկական կողմի դիրքորոշումը շատ ազդեցիկ կդարձներ: Հանրապետության կառավարությունը ցանկալի էր համարում նաև գերմանական առևտրական մի հանձնաժողովի կամ առևտրական ներկայացուցչի

առաքումը Հայաստան՝ հայտնելով իր պատրաստակամությունը Գերմանիային բանբակ և պղինձ մատակարարելու հարցում:

Երրորդ կետում մատնանշվում էր հայկական տարածքներից թուրքական զորքերի դուրսբերման և Բրեստի պայմանագրով հաստատագրված սահմանների վերականգնման անհրաժեշտությունը, և զուգահեռաբար տեղեկացվում էր, որ քանի դեռ թուրքերը զրավված էին պահում հայկական տարածքները, խոսք լինել չէր կարող անդորրի, կարգ ու կանոնի հաստատման, ինչպես և տնտեսական գործունեության ապահովության մասին, իսկ հայկական հանրապետությունը պետականության կառուցման ու ամրապնդման իր առաջադրանքների կատարման համար համապատասխան ազատություն և հնարավորություններ չէր ունենա: Եվ վերջապես, թվարկվող միջոցառումների վերջին չորրորդ կետում ընդգծվում էր Գերմանիայի կողմից ՀՀ պետական անկախության ճանաչման անհրաժեշտությունը, ինչպես դա տեղի էր ունեցել Թուրքիայի կողմից<sup>1</sup>:

Վերոնշյալ երկրորդ կետի՝ Երևանում գերմանական ներկայացուցչի նշանակման առնչությամբ պատվիրակությունը օգոստոսի 6-ին արտգործնախարարությանը ներկայացրեց նաև մի առանձին խնդրագիր, որտեղ, մասնավորապես, նշվում էր, որ հայկական կառավարությունն իր նստավայրը Երևան փոխադրելուց հետո պատվիրակությանը հանձնարարել է խնդրել, որ Գերմանիան Երևանում մի դիվանագիտական ներկայացուցիչ նշանակի, ինչպես այդ տեղի էր ունեցել Թիֆլիսում: Ընդգծվում էր, որ նրա ներկայությունը ոչ միայն թուրքերի մոտ հայկական կողմի դիրքորոշումը ազդեցիկ կդարձներ, այլև Գերմանիայի համար կդյուրացներ Հայաստանի իրադրության վերաբերյալ տեղեկատվության ստացումը, կնպաստեր երթևեկության կանոնավորմանը և հումքի ձեռքբերմանը: Խնդրագրում վերստին հավաստվում էր, որ հանրապետության կառավարությունն արդեն իսկ ի վիճակի էր Գերմանիային ու նրա դաշնակիցներին բանբակ և պղինձ մատակարարել, և որ Կ. Պոլսի հայկական պատվիրակությունն իր հերթին պատրաստակամություն էր հայտնել այնտեղի գերմանական դեսպանին այդ մասին ընդարձակ տեղեկություններ ու փաստաթղթեր տրամադրել, եթե գերմանական կառավարությունը նրան հրահանգեր զբաղվել այդ հարցով<sup>2</sup>:

<sup>1</sup> Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., էջ 568:

<sup>1</sup> Աճղ, էջ 569:

<sup>2</sup> Աճղ, էջ 569-570:

Գերմանական թե՛ քաղաքական և թե՛ բարձրաստիճան զինվորական շրջանները, ինչպես նշվել է, որոշակիորեն դեմ էին Կովկասում Թուրքիայի ինքնիշխան քաղաքականությանը և մյուս կողմից հասու էին այն բարդություններին, որոնք թուրքական կառավարության հայասպանը քաղաքականության հետևանքով կարող էին ի հայտ գալ ապագա խաղաղության բանակցագործընթացում: Դեռ նախորդ ամիսներին գերմանական բանակային հրամանատարությունը, թուրքական կառավարությանը նախազուշացնելով Կովկասում թուրքական զորքերի առաջխաղացման և թուրքական հայասպանը քաղաքականության հնարավոր հետևանքներից՝ կոչ էր անում ճանաչել Բրեստի պայմանագրով հաստատագրված սահմանները: Իսկ առանձին բարձրաստիճան զինվորականներ, գործիհնակ գեներալ Ֆոն Լոսովը, գեներալ Ֆոն Կրեսը և այլն, հետևողականորեն պաշտպանում էին Թուրքիայի վրա ազդու ճնշման գործադրման միջոցով նրան Կովկասից դուրս մղելու տեսակետը: Թուրքական կողմն, իր հերթին, իր գործողություններն արդարացնելու համար որդեգրել էր զանազան ստահող «հիմնավորումների», իսկ եթե առանձին հարցերում դրանք ևս բացակայում էին, ապա առերես դաշնակցի պահանջների հետ համաձայնելու, բայց անվերջ ձգձգումներով ծախողելու մարտավարությունը: Հայկական խնդրի շուրջ երկու դաշնակիցների երկխոսությունը նույն ուղեգիծն ուներ նաև օգոստոսի առաջին օրերին:

Ֆելդմարշալ Ֆոն Հինդենբուրգը, որի՝ հուլիսի 30-ին էնվերին ուղարկած հեռագրի մասին արդեն նշվել է, հուլիսի 31-ին գեներալ Ֆոն Չեկտի միջոցով ևս մի հեռագիր ուղարկեց նրան՝ հայտնելով, որ Ջուլֆայի ուղղությամբ թուրքական դիվիզիաների տեղաշարժերի վերաբերյալ տեղեկություններով հաստատվում էր, որ այդ շրջաններում հայերի հետ մարտեր էին տեղի ունենում: «Ես մեծ քաղաքական և նմանապես մեծ ռազմական սխալ կհամարեմ, - նշում էր Ֆոն Հինդենբուրգը, - եթե այդ մարտերը ռազմական տեսանկյունից անպայմանորեն անհրաժեշտ չափը գերազանցեն: Մենք ռազմական տեսակետից նույնպես չենք կարող անտեսել այն մտահոգիչ տրամադրությունը, որն այդ մարտերի ընթացքում բնակիչների դեմ անկարգությունների հետևանքով Անդրկովկասում ի հայտ կգա»<sup>1</sup>:

Օգոստոսի 3-ին դեսպան Բեռնշտորֆը Հինդենբուրգին ուղարկեց էնվերի գրավոր պատասխանը: Վերջինս այնտեղ նշում էր, թե ինքը հայ փախստականների հարցով զբաղվող թուրքական արտգործնախարարությանը տեղեկացրել էր, որ «ռազմական տեսանկյունից» կարող էր ընդունելի համարել փախստականների վերադարձը դեպի Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթգծից առնվազն 20 կմ հեռավորության վրա ընկած տարածքը, ինչպես նաև այն շրջանները, որտեղ մուսուլմանների և հայերի միջև մարտեր տեղի չէին ունեցել, ընդ որում՝ հատկանշական է, որ նա այդ տարածքներից շեշտում էր, մասնավորապես, Բաթումի շրջանը: Այնուամենայնիվ, նշում էր էնվերը, այդ մասին վերջնական որոշում պետք է կայացներ 3-րդ բանակի գլխավոր հրամանատարը: Ինքն անձամբ դեռ չէր կարող նաև որոշակիորեն ասել, թե արտգործնախարարությունը փախստականներին վերադարձի համար համապատասխան թույլտվություն կհատկացներ, թե ոչ, սակայն չէր թերանա հարցի կարգավորումն արագացնել և արդյունքների մասին տեղեկացնել ֆելդմարշալին:

Չուտ թուրքական այս պատասխանը համեմված էր նաև մի ամբողջ շարք ապակողմնորոշիչ տեղեկություններով, որոնցով Թուրքիայի ռազմական նախարարը փորձում էր «հիմնավորել» հայ փախստականների զանգվածային վերադարձի անհնարինությունը և թուրքական կողմի հակահայկական գործողությունները: «Ես, - գրում էր էնվերը, - լիովին կիսելով Ձերդ Գերազանցության մտահոգությունները և համակված Ձերդ Գերազանցության ցանկություններն իրագործելու մեծ բաղձանքով ի ցավ ինձ, ստիպողական ռազմական պատճառներով ի վիճակի չեմ թույլատրել հայերի վերադարձը ամբողջ ծավալով և առանց սահմանափակումների: Ես խնդրում եմ այդ հարցի քննության ժամանակ նկատի առնել հայերի հանդեպ մեր դրությունը: Բաքվի առջև, Ջուլֆայի և Ուրմիայի մոտ նրանք մեր դեմ մարտեր են մղում: Նրանց կապը անգլիացիների հետ ապացուցելի է: Այս դեպքում ժողովրդի և ռազմական հակառակորդի միջև որևէ սահմանաբաժանում կատարելը հազիվ թե հնարավոր է, չնայած սկզբունքորեն բնակչության դեմ պատերազմ չմղելու մեր ողջ պատրաստակամությանը: Ձերդ Գերազանցությունը ինձնից պահանջում է կես միլիոն մասամբ զինված և թշնաբար տրամադրված բնակիչներին թույլատրել անցնելու մեր կռվող բանակի թիկունքը, երբ որևէ երաշխիք չի կարող տրվել, որ նրանք խաղաղ պահվածք կցուցաբերեն: Նրանք, այնուհանդերձ, ինչպես նախկինում ռու-

<sup>1</sup> Deutschland und Armenien 1914-1918..., էջ 416:

սական, այնպես էլ այժմ անզլիական վարձատրությամբ դժվարություններ կստեղծեն մեր պատերազմական գործողությունների համար:

Վերադառնալով այն շրջանները, որոնք հարյուրամյակներ շարունակ տակնուվրա են եղել հին ազգային ատելության կողմից, նրանք նոր արյունոտ կռիվների առիթ կստեղծեն: Չերոզ Գերազանցությանը կխնդրեի նկատի առնել, որ վերջին մարդահամարից հետո միայն Կարսի շրջանում մուսուլման բնակիչների թիվը կրճատվել է 45.000-ով, որոնք բոլորը զոհ են դարձել հայերի հետապնդումներին, քանի որ այդ շրջանում ռուսական զորակոչ տեղի չի ունեցել: Այդ շրջանների մուսուլմանական ժողովուրդը անխուսափելիորեն կծգտի վրեժխնդիր լինել, այնպես, որ թուրքական զորքերը ստիպված կլինեն հայերին պաշտպանելու համար հանդես գալ իրենց ազգակիցների և հավատակիցների դեմ:

Յենց ի սեր մարդկայնության՝ անհրաժեշտ է խուսափել մի նոր քաղաքացիական պատերազմից, որ կունենա անխուսափելի դաժան հետևանքներ: Հայերի վերադարձը կհարկադրի երկրի ներսում զնդերի վերաբաշխում կատարել, ինչը ծրագրված ռազմական գործողություններն անհնար կդարձնի և կջլատի մեր պատերազմավարումը: Չերոզ Գերազանցությանը ես խնդրում եմ մեր դիրքորոշումը գնահատելիս այդ հանգամանքները արժևորել: Եթե անմիջաբար կամ զեներալ ֆոն Կրեսի միջնորդությամբ պահանջվում է, որ Բաքվից հայերը հեռանան և վերադառնան հայկական պետության տարածք, ապա Ադրբեջանում գործող թուրքական հրամանատարի կողմից խոչընդոտներ չեն հարուցվի: Բաքվից նրանց հեռանալը մեզ համար միայն ցանկալի կարող է լինել, քանի որ այնտեղի ռուսների հետ համաձայնության հասնելը ավելի կհեշտանա, եթե այնտեղ նրանց վրա ակնհայտորեն տիրող ազդեցությունը դրան չխանգարի»<sup>1</sup>:

Էնվերի պատասխանը ընդարձակ մեկնաբանության կարիք, անկասկած, չունի: Նա փորձում էր գործադրել հերյուրանքների մի ամբողջ զինանոց՝ հայերի առնչությամբ իր գերմանական դաշնակցի պահանջները չկատարելու և միաժամանակ նրա մոտ ևս հակահայկական տրամադրություն ձևավորելու համար, և չէր խուսափում մինչև իսկ Բաքվի ռուսների հետ փոխըմբռնման անհնարիությունը պայմանավորել նրանց վրա այնտեղ գտնվող հայերի ունեցած ազդեցությամբ: Իսկ առանձին շրջաններում հայերի վերադարձը թույլատրելու՝ Էնվերի երևութային

<sup>1</sup> Աճ, էջ 418-420:

համաձայնությունը նպատակ ուներ այն պատրանքը ստեղծել, որ նա սկզբունքորեն դեմ չէր հայերի զանգվածային վերադարձին, բայց դա պատերազմական իրադրության պայմաններում անհնար էր իրագործել<sup>1</sup>: Մինչդեռ, ինչպես շուտով պարզ կդառնա, թուրքական կառավարության կողմից սկզբունքորեն արգելվում էր նաև վերոնշյալ՝ թույլատրելի համարվող առանձին շրջաններում հայերի վերադարձ արտոնումը:

Ինչևէ, Բեռլինի հայկական պատվիրակությունը, բնականաբար, իր խնդիրն էր համարում նաև թուրքական այդ ապակողմնորոշիչ «փաստարկների» մերկացումն ու պարզաբանումը: Բացառապես այդ հարցին էր վերաբերում օգոստոսի 8-ին արտգործնախարարությանը ներկայացված ուղեբժը, որտեղ, մասնավորապես, նշվում էր, որ հայկական կառավարությունը երբեք չէր առաջարկել թուրքական զորք ուղարկել հայկական «բանդաների» դեմ պայքարելու համար, և որ այս հարցում խոսքը կարող էր վերաբերել միայն աննշանակ խմբերի, որոնք թուրքական զորքերի ներկայության անհրաժեշտություն ամենևին չէին ստեղծում, և որոնց հետ կարող էին նաև հայկական կանոնավոր զինված ուժերը հաշիվ մաքրել, եթե նրանց տրվեր շարժման բավականաչափ ազատություն, և թուրքերի կողմից չարգելվեր հայկական երկաթուղու օգտագործումը:

Նշելով, որ կառավարությունը երևան տեղափոխվելուց հետո անհամեմատ ավելի մեծ հնարավորություններ ուներ երկրում առանց օտարների օգնության պահպանել կարգ ու կանոնը՝ պատվիրակությունը միաժամանակ ընդգծում էր բազմաթիվ փաստերի առկայությունն այն մասին, որ թուրքերը մահմեդական հրոսակների դեմ ոչ միայն չէին պայքարում, այլև նրանց ամեն հնարավոր ձևով աջակցում էին, մինչդեռ եթե մի քանի հարյուր մարդուց բաղկացած մի քանի գերմանական պարե-

<sup>1</sup> Նրա այս հեռագիրը, սակայն, աներկբա լավատեսությամբ էր համակել գերմանական կողմին, ինչը վկայում էր պետքարտուղար Ֆինթցեի՝ օգոստոսի 4-ին զեներալ ֆոն Կրեսիին ուղարկած հաղորդագրությունը: Ըստ պետքարտուղարի հավաստիացման՝ թուրքական կառավարությունը գերմանական կառավարության և բանակի գլխավոր հրամանատարության կողմից «պաշտպանված բազմաթիվ քայլերի հիման վրա» պատրաստակամություն էր հայտնել անմիջապես ձեռնամուխ լինել հայ փախստականներին հայրենիք վերադարձնելու գործին: Ֆինթցեն նաև նշում էր, որ այդ հարցում ռազմական նկատառումներով, մինչև կովկասյան հարցերին նվիրված համաժողովի հրավիրումը, բացառություն էր կազմելու միայն Ախալքալաքի շրջանը: Աճ, էջ 420:

կային խմբեր ուղարկվեին, ապա նրանք, խաղաղությունը խաթարող քրիստոնյաների և մահմեդականների դեմ հավասարաչափ խստություն կիրառելով և զերծ լինելով թուրքերին հատուկ կողմնակալությունից, կարճ ժամանակում կկարողանային ողջ հայկական տարածքը մաքրել հրոսակներից:

Ինչ վերաբերում էր Ուրմիայի շրջանին, ապա, ինչպես տեղեկացվում էր ուղերձում, մի շարք հայեր և ասորիներ պարսկական սահմանով փախել էին այնտեղ: Նրանք ի վիճակի չէին սպառնալու թուրքական զորքերի անվտանգությանը և նաև աջակցություն ստանալու անգլիացիներից, քանի որ վերջիններս հարյուրավոր կիլոմետրեր հեռու՝ Մոսուլի մոտ էին գտնվում: Միաժամանակ նշվում էր, որ Բաթունի բանակցությունների ժամանակ հայկական կողմը պատրաստակամություն էր հայտնել մի հանձնաժողով ուղարկել Ուրմիա՝ այնտեղի հայ փախստականներին Կովկաս բերելու համար, բայց թուրքերը ո՛չ հանձնաժողովին և ո՛չ էլ փաստականներին թույլ չէին տվել օգտագործել երկաթուղիները: Իսկ Բաքվի առնչությամբ տեղեկացվում էր, որ ռուսական արևմուտյան ճակատի լուծարումից հետո հայ զինվորները նույնպես վերադարձել էին հայրենիք: Նրանցից մոտ 5-6 հազարը ընտրել էին Բաքվով տանող ճանապարհը, սակայն նրանց հետագա ուղին դեպի Թիֆլիս և Հայաստան դարձել էր անհնար, քանի որ թաթարները Բաքու-Թիֆլիս ճանապարհահատվածը գրավել էին և սպանում էին յուրաքանչյուր հայի, ով կփորձեր այն հատել: Այդ իսկ պատճառով հայ զինվորները դարձյալ Բաքու էին վերադարձել և միացել բոլշևիկներին, որոնք նրանց խոստացել էին օգնել վերադառնալ իրենց հայրենիքը:

Պատվիրակությունը միաժամանակ ուղերձում նշում էր, որ Բաքուն գտնվում էր բոլշևիկների ձեռքում, ուստի այնտեղի իրադարձությունների համար նրանք էին պատասխանատու, այլ ոչ թե հայերը և կամ Հայաստանի կառավարությունը, որը սեփական նախաձեռնությամբ արդեն երկու անձանց ուղարկել էր Բաքու՝ այնտեղ գտնվող հայ զինվորների վերադարձը կազմակերպելու համար, բայց նրանց թուրքերը ճանապարհին Քուրդամիրի մոտ, չէին թույլատրել շարունակել ճանապարհը, և նրանք ձեռնունայն վերադարձել էին Թիֆլիս: Ուշագրավ էր նաև ուղերձում կատարված այն հավաստումը, որ բոլշևիկների հետ հայերի համագործակցությունն անհամեմատ նվազ և աննշան չափեր կունենար, եթե հայ զինվորներին թույլատրվեր վերադառնալ հայրենիք<sup>1</sup>:

<sup>1</sup> Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., էջ 570-572:

ՀՀ կառավարությունը, փաստորեն, իր պատվիրակությունների միջոցով շարունակում էր գործադրել իր բոլոր ջանքերը ծանր իրադրությունը հաղթահարելու համար Գերմանիայի աջակցությունը ստանալու նպատակով: Գերմանական արտգործնախարարությանը տրամադրվում էր մանրագին տեղեկատվություն իրադրության վերաբերյալ, կատարվում էին բավական հնարամիտ հիմնավորումներ գերմանական կողմին աջակցության դրդելու նպատակով: Միաժամանակ զգալի բացատրական աշխատանք էր տարվում գերմանական կառավարությանը թուրքական ապակողմնորոշիչ տեղեկատվության ազդեցությունից զերծ պահելու համար: Ընդ որում հարկ է ընգծել, որ այդ հարցում հայկական կողմը բացարձակապես միայնակ չէր և մասնավորապես ի դեմս Թիֆլիսում Գերմանիայի պաշտոնական ներկայացուցիչ գեներալ ֆոն Կրեսի, ուներ գործուն և եռանդուն աջակից:

Ֆոն Կրեսը հուլիսի 30-ին իր շտաբի մի շարք անդամների հետ, որոնց թվում էին Վրաստանում Ավստրո-Հունգարիայի ներկայացուցիչ բարոն Ֆրանկենշտայնը և Բուլղարիայի ներկայացուցիչ Կուլաշևը, Թիֆլիսից Ալեքսանդրապոլով մեկնեց Երևան, իսկ այնուհետև Էջմիածին<sup>1</sup>՝ հանդիպումներ ունենալով ինչպես ՀՀ կառավարության, այնպես էլ կաթողիկոսի հետ<sup>2</sup>: Նա և իր պատվիրակությունը նաև հրավեր ստացան մասնակցելու օգոստոսի 1-ին Երևանում պառլամենտի բացման հանդիսավոր արարողությանը: Ֆոն Կրեսը, սակայն, իր մասնակցությունն այդ միջոցառմանը նպատակահարմար չհամարեց, քանի որ, չնայած հայերի համար Գերմանիայի օգնությունն ապահովվելու՝ նրա

<sup>1</sup> Ֆոն Կրեսը, ինչպես հաղորդվում էր նրա՝ օգոստոսի 5-ի տեղեկագրում, Երևան էր մեկնել Հայաստանի կառավարությանը ներկայանալու նպատակով:

<sup>2</sup> Էսադ փաշան, իր նախնական հանձնառության համաձայն, հոգ էր տարել, որ նրանք առանց որևէ բարդության անցնեին թուրքերի կողմից գրաված տարածքով: Հուլիսի 30-ի երեկոյան, երբ նրանք հասան Երևան, քաղաքագլխի կողմից հրավիրվեցին ճաշի: Հաջորդ օրը առավոտյան հանդիպումներ ունեցան նախարարների և Ազգային խորհրդի նախագահի հետ, իսկ այնուհետև մեկնեցին Էջմիածին, որտեղ նրանց ընդունեց կաթողիկոսը: Կեսօրից փոքր-ինչ անց վարչապետն ու Ազգային խորհրդի նախագահը նրանց հետ բավական երկարատև զաղտնի զրույց ունեցան: Այնուհետև ի պատիվ հյուրերի, հանրապետության բարձրաստիճան անձանց մասնակցությամբ կազմակերպվեց բանկետ, որից հետո, նույն օրը երեկոյան նրանք, բացառությամբ բարոն Ֆրանկենշտայնի, վերադարձան Թիֆլիս: Տես՝ Deutschland und Armenien 1914-1918..., էջ 423:

գործադրած հետևողական ջանքերին, դրանք դեռ էական արդյունքներ չէին տվել, և նա իրավացիորեն այն մտավախությունն ուներ, որ իր մասնակցությունը հայերի մեջ անիրագործելի հույսեր կարթնացներ Գերմանիայի աջակցության վերաբերյալ: Բացի այդ՝ Ադրբեջանի և Վրաստանի միջև ստեղծված նոր լարվածությունը նույնպես նրան հարկադրում էր շուտափույթ վերադառնալ, ուստի նա և իր պատվիրակության անդամները, բացառությամբ բարոն Ֆրանկշտայնի, որն այդ օրը արարողությանը մասնակցելու համար մնաց Երևանում, հուլիսի 31-ի երեկոյան վերադարձան Թիֆլիս<sup>1</sup>:

Վերադարձից հետո, դեռ նախքան իր հիմնական տեղեկագրի պատրաստումը, գեներալը օգոստոսի 4-ին կանցլերին ուղարկեց մի հեռագիր, որտեղ, միանշանակորեն հերքելով փախստականների անվերապահ վերադարձի վերաբերյալ էնվերի պատճառաբանությունները, նա միաժամանակ ընդգծում էր, որ իր այցելությունը, դիտարկումներն ու զրույցները կրկին փաստում էին, որ միայն կենտրոնական տերությունների շուտափույթ օգնության դեպքում Հայաստանը կարող էր փրկվել կործանումից<sup>2</sup>: «Ներկայիս փոքրիկ Հայաստանը չի կարող մինչև իսկ իր տեղացի բնակչությանը կերակրել, ուր մնաց՝ այնտեղ գտնվող երեքից հինգ հարյուր հազար փախստականներին...»- գրում էր գեներալը: «Փախստականների ծանր դրությունը, կառավարության կամքին հակա-

<sup>1</sup> Անդ: «Ես չկարողացա Երևանում իմ մնալը երկարածգելու որոշում կայացնել, - գրում էր այդ առթիվ գեներալը, - քանի որ մի կողմից Ադրբեջանի և Վրաստանի միջև ներկայումս գոյություն ունեցող լարվածությունը անհրաժեշտ էր դարձնում իմ շուտափույթ վերադարձը Թիֆլիս, և, մյուս կողմից, քանի որ ես երկյուղ էի կրում, որ պառլամենտի բացման կարևոր միջոցառմանը իմ մասնակցությունը հայերի մոտ Գերմանիայի աջակցության՝ ոչ իրագործելի հույսեր կարթնացներ: Եթե ես նույնիսկ Բեռլինից վերադարձած հայ պատվիրակներից որոշ բաներ լսել եմ հայկական խնդրի վերաբերյալ արտագործնախարարության դիրքորոշման մասին, սակայն այնքան քիչ իրազեկում ունեմ գերմանական կառավարության մտադրությունների մասին, որ անհրաժեշտ համարեցի զսպաժուրյուն ցուցաբերել»: Անդ: Ինչ վերաբերում է բարոն Ֆրանկենշտայնին, ապա նա, արարողությունից հետո վերադառնալով Թիֆլիս, այդ մասին մի զեկուցագիր պատրաստեց և այն օգոստոսի 4-ին ուղարկեց Ավստրո-Հունգարիայի արտագործնախարար իշխան Ստեֆան Բուրիանին: Անդ, էջ 421-422:

<sup>2</sup> Էնվերի հեռագիրն ակնհայտորեն դեսպանի կամ Հինդենբուրգի կողմից ուղարկվել էր նաև նրան:

ռակ, տևականորեն հանգեցնում է բանդաների ձևավորման և այդպիսով թուրքերի հետ նոր խառնակությունների: Հայաստանը թուրքերի կողմից ամբողջովին մեկուսացված է: Նրանք արգելում են ցանկացած առևտուր և երթևեկություն, թաթար և պարսիկ բնակչությանը դրդում են գաղթել, այնպես որ հայկական կառավարությունը երկյուղ է կրում, որ կհարձակվեն Երևանի վրա: Թուրքերը նաև այստեղ չեն պահպանել Բաթումի խաղաղության պայմանագրի պայմանները և գրավված են պահում Բաթումի սահմանից այն կողմ գտնվող կարևոր տարածքներ: Հայաստանը կարող է կենսունակ դառնալ միայն Բրեստ-Լիտովսկի սահմաններով՝ առանց թուրքերի կողմից պահանջվող սահմանային ուղղումների, որոնց դեպքում Թուրքիային կհանձնվեն տնտեսապես հենց ամենակարևոր շրջանները»<sup>1</sup>:

Ֆոն Կրեսը միաժամանակ ընդգծում էր, որ ներկայումս արտադրության համար պիտանի շրջանները գրեթե ամբողջովին գրավված էին թուրքերի կողմից, որոնք մեծ քանակությամբ բաժնակի պաշարներ էին արտահանում, ընդ որում՝ բերքի մի մասը հավաքում էին թուրքերը, իսկ մյուս մասը ոչնչանում էր: Նա հույժ կարևոր էր համարում, որ երկաթուղու՝ մինչև Նախիջևան ձգվող հատվածը «անպայմանորեն» հանձնվեր հայերին, իսկ թուրքերին կարելի էր թույլատրել դրանով զինվորական ուժեր տեղափոխել, ինչպես դա տեղի էր ունենում Վրաստանում: Ինչ վերաբերում էր էնվերի կողմից ներկայացված այն պատճառաբանությանը, որ եթե թուրքական զորքերը ետ քաշվեին դեպի Բաթումի սահմանը, ապա Հայաստանի և Վրաստանի միջև պատերազմ կծագեր<sup>2</sup>, ֆոն Կրեսն իր հեռագրում դա միանշանակորեն հերքում էր: «Հայերը, - նշում էր գեներալը, - ինչպես ես, որոշակիորեն ժխտում են այն պնդումը, որ եթե թուրքերը քաշվեն դեպի Բաթումի սահմանները, երկու պետությունների միջև պատերազմ կբռնկվի: Էնվերի պնդումը միայն պատրվակ է՝ պայմանագրին հակառակ գրավված երկրի ամբողջական ավերման ու կողոպտման նպատակով ժամանակ շահելու համար: Թուրքերն ուզում են Ադրբեջանից ներխուժել զուտ հայկական Ղարաբաղի շրջանը և այն զինաթափել: Եթե մենք նրանց դա չարգելենք, ապա մահմեդականների

<sup>1</sup> Deutschland und Armenien 1914-1918..., էջ 420-421:

<sup>2</sup> Այն փաստաթուղթը, որտեղ էնվերը ներկայացրել է այդ պատճառաբանությունը, ցավոք, բացակայում է առկա տեղեկագրերում:

դեմ ինքնապաշտպանվող լեռնաբնակների նոր կռիվներն անխուսափելի կդառնան...»<sup>1</sup>:

Հատկանշանական է նաև, որ գեներալը հեռագրում կանցլերին դարձյալ հիշեցնում էր Հայաստանը ավստրո-հունգարական շահերի ոլորտ դարձնելու և ավստրո-հունգարական պաշտպանությունը երաշխավորող պայմանագրի կնքման նպատակահարմարության մասին հավաստիացնելով, որ հայերը դա կընդունեին<sup>2</sup>:

Օգոստոսի 5-ին ֆոն Կրեսն իր պատվիրակության անունից կանցլերին ուղարկեց նաև մի ընդարձակ հեռագրային զեկույց Երևան կատարած այցի, հանդիպումների և դիտարկումների մասին: Նա այնտեղ, մասնավորապես, նշում էր, որ իր պատվիրակությանը Հայաստանի կառավարության և բնակչության կողմից ջերմ ու համակրալից ընդունելություն էր ստացել, և որ, Թիֆլիսի հետ համեմատ, Երևանում հայ սպաներն ու զինվորները շատ ավելի բարձր կարգապահություն էին ցուցաբերում: Դրական տպավորություն էր թողել նաև գլխավոր հրամանատար գեներալ Նազարբեկովը, որը, ինչպես նշում էր ֆոն Կրեսնը, ռուսական բանակում մեծ համարում ունեցող գեներալ էր եղել<sup>3</sup>:

Ֆոն Կրեսնը նաև ընդգծում էր, որ բուլշևիզմը հայ ժողովրդի և հայ զինվորների մեջ շատ քիչ համակիրներ էր գտել: Ազգային ծանր դրության, հոգևորականության մեծ ազդեցության և նաև կրթության միջին հաշվով շատ ցածր մակարդակի հետևանքով քաղաքական և տնտեսական բնույթի հակասությունները մղվել էին հետին պլան: Կուսակցական տարածայնությունները մշտապես հիմնականում վերաբերել են թուրքերի հանդեպ վարված քաղաքականությանը, ընդ որում, եթե արմատական տարրերը այդ առումով ակտիվ և «ագրեսիվ» քաղաքականության կողմնակից էին, ապա փոքրամասնություն կազմող չափավորները հան-

<sup>1</sup> Աճդ, էջ 421:

<sup>2</sup> Ֆոն Կրեսն իր հեռագիրը միաժամանակ ուղարկեց նաև Վիեննա՝ ավստրիական արտգործնախարարությանը: *Stu Die Armenische Frage und der Genozid an den Armeniern...*, էջ 574:

<sup>3</sup> Գեներալ Նազարբեկյանն, ի դեպ, ֆոն Կրեսնի հետ զրույցում դժգոհություն էր հայտնել իր ենթակայության տակ գտնվող 20.000-անոց բանակի ներուժի վերաբերյալ, որտեղ, ըստ Նազարբեկյանի, չնայած շատ սպաներ կային, բայց նրանք մեծ մասամբ պատերազմի ժամանակ էին սպաներ դարձել և չունեին ոչ գիտելիքներ և ոչ էլ փորձառություն. մի խնդիր, որը, ինչպես նշում էր ֆոն Կրեսնը, նույնությամբ առկա էր նաև Վրաստանում:

դես էին գալիս Թուրքիայի հանդեպ սպասողական, ձգձգումների միտված քաղաքականության օգտին: Ըստ ֆոն Կրեսնի՝ այդ վերջին ուղղությանն էին պատկանում նաև ներկա կառավարության անդամները: Վարչապետ Ռուբեն Քաջազունին, ՆԳ նախարար Արամ Մանուկյանը, ԱԳ նախարար Ալեքսանդր Խատիսյանը, ռազմական նախարար գեներալ Հախվերդյանը և Ֆինանսների նախարար Խաչատուր Կարծիկյանը գեներալի վրա մեծանշանակ գործիչների տպավորություն չէին թողել, բայց փոխարենը՝ հանդարտ, շրջահայաց և նպատակասլաց աշխատողների, որոնք վրացիներից դրականորեն տարբերվում էին այն բանով, որ «իրատեսական քաղաքականություն» էին վարում և ձեռնպահ էին մնում ամպագոռոռ խոսքերից:

Գեներալի վրա մեծ տպավորություն էր գործել Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե. Սուրենյանցը, որն, ըստ նրա, մի շատ պատկառելի այր էր՝ «իր բարձր դիրքի արժանավորության և իր վրա ծանրացող պատասխանատվության կշռին գիտակից, խելացի և նպատակասլաց, բանակցությունների ժամանակ գրեթե մերժող զգուշավորությամբ և սառնությամբ, իսկ սեղանի մոտ՝ ամենաուշադիր և ամենասիրալիք տանտերը»<sup>1</sup>:

Հանգամանակից ներկայացնելով կաթողիկոսի հետ իր և բարոն Ֆրանկենշտայնի զրույցն ու դրա դրամատիկ ընթացքը, որ պայմանավորված էր վանքի բակում կուտակված հազարավոր փախստականների ողբալից աղմուկով, ոչնչացման դատապարտված ժողովրդի թշվառ, անմխիթար դրության վերաբերյալ կաթողիկոսի կատարած պարզաբանումներով, ինչպես նաև հայերի հանդեպ թուրքերի կատարած ոճրագործությունների, այդ առնչությամբ Գերմանիայի՝ իբրև Թուրքիայի դաշնակցի ցուցաբերած դիրքորոշման շուրջ մտքերի փոխանակությամբ, գեներալն այնուհետև ներկայացնում էր այն ծանր իրավիճակը, որում գտնվում էր Հայաստանի Հանրապետությունը:

Հայերը, ինչպես շարադրում էր ֆոն Կրեսնը, թուրքերի կողմից օղակված էին շատ փոքրիկ տարածքում, որը, բացառությամբ Երևանի, մի բարձր լեռնային գոտի էր իրենից ներկայացնում և գրեթե ամբողջովին անբերրի էր: Թուրքերը ինչպես վրացիների, այնպես էլ հայերի հանդեպ չէին պահպանել իրենց իսկ կողմից թելադրված Բաթումի խաղաղության պայմանագրի որոշումները և իրենց գծած սահմաններից այն կողմ զավթել էին մի շարք տարածքներ, որոնք կորուստը Հայաստանի

<sup>1</sup> Deutschland und Armenien 1914-1918..., էջ 423-424:

համար առանձնապես ցավալի էր, քանի որ այդպիսով նրանից խլվել էին արտադրության համար պիտանի վերջին շրջանները: «Ներկայումս թուրքերը,– նշում էր գեներալը,– ըստ երևույթին, Ադրբեջանից շարժվում են 90 տոկոսով հայերով բնակեցված Ղարաբաղի գավառը և ուզում են այնտեղի բնակչությանը զինաթափել այն պատրվակով, թե այնտեղ հայերը վերջերս մուսուլմանների դեմ ագրեսիվ են դարձել: Հայերի հանդեպ թուրքական քաղաքականությունը պարզորոշ գծագրվում է: Թուրքերը դեռ ամենևին չեն հրաժարվել հայերին բնաջնջելու իրենց դիտավորությունից, նրանք փոխել են միայն իրենց մարտավարությունը: Հայերին գրգռում են հնարավոր բոլոր միջոցներով, նրանց հանդեպ պրովոկացիաներ են նյութում հույս ունենալով այդ կերպ հայերի վրա նոր հարձակումների պատրվակ ձեռք բերել: Եթե դա չի հաջողվում, ապա փորձում են նրանց սովամահ անել և տնտեսապես ամբողջովին կործանել: Այդ նպատակով, Բաթումի պայմանագրին հակառակ, չնչին պատրվակներով գրավված տարածքը սիստեմատիկ և պլանավորված կերպով կողոպտվում է, և այն ամենը, ինչ հնարավոր է տանել, տարվում է: Ռազմական ավարը, որը թուրքերն Ալեքսանդրապոլում և նրա մերձակայքում գտել են, արտակարգ մեծ է: Այն մասին, որ նրանք, հակառակ ապրիլյան պայմանագրի որոշումներին, տեղափոխում են նաև այն ամբողջ բանակը, որ կարողանում են իրենց ձեռքը գցել, ես արդեն տեղեկացրել եմ<sup>1</sup>: Այն դիմադրությունը, որ թուրքերը ցուցաբերում են հանիրավի գրաված տարածքը ազատելու կոչերի հանդեպ, իմ կարծիքով՝ բացառապես պայմանավորված է այն հանգամանքով, որ իրենց դեռ չի հաջողվել այդ շրջաններից ամբողջ ավարը հափշտակել»<sup>2</sup>:

Ֆոն Կրեսն իր զեկուլյցում նաև հաղորդում էր, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հետևողականորեն խուսափում էր թուրքերին նոր հարձակումներ կատարելու համար պատրվակների առիթ տալ, բայց չէր կարողանում արգելել նոր զինված «բանդաների» կազմավորումը, ինչը, սակայն, ոչ այնքան քաղաքական շարժառիթներով էր թելադրված, որքան քաղցի, որը մարդկանց հարկադրում էր կողոպուտի դիմել:

<sup>1</sup> Ֆոն Կրեսն միաժամանակ հայտնում էր, որ բարոն Ֆրանկենշտայնը, որն ավտոմեքենայով Ադստևով վերադարձել էր Թիֆլիս, ժանապարհին հանդիպել էր բանբակով բարձրված՝ 300-400 սայլերի, որոնք Ադրբեջանից գնում էին դեպի Ղարաբաղիս: ԱՆդ, էջ 425:

<sup>2</sup> ԱՆդ:

Ինչ վերաբերում էր Ղարաբաղին, ապա Ղարաբաղի հայերը, ինչպես նշում էր գեներալը, վայրի լեռնցիներ էին, որոնք կամովին երբեք չէին հանձնի իրենց գեները: Իսկ եթե հանկարծ թուրքերը, հակառակ իր նախագուշացումներին, փորձեին այնտեղ զինաթափում իրականացնել, ապա թե՛ կռիվների բռնկումը, հարակից բոլոր հետևանքներով հանդերձ, անխուսափելի կլիներ: Այդ հետևանքները վնասակար կլինեին նաև զուտ ռազմական տեսանկյունից, քանի որ Ղարաբաղում լեռնային պատերազմ սկսելով թուրքերը, եթե հայերին սովը չհաղթեր, այնտեղ երկար ժամանակով ստիպված կլինեին մեծ քանակությամբ ուժեր պահել: Ընդ որում ուշագրավ է, որ ֆոն Կրեսն, այդ առումով վերստին ընդգծելով Հայաստանի կառավարության խաղաղասիրական դիրքորոշումը և պրովոկացիաների չենթարկվելու հաստատականությունը, հարկ էր համարում մատնանշել, որ նա ողջ ժողովրդի հետ միասին պատրաստ էր մինչև վերջին մարդը կռվել, եթե թուրքերը նոր հարձակում ձեռնարկեին իրենց երկրի վրա: Գեներալն այդ կերպ որոշակիորեն ակնկարկում էր, որ դա կարող էր տեղի ունենալ նաև Ղարաբաղի վրա թուրքերի կողմից հարձակում ձեռնարկելու դեպքում:

Ֆոն Կրեսն միաժամանակ կատարում էր հանգամանալից պարզաբանումներ Հայաստանի Հանրապետության ներքին իրադրության մասին, որի 750.000 տեղացի բնակիչները և 300.000–500.000 փախստականները, ըստ նրա, սովամահության էին դատապարտված և «ձեռքերը կապված վիճակում» դիտում էին, թե թուրքերի կողմից գրավված շրջաններում ինչպես էր բերքը տեղափոխվում կամ պարզապես փչանում: Եթե Գերմանիան և Ավստրո-Հունգարիան լրջորեն մտադիր էին հայերին բնաջնջումից փրկել, ապա, ըստ գեներալի, նրանց պետք է նաև այնքան տարածք տրամադրեին, որը գոնե բավարարեր նրանց սննդի կարիքների մեծ մասը, իսկ ընթացիկ տարում, բոլոր դեպքերում, երկու դաշնակցները հայերին պետք է մատակարարեին բավականաչափ հացահատիկ, որի դեպքում միայն համընդհանուր աղետը կկանխվեր:

Գեներալը, նկատի առնելով այն հանգամանքը, որ թուրքերը, չնայած գերմանական կողմի առարկություններին, թողել էին, որ հայկական բերքը փչանար, նաև առաջարկում էր հայ ժողովրդի գոյատևման համար անհրաժեշտ հացահատիկը վերցնել այն պաշարներից, որոնք թուրքերը ստանալու էին Ռուսիայից կամ Ռումինիայից: Շուտով կսկսվեին ցրտերը, նշում էր ֆոն Կրեսն, և եթե մինչ այդ փախստականներին ազդեցիկ օգնություն չցուցաբերվեր կամ նրանց չթույլատրվեր

վերադառնալ իրենց հայրենիքը, ապա սովը և սառնամանիքը նրանց կոչնչացնեին:

Տեղեկագիրը ոչ միայն իրադրության համակողմանի և փաստացի լուսաբանում էր, այլև գերմանական կառավարությանն ուղղված մի ազդու կոչ: «Ենվերի այն պնդումները, – նշում էր այնտեղ ֆոն Կրեսը, – թե թուրքերը ստիպված էին գրավել Ալեքսանդրապոլի, Ղարաքիլիսայի և մյուս շրջանները՝ հայերի և վրացիների միջև բախումները կանխելու համար, հորինվածք է, որի նպատակն է այստեղի իրադրությանն անտեղյակներին խաբել և շահել այնքան ժամանակ, մինչև այդ շրջաններից բերքը տեղափոխվի, և այդ տարածքներն ամբողջովին կողոպտվեն: Ես առնվազն չեմ կարող պատկերացնել, որ գերմանական կայսրությունը կարող է հանգիստ դիտել, թե ինչպես են մահմեդականները մի քրիստոնյա ժողովրդի սովամահության մատնել...: Եթե Կոստանդնուպոլսի համաժողովը դեռ երկար իրեն սպասել տա, բազմահազար մարդիկ կդատապարտվեն մահվան, և ոչ միայն Արևելքի հասարակական կարծիքը, այլև պատմությունը Գերմանիային պատասխանատու կդարձնեն հայ ժողովրդի հետագա բնաջնջման համար:

Հավատը Քառյակ միությունում Գերմանիայի ղեկավար դերի վերաբերյալ, ինչպես ես բազմիցս իմ պարտքն եմ համարել տեղեկացնել, արդեն սասանված է: Այն ամբողջովին կվերանա, եթե մենք ի վիճակի չլինենք հայերին բնաջնջումից պաշտպանել: Արևելքում մեր հեղինակությունը և մեր ազդեցությունն այդ դեպքում, ի նպաստ թուրքերի, զգալի վնաս կկրեն: Այն հարցին, թե ինչ պետք է կատարվի Հայաստանը կենսունակ դարձնելու և նրան կենտրոնական տերություններից մեկի օգնությամբ ինքնուրույն գոյության ունակ դարձնելու համար, ես կկամենայի պատասխանել՝ ասելով, որ Հայաստանը պետք է ստանա Բրեստ-Լիտովսկի պայմանագրի սահմանները, բայց առանց թուրքերի կողմից ցանկալի համարվող սահմանային շտկումների, քանի որ այդ սահմանային շտկումները Հայաստանից կիվեն հենց իր լավագույն սահմանային շրջանները: Դա միաժամանակ համապատասխանում է մեր սեփական շահերին, քանի որ եթե այդ շրջանները թողնվեն թուրքերին, ապա դրանց արտադրանքը գործարարության մեջ թուրքերի անպիտանիության հետևանքով իսկույն ևեթ անկում կապրի և գերմանական շուկայի համար կորած կլինի: Ոռոգման ցանցի համապատասխան ընդլայնման, անհրաժեշտ մեքենաների ներկրման դեպքում հայերն այդ բերրի տարածքներից մետաքսի, բամբակի, բրնձի, գինու, կոնյակի,

սպիրտի և պտղի, հավանաբար նաև հանքագործական արտադրանքի հարուստ բերք կհավաքեն, բայց թուրքերը՝ երբեք»<sup>1</sup>:

Ուշագրավ է, որ գեներալն իր զեկույցում Բրեստի պայմանագրով սահմանագծված Հայաստանի տնտեսական նշանակությունն էլ ավելի ակնառու դարձնելու համար հաղորդում էր մինչև իսկ որոշակի թվական տվյալներ այդ տարածքի տնտեսական շահութաբերության մասին՝ միաժամանակ կատարելով ուղղակի համեմատություն Հայաստանի Հանրապետության ներկա, փաստացի տարածքի հետ: Բրեստի պայմանագրի սահմաններում գտնվող Հայաստանը, ըստ այդմ, կարող էր տարեկան արտադրել 1 միլիոն փութ<sup>2</sup> բամբակ, 40% թնդություն ունեցող 130.000 և 96% թնդություն ունեցող 100.000 դույլ<sup>3</sup> սպիրտ, 90.000 դույլ բարձրորակ կոնյակ, 4 միլիոն դույլ գինի, որի 75%-ը կարող էր խաղաղության ժամանակ արտահանվել շատ էժան գնով, 500.000 փութ բրնձ, որի շուրջ կեսը խաղաղության ժամանակ կարող էր արտահանվել, ինչպես նաև 100.000 փութ լավագույն որակի մետաքսաբոժոժներ, մինչդեռ Հայաստանի Հանրապետության առկա տարածքում բամբակ գրեթե չէր կարող արտադրվել, և միանգամայն բացառվում էր նաև բրնձի ու մետաքսաբոժոժների արտադրությունը: Լավագույն դեպքում այնտեղ կարտադրվեր միայն 40% թնդություն ունեցող 30.000 դույլ և 96% թնդություն ունեցող 15.000 դույլ սպիրտ, 15.000 դույլ բարձրորակ կոնյակ և 80.000 դույլ գինի:

Այդ ամենով հանդերձ՝ ֆոն Կրեսն ամենևին չէր նսեմացնում նաև այն իրական տնտեսական հնարավորությունները, որ ուներ առկա հանրապետությունը, և որոնք կարող էին արդյունավորվել, եթե այնտեղ ազատ տեղաշարժման և տնտեսական գործունեության հնարավորություն ստեղծվեր: Ընդգծելով, որ ոռոգման և էլեկտրաէներգիայի արտադրության նպատակներով Սևանա լճի ջրի օգտագործումը Հայաստանի Հանրապետությանը զարգացման լայն հնարավորություններ էր ընձեռում, նա արտահայտում էր այն համոզումը, որ «գործարար, նախածեռնող» և որոշակի կապիտալ ունեցող հայերը երկրում մեծ գործունեություն կծավալեին, եթե նրանց համապատասխան քաղաքական և տնտեսական հնարավորություն ընձեռվեր: Այդ առումով նա խիստ

<sup>1</sup> Sten Revidierte Lepsius-Edition..., 1918-08-05-DE-001-V փաստաթուղթը:

<sup>2</sup> 1 փութը համապատասխանում է 16,38 կգ-ին:

<sup>3</sup> Նկատի ունի հին ռուսական «Wedro» չափամիավորը, որը կազմում էր 12,3 լիտր:

կարևոր էր համարում, որ Ղարաքիլիսա-Ալեքսանդրապոլ-Ջուլֆա-Թավրիզ երկաթուղին տրվեր հայերին<sup>1</sup>, իսկ եթե այդ երկաթուղին մնար թուրքերի ձեռքում, ապա Հայաստանը պարզապես կդատապարտվեր «տնտեսական մահվան»։ Այդ պարագայում ոչ միայն Թուրքիան ի վիճակի չէր լինի երկաթուղու հնարավորություններն, ինչպես հարկն է, օգտագործել և այն պատշաճ կերպով պահպանել, այլև թուրքական իշխանությունները կռվի զանազան պատրվակներով հայերին կզրկեին երկաթուղու տնտեսական օգտագործման հնարավորությունից<sup>2</sup>։

Այն հանգամանքը, որ գերմանական բարձրաստիճան ռազմաքաղաքական գործիչն էր այդքան հանգամանակից կերպով լուսաբանում համեմատաբար մեծ, կենսունակ Հայաստանի տնտեսական օգտավետությունը Գերմանիայի համար, Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի փոխհարաբերություններում դեռևս իր նախադեպը չուներ, և այս տեղեկագիրը դրա առաջին փաստացի օրինակն էր։ Անկասկած, հարցադրումն այդ կերպ գերմանական կառավարության համար ավելի հանդիչ պետք է դառնար, իսկ հետևություններ կատարելը՝ ավելի դյուրին։ Գեներալն, այսպիսով, գործադրում էր իր բոլոր ջանքերը՝ գերմանական կառավարությանն ի նպաստ հայերի գործուն քայլերի մղելու համար՝ հանգամանակից պարզաբանելով դրա թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական և թե՛ բարոյական կարևոր նշանակությունը Գերմանիայի համար։ Ընդ որում նա այդ անում էր հիմնովին հերքելով նաև դիպլոմատաբար իրեն հայտնի դարձած այլ դիրքորոշումներն ու տեսակետները<sup>3</sup>։

<sup>1</sup> Այդ դեպքում, ըստ Ֆոն Կրեսի, Հայաստանում նույնպես, ինչպես Վրաստանում, թուրքերին կարող էր հնարավորություն տրվել երկաթուղով կատարել իրենց ռազմական փոխադրումները։

<sup>2</sup> Անդ։

<sup>3</sup> Հայաստանի վարչապետն, օրինակ, Ֆոն Կրեսի հետ ունեցած գաղտնագրույցի ժամանակ նրան ներկայացրել էր Կ. Պոլսում գտնվող Հայաստանի ներկայացուցչի այն տեղեկությունը, որ դեսպան Բեռնշտորֆը փորձում էր համաժողովի հրավիրումը ձգձգել և նաև խոչընդոտել այն բանին, որ Հայաստանը ավստրո-հունգարական շահերի ոլորտ դառնար՝ գրավվելով ավստրո-հունգարական զորամասերի կողմից։ «...Առանց իմանալու այն դրդապատճառները, որոնք պարոն դեսպանին իր դիրքորոշման համար առիթ են ծառայել, - գրում էր այդ առնչությամբ գեներալը, - ես կուզենայի իմ դիտանկյունից ընդգծել, որ Կովկասում իրադրությունը հրամայաբար պահանջում է համաժողովի շուտափույթ հրավիրում և առկախ հարցերի, հատկապես սահմանների կարգավորման անենամոտակա լուծում։ Չի լինում մի օր, երբ սահմանային միջադեպեր ի

Ինչպե՞ս էր Ֆոն Կրեսն, այնուամենայնիվ, այդքան մանրամասնորեն իրազեկվել հանրապետության և առհասարակ Կովկասում հայերի դրության վերաբերյալ։ Այդ մասին ուշագրավ տեղեկություն է հաղորդում Թիֆլիսում ԳՅ ներկայացուցիչ Արշակ Ջամալյանը օգոստոսի 7-ին Ա. Խատիսյանին ուղարկած իր գրության մեջ։ «Այդ հեռագրի մեջ, - նշում էր նա, - նա զարմանալի հմտությամբ խտացրել է այն մտահոգությունները, որ Դուք արտահայտեցիք մեր առանձին ունկնդրության ժամանակ, և ներկայացնում է այդ մտահոգությունները ոչ թե Ձեր, այլ յուր անունից»<sup>1</sup>։

Հետաքրքրական է նաև Ա. Ջամալյանի այն տեղեկությունը, որ գեներալը զեկուցագիրը Բեռլին ուղարկելուց առաջ հանդիպել էր իրեն և «երկար ու մտերմական» զրույց ունեցել, ցույց էր տվել զեկուցագիրը և իր խորհրդով այն ամբողջացրել էր Ղարաքիլիսա-Ալեքսանդրապոլ-Ջուլֆայի վերաբերող վերոնշյալ շարադրանքով, որը սկզբնական օրինակում բացակայում էր<sup>2</sup>։

Օգոստոսի 12-ին Ֆոն Կրեսը մի նոր հեռագիր ուղարկեց արտագրոմախարարությանը, որտեղ, մերկացնելով Էնվերի վերոնշյալ պատասխանում առկա դեմագոգիան և կեղծիքները, նա նորից ընդգծում էր հայ փախստականներին օր առաջ իրենց հայրենի բնակավայրերը վերադարձնելու կարևորությունը։ «Էնվերի պատասխանը հենվում է կեղծ փաստարկների վրա, - գրում էր գեներալը, - Խոսքը վերաբերում է ոչ թե նրան, որ հայերն իրավունք ունենան տեղափոխվել Ալեքսանդրապոլ-Ջուլֆայից արևելք ընկած տարածքը, այլ նրան, որ այնտեղ կուտակված, սովից հուսահատության մատնված հայերը երկաթուղով կարողանան վերադառնալ արևմուտք, և որ ամբողջ տարածքը մինչև Բրեստի սահմանը վերադարձվի Հայաստանի Հանրապետությանը փախստականների բնակեցման համար։ Հայերին որոշ շրջաններ, զորօրինակ, Բաթում վերադառնալու վերաբերյալ սկզբունքորեն հատկացված թույլտվության իրագործումը խոչընդոտվում է նրանով, որ Էսադ փաշան յուրաքանչյուր հայի համար գրավոր դիմում է պահանջում և այդ դիմում-

հայտ չզան, որոնց պատճառն այն է, որ սահմանները դեռ որոշված չեն։ Այդ միջադեպերը կովկասյան պետությունների միջև արտակարգ գրգռվածություն են ստեղծում, և մարդիկ արդեն սկսում են կասկած տածել առ այն, թե կենտրոնական տերությունները կովկասյան պետությունների հանդեպ իրենց խոստումներին լրջորեն են վերաբերվում»։ Անդ։

<sup>1</sup> Տե՛ս ԳՅ ԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 21, թ. 1։

<sup>2</sup> Անդ։

ներին ընթացք չի տալիս: Այստեղի թուրքական ներկայացուցչի տվյալներով՝ էսադ փաշայի մոտ պետք է շաբաթներ ի վեր ավելի քան 1.200 ընթացք չստացած դիմումներ լինեն»<sup>1</sup>:

Ֆոն Կրեսը, դարձյալ նկատի ունենալով էնվերի կողմից բերված մտացածին «փաստարկները», միաժամանակ հավաստիացնում էր, որ հայկական կառավարությունը Թուրքիայի հետ խաղաղ հարաբերությունների կողմնակից էր և նաև դրա կարիքն ուներ: Այն մինչև իսկ երկրից արտաքսել էր զինված խմբավորման առաջնորդին,<sup>2</sup> նրա համախոհների մի մասին ձերբակալել, իսկ Ջուլֆայի, Բաքվի և Ուրմիայի մոտ գործող զինված խմբերի պարագայում խոսքը վերաբերում էր մեծ մասամբ նախկին թուրքահայերին, որոնք ամեն բան կորցրել էին և այդ պատճառով շարունակում էին կռվել: Իսկ ինչ վերաբերում էր էնվերի այն պնդմանը, թե հայերի վերադարձի դեպքում թուրքական կռիվը բանակի համար, իբրև թե, աննպաստ իրադրություն կստեղծվեր, զենեքալը մատնանշում էր, որ թիկունքի հետ թուրքական բանակի կապը կարող էր հանձնվել ավստրիացիների և գերմանացիների պաշտպանությանը: «Հայաստանի Հանրապետության փոքրիկ տարածքի վրա սովանահության մատնված հարյուր հազարավոր փախստականների կուտակումը, – գրում էր զենեքալը, – անկասկած ավելի մեծ վտանգ է նշանակում, քան երկրում նրանց տեղաբաշխումը»<sup>3</sup>:

Ֆոն Կրեսի ինչպես վերոնշյալ տեղեկագիրն, այնպես էլ հիշատակված մյուս հեռագրերը բավական լայն կերպով շրջանառվեցին Գերմանիայի ղեկավար շրջանակներում: Կանցլերին ուղարկված տեղեկագիրը ստացավ նաև արտաքին գործերի նախարարությունը, որի պետքարտուղարի տեղակալ Բուշեն իր հերթին նրա մի հատվածը, որտեղ նաև ընդգծվում էր, որ Հայաստանը միայն կենտրոնական տերությունների շուտափույթ օգնության դեպքում կործանումից կփրկվեր, ուղարկեց գերմանական ռազմական գլխավոր շտաբի ներկայացուցչի բարոն ֆոն Բերկհայմին<sup>4</sup>: Իսկ ֆոն Կրեսի՝ օգոստոսի 12-ի հեռագիրը պետքար-

<sup>1</sup> Deutschland und Armenien 1914-1918..., էջ 429-430:

<sup>2</sup> Խոսքն, անկասկած, վերաբերում է Անդրանիկին:

<sup>3</sup> Անդ, էջ 430:

<sup>4</sup> Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., էջ 572-573: զենեքալ ֆոն Կրեսը թուրքական կողմին որոշակի զիջումներ պարտադրելու համար հաճախ սեփական նախաձեռնությամբ նրանց արգելում էր կովկասյան երկաթուղագծերն օգտագործել: Տես այդ մասին Բեռնշտորֆի՝ օգոստոսի 6-ի հեռագիրը, Revidierte Lepsius-Edition..., 1918-08-06-DE-001-V փաստաթուղթը:

տուղար Պաուլ ֆոն Հինթցեն օգոստոսի 22-ին ուղարկեց նաև Կ. Պոլսի դեսպան Բեռնշտորֆին՝ նրան հանձնարարելով Բ. Դռան ուշադրությունը հրավիրել այն փաստի վրա, որ դեպի որոշ շրջաններ հայ փախստականների վերադարձը թույլատրելու՝ նրա մտադրությունը էսադ փաշայի կողմից ձախողվում էր:

Դեսպանին միաժամանակ հանձնարարվում էր թուրքական կառավարությանը խնդրել մեկ անգամ ևս կշռադատել, թե արդյոք մինչև Բրեստի սահմանն ընկած ամբողջ տարածքը վերադարձող հայերի առջև բացելը ավելի մեծ կարևորություն չունե՞ր, քան դրա արգելումը: Դեսպանին հրահանգվում էր առժամանակ Բ. Դռանը չհայտնել թուրքական բանակի հետադարձ կապը գերմանացիների և ավստրո-հունգարացիների պաշտպանության տակ վերցնելու՝ ֆոն Կրեսի արտահայտած նկատառման մասին<sup>1</sup>:

Ֆոն Կրեսի և Հայաստանի Հանրապետության կողմից գերմանական կառավարությանը ներկայացվող տեղեկագրերը, կոչերն ու խնդրագրերը իրենց բնույթով, հարցերի ընդգրկումով և բովանդակությամբ այնպիսին էին, որ Գերմանիան կարծես ավելի պետք է հստակեցներ իր դիրքորոշումը հայկական խնդրի առնչությամբ՝ իր թուրք դաշնակցին պարտադրելով ճանաչել Բրեստի պայմանագրով ամրագրված սահմանները կամ առնվազն պահպանել Բաթումի պայմանագրով հաստատված սահմաններն, ինչպես և հայ փախստականներին անվերապահորեն վերադարձի հնարավորություն տալ: Գերմանա-թուրքական հարաբերություններում ինչպես հայկական, այնպես էլ կովկասյան այլ խնդիրների հետևանքով առաջացած լարվածությունը այդպիսով կհասներ նաև իր՝ քիչ թե շատ արդյունավետ հանգուցակետին: Պաշտոնական Գերմանիան, սակայն, հակված չէր ցուցաբերել այդ վճռականությունը, և հատկանշական է, որ, մասնավորապես, հայկական խնդրի առնչությամբ Գերմանիայի քաղաքական ղեկավարության ցուցաբերած ձեռնպահ և հանդուրժողական դիրքորոշմանը զգալիորեն նպաստում էր Բեռնշտորֆը, որի վերաբերյալ ֆոն Կրեսի արտահայտած վերոնշյալ տեսակետը միանգամայն համապատասխանում էր իրականությանը:

Դրա ցայտուն վկայությունն էր, օրինակ, օգոստոսի 5-ին դեսպանի կողմից արտգործնախարարությանն ուղարկված հեռագիրը, որտեղ նա նշում էր, որ Թուրքիայի հետ բոլոր վիճելի հարցերի լուծումը անհրաժեշտ էր հետաձգել մինչև պատերազմի ավարտը, և որ նա ամձամբ քա-

<sup>1</sup> Տես անդ, 1918-08-22-DE-001-V փաստաթուղթը:

ղաքական ու ռազմական մեծ հաջողություն կհամարեր, եթե Գերմանիան Թուրքիային կարողանար մինչև պատերազմի վերջը պահել իր կողքին և նաև օգներ, որ վերջինս պատերազմից հնարավորինս անվնաս և նվազագույն կորուստներով դուրս գար, քանի որ, դեսպանի կարծիքով, այլապես Գերմանիայի հեղինակությունը Թուրքիայում կտապալվեր: Ըստ դեսպանի՝ իրեն և գեներալ ֆոն Չելստին մեծ դժվարությամբ էր հաջողվել Թուրքիային համոզել, որ նա իր կովկասյան գործողությունների ժամանակ հաշվի նստեր Ռուսաստանի, ինչպես նաև Վրաստանի հետ: Թուրքական կառավարությունը դրան համաձայնել էր, քանի որ դեռ չէր ուզում խզել կապերը Գերմանիայի հետ, մինչդեռ, Վրաստան ներխուժելով, հարկադրված կլիներ պայքարել գերմանական զինված ուժերի դեմ: Թուրքիայի զիջողականությունը դրանով, ըստ դեսպանի, հասել էր իր վերջնասահմանին, և նրան ավելին հնարավոր չէր պարտադրել:

Բեռնշտորֆն անգամ փորձում էր կառավարությանը հաշտեցնել այն մտքի հետ, որ Թուրքիան մինչև իսկ Բրեստի պայմանագրով ամրագրված սահմանների ճանաչումը խոստանալու դեպքում կարող էր այն չկատարել: «Եթե նույնիսկ նրանք մեզ խոստանան, ընդհանուր առմամբ, ետ քաշվել մինչև Բրեստ-Լիտովսկի սահմանը,– գրում էր նա,– ապա նրանք կովկասյան տարածքում իշխող լիարժեք անարխիայի պարագայում հեշտությամբ պատրվակ կգտնեն հայերի հետ այդուհետ էլ կռվելու և իրենց խոստումը չկատարելու համար: Ֆելդմարշալ ֆոն Դինդեբուրգին ուղղված էնվեր փաշայի վերջին հեռագիրը այդ հարցում կասկած չի թողնում: Դրանից նաև բխում է, որ թուրքերը հայերի հանդեպ բնավ բարի ցանկություններ չունեն, ինչում ես երբեք չեմ տարակուսել: ... Ինձ հետ գաղտնագրույցում հայ պատվիրակները խոստովանում են, որ հայերը ոչ մի դեպքում չեն վերադառնա այն տարածքները, որոնք գտնվում են թուրքական տիրապետության ներքո: Իմ կարծիքով ուսուպիա է, երբ Թիֆլիսում թուրքերից հայերի համար երաշխիքներ են պահանջվում: Այնտեղ, որտեղ մշակութային ցածր մակարդակի վրա առկա է ռասայական ատելությունը, չեն կարող երաշխիքներ լինել: Ռվքեր մեծամասնություն են կազմում, փոքրամասնությանը կոչնչացնեն: Անառարկելի գերմանացի վկաների կողմից ապացուցված է, որ հայերը նույնպես այդպես են վարվում: Դա սովամահ եղողների հանդեպ կարեկցության դրդապատճառով թելադրված չէ: Դրան թուրքերը միայն պատասխանում են, որ Սիրիայում և Միջագետքում իրենց հավատակիցներից հարյուր հազարավորները և նաև հազարավոր թուրքական

զինվորներ սովամահ են եղել, ինչի պատճառով Թուրքիան, սակայն, չի հոգնել պատերազմից: Բացի այդ՝ թուրքերի համար անպատճառ ցանկալի է, որ կես միլիոն հայեր մահանան...»<sup>1</sup>:

Հատկանշական է, որ, դրանով հանդերձ, Բեռնշտորֆը շարունակում էր համառորեն պաշտպանել իր՝ նախկինում ևս արտահայտած այն տեսակետը, որ կարելի էր Հայաստանը, նաև Վրաստանն ամբողջովին զոհաբերել կամ, այլ կերպ ասած, զիջել Թուրքիային՝ փոխարենը Թուրքիայից ստանալով որոշակի քաղաքական ու տնտեսական կոնցեսիաներ: «Քանի որ ես համոզված եմ,– գրում էր նա,– որ մենք, բավականաչափ ուժ չունենալով, չենք կարող թուրքերին ետ պահել Կովկասում իրենց ցանկությունների կատարումից, ... ես սկզբից ևեթ միջնորդել եմ, որ քաղաքական և տնտեսական կոնցեսիաների դիմաց նրանց այնտեղ գործելու ազատություն տանք: Այդ դեպքում մենք նոր պատասխանատվություն չէին ստանձնի այնպիսի կասկածելի բարեկամների համար, ինչպես վրացիներն ու հայերն են: Երբ արդեն պարզ է դարձել, որ քաղաքայում են այն նախադրյալները, որոնք նկատի առնելով՝ մենք Վրաստան գնացինք, ես այսօր, ավելի քան երբևէ, այդ նույն կարծիքին եմ»<sup>2</sup>:

Իսկ այն դեպքում, եթե նրա առաջարկած քաղաքականությունը Բեռլինի կողմից չընդունվեր, ապա, նրա կարծիքով, մնում էին գործելու միայն երկու ճանապարհներ. կամ Գերմանիան պետք է այնքան զորամասեր ուղարկեր Վրաստան և Հայաստան, որ կարողանար բռնի կերպով իր կամքը թուրքերին պարտադրել, և կամ պետք է Թուրքիային հայտարարեր, որ Գերմանիան նրա «հաստակողության» հետևանքով այլևս որևէ արժեք չէր տալիս Կ. Պոլսում համաժողով հրավիրելուն, սակայն փոխարենը թուրքերը թողնվելու էին իրենց հույսին, եթե Ռուսաստանի հետ նոր պատերազմ սկսվեր (Դրա հետ մեկտեղ, ըստ Բեռնշտորֆի, Գերմանիան կարող էր շարունակել Վրաստանում իր դիրքերը տնտեսական նպատակներով ամրապնդել): Դեսպանի համոզմամբ, սակայն, այդ երկու գործելակերպն էլ կառաջացնեին Քառյակ միության տրոհման վտանգ. «Ես, այնուամենայնիվ, առաջացած հակամարտության որևէ ուրիշ լուծում չեմ տեսնում,– գրում էր նա,– քանի որ բնավ չի կարելի կարծել, թե թուրքերն այժմ հոժարակամ կերպով և անկեղծորեն տեղի կտան»<sup>3</sup>:

<sup>1</sup> Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., էջ 565-566:

<sup>2</sup> Անդ, էջ 566:

<sup>3</sup> Անդ:

Հայ ժողովրդի շահերի պաշտպանության դեպքում Քառյակ միության տրոհման՝ դեսպանի մտահոգությունն, ինչպես արդեն լուսաբանվել է, ամենևին իրատեսական չէր, այլ պարզապես պատրվակ էր ծառայում Թուրքիայի հանդեպ հանդուրժողական քաղաքականության վարման՝ նրա դիրքորոշումն ամրապնդելու համար: Բեռնշտորֆը կովկասյան խնդրում միանշանակորեն թուրքական քաղաքականության և շահերի պաշտպանության կողմնակից էր՝ դա համապատասխան համարելով կամ փորձելով համապատասխանեցնել Գերմանիայի շահերին, և եթե նկատի առնենք, որ դեսպաններն, արտաքին քաղաքականության իրագործումից զատ, սովորաբար կարևոր դերակատարություն ունեին նաև այդ քաղաքականության մշակման հարցում, ապա այդ օրերին նրա պաշտոնավարությունը կարելի էր համարել հերթական չարիքը օրհասական դրության մեջ գտնվող հայության համար:

Բեռնշտորֆն, ինչպես իր թուրք գործընկերները, շահագրգռված չէր նաև Կ. Պոլսի համաժողովի հրավիրման հարցում՝ Կովկասին վերաբերող սահմանային և այլ խնդիրների կարգավորման առավել ցանկալի ճանապարհը համարելով դաշնակիցների միջև հետկուլիսային համաձայնության կայացումը: Ուստի, հասկանալի է, որ իր հաջորդ՝ օգոստոսի 6-ի հեռագրում նա կասկածի էր ենթարկում նաև Կովկասում համաժողով հրավիրելու անհրաժեշտությունը՝ նշելով, որ թուրքական կողմը համաձայն էր, որ համաժողովում քննարկման ենթակա հարցերը կարգավորվեին չորս դաշնակիցների միջև փոխհամաձայնության կայացման միջոցով:

Ուշագրավ էր, որ դեսպանը միաժամանակ սկզբից ևեթ բացառում էր Թուրքիայի կողմից Բրեստի պայմանագրային սահմանների ճանաչումը՝ պնդելով, որ Թուրքիայի հետ բոլոր հարցերի վերաբերյալ կարելի էր փոխհամաձայնության հասնել, բացի այդ հարցից: Թուրքական կառավարությունը, նշում էր դեսպանը, չէր կամենում անգամ լսել Բրեստի պայմանագրի մասին: Ըստ նրա՝ թուրքերն այդ պահանջը մշտապես դիտում էին՝ որպես «Թուրքիայի ենթարկում վրացիների և հայերի ցանկություններին, որոնք միանգամայն բավարարված կլինեին Բաթումի խաղաղության պայմանագրով, եթե մենք նրանց չպաշտպանեինք»<sup>1</sup>:

Հատկանշական է, որ Բեռնշտորֆը չէր գլանում անձամբ նույնպես միանգամայն բացառել սահմանները Բրեստի պայմանագրի համաձայն

կարգավորելու հնարավորությունը. «Այդ հարցը, իմ կարծիքով, առհասարակ լուծելի չէ,– գրում էր նա,– քանի որ թուրքերը տեղի չեն տա, իսկ մենք միջոցներ չունենք նրանց ստիպելու, որ ետ գնան մինչև Բրեստ-Լիտովսկի սահմանները...»<sup>1</sup>:

Ինքնին հասկանալի է, որ դեսպանը կամ գերագնահատում էր գերմանական ճնշմանը թուրքական ընդդիմության հնարավորությունը, կամ պարզապես փորձում էր իրավիճակն այդ կերպ բնութագրել թուրքական կառավարության ցանկություններին համահունչ իր դիրքորոշումն առավել համոզիչ դարձնելու համար: Բնութագրական է, որ նա միաժամանակ քննադատությամբ էր անդրադառնում գեներալ Ֆոն Կրեսի հայանպաստ գործելակերպին՝ հայտնելով, թե էնվեր փաշան իր հետ ունեցած տևական զրույցում նույնպես շատ էր զանգատվել Վրաստանին և Հայաստանին Գերմանիայի կողմից ցուցաբերվող «պաշտպանողական քաղաքականությունից»:

Այդ առնչությամբ դեսպանը մասնավորապես անդրադառնում էր այն հանգամանքին, որ Ֆոն Կրեսը մի շարք գերմանացի սպաների հետ մեկնել էր Երևան՝ «հայկական կառավարությունը կազմակերպելու համար»<sup>2</sup>: Ըստ դեսպանի՝ այդ այցը կարող էր որոշակի վտանգներ հարուցել, այն է՝ հայերին ոգևորել նոր կռիվներ սկսելու համար, որոնց ժամանակ, դատելով Ֆոն Կրեսի գործելակերպից, գերմանացի սպաները կարող էին հայերի կողմից հանդես գալ: Դեսպանը խիստ քննադատությամբ էր անդրադառնում նաև այն հանգամանքին, որ, ինչպես արդեն նաև նշվել է, Ֆոն Կրեսը հաճախ արգելում էր թուրքական կողմին կովկասյան երկաթուղիներն օգտագործել. մի իրողություն, որը, Բեռնշտորֆի կարծիքով, վնասում էր պատերազմավարմանը և Թուրքիայում ստեղծում էր բացասական տրամադրություններ Գերմանիայի հանդեպ: «Մեր բանակի գլխավոր հրամանատարությունը կարգադրում է, որ թուրքական զորամասերը առավելագույն արագությամբ տեղափոխվեն Միջագետք,– գրում էր նա:– Գեներալ Ֆոն Կրեսն արգելում է երկաթուղու օգտագործումը՝ թուրքերին հարկադրելու համար, որ զիջումների գնան: Արդյունքում թուրքերը տեղի չեն տալիս, իսկ կարգադրված ռազ-

<sup>1</sup> Աճ:

<sup>2</sup> Աճ: Բեռնշտորֆը, փաստորեն, չէր խուսափում նաև այդօրինակ սադրիչ տեղեկություններից: Ինչպես արդեն նշվել է, Ֆոն Կրեսը մեկնել էր Երևան՝ հայկական կառավարությանը ներկայանալու, այլ ոչ թե այն կազմակերպելու համար:

<sup>1</sup> St'u Revidierte Lepsius-Edition..., 1918-08-06-DE-001-V փաստաթուղթ:

մական գործողություններն էլ չեն կայանում, այսինքն՝ խոչընդոտվում է ընդհանուր պատերազմավարումը: Դրանից, այսպիսով, միայն մեր թշնամիներն են օգտվում»<sup>1</sup>:

Ինչ վերաբերում է ֆոն Կրեսին, ապա նա, ջանալով անել հնարավորը հայ ժողովրդին օգնելու համար, Բեռնշտորֆի մոտ նույնպես հայերի դրության վերաբերյալ ըմբռնում ձևավորելու մի փորձ կատարեց՝ օգոստոսի 20-ին նրան առաքելով մի հեռագիր, որը դեսպանի կողմից օգոստոսի 25-ին ուղարկվեց նաև արտգործնախարարությանը: «Յայ փախստականների վերադարձի առնչությամբ թուրքական թվացյալ համաձայնությունը ոչ մի արժեք չունի, - գրում էր այնտեղ ֆոն Կրեսը: - Մինչդեռ թուրքական զորքերի կողմից գրավված տարածքներում բերքը, որչափ որ այն թուրքերի կողմից չի տեղափոխվում, աշխատուժի անբավարարության հետևանքով փոխում է, ենվեր փաշայի մատնանշած զօհից արևելք ընկած անբերրի շրջանում կուտակված մարդկանց զանգվածներն անխուսափելի կործանման են դատապարտված: Դրությունն օրեցօր ավելի է վատթարանում: Եթե Յայաստանի կառավարության և ավագագույն հոգևորականության օգնության հուսահատ կանչերը դառնան ծայն բարբառո անապատի, ապա այդ հին քրիստոնյա ժողովրդի ոչնչացման պատասխանատվությունը հավերժ կծանրանա Գերմանիայի և Ավստրիայի վրա:

Պատմությունը զիջում չի կատարելու և չպետք է կատարի այն հարցում, որ կենտրոնական Եվրոպայի երկու մեծ քրիստոնյա տերություններն ի վիճակի չեղան զոնե այս դեպքում, երբ հարցը վերաբերում է մի ամբողջ ժողովրդի լինել-չլինելուն, իրենց կամքը պարտադրել իրենց ասիացի դաշնակցին...»<sup>2</sup>:

<sup>1</sup> Անդ: Հեռագրի վերջում նա հակիրճ հաղորդում էր նաև այն մասին, որ թուրքական նախարարների խորհուրդը թուրքահայերի համար համաներման կարգադրությունն արդեն կատարել էր, և դրա իրագործումը հանձնարարված էր Ջամիդլադին:

<sup>2</sup> Deutschland und Armenien 1914-1918..., էջ 431: Այնուհետև ֆոն Կրեսը դեսպանի ուշադրությունը դարձյալ հրավիրում էր այն հանգամանքի վրա, որ Եսադ փաշան, մինչև իսկ այն դեպքում, երբ խոսքը վերաբերում էր միայն որոշ շրջանների, փաստացիորեն մերժում էր կատարված դիմումների հիման վրա հայերին վերադարձի թույլտվություն հատկացնել: Իսկ հեռագրի մնացած տեքստը, որ մոտ տասը տող էր կազմում, անհնար է եղել վերծանել, և դրանից պահպանվել են միայն առանձին կցկտուր բառեր ու արտահայտություններ: St u Revidierte Lepsius-Edition..., 1918-08-25-DE-001-V փաստաթուղթը:

Ի նպաստ հայ ժողովրդի՝ Գերմանիայի կողմից գործուն միջամտության ցուցաբերման հարցի առնչությամբ դեռ հուլիս ամսին մի կողմից Գերմանիայի և Թուրքիայի միջև, մյուս կողմից հենց Գերմանիայի ռազմաքաղաքական շրջաններում ի հայտ եկած տարակարծություններն ու հակասությունները օգոստոսի սկզբին, այսպիսով, էլ ավելի սուր բնույթ էին ընդունել, ինչը պաշտոնական Գերմանիային որոշակիորեն հարկադրում էր հստակեցնել հարցի առնչությամբ իր դիրքորոշումը: Կարելի էր ենթադրել, որ գեներալներ ֆոն Լոսովի, ֆոն Կրեսի, նաև հայ պատվիրակության հետևողական տեղեկատվության, Բրեստի պայմանագրային սահմանների ճանաչման հարցի նախընթաց վերաբործումների արդյունքում Գերմանիան պետք է վերջապես հրաժարվեր Կովկասում թուրքական ինքնիշխան քաղաքականության հանդեպ իր զուսպ ու հանդուրժողական կեցվածքից և Թուրքիայի վրա գործադրել իրական ճնշում գեթ նրա հակահայկական քաղաքականությունը դադարեցնելու համար: Պաշտոնական Գերմանիան, սակայն, օգոստոսին նույնպես շարունակում էր հայ ժողովրդի ճակատագրի հանդեպ պատասխանատվությունն, ըստ հնարավորին, իրենից վանել՝ որոշակի դիրքորոշման արտահայտման անհրաժեշտության դեպքում առավել հսկված լինելով հետևելու Բեռնշտորֆի կողմից պաշտպանվող քաղաքական գծին:

Ֆոն Կրեսն օգոստոսի 4-ի իր վերոնշյալ հեռագիրն ուղարկել էր նաև Վիեննա՝ ավստրիական արտգործնախարարությանը, և գերմանական արտգործնախարարությունը փորձում էր դա շարժառիթ դարձնել՝ հարցը Ավստրո-Հունգարիայի հայեցողությանը թողնելու և Գերմանիայի ձեռնպահությունը հիմնավորելու համար: Այս շեշտադրումով էր բնութագրվում Բերկհայմին ուղղված՝ ԱԳԵ-ի քաղաքական բաժանմունքի ղեկավար ֆոն Շթումի՝ օգոստոսի 19-ի հեռագրային ցուցումն այն մասին, որ հայերին օգնության ցուցաբերման հարցի առնչությամբ հանձնարարելի էր համարվում նախ սպասել Վիեննայի կառավարության կողմից դիրքորոշման արտահայտմանը: «Մեզ համար որոշակի բեռնաթափում կլինեի, - այնտեղ նշում էր ֆոն Շթումը, - եթե նա (ավստրո-հունգարական կառավարությունը - Ա. Հ.) ստանձներ այդ անշնորհակալ առաջադրանքը: Ամեն դեպքում անհավանական է, որ նա այդ կանի»<sup>1</sup>:

<sup>1</sup> Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., էջ 574: Գերմանիան դա Ավստրո-Հունգարիայի հայեցողությանն էր թողնում՝ ամբողջովին ձեռնպահ

Գերմանիայի քաղաքական ղեկավարությունը նույնիսկ խորհում էր այդ «անշնորհակալ հարցից» ազատվել՝ հայ փախստականներին վերադարձի հնարավորություն ստեղծելու փոխարեն նրանց դեպի հյուսիս, ասել է, թե՛ Վրաստան կամ, թերևս, նաև Ռուսաստան ուղարկելու միջոցով: Այդ բովանդակությունն ուներ ֆոն Շթունի կողմից օգոստոսի 14-ին ֆոն Կրեսին ուղարկված հեռագիրը, որտեղ նշվում էր, որ փախստականների խնդրի վերաբերյալ թուրքական կառավարության «մինչալժամյան դիրքորոշումը» գերմանական կողմին հարկադրում էր քննել այն հարցը, թե արդյոք հայ փախստականների տեղափոխումը դեպի հյուսիս հնարավոր էր և կարող էր անմիջապես սկսվել: Ընդ որում՝ նա ֆոն Կրեսին խնդրում էր իր տեսակետն արտահայտել այդ առնչությամբ և, ըստ հանգամանքների, ձեռնարկել միջոցառումներ դա իրագործելու համար<sup>1</sup>:

Չնայած այդ առնչությամբ ֆոն Կրեսի գրավոր պատասխանը բացակայում է հրապարակում առկա սկզբնաղբյուրներում, այնուհանդերձ գերմանական պաշտոնական գրագրության հետագա ընթացքը թույլ է տալիս կռահել, որ դա պետք է բացասական եղած լինի:

Ինչևէ, օգոստոսի 20-ին ֆոն Կրեսին ուղարկած հեռագրում գերմանական արտոգործնախարարությունը բավականին որոշակի արտահայտեց իր դիրքորոշումը հայկական խնդրի առնչությամբ: «Առանց ամենաանշան իսկ չափով թերագնահատելու այն քաղաքական կարևորությունը, որ ունի հայերի դրության բարելավումը մեզ և Թուրքիայի համար, - գրում էր պետքարտուղար ֆոն Յիթթեն գեներալին, - և մարդկայնորեն լիովին կիսելով նրանց տառապանքները՝ մենք, սակայն, հարկադրված ենք, հաշվի առնելով Թուրքիային, հայկական ցանկությունների հանդեպ որոշակի զսպվածություն պահպանել: Ինքնին հասկանալի է, որ մենք ազատ ենք մարդասիրական միջոցառումներ իրա-

---

մնալով այդ հարցում որևէ դերակատարություն ունենալուց: Այդ առումով նաև բնութագրական է, որ պետքարտուղար Յիթթեն դեռ օգոստոսի 4-ին բարոն ֆոն Լեբսներին տեղեկացնում էր, որ քանի որ Հայաստանում տեղակայելու համար համապատասխան գերմանական զորամասեր չկային, ապա նա բնավ չէր առարկում Հայաստանում ավստրո-հունգարական զորամասեր տեղակայելու մտքին: Անդ, էջ 564:

<sup>1</sup> Deutschland und Armenien 1914-1918..., էջ 427-428:

կանացնելու հարցում: Այդ տեսանկյունից հայերի՝ այստեղի բարեկամները մեզ դրդում են Երևանի կառավարությանը նույն քանակությամբ հացահատիկ տալ, ինչպես վրացական կառավարությանը:

Այն, թե հնարավոր կլինի՞ այդ հարցը համաձայնեցնել սննդամատակարարման ռազմական ծառայության հետ, շատ կասկածելի է: Նախքան ես այդ ուղղությամբ փորձ կծեռնարկեմ, Ձերդ Բարեճությանը խնդրում եմ տեղեկացնել, թե արդյոք հնարավոր է Վրաստանով հացահատիկ հասցնել Հայաստան, չնայած մենք հենց իրենց՝ վրացիներին էլ ավելի փոքր քանակությամբ ենք կարողանում տալ, քան սկզբում խոստացել ենք»<sup>1</sup>:

Օգոստոսի 24-ին պետքարտուղարը ֆոն Կրեսին ուղղված մի հեռագրով վերոնշյալ ոգով արտահայտեց նաև իր վերաբերմունքը նրա՝ Երևան կատարած այցելության վերաբերյալ, որտեղ նա մասնավորապես նշում էր, որ միանգամայն համաձայն էր ֆոն Կրեսի երևանյան այցի հետ և միաժամանակ ողջունում էր, որ նա չի մասնակցել պառլամենտի բացմանը: «Քանի որ կայսերական դեսպանի շատ լուրջ առարկությունները և բանակի գլխավոր հրամանատարության եռանդուն քայլերը Թուրքիային հայկական տարածքն ազատելու և փախստականների վերադարձը թույլատրելու որոշմանը չեն հանգեցրել, ցավոք, կասկածելի է թվում, թե մենք, առհասարակ, ի վիճակի կլինենք հայերին ազդեցիկ օգնություն ցուցաբերել: Մեր հետագա գործելակերպը կախված կլինի ընդհանուր քաղաքական և ռազմական իրավիճակից: Այդ ընթացքում մենք պետք է խուսափենք նոր հույսեր հարուցել հայերի մեջ, որոնց հավանաբար ստիպված կլինենք հուսախաբեցնել»<sup>2</sup>:

Վերոնշյալ պաշտոնական հեռագրերով միանշանակորեն պարզ էր դառնում, որ հայկական կողմը քաղաքական աջակցության որևէ ակնկալիք Գերմանիայից չէր կարող ունենալ, իսկ մարդասիրական օգնության հնարավորությունը խիստ կասկածելի էր, մինչդեռ թուրքական կառավարությունը շտապում էր, օգտվելով Գերմանիայի թողտվությունից, կեղծ իրավական հիմքեր ստեղծել Կարսի նահանգը յուրացնելու համար, այն է՝ հայերի վտարման և մահմեդականների ներգաղթի միջոցով նահանգի բնակչության փաստացի հաշվեկշիռը փոխելուց հետո

<sup>1</sup> Անդ, էջ 428:

<sup>2</sup> St'u Revidierte Lepsius-Edition..., 1918-08-24-DE-001-V փաստաթուղթ:

անցկացնել հանրաքվե՝ այն Օսմանյան պետությանը միացնելու նպատակով:

Օգոստոսի 19-ին Կարսի Հայոց ազգային խորհուրդը հանդես եկավ թուրքական կառավարության այդ գործելակերպի և Բրեստի պայմանագրի ոտնահարման դեմ գերմանական կառավարությանն ուղղված վճռական բողոքով, որի տեքստը նախ առաքվեց ֆոն Կրեսին, իսկ վերջինս էլ այն օգոստոսի 21-ին ուղարկեց գերմանական արտգործնախարարությանը: Այնտեղ, մասնավորապես, նշվում էր, որ Կարսի հայոց ազգային խորհուրդը, որն այդ տարածքի «բազմաչարչար հայ բնակչության» կամքն ու շահերն արտահայտող միակ լիազոր մարմինն էր, նահանգի հայ բնակչության անունից ամենավճռական կերպով բողոքում էր թուրքական կառավարության կողմից ձեռնարկված հանրաքվեի դեմ և հայտարարում էր, որ Բրեստի պայմանագրի 4-րդ պարագրաֆը թուրքական կառավարության կողմից ամենակոպիտ կերպով ոտնահարվել էր, քանի որ թուրքական կառավարությունը, մի կողմից, մասամբ ուղղակի բռնության ճանապարհով, մասամբ կովկասյան կառավարությունների վրա ճնշման գործադրմամբ, հակառակ պայմանագրի, երկրամասը զավթել էր և, մյուս կողմից, ինքնազուլու կերպով, առանց հաշվի առնելու պայմանագիրը համաստորագրող պետություններին, որոնք Թուրքիայի հետ միասին հիշատակվում էին նույն պարագրաֆում, միայն մահմեդական բնակչության շահերն էր պաշտպանում, քանի որ Կարսի սանջակում մեծամասնություն կազմող հայերը մյուս քրիստոնյաների հետ միասին իրենց բնակավայրերից քշվել են և զրկված են իրավական ճանապարհով իրենց կամքն արտահայտելուց, չնայած թուրքական զորքերի կողմից նվաճված երկրամասից նրանց փախուստն իսկ բավական էր նրանց կամքի դրսևորումը պարզորոշ դարձնելու համար: «Այն իրավունքների անունից,– նշված էր խորհրդի բողոքագրում,– որոնք Բրեստի պայմանագրի հիման վրա հատկացվել են ամբողջ բնակչությանը, այլ ոչ միայն նրա մահմեդական մասին, Կարսի հայոց ազգային խորհուրդը դիմում է Բրեստի պայմանագրում հիշատակված համաստորագրող տերությունների խղճին և խնդրում է նախ հեռացնել թուրքական զավթիչ զորքերին, ինչպես նաև այն մահմեդական զանգվածներին, որոնք հարևան տարածքներից այնտեղ են տեղափոխվել թուրքական կողմնորոշման համար ծայրերի մեծամասնությունն ապահովելու նպատակով, և երկրորդ՝ ստեղծել պայմաններ, որոնք քրիստոնյա բնակիչներին վերադարձի և հայրենիքում հաստատվելու

հնարավորություն կտան, որպեսզի նրանք ի վիճակի լինեն, համաձայն նույն պայմանագրի, անձամբ որոշել իրենց կառավարման ձևը»<sup>1</sup>:

Այդ բողոքագիրը, բնականաբար, նույնպես դատապարտված էր դառնալու ծայն բարբառոտ անապատի, առավել ևս այն բանից հետո, երբ գերմանական կառավարությունը փաստացիորեն հրաժարվել էր որևէ պատասխանատվություն ստանձնել հայերի հանդեպ: Ստեղծում էր աշունը, և եթե իրադրությունը շարունակել նույնը մնալ, ապա սովի և սառնամանիքի պայմաններում անպաշտպան բազմահազար հայ փախստականներն այլևս չէին կարողանա գոյատևել: Այս ծանր իրադրությունում Կ. Պոլսում գտնվող հայկական պատվիրակությունը օգոստոսի վերջին դարձյալ հանդիպեց դեսպան Բեռնշտորֆին նրան իր բողոքն արտահայտելով այն առնչությամբ, որ վրացական հանրապետությունը դաշնակից պետությունների կողմից արդեն պետք է ճանաչվեր, մինչդեռ Հայաստանի Հանրապետությունը՝ ոչ:

Ինչպես տեղեկացնում էր դեսպանը պետքարտուղարին ուղղված՝ օգոստոսի 28-ի իր հեռագրում, պատվիրակները նշել էին, որ եթե Հայաստանը նույն կերպ ճանաչում չգտներ, ապա, այն, Ռուսաստանից միանգամայն կտրված լինելով, ամբողջովին կընկներ Թուրքիայի տիրապետության ներքո, և այդպիսով Գերմանիան հայերին, փոխանակ խոստացված օգնությունը տրամադրելու, «մահացու հարված» կհասցնե:

Հայ պատվիրակները նաև դեսպանին հարցրել էին, թե արդյոք արդեն չպե՞տք է վերադառնային, քանի որ համաժողով տեղի չէր ունենում, և վրացի պատվիրակները նույնպես վճռել էին վերադառնալ: Դեսպանը նրանց խորհուրդ է տալիս մի կարճ ժամանակ ևս մնալ, քանի որ, իբրև թե, առաջիկա օրերին պետք է կայացվեր այս կամ այն ուղղվածությունն ունեցող վերջնական որոշում:

Ուշագրավ է, որ դեսպանը ստեղծված իրադրությունում հայերի համար միակ ելքը, ինչպես նախկինում, դարձյալ համարում էր Հայաստանի Հանրապետությունը Վրաստանին միացնելը: Հայ պատվիրակները բավական երկար ընդդիմանալուց հետո, և, ամենայն հավանականությամբ, միայն այն պայմանով, որ այդ միացումը ժամանակավոր էր լի-

<sup>1</sup> Deutschland und Armenien 1914-1918..., էջ 429: Վերջում Կարսի հայոց ազգային խորհուրդը տեղեկացնում էր այդ առնչությամբ շուտով պատմական, աշխարհագրական և էթնոգրաֆիական տվյալներով հագեցած մի մանրամասն հուշագիր գերմանական կառավարությանն ուղարկելու՝ իր մտադրության մասին:

նելու, ի վերջո համաձայնել էին: «Ընդհանուր առմամբ՝ ես հայերին առկա իրավիճակում քիչ մխիթարություն կարողացա տալ, - գրում էր դեսպանը: - Նրանք որևէ արժեք չեն տալիս փախստականների վերադարձին, քանի որ փաստացի իրադրությանը տեղյակ են և այդ պատճառով ստուգապես գիտեն, որ ոչ մի հայ չի վերադառնա այնտեղ, որտեղ իշխում են թուրքերը, այնպես, ինչպես ոչ մի մահմեդական իրավունք չի ունենա մնալ Հայաստանի Հանրապետությունում, եթե այն դառնա իրականություն:

Երկար-բարակ խոսելուց հետո մենք եկանք համաձայնության: Չերդ Գերագանցությանը հետևյալ առաջարկը ներկայացնելու համար, որը հայերի վերջին հույսն է: Վրաստանը մինչև այժմ դեռ չի ճանաչվել, և մենք միայն Ռուսաստանի համաձայնությունն ենք ձեռք բերել նրա ճանաչման համար: Վրաստանի սահմանները նույնպես դեռ ամրագրված չեն: Այդ պատճառով կարելի է խորհել, որ մենք վրացիներին որոշ պայմաններ առաջադրենք, նախքան նրանք կվայելեն իրենց տրվելիք արտակարգ արտոնությունները: Մենք հավանաբար կարող ենք պահանջել, որ փոքրիկ, այսպես կոչված, Հայաստանի Հանրապետությունը ինչ-որ մի ժամանակավոր ձևով միացվի Վրաստանին: Հայերը դրան պատրաստ են, քանի որ որևէ ուրիշ հույս այլևս չունեն: Թե արդյոք վրացիները վերոնշյալ առաջարկին կհամաձայնեն, ես այստեղից չեմ կարող դատել, քանի որ Վրաստանի՝ այստեղի ներկայացուցիչների շարքում մեծ կշիռ ունեցող ոչ մի անձնավորություն չկա: Այդ մասին միայն Չենկելին կարող է տեղեկություն տալ:

Ես այստեղից նմանապես քիչ կարող եմ կռահել, թե Ռուսաստանը ինչպես կվերաբերվի այդ հարցին: Հայերն ինձ ասացին, որ Ռուսաստանը չի ուզում ճանաչել այժմյան Հայաստանի Հանրապետությունը, քանի որ դրանով կվավերացնի Հայաստանի անդամահատումը: Դա, սակայն, ես բավականաչափ հիմք չեմ համարում, քանի որ կարիք չկա հայերի մնացորդը ոչնչացնել միայն մի սկզբունքի պատճառով, որը չի կարող իրագործվել: Ինչ, վերջապես, թուրքերին է վերաբերում, ապա ես կարող եմ վկայակոչել իմ նախկին տեղեկությունները, ըստ որոնց՝ այստեղի կառավարությունը բացառիկ նշանակություն է տալիս սահմանների կարգավորմանը և Կովկասի մահմեդականների հետ իր կապերին, որոնց նա պարզապես թուրքեր է անվանում»<sup>1</sup>:

<sup>1</sup> Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., էջ 576-577:

Հատկանշական է, որ Բեռնշտորֆը, որը մեծ դերակատարում էր ունեցել անցած ժամանակամիջոցում գերմանական կառավարությանը հայանպաստ միջամտություններից ետ պահելու հարցում, հայ ժողովրդին օգնելու՝ Գերմանիայի հնարավորությունները վերոնշյալով արդեն սպառված էր համարում և խորհուրդ էր տալիս կառավարությանը, թողնելով այդ և կովկասյան այլ հարցերում Թուրքիայի հետ ունեցած տարակարծությունները, թուրքերի և Ադրբեջանի մահմեդականների հետ համաձայնության գալով՝ նախաձեռնել Բաքվի գրավումը<sup>1</sup>, քանի որ այլապես Գերմանիան կզրկվեր Բաքվի նավթից և կարևոր ճանապարհներից<sup>2</sup>:

<sup>1</sup> Բաքվի հետ կապված՝ համալիր ռազմական գործողությունների ընթացքին իրազեկվելու համար տե՛ս Կարապետյան, Մ., Հայաստանը..., էջ 241-246:

<sup>2</sup> «Քանի որ անգլիացիները շարունակ ամրապնդվում են Բաքվում, - այդ առթիվ գրում էր նա, - ես համոզված եմ, որ մենք շուտով, չնայած այն ամենին, ինչ մինչև հիմա տեղի է ունեցել, ռազմական դրդապատճառներով պետք է Թուրքիայի և Ադրբեջանի մահմեդականների հետ համաձայնության գանք՝ միասին Բաքվի վրա հարձակվելու համար: Այլապես մենք նավթին չենք տիրանա, իսկ ճանապարհը դեպի Պարսկաստան, Թուրքեստան և այլն կփակվի»: Տե՛ս Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., էջ 577: Դեսպանը բոլոր դեպքերում ամենանպաստավոր տարբերակը համարում էր այն, որ Գերմանիան ռուսական կառավարությունից Բաքուն գրավելու մանդատ ձեռք բերեր՝ դա հիմնավորելի համարելով նաև այն պատճառաբանությամբ, որ Բաքվի խորհուրդը, իբրև թե, ընկել էր անգլիացիների ազդեցության տակ և այլևս չէր առաջնորդվում Մոսկվայի ցանկություններով: Ամեն դեպքում, ըստ նրա, Բաքվի գրավումը հույժ անհրաժեշտ էր, և նա կառավարությանը կոչ էր անում հնարավորինս արագ այդ նպատակով ռազմական ուժեր, առանձնապես ծանր հրետանիներ տրամադրել գեներալ ֆոն Կրեսին, քանի որ մի հրանոթային մարտկոցով այդ հարցում ոչինչ հնարավոր չէր անել: Անդ, էջ 577-578: Ինքնին հասկանալի է, որ Բեռնշտորֆի այս տեսակետը նույնպես միանգամայն թուրքական շահերից էր բխում, և նա այդ առնչությամբ պետք է դրոշմներ ստացած լիներ նաև թուրքական կառավարությունից:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

### ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԳԵՐՄԱՆԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ 1918 Թ. ԱՇՆԱՆԸ

Թուրքիան, այսպիսով, ողջ ամռան ընթացքում կեղծ հավաստիացումների և դրանց չիրագործման եղանակով համառորեն հրաժարվում էր իր հայաջինջ քաղաքականությունը փոփոխել և տեղի տալ Գերմանիայի կոչերին ու նախագուշացումներին: Ուշագրավ է, որ թուրքական կողմը չէր զլանում մինչև իսկ առասպելներ հորինել՝ այդ նպատակով նաև դաշինքի խզման խաղաքարտն օգտագործելու համար: Օգոստոսի սկզբին, օրինակ, Ֆոն Կրեսը Ա. Ջամալյանին մի գրույցի ընթացքում հաղորդել էր, որ Նուրի փաշան իրեն տեղեկացրել էր, իբրև թե, Անգլիայի կողմից Թուրքիային մերժեմալու փորձերի մասին: Ըստ Նուրիի՝ Անգլիան Թուրքիային առաջարկել էր «դուրս գալ գերմանական կռալիցիայից»՝ դրա փոխարեն խոստանալով «գործողությունների ազատություն Անդրկովկասում»<sup>1</sup>:

Ինչ վերաբերում էր Էնվերի կողմից Լոռին և Փամբակը «որոշակի պայմաններով» հայերին տրամադրելու, և, բացի այդ, հայ փախստականների վերադարձը մասնակիորեն (այսինքն՝ դեպի Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթգծից առնվազն 20 կմ հեռավորության վրա ընկած տարածքը և նաև այն շրջանները, որտեղ մուսուլմանների և հայերի միջև մարտեր տեղի չէին ունեցել) թույլատրելու խոստմանը, որին արդեն անդրադարձել ենք, ապա թուրքական կառավարությունը իր այդ համձնաշարություններով ևս սոսկ ժամանակ շահելու նպատակ էր հետապնդում և մտադիր չէր դրանք իրագործել: Դա ակնհայտ դարձավ այն ժամանակ, երբ գեներալ Ֆոն Ջեկտը, տեղեկանալով Լոռին և Փամբակը հայերին հանձնելու՝ Էնվերի համաձայնության մասին, իր կողմից նույն-

<sup>1</sup> ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 21, թ. 3: Թե դրան ինչպես էր պատասխանել թուրքական կառավարությունը, Ֆոն Կրեսին հայտնի չէր, բայց նա վստահ էր, որ Թուրքիան հենց միայն այն պատճառով չէր համաձայնի Գերմանիայից բաժանվել, քանի որ Բուլղարիան սպասում էր «մի այդպիսի առիթի՝ Կոստանդնուպոլսի վրա հարձակվելու համար»: Անդ:

պես հեռագրով համապատասխան կարգադրություն կատարեց՝ այն ուղարկելով Բաթում և այդ մասին տեղեկացնելով գեներալ Ֆոն Կրեսին: Նրա հեռագրի՝ Բաթում հասնելուց տառաջիորեն երկու ժամ անց, սակայն, ինչպես վկայում էր Ֆոն Կրեսը, մի նոր հեռագիր է ստացվում Էնվերի կողմից, որով Ֆոն Ջեկտի կարգադրությունը համարվում էր անվավեր<sup>1</sup>:

Որոշ բնակավայրերում հայերի վերադարձը թույլատրելու՝ Էնվերի խոստումը նույնպես իրականում սոսկ աչքակապուկ էր, և թուրքական կառավարությունը ձգտում էր զանազան պատրվակներով ու անվերջ ձգձգումներով դա ևս ձախողել: Ֆոն Կրեսն այդ իրադրությունում շարունակում էր ջանքեր գործադրել՝ մի կողմից թուրքական կառավարության կողմից տրված այդ թեկուզ և փոքրիկ երաշխիքը կյանքի կոչելու և, մյուս կողմից, հայ փախստականների զանգվածային վերադարձի արգելման առնչությամբ Էնվերի կողմից ներկայացված «հիմնավորման» անհեթեթությունը գերմանական կողմին պարզ դարձնելու համար: Ընդ որում՝ ուշագրավ է, որ գեներալն այդ նպատակով փորձում էր օգտագործել նաև թուրքական բանակային հրամանատարության մեջ առկա հակասությունները:

Օգոստոսի 30-ին թուրքական 3-րդ բանակի գլխավոր հրամանատար Հալիլ փաշան իր պաշտոնավարումն սկսելու առիթով այցելեց Երևան, և Ֆոն Կրեսը, ընդառաջելով ՀՀ կառավարության խնդրանքին ու ստանալով նաև համապատասխան հրավեր Հալիլի կողմից, վճռեց բարոն Ֆրանկենշտայնի հետ միասին ուղեկցել նրան Երևանում:

Ինչպես հաղորդվում էր գեներալի՝ սեպտեմբերի 3-ին կանցլերին ուղարկված տեղեկագրում, նա փաշայի հրավերը ընդունել էր այն նկատառումով, որ, օգտագործելով հանդիպման առիթը, կարող էր նրան համոզիչ դարձնել փախստականների վերադարձի հետ կապված՝ թուրքական պաշտոնական առարկությունների սնանկությունը և միաժամանակ նրան դրդել, որ նա անձամբ նույնպես իր ազդեցությունը գործադրեր թուրքական բանակի գլխավոր հրամանատարության վրա՝ այդ դիրքորոշումը փոփոխելու համար: Բացի այդ՝ Ֆոն Կրեսը հույս էր փայփայում Հալիլի դիրքորոշումը նրա իսկ տեղեկագրերի միջոցով ներկայացնել նաև գերմանական բանակի գլխավոր հրամանատարությանը, որը հակված էր ընդունելու հայ փախստականների վերադարձի արգել-

<sup>1</sup> Deutschland und Armenien 1914-1918..., т. 433:

ման թուրքական պատճառաբանությունները: «Ես հույս ունեմ, — մասնավորապես նշում էր գեներալը, — որ, այդ առիթն օգտագործելով, Հալիլ փաշային կկարողանամ համոզել, որ, այսպես կոչված, հայկական վտանգի առնչությամբ Կոստանդնուպոլսում կատարվող առարկությունները սխալ և անհիմն են: Ես հույս ունեմ, որ Հալիլ փաշայի տեղեկագրերին կհաջողվի թուրքական բանակի գլխավոր հրամանատարությանը ապացուցել, որ բոլոր լոգուները, ինչպես, օրինակ, «ռազմական անհրաժեշտություն», «հետադարձ կապերի վտանգում» և այլն, որոնցով արդարացնում են բազմահազար մարդկանց սպանող և զերմանիայի դեսպանի ու գերմանական բանակի գլխավոր հրամանատարության ջանքերը փորձում են խափանել, զուրկ են ցանկացած հիմնավորվածությունից: Ես, մասնավորապես, ակնկալում եմ հաջողություն ունենալ այն բանում, որ այսուհետ նաև այդ թուրք զորավարի տեղեկագրի միջոցով, որի կողմից կատարված անհաշիվ հայերի սպանությունները կարող են բացառել հայերի նկատմամբ նրա բարեկամության ցանկացած կասկած, գեներալ Ֆոն Ջեկտին տեսանելի կդարձվի, թե ինչ անամոթ կերպով է նա հայերի հետ կապված բոլոր հարցերում թուրքիայի կողմից խաբվում»<sup>1</sup>:

Հաջողության հասնելու Ֆոն Կրեսի լավատեսությունը պայմանավորված էր մի կողմից Հալիլի և իր թուրք պաշտոնակիցների միջև առկա հակասությունների գիտակցումով, մյուս կողմից՝ այն հանգամանքով, որ Հալիլ փաշան, նրա համոզմամբ, շատ ավելի խելամիտ քաղաքական գործիչ էր, քան Վեհիբ, էսադ փաշաներն ու թուրք մյուս բարձրաստիճան հրամանատարները:

Այնուհանդերձ, գեներալը միաժամանակ հարկ էր համարում ընդգծել, որ Կովկասում թուրքական զորամասերը՝ սկսած բանակի առաջնորդներից ընդհուպ մինչև սահմանային պահակակետում կանգնած վերջին լեյտենանտը, «հրեշ» Վեհիբ փաշայի կողմից այն աստիճան զրգռված էին հայերի և գերմանացիների դեմ, որ երկար ժամանակ կպահանջվեր, մինչև Հալիլ փաշային կհաջողվեր դրական տեղաշարժի հասնել: Էսադ և Ալի Իսսան փաշաները և հատկապես Շեքի փաշան, Ֆոն Կրեսի հավաստմամբ, Հալիլի գործունեությունը շարունակ խոչընդոտում էին, ընդ որում, որևէ օր չէր լինում, երբ Շեքի փաշան ցանկացած կարգապահություն ունահարող անպատկառությամբ հանդես

<sup>1</sup> ԱճԻ, էջ 432:

չգար Հալիլի դեմ: Վերջին օրերին նա նաև Հալիլին գրել էր, որ ամենակին չէր կարող համաձայնել նրա քաղաքականության հետ, և որ այն բանից հետո, ինչ Հալիլը ստանձնել էր գլխավոր հրամանատարությունը, գերմանացիների ազդեցությունը նրա վրա դարձյալ զգալի էր դարձել:

Ֆոն Կրեսի վկայակոչմամբ՝ Հալիլի հրամանները պարզապես չէին կատարվում, նրա յուրաքանչյուր հրաման պատասխանվում էր առարկություններով, և յուրաքանչյուր որոշում ենթարկվում էր քննադատության: Նրա կողմից կարգադրված օպերացիան (Պարսկաստանում) անգամ ամենակրտսեր սպաների կողմից անմտություն և անիրագործելի էր համարվում, և այդպիսով նրա ղեկավարման հանդեպ վստահությունը պարբերաբար սասանվում էր: Այդ ամենով հանդերձ՝ Հալիլը զգուշանում էր բանակի նախկին գլխավոր հրամանատարի դեմ բավականաչափ վճռականորեն հանդես գալ: Ֆոն Կրեսի հետ զրույցների ընթացքում նա գանգատվել էր այն մեծ դժվարություններից, որ նրա համար հարուցում էին 6-րդ և 9-րդ բանակների իրեն ստորադասված գլխավոր հրամանատարները և իր «հարևան» էսադը: Ինչ վերաբերում էր վերջինիս, ապա, գեներալին տեղեկացնելով, որ էսադը լիովին գտնվում էր շտաբի պետ Օմեր Լուֆթիի ազդեցության ներքո, որն էլ Վեհիբի կատարածուն էր, Հալիլը միաժամանակ թախանձագին կերպով իր ցանկությունն էր հայտնել, որ Օ. Լուֆթին շուտով փոխարինվեր մի գերմանացի ղեկավարով:

Վերոնշյալ հաղորդումից հետո Ֆոն Կրեսը կանցլերին առաջարկում էր, ելնելով բանակի գլխավոր հրամանատարության կողմից Պարսկաստանում ձեռնարկվող ռազմական գործողությունների արդյունավետ իրագործման անհրաժեշտությունից, Ֆոն Ջեկտին հրահանգել, որ նա հոգ տաներ Շեքի փաշային հնարավորինս արագ պաշտոնազրկելու մասին, որը, նրա հավաստմամբ, ժամանակին մեծ դժվարություններ էր հարուցել նաև գեներալ-գնդապետ Բոթմերի համար: Իսկ այնուհետև նա առանձին կետերով կանցլերի ուշադրությունն էր հրավիրում թուրքական քաղաքականության համար առանձնապես բնութագրական մի շարք կարևոր իրողությունների վրա, որոնք վերաբերում էին հայ փախստականներին և բացահայտում էին նրանց բնաջնջման թուրքական նկրտումները:

Այդ առումով նա նախ անդրադառնում էր Լոռու և Փամբակի շրջանները հայերին հանձնելու վերաբերյալ թուրքիայի երկդիմի խաղին, ինչպես և այն փաստին, որ երբ հարցը Ֆոն Ջեկտի կարգադրությամբ հան-

գուցալուծման շեմին էր գտնվում, էնվերի կողմից այդ կարգադրու-  
թյունն անվավեր հայտարարվեց:

Թուրքական աչքակապուկի մեկ այլ ցցուն դրսևորումը, ինչպես  
նշում էր ֆոն Կրեսը, ի հայտ էր գալիս հայ փախստականներին որոշա-  
կի պայմաններով վերադարձի հնարավորություն ընձեռելու՝ թուրքա-  
կան կառավարության համաձայնության պարագայում: Նրանց, ինչպես  
հավաստվում էր թուրք ռազմական նախարարի օգոստոսի 3-ի վե-  
րոնշյալ հեռագրում, թույլատրվում էր վերադառնալ, իսկ էսադ փաշան  
պետք է ընդուներ դրա իրականացման համար անհրաժեշտ որոշումնե-  
րը: Երբ, սակայն, պարզ դարձավ, որ սայլը տեղից չէր շարժվում, իսկ  
այդ առնչությամբ էսադ փաշային ֆոն Կրեսի կողմից ուղարկված հե-  
ռագրերն ու նամակներն առհասարակ որևէ պատասխան չէին ստա-  
նում<sup>1</sup>, ֆոն Կրեսն ու բարոն Ֆրանկենշտայնը Բաթում ուղարկեցին գեր-  
մանական բանակի ավագ լեյտենանտ Պավլասին, որպեսզի նա էսադ  
փաշայի հետ բանակցեր փախստականների վերադարձի կանոնակար-  
գային հարցերի մասին: Վերջինս, սակայն, Պավլասին ետ է ուղարկում  
պնդելով, թե այդ հարցում ղեկավար իրավասությունների պայմանները  
փոխվել էին, և որ իրավասուն արդեն Հալիլ փաշան էր, մինչդեռ ֆոն  
Կրեսն, այնուհետև հանդիպելով Հալիլին, նրանից տեղեկանում է, որ  
էսադի պնդումը հնարածին է եղել. հանգամանք, որը, նրա վկայակոչ-  
մամբ, փաստում էին նաև Հալիլի կողմից իրեն ներկայացված փաս-  
տաթղթերը:

Թե միաժամանակ հակահայկական տրամադրությունները բորբոքե-  
լու համար որպիսի կեղծ տեղեկատվություն էր շրջանառվում թուրքա-  
կան պաշտոնական շրջաններում, վկայում էր, օրինակ, Նուրի փաշայից  
Հալիլին և նաև Կ. Պոլիս ուղարկված մի տեղեկագիր, որի բովանդակու-  
թյունը Հալիլը ներկայացրել էր Ֆոն Կրեսին: Այնտեղ նշված էր, որ հայե-  
րը Ղարաբաղում երկու օրում 30 թաթարական գյուղեր էին այրել:

Չունենալով հավաստի փաստեր կեղծիքը հիմնովին հերքելու հա-  
մար՝ Ֆոն Կրեսն այնուհանդերձ կանցլերի ուշադրությունը հրավիրում  
էր այն հանգամանքի վրա, որ Նուրին շատ լավ գիտեր, որ այդ հարցում  
խոսքը պետք է վերաբերեր Անդրանիկին, որի հետ ՀՀ կառավարությու-  
նը ոչ մի առնչություն չուներ, լավ գիտեր նաև, որ հայկական կառավա-

<sup>1</sup> Ինչպես մատնանշում էր ֆոն Կրեսը, էսադը սկզբունքորեն չէր պատասխա-  
նում իր համար ոչ ընդունելի նամակներին և հեռագրերին:

րությունն առաջարկել էր Անդրանիկին ձերբակալել և «վնասագործել»,  
բայց Ադրբեջանը հրաժարվում էր հայերին թույլատրել մուտք գործել  
Ղարաբաղի վիճելի տարածք: «Նուրին, բացի այդ, շատ լավ գիտի,  
գրում էր այնուհետև ֆոն Կրեսը, որ եթե մի թաթար նրան տեղեկաց-  
նում է, թե 30 գյուղեր ոչնչացվել են, ապա ավերվել են առավելագույնը  
10 գյուղեր: Նա նաև շատ լավ գիտի, որ եթե ինքը տեղեկացնում է թա-  
թարական մի գյուղի մասին, ապա Կոստանդնուպոլսում 4 կամ 5  
խղճուկ կավե խրճիթներ չեն պատկերացնում: Սա միայն մեկ օրինակ է  
այն շատերից, թե ինչպիսի միտումնավոր կերպով են հաղորդագրու-  
թյուններ ուղարկվում Կ. Պոլիս՝ այնտեղ, այսպես կոչված, հայկական  
վտանգի մասին լիովին չափազանցված և թյուր պատկերացումներ  
ստեղծելու համար»:

Ֆոն Կրեսը միայն վերոնշյալ՝ «գիտակցաբար հաղորդվող սխալ տե-  
ղեկատվությամբ» էր բացատրելի համարում այն հանգամանքը, որ գե-  
ներալ ֆոն Ջեկտը, չնայած իր տեղեկագրերին, դեռ շարունակ տեղի էր  
տալիս թուրքական տեսակետին, ըստ որի՝ հայ փախստականների վե-  
րադարձը հայրենիք վտանգ էր պարունակում թուրքական բանակի հա-  
մար: Հղելով այդ մասին էնվերի այն «փաստարկը», թե չէր կարելի թույլ  
տալ, որ «կես միլիոն զինված թշնամիներ» բնակեցվեին թուրքական  
բանակի թիկունքում, ֆոն Կրեսը մեկ անգամ ևս ընդգծում էր, որ այդ  
«կես միլիոն զինված թշնամիները» զառամյալ տղամարդիկ, կանայք և  
երեխաներ էին: Իսկ այն բանի համար, որ այլևս գրեթե ոչ մի՝ զենքի ու-  
նակ տղամարդ չկարողանար վերադառնալ, ըստ գեներալի, թուրքերն  
ու թաթարներն արդեն հիմնովին հոգ էին տարել: Բացի այդ, նշում էր

<sup>1</sup> Անդ, էջ 433: Ղարաբաղին վերաբերող թուրքական վերոնշյալ հակահայկա-  
կան քարոզչությունը հերքելու համար ֆոն Կրեսը հարկ համարեց սեպտեմբերի  
23-ին ևս մի հեռագիր ուղարկել արտոգործնախարարությանը, որտեղ նա գրում  
էր հետևյալը. «Ինչպես ինձ Հալիլ փաշան տեղեկացնում է, Նուրին գեներալ  
Անդրանիկի բանդայի զինաթափման համար կանոնավոր հայկական զորամա-  
սերի մուտքը Ղարաբաղի տարածք մերժել է այն պատճառաբանությամբ, թե  
Ղարաբաղը ադրբեջանական տարածք է: Ըստ այդմ՝ հայկական կառավարու-  
թյան իբրև թե ոչ լոյալ կեցվածքի և Թուրքիայի թշնամիների հետ նրա գաղտնի  
համագործակցության վերաբերյալ թուրքական բողոքները այսուհետև կարող  
են միանգամայն անհիմն համարվել»: Անդ, էջ 435:

նա, շատ հեշտ խնդիր էր փախստականներին սահմանն անցնելու ժամանակ զինաթափելը<sup>1</sup>։

Հատկանշական է, որ Ֆոն Կրեսը փորձում էր հայերի վերադարձի անհրաժեշտությունը հիմնավորել միմյալ իսկ «հայկական վտանգի» վերաբերյալ թուրքական պնդումների տեսանկյունից։ Ինչպես նշում էր նա, ընդարձակ տարածքի վրա սփռված փախստականները շատ ավելի աննշան վտանգ իրենցից կներկայացնեին, քան եթե նրանք, մի նեղ տարածքում կուտակված, սովից դիմեին հուսահատ գործողությունների։ «Եթե հայերը ցանկանային, կարող էին հիմա էլ անանցանելի լեռնային վայրերում առանց որևէ դժվարության շաբաթներով կտրել Սանահին-Ղարաքիլիսա լեռնային երկաթուղու կառույցներից մեկի հետ թուրքերի հետադարձ կապերը,– նշում էր գեներալը։– Եթե թուրքերը կամենում են իրենց ապահովագրել հետադարձ կապերի խզման որևէ սպառնալիքի դեմ, ապա դա կարող են անել միայն հայերին իրենց բարեկամները դարձնելու միջոցով։ Եթե, սակայն, նրանք հայերին մղեն հուսահատության, ապա կունենան իրենց մտադրությունների ճիշտ հակառակ արդյունքը»<sup>2</sup>։

Ֆոն Կրեսը հարկ էր համարում դարձյալ հիշեցնել, որ թուրքերի կողմից գրավված հայկական տարածքներում բերքի մի փոքրիկ մասը թուրքերն իրենք են հավաքել, իսկ մնացած՝ անհամեմատ մեծ մասը ոչնչացրել են՝ իրենց ձիերն ու անասունները քշելով արտերի վրայով։ Եթե փախստականներին չթույլատրվեր վերադառնալ, ապա, ըստ նրա, այդ բերրի տարածքները, «առաջին հերթին ի վնաս թուրքերի», հաջորդ տարի նույնպես բերք չէին տա։

<sup>1</sup> Ի հավելումն վերոնշյալի՝ Ֆոն Կրեսը սեպտեմբերի 11-ին արտգործնախարարությանն ուղարկեց նաև մի ընդարձակ տեղեկագիր զարմանը և անոանը Նախիջևանում թուրքերի ու թաթարների կողմից հայերի դեմ իրագործված զանգվածային բռնությունների մասին, որտեղ ամփոփված էին Հիմալայների Գալունովայի, Աննա Աղամովայի, Աննա Վասենկոյի և այլ հայուհիների վկայություններն իրենց, իրենց մերձակորների և առհասարակ Նախիջևանի հայերի հանդեպ իրագործված սահմուկեցուցիչ վայրագությունների վերաբերյալ։ Տեղեկագիրն ավարտվում էր սարսափները վերապրած ականատեսների ստորագրություններով։ Տե՛ս Die Armenische Frage und der Genozid an den Armeniern... էջ 580-583:

<sup>2</sup> Deutschland und Armenien..., էջ 434:

Նա միաժամանակ մատնանշում էր, որ թուրքերը միանգամայն անտարբեր էին բանակի գլխավոր հրամանատարության կողմից կարգադրված առաջխաղացումը դեպի Պարսկաստան իրագործելու հարցում որպես ապացույց ներկայացնելով թուրքերի գրաված տարածքներում երկաթուղու՝ ամիսներ ի վեր առկա անմխիթար դրությունը։ Դեռ ոչինչ չէր արվել ավերված ջրհորները վերականգնելու համար։ Շոգեքարշերը սնուցվում էին մասամբ ձեռքով գործող փոքրիկ պոմպերով, մասամբ սովորական դույլերով։ Երկաթուղային հեռախոսագիծը դեռ չէր վերականգնվել։ Չկային ուղեսլաքներ, և ամեն օր հնարավոր էր, որ զննացքները դուրս գային գծերից։ Երկաթուղային երթևեկությունը հղի էր մեծ վտանգներով։

Ինչ վերաբերում էր թիֆլիսում և Երևանում նոր նշանակված թուրք դիվանագիտական ներկայացուցիչներ Աբդուլ Քերիմ փաշային և Մեհմեդ Ալի փաշային, որոնք դեռ զտնվում էին Բաթումում, ապա Ֆոն Կրեսը նշում էր, որ նրանք երկուսն էլ իրեն ծանոթ, հետադեմ ու ֆանատիկ մահմեդականներ էին, որոնցից կարելի էր առաջին հերթին լավ ծառայություններ սպասել պանիսլամական քարոզչության զարգացման հարցում։ Ուստի՝ ինքնին հասկանալի է, որ նրանք հայ փախստականների վերադարձի հարցին նպաստելու և համատեղ կերպով տարածաշրջանային այլ խնդիրներ լուծելու հարցում պիտանի լինել չէին կարող։

Ֆոն Կրեսի երևանյան այցը և հանդիպումները Հալիլ փաշայի ու հայկական կառավարության հետ, նաև նրա աջակցությամբ Հալիլի և ՀՀ կառավարության միջև տեղի ունեցած բանակցությունները, ինչպես նաև իր՝ սեպտեմբերի 3-ի տեղեկագրին կից մի հավելվածով իրազեկում էր կանցլերին, ունեցել էին հետևյալ արդյունքները. հակառակ Հայաստանի կողմից թուրքիային «սպառնացող վտանգի» վերաբերյալ Էսադ, Շևքի և Նուրի փաշաների՝ միտումնավոր կերպով աղավաղված տեղեկությունների՝ Հալիլ փաշան այն համոզումն էր արտահայտել, որ Հայաստանն ամենևին մտադրություն չունի հանդես գալ թուրքիայի դեմ, և խոստացել էր էնվերին պարզաբանել, որ փախստականների վերադարձի դեպքում հարցը հիմնականում վերաբերում էր կանանց, երեխաների և ծերունիների, իսկ դեռ կենդանի մնացած՝ զենքի ունակ փոքրաթիվ տղամարդիկ զենք կրելու դեպքում կարող էին նախապես հեշտությամբ զինաթափվել։

Հալիլն ինքը Ալեքսանդրապոլ-Չուլֆա երկաթուղուց 20 կմ դեպի արևելք հայերի վերադարձը թույլատրելու վերաբերյալ Էնվերի առաջարկը բնութագրել էր որպես «անարժեք» և միաժամանակ Ֆոն Կրեսին

խոստացել էր մեծագույն եռանդով միջնորդել Լոռու և Փամբակի շրջանները հայերին հանձնելու համար: Ինչ վերաբերում էր էսադ փաշային, ապա, ինչպես ընդգծում էր ֆոն Կրեսը, նրա նենգամտությունը լավագույնս ապացուցվում էր Պավլասին տրված այն թյուր պարզաբանմամբ, թե այն տարածքների որոշարկունը, որտեղ փախստականները, առանց կոտորածների վտանգին ենթարկվելու, կարող էին վերադառնալ, գտնվում էին ոչ թե իր, այլ Հալիլի իրավասության ներքո, ինչը, սակայն, վերջինս հերքել էր:<sup>1</sup>

Գեներալն, ի դեպ, հստակ դիրքորոշում ուներ նաև Լոռու հարցում վրացիների ցուցաբերած հավակնությունների հանդեպ: Օգոստոսին, երբ լուրեր էին տարածվել, թե վրացիները կամենում էին գրավել Լոռու այն մասը, որը պետք է ազատագրվեր թուրքերից, և մինչև անգամ Փամբակի որոշ հատվածներ, նա գործադրել էր իր ազդեցությունը՝ վրացական կառավարությանը նման մտքերից հրաժարեցնելու համար<sup>2</sup>:

Ինչևէ, Ֆոն Կրեսի վերոնշյալ տեղեկագիրն ու գերմանա-թուրքական երկխոսության մյուս վավերագրերն, անշուշտ, մեծ հետաքրքրություն են ներկայացնում ոչ միայն հայկական խնդրի վերաբերյալ երկու դաշնակիցների դիրքորոշումները, այլև թուրքական բարձրագույն հրամանատարության ներսում առկա փոխհարաբերությունները պարզաբանելու առումով: Այն հարցին, թե արդյոք Հալիլը որքան անկեղծ էր գեներալ ֆոն Կրեսին ներկայացրած իր նկատառումներում, անշուշտ, անհնար է միանշանակորեն պատասխանել: Նրա նշանակումից և գեներալ ֆոն Կրեսի հետ նրա հանդիպումներից հետո, սակայն, կարծես թե սայլը սկսեց տեղաշարժվել:

Ինչպես ՀՀ կառավարությունը տեղեկացրել էր ֆոն Կրեսին, թուրքերը Ալեքսանդրապոլի և Կարսի շրջաններից 14.000 հիմնականում գյուղաբնակ հայերի աքսորել էին երգրում և Հասան Կալա՝ այնտեղ նրանց որպես աշխատուժ օգտագործելու համար: Նրանք այնտեղ, սակայն, ըստ նույն տեղեկության, շահագործվում էին անմարդկային կերպով և դատապարտված էին սովամահության<sup>3</sup>:

<sup>1</sup> Անդ, էջ 433:

<sup>2</sup> Տե՛ս այդ մասին Թիֆլիսում ՀՀ ներկայացուցչի տեղեկությունը, ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 41, ք. 4:

<sup>3</sup> Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., էջ 579:

Բռնի կերպով Թուրքիայի խորքը տարված այդ մարդկանց, ի վերջո, քուլատրվեց վերադառնալ, և սեպտեմբերի առաջին տասնօրյակի ընթացքում տղամարդկանց 400 խմբեր, որոնց շարքում կային նաև սպաներ, վերադարձան Երևան: Լեյտենանտ Այզենմանը<sup>1</sup>, հաղորդելով, որ

<sup>1</sup> Թիֆլիսում տեղակայված գերմանական ավիացիոն բաժանմունքի լեյտենանտ Այզենմանն օգոստոսին ուղարկվել էր Երևան՝ քաղաքական և ռազմական բնույթի դիտարկումներ կատարելու համար: Քանաքեռից Երևան ճանապարհը նա անցել էր հայկական հեծելազորի ուղեկցությամբ: Երևանում նրան արդեն սպասում էր այդ այցով խանդավառված մարդկանց մի մեծ բազմություն, իսկ Երևանի հոգևոր առաջնորդի տանը կայացած ճաշկերույթին ներկա էին եղել ոչ միայն հայ քաղաքացիական ու զինվորական պաշտոնատար անձինք, այլև հանրապետության ազգային փոքրամասնությունների, նաև հանրապետությունում գործող բոլոր կուսակցությունների ներկայացուցչները: Եվ, այնուհանդերձ, նման ոգևորությունը անհիմն էր, իսկ լեյտենանտի «դիտարկումներն» ու այնուհետև պատրաստած զեկուցագիրը հիմնականում հատկանշվում էին մակերեսայնությամբ, անտեղյակությամբ և, թերև, նաև նրա անհատական քաղաքական «ընկալումներով» պայմանավորված նախատրամադրվածությամբ: Մինչև իսկ Այզենմանին ցուցաբերված ջերմ և հյուրընկալ վերաբերմունքը նրա կողմից ընկալվել էր որոշակի քաղաքական ենթատեքստով: «Այն պահին, երբ մենք մտանք Երևան, - գրում էր նա, - մարդիկ կարծում էին, թե թուրքերը հիմա մեր հրամանով իսկույն Բրեստ-Լիտովսկի գծից այն կողմ կքաշվեն, և Հայաստանը կկարողանա իր հին սահմանները ձեռք բերել: Դա ոչ միայն պարզունակ կերպով մտածող ժողովրդի կարծիքն էր, այլև նույնիսկ մեծ թվով կրթված հայերի: Քանի որ այդ հույսը, երկու ամիս չանցած, չի իրականացել, ...տրամադրությունը փոխվել է, և նրանք դարձյալ ավելի շատ Անգլիայի հետ են սիրախաղ անում»: Տե՛ս Revidierte Lepsius-Edition..., 1918-10-30-DE-002-V փաստաթուղթը: Տեղեկագիրը, որն, ի դեպ, բնութագրվում էր ինչպես թաթարների, այնպես էլ հայերի ընդհանուր կրթամակարդակի, հանրապետությունում զինվորական գործի դրվածքի վերաբերյալ բացասական գնահատումներով, հուշում է, որ հեղինակի նախատրամադրվածությունը որոշակիորեն պայմանավորված էր Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Անգլիայի հանդեպ հայերի դրական վերաբերմունքով: Ըստ այդմ նա պատեհապաշտ էր համարում հայ քաղաքական գործիչներին, որոնք, ըստ նրա, կարող էին այսօր Գերմանիայի, իսկ վաղը, եթե իրադրությունը փոխվեր, Ռուսաստանի կամ Անգլիայի կողքին լինել: Նա չէր զլանում հայերին մինչև իսկ «ծուլ», «պարզունակ և անշնորհ ասիացիներ» անվանել և ի հաստատումն դրա կատարել նաև հղում, իբրև թե, մի հայի կողմից (վերջինիս անունը նա նշում է Շ. Ա. հապավումով) օգոստոսի 19-ին իրեն ասված հետևյալ խոսքերից. «Հայկական կառավարությունը բաղկացած է բանդիտներից ու խուլարարներ»:

րից, ժողովուրդը բիրտ է, վայրենի և չունի մշակույթ, իսկ զինվորները ավազակներ են»։ Անդ։ Այգենմանի պարզունակ և «զգայուն» քաղաքական ընկալումն էլ ավելի ակնբախ է դառնում հետևյալ դիպվածի միջոցով. տեղեկանալով ամերիկացիների կողմից Երևանում ստեղծված՝ «Քրիստոնյա երիտասարդների միություն» անունը կրող և նաև որբախնամ գործունեությամբ զբաղվող մի ընկերության մասին, որտեղ, նրա համոզմամբ, ամերիկյան քաղաքական քարոզչություն էր վարվում, նա հարկ է համարում Երևանում անցկացրած շաբաթների ընթացքում մեկ այլ որբանոցի առանձնահատուկ օժանդակություն ցուցաբերել և այնտեղ, ըստ հնարավորին, «հակաքարոզչություն» վարել։ Ինչպես փաստում է Այգենմանի տեղեկագիրը, նա շփումներ էր ունեցել նաև թաթարների հետ, որոնք, ըստ նրա հավաստման, անպատճառ թուրքամետ դիրքորոշում չունեին և հասկանում էին, որ թուրքական տիրապետությունն իրենց կյանքում առաջընթաց չէր բերելու, և որ թուրքերի առաջխաղացումն ու տարածքային գրավումները միայն այդ տարածքների կողոպտման նպատակն էին հետապնդում։ Այս ամենով հանդերձ՝ Այգենմանը միաժամանակ արձանագրում էր, որ հայերն ունեն բոլոր հարևան ժողովուրդներին գերազանցող մտավորականություն և շատ ընկալունակ են մտավոր ու նյութական արժեքների նկատմամբ, իսկ վաճառականներն էլ «խիստ օժտված են և մեծ գործունեություն են վարում»։ Ինչ վերաբերում էր Հայաստանի տնտեսության զարգացման հեռանկարներին, ապա նա նշում էր, որ եվրոպական արդյունաբերական և գյուղատնտեսական ձեռնարկությունների ներդրումների, նրանց միջոցով իրականացվող տնտեսավարման դեպքում կարող էր ի հայտ գալ «մեծածավալ արտադրություն», և առկա «հսկայական» հանքային հարստություններն էլ մեծ եկամուտներ կարող էին բերել։ Անդ։ Եթե Այգենմանի մեկնաբանություններն ու գնահատումները հիմնականում չափազանց մակերեսային, պարզունակ և խոցելի են, ապա նրա՝ ականատեսի վկայությունները պարունակում են արժեքավոր տարրեր։ Ուշագրավ է, օրինակ, նրա տեղեկությունն այն մասին, որ սկզբնապես Երևանում բնակվող 20.000 թաթարներից մոտ 15.000-ը մինչև օգոստոս արտագաղթել էին, բայց քանի որ «թուրքերի մոտ» նրանց կենսապայմանները չէին բարելավվել, նրանք ձգտում էին վերադառնալ, մինչդեռ սահմանի վրա թուրք զինվորականության հարուցած արգելքների պատճառով չէին կարողանում դա անել։ Ըստ նրա հավաստման՝ Երևանում գտնվող թուրք ավագ լեյտենանտ Նուրի բեյն իր հերթին նույնպես ձգտում էր այնտեղ դեռ մնացած 5.000 թաթարներին, հակառակ նրանց կամքի, արտագաղթեցնել՝ այն պատճառաբանությամբ, որ նրանց թիվը հայերի համեմատ շատ քիչ էր, և բախում առաջանալու դեպքում նրանք չէին կարող հայերի դեմ հակակշիռ դառնալ։ Այդ թաթարները, որոնց մեջ կային նաև շատ «ունևորներ», Այգենմանի վկայակոչմամբ, չէին ուզում արտագաղթել իրենց ունեցվածքից չզրկվելու համար։ Նրանց խնդրանքով Այգենմանն այդ մասին մի համապատասխան գրությամբ տեղեկացնում է Հալիլ փաշային։ Վեր-

թուրքական կառավարությունը նրանց թույլատրել էր վերադառնալ իրենց գյուղերը, որոնք հիմնովին ավերված էին, միաժամանակ ընդգծում էր, որ այդ մարդիկ գտնվում էին «սոսկալի» վիճակում<sup>1</sup>։ Իսկ թե ինչպիսին էր այդ սոսկալի վիճակը, ավելի որոշակի է դառնում նրա հետևյալ տեղեկությամբ. «Ես ինքս գնացի կայարան, և այնտեղ տեսա առաջին 200-ին, որոնք գալիս էին Երզրումից։ Մարդիկ ցնցոտիների մեջ պատված էին, մասամբ մերկ ոտքերով, կեղտի պատճառով աչքերը չռած և ամբողջովին թերասնված էին։ Երկուսը սովից մահացան Իլուխանգլուում, ուրիշ երկուսը Իլուխանգլուից Երևան ընկած կարճ ճանապար-

ջինս տեսակցում է նաև մի թաթարական պատվիրակության հետ և, ըստ թաթարների տեղեկության, նրանց արտոնում ցանկության դեպքում մնալ Երևանում։ Իր տեղեկագրին Այգենմանը կցել է նաև մի ցուցակ, որը ներկայացնում էր Կարաղամշու անունով մի հայկական գյուղի՝ թուրքերի գրավման հետևանքով փախստական դարձած բնակչության կրած կորուստները։ Ցուցակի համաձայն, որը կազմելիս նա առաջորդվել էր Երևանի մոտ Ճամբարած բնակիչների կողմից ուղղակիորեն իրեն հաղորդված տվյալներով, 900 բնակիչ ունեցող գյուղի 100 ընտանիքները փախստստի արդյունքում կորցրել էին 26.520 վեդդո գինի (1 վեդդոն կազմում է 12,3 լիտր), 481 փուք բամբակ (1 փուքը կազմում է 16,38 կգ), 208,5 փուք հացահատիկի բերք, 101 ընտանի կենդանիներ, 137.200 տնային իրեր, 675.600 դրամական միավոր գումար (դրամի անվանումը նշված չէ)։ Անդ։ Անդրադառնալով հայերի դեմ թաթարներից ստացված մի շարք բողոքներին՝ Այգենմանը սեպտեմբերի 13-ին գրում էր, թե, ըստ այդ բողոքների, այնտեղ, որտեղ հայերը գերակշռություն ունեին, բռնություններ էին իրականացնում մուսուլմանների դեմ, մինչդեռ, եթե թաթարների կողմից իրագործված հայերի կոտորածներն իրեն բավականաչափ հայտնի էին, ապա նույնը հնարավոր չէր ասել հայերի կողմից իրագործված թաթարների կոտորածների մասին։ Անդ, հավելված 8։ Ի դեպ, Այգենմանի մեկ այլ վկայության համաձայն, Պարսկաստանում մեծ վրդովմունք էր առաջացրել այն հանգամանքը, որ թուրքիան արևելյան անդրկովկասյան հանրապետությունը կոչել է Ադրբեջան, որպեսզի «կարողանա այդ կերպ պարսկական Ադրբեջանի հանդեպ պահանջ ներկայացնել։ Պարսկաստանում զայրույթն առանձնապես մեծ է այն պատճառով, քանի որ պարսիկներն ամենևին բարեկամ չեն թաթարներին»։ Անդ, հավելված 7։ Ֆոն Կրեսը սեպտեմբերի 9-ին թվագրված՝ Այգենմանի վեռոնշյալ տեղեկագիրը հավելվածների հետ միասին կանցլերին ուղարկեց հոկտեմբերի 30-ին՝ այն օրը, երբ թուրքիան ստորագրեց զինադադարը, և երբ Ֆոն Կրեսը արխիվավորման նպատակով պետք է Բեռլին ուղարկեր իր մոտ գտնվող բոլոր փաստաթղթերը։

<sup>1</sup> Deutschland und Armenien 1914-1918..., էջ 435:

հահատվածում, իսկ երեքը Երևանի կայարանում հոգեվարքի մեջ էին և փաստորեն նույն օրն էլ մահացել են: Նրանց մի զգալի մասը այնպես թույլ էին, որ գնացքի վագոնից մեծ դժվարությամբ դուրս եկան և անմիջապես ստիպված էին դարձյալ գետնին մեկնվել: Նրանք պնդում էին, որ Էրզրումից մեկնելու ժամանակ իրենց նույնիսկ մի կտոր հաց չեն տվել: Երեկ տեղ հասած երկրորդ խումբը պետք է նույն պատկերն ունեցած լինի: Այդ խմբից նույնպես մի քանի մարդ մահացել են»<sup>1</sup>:

Ինչևէ, եթե Գերմանիան գարնանը և ամռանը սկզբունքորեն հանդես էր գալիս Բրեստի պայմանագրով նախատեսված սահմանները ճանաչելու պահանջով, բայց, իրեն հարկադրված համարելով «զսպվածություն» հանդես բերել, ոչինչ չէր ձեռնարկում թուրքիային դեպի այդ սահմանները ետ մղելու համար, ապա սեպտեմբերը նշանավորվեց նոր զարգացումներով, որոնք փաստեցին, որ Գերմանիան բնավ էլ մտադիր չէր անվերջ հանդուրժել Կովկասում գերիշխանության հասնելու՝ թուրքական նկրտումները:

4. Պոլսում նախատեսված համաժողովը շարունակում էր հետաձգվել, և մինչև դրա հրավիրումը վճռվեց Բեռլինում կազմակերպել բանակցություններ վիճելի հարցերը սկզբնապես դաշնակիցների միջև համաձայնեցնելու համար: Մինչ բանակցությունների սկսումը, սակայն, Թուրքիան հարկադրված էր հաշվի նստել այն փաստի հետ, որ Գերմանիան Կովկասին վերաբերող խնդիրների լուծման հարցում կողմնակից էր նաև Ռուսաստանի հետ սերտ համագործակցությանը և դեռ օգոստոսին այդ առնչությամբ Ռուսաստանի հետ մի պայմանագիր էր ստորագրել<sup>2</sup>: Ընդ որում դա կնքվել էր՝ որպես «լրացուցիչ պայմանագիր», այսինքն՝ չէր հակասելու Բրեստի պայմանագրին, որը շարունակում էր ուժի մեջ մնալ:

Այդ լրացուցիչ պայմանագիրը, որի պատճենը Բեռլինում Ռուսաստանի դեսպան Յոնքեն սեպտեմբերի սկզբին հանձնել էր Դ. Օհանջանյանին, ինչպես Օհանջանյանն էր սեպտեմբերի 5-ին Վիեննայից տեղեկացնում 4. Պոլսի պատվիրակությանը, պարունակում էր մասնավորապես հետևյալ առավել առանցքային դրույթները. երաշխավորվում էր Ռուսաստանի համար Բաքվի «ապահովությունը»: Ռուսաստանը

չպետք է բողոքեր Գերմանիայի կողմից Վրաստանի անկախության ճանաչման դեմ, բայց դա չէր նշանակում, թե Ռուսաստանն ընդունում էր Վրաստանի անկախությունը: Գերմանիան չպետք է պահանջեր կամ նպաստեր այն բանին, որ Ռուսաստանի մի որևէ «այլ մաս» անկախանա, բայց դա չէր նշանակում, թե մեկ ուրիշ պետություն կամ հենց Ռուսաստանը չէր կարող ճանաչել «մի նոր մասի» անկախությունը: Պայմանագրի Բաքվին վերաբերող մասում նշվում էր, որ այն պետք է մինչև իսկ զենքի ուժով պաշտպանվեր թուրքերից: Երբ ռուսական կողմը միջոցներ ձեռնարկեր թուրքերին Բրեստի սահմաններից այն կողմ քշելու համար, Գերմանիան չպետք է օգներ թուրքիային և նույնիսկ պետք է դիվանագիտական ճանապարհով օգներ Ռուսաստանին Բրեստի պայմանագիրն իրագործելու հարցում<sup>3</sup>:

Ինչպես տեղեկացնում էր Արշակ Ջուրաբյանը Բեռլինից օգոստոսի 8-ին ԴԴ կառավարությանն ուղարկած իր հեռագրում, Թալեաթը, որը վերոնշյալ բանակցություններին մասնակցելու համար օգոստոսին մեկնել էր Բեռլին, տեղեկանալով, առանց Թուրքիայի գիտության, նման պայմանագրի կնքման մասին, այն աստիճան էր «վիրավորվել», որ «քիչ էր մնում նույն թուրքերին վերադառնալու Պոլիս»<sup>2</sup>:

Թալեաթի «վիրավորվածությունը», անշուշտ, պարզաբանման կարիք չունի, քանի որ Ռուսաստանի մուտքը Կովկաս առաջին հերթին պետք է պարտադրեր Բրեստի պայմանագրի իրագործումը: Ինչ վերաբերում էր լրացուցիչ պայմանագրին, ապա Ա. Ջուրաբյանն իր նույն հեռագրում փորձում էր պարզաբանել նաև այն հանգամանքները, որոնք Գերմանիային դրդել էին այդ քայլին<sup>3</sup>: Ջուրաբյանի եզրահանգումներն,

<sup>1</sup> Տե՛ս անդ, գ. 11, ք. 7-8: Օգոստոսի 8-ին Բեռլինի հայկական պատվիրակությունը մի հուշագիր ուղարկեց Մոսկվա՝ ժողկոմխորհին՝ բողոքելով ռուս-գերմանական լրացուցիչ պայմանագրի այն կետերի դեմ, որոնցով Հայաստանն, ի տարբերություն Վրաստանի, զրկվելու էր անկախությունից: Տե՛ս անդ, գ. 1, գ. 80, ք. 15-16:

<sup>2</sup> Անդ, գ. 2, գ. 15, ք. 3:

<sup>3</sup> Անդ, ք. 2-3: Ա. Ջուրաբյանը Ռուսաստանի հետ Գերմանիայի համագործակցության ձգտումը փորձում էր բացատրել հետևյալ կերպ. մինչդեռ Ռուսաստանը սկզբունքորեն դեմ էր հայերի, վրացիների և թաթարների անկախությանը, Գերմանիան շահագրգռված էր արևմտյան Սնդրկովկասի անկախության հարցում, որովհետև այդ դեպքում նրա համար հեշտ կլինեին, Բաթումի նավահանգստից զատ, որը մնալու էր Թուրքիային, մեկ այլ նավահանգիստ ձեռք բե-

<sup>1</sup> Տե՛ս Revidierte Lepsius-Edition..., 1918-10-30-DE-002-V փաստաթուղթը (հավելված 3):

<sup>2</sup> ԴԴ ԱԱ, ֆ. 200, գ. 2, գ. 15, ք. 1:

անշուշտ, միանգամայն իրատեսական են: Ավելացնենք, սակայն, ևս մեկ համագամանք, ինչը նա այդ օրերին չէր կարող նկատի առնել: Երբ գերմանական բանակի՝ 1918 թ. մարտի 21-ին ձեռնարկած վերջին վճռական հարձակումը ձախողվեց, իսկ հուլիսի 18-ին Անտանտի բանակներն անցան ուժգին հակահարձակման<sup>1</sup>, պատերազմի ելքն ու Գերմանիայի պարտությունն արդեն կանխորոշված էին: Մինչև սեպտեմբերի վերջը այդ փաստը գիտակցում էին միայն առանձին մարդիկ, այն է՝ կայսրը, գերմանական բանակի գլխավոր հրամանատար Պ. ֆոն Զինդենբուրգը, գլխավոր շտաբի պետ Է. Լոդենդորֆը, կանցլեր Զերտլինգը և պետքարտուղար Պ. ֆոն Զինթցեն: Ուստի՝ Ռուսաստանի հետ համագործակցության Գերմանիայի ծգտումը պետք է դիտարկվի այս քաղա-

րել և թուրքիայից այդ առումով կախում չունենալ: Այդ նավահանգիստը, Ջուրաբյանի կարծիքով, հարակից տարածքի հետ միասին կապահովեր Գերմանիայի «թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական շահերը»՝ ստեղծելով պայմաններ «Սիբիրից, թուրքեստանից և Կովկասից» ապրանքներ ներմուծելու և արտահանելու համար, մինչդեռ Զայաստանում և Ադրբեջանում թուրքիայի տիրապետության հաստատման դեպքում Գերմանիան կորցնում էր Անդրկովկասում իր տնտեսական անկախությունը, այլ կերպ ասած, գերմանական ապրանքների «ներմուծման և արտահանման տրանզիտի գործերը»՝ ամբողջովին կախման մեջ էին ընկնում թուրքիայից, ինչը անընդունելի էր Գերմանիայի համար: Այդ պատճառով և, ըստ Ջուրաբյանի, Գերմանիան սկսեց հող պատրաստել լրացուցիչ պայմանագրի համար: Ջուրաբյանը նշում էր, որ Գերմանիայի համար Ադրբեջանի, ուրեմն և Զայաստանի (քանի որ նրանք «աշխարհագրապես մի մարմին են կազմում») անկախությունը վտանգավոր էր, որովհետև Ադրբեջանի անկախությունը կնշանակեր «իրավաբանական սանկցիա այն տիրապետությանը, որ ուզում է Տաճկաստանը տարածել Արևելյան Անդրկովկասում»: Ուստի՝ Գերմանիան, որն ապահովագրել էր Վրաստանում իր գերակա ազդեցությունը, նախընտրում էր Զայաստանը և Ադրբեջանը տեսնել Ռուսաստանի կազմում, որը սկզբունքորեն դեմ էր նրանց անկախությանը: Ըստ այդմ՝ Ջուրաբյանը գտնում էր, որ Զայաստանի անկախության հարցը «ասպարեզից հանված է», և մնում էր անենազխավոր խնդրի, այն է՝ Բրեստի պայմանագրի իրագործման հարցը: Անդ:

<sup>1</sup> Նրանց լայնածավալ գրոհի ընթացքում գերմանական բանակը ստիպված էր շարունակ նահանջել, իսկ օգոստոսի 8-ին, երբ Անտանտի բանակը Ամիենսի մոտ ճեղքեց ճակատը, Գերմանիայի դրությունը կատարելապես անհուսալի դարձավ: Sten Informationen zur politischen Bildung, Überarbeitete Neuauflage, München, 2003, էջ 3:

քական իրադրության համատեքստում: Նախ՝ Ռուսաստանի ներգրավման դեպքում կամ դրա հեռանկարով Գերմանիան շատ ավելի դյուրին կերպով, առանց կոշտ ճնշում գործադրելու, կկարողանար թուրքիային պարտադրել Բրեստի պայմանագրով գծված սահմանանների ճանաչումը: Բացի այդ, թուրքիային Կովկասից ետ մղելով, Գերմանիան ակնկալում էր նվազեցնել նաև Զայոց ցեղասպանության հարցում սեփական պատասխանատվությունը և հիմքեր ձեռք բերել՝ զինադադարից հետո անխուսափելի դարձող մեղսակցության մեղադրանքներին հակազդելու համար: Եվ, վերջապես, Անտանտի հակառակորդ, բայց միաժամանակ պատերազմից դուրս եկած Ռուսաստանի կազմում գտնվող կովկասյան երկրամասը պատերազմից հետո Գերմանիայի համար շատ ավելի մատչելի կլիներ, քան եթե դրա ճակատագիրը վճռեին Անտանտի տերությունները, առավել ևս, որ վերոնշյալ լրացուցիչ պայմանագրում Գերմանիան դրա համար (օրինակ, Վրաստանի դեպքում) որոշակի երաշխիքներ էր ստեղծել:

Ինչևէ, անկասկած, այդ լրացուցիչ պայմանագրի առկայությունն էր պատճառը, որ Թալեաթը Բեռլինում այլևս որևէ առարկություն հանդես չբերեց Բրեստի պայմանագրով նախատեսված սահմանները ճանաչելու հարցում: Բանակցություններից առաջ, օգոստոսի 29-ին, Զ. Օհանջանյանը և Ա. Ջուրաբյանը հանդիպում են արտգործնախարարի օգնական Գյոպերտին, որը հույս է հայտնում, որ Բրեստի սահմանների վերակազմումը և հայ փախստականների վերադարձի խնդիրը, ինչը նույնպես «իրենց շատ է զբաղեցնում», դրականորեն կլուծվեն: Նա նաև խոստանում է Գերմանիայի աջակցությունը՝ Ավստրո-Յունգարիայի կողմից Զայաստանի հովանավորությունն ընդունելու և այնտեղ ավստրո-հունգարական զորք ուղարկելու հարցում<sup>1</sup>:

Այդ օրերին Կ. Պոլսում գտնվող ավստրիական զինվորական կցորդը այնտեղի հայկական պատվիրակությանը տեղեկացրել էր, որ Ավստրիայի արտգործնախարար կոմս Բուրյանը ԶԳ ներկայացուցիչներին հրավիրում էր Վիեննա՝ խնդրին ծանոթանալու և այդ մասին բանակցելու համար<sup>2</sup>: Կ. Պոլսի պատվիրակությունն իր հերթին հեռագրում է Բեռլինի պատվիրակությանը՝ հրահանգելով անհապաղ մեկնել Վիեննա: Զ. Օհանջանյանը սկզբում դեմ էր մեկնելուն՝ գտնելով, որ թուրքիայի

<sup>1</sup> ԶԳ ԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 11, թ. 43:

<sup>2</sup> Տե՛ս անդ, թ. 25:

հետ մոտալուտ բանակցությունների սկսման պարագայում իր ներկայությունը Բեռլինում ավելի կարևոր էր, բայց հարկադրված էր տեղի տալ<sup>1</sup>: Ա. Ջուրաբյանը մնում է Բեռլինում, իսկ Յ. Օհանջանյանը սեպտեմբերի 3-ին Ջեյմս Գրինֆիլդի հետ մեկնում է Վիեննա, և, հաջորդ օրը հասնելով այնտեղ, անմիջապես մի հուշագիր է առաքում Բուրյանին: Այնուհետև նրանք մինչև սեպտեմբերի 14-ը զուր կերպով սպասում են արտգործնախարարի հետ տեսակցությանը, ինչն այդպես էլ չի հաջողվում<sup>2</sup>:

Սեպտեմբերի 4-ին Բեռլինից Վիեննա է գալիս նաև Թալեաթը, որն այնտեղ մնում է մեկ ու կես օր և ամսի 6-ին դարձյալ մեկնում է Բեռլին, որտեղ սեպտեմբերի 8-ից սկսվելու էին բանակցությունները<sup>3</sup>: Թալեաթի գալու շարժառիթների և նրա «ունեցած խոսակցությունների» մասին տեղեկանալու համար Օհանջանյանը և Գրինֆիլդը հանդիպում են արտգործնախարարի՝ հայկական խնդիրներով զբաղվող օգնական կոմս Ամբռոզիին, որը նրանց տեղեկացնում է, որ «Թալեաթ փաշան յուր դիրքը դեպի հայերը այնքան հիմնովին է փոխել, որ իրենք նույնիսկ չեն հավատում, որ այդքան ռադիկալ կարողանար փոխվել Տաճկաստանի քաղաքականությունը», ու հարկ են համարում զգուշությամբ վերաբերվել Թալեաթի կատարած հայտարարություններին<sup>4</sup>:

Ըստ Ամբռոզիի՝ Թալեաթը հաղորդել էր, որ Թուրքիան պատրաստ էր բավարարվել Բրեստի պայմանագրում նշված սահմաններով, միայն թե նրան ազատություն տրվեր գործել և իր ազդեցությունն ընդլայնել Ադրբեջանում: Ղարաբաղի մասին ասել էր, որ «այնտեղ տեղացի թուրքերը սար են բարձրանում, և այդ պատճառով անհնար է տալ այդ երկիրը Ղայաստանին»<sup>5</sup>: Թե ինչպես կկարգավորվեր ամբողջ խնդիրը, Ամբռոզիի մատնանշմամբ, դեռ հնարավոր չէր պարզորոշ կանխատեսել, քանի որ դա վճռվելու էր բեռլինյան բանակցություններով<sup>6</sup>:

<sup>1</sup> Տե՛ս անդ, ք. 46: Կ. Պոլսից հաղորդվում էր, որ Օհանջանյանը Վիեննայում մնալու էր մոտ մեկ շաբաթ, որից հետո կարող էր վերադառնալ Բեռլին և «հասնել բանակցություններին»: Անդ:

<sup>2</sup> Տե՛ս անդ, ք. 25:

<sup>3</sup> Անդ, ք. 14, 46:

<sup>4</sup> Անդ, ք. 14:

<sup>5</sup> Տե՛ս անդ, ք. 14

<sup>6</sup> Անդ:

Երբ հայ պատվիրակները փորձում են նույն հանդիպման ժամանակ Ամբռոզիից պարզաբանում ստանալ Ղայաստանի համար ավստրո-հունգարական հովանավորությունը ձեռք բերելու հարցի վերաբերյալ, նրանց պարզ է դառնում, որ Ավստրո-Յունգարիան դրանում բնավ չահագրգռված չէր: Ամբռոզին չի թաքցնում, որ Գերմանիան էր Ավստրո-Յունգարիային առաջարկել ստանձնել Ղայաստանի հովանավորությունը, բայց և հայտնում է, որ երբ Գերմանիայի առաջարկը նախնական քննարկման էր ենթարկվում ավստրո-հունգարական կառավարության կողմից, վերջինս հանգել էր մտքին, որ «բոլորովին կարիք չկա Կովկասը բաժանել մասերի, ազդեցության սֆերաների, մանավանդ, որ Գերմանիային ընկնում է ավելի թեթև և ոչ պատասխանատու և միաժամանակ ավելի օգտավետ, հարուստ արտադրության առարկաներով երկիր՝ Վրաստանը, իսկ Ավստրիային՝ ավելի կնճռոտ, բարդություններով լի (ազգամիջյան թշնամություններ և այլն) և միևնույն ժամանակ ավելի աղքատ (գոնե ներկայումս) արտադրության առարկաներով մի երկիր՝ Ղայաստանը»<sup>1</sup>: Այդ պատճառով, ինչպես նշել էր Ամբռոզին, Ավստրիան պնդում էր, որ Գերմանիան և Ավստրիան միասին ստանձնեն Ղայաստանին օգնելու և հովանավորելու գործը<sup>2</sup>:

Ամբռոզին զրույցի ժամանակ անդրադառնում է նաև այն «անախորժ ազդեցությանը», որ Ավստրիայի համար ունեցել էր գերմանա-ռուսական լրացուցիչ պայմանագիրը, որով մերժվում էր Ռուսաստանի կազմում գտնվող երկրներից անկախ պետություններ կազմելու գաղափարը: Ըստ Ամբռոզիի՝ իրենք տեղյակ էին, որ Գերմանիայի և Ռուսաստանի միջև բանակցություններ էին ընթանում, որոնց իրենք չէին մասնակցում, և իրենց համար անսպասելի էր, որ այդ բանակցությունների արդյունքում «կարող են այդպիսի կարևոր որոշումներ ընդունվել»<sup>3</sup>:

Ինչ վերաբերում էր, մասնավորապես, Ղայաստան ավստրո-հունգարական գործ ուղարկելու հարցին, ապա Ամբռոզին դա համարում էր դժվար լուծելի, քանի որ Ավստրիան նույնպես ներկայումս գորքերի մեծ կարիք ուներ, առավել ևս, որ Իտալիայի կողմից նոր հարձակում էր սպասվում: Ըստ նրա՝ երբ ի հայտ էր գալիս սեփական հայրենիքը

<sup>1</sup> ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 11, ք. 15-16:

<sup>2</sup> Տե՛ս անդ, ք. 16:

<sup>3</sup> Տե՛ս անդ, ք. 15:

պաշտպանելու խնդիր, նույնիսկ 1-2 հազար զինվորներն էլ մեծ նշանակություն ունեին: Ամբռնողի կարծիքով՝ Հայաստանում հյուպատոսի կամ թեկուզ ոչ պաշտոնական դիվանագիտական ներկայացուցչի նշանակումը կարող էր նույն «մորթալ» ազդեցությունն ունենալ, ինչ զորքի ներկայությունը: Նրա տեսակետը, սակայն, առարկության է հանդիպում պատվիրակների կողմից<sup>1</sup>:

Ի վերջո սեպտեմբերի 14-ին պատվիրակները կոմս Ամբռնողից մի նամակով տեղեկանում են, որ Բուրյանը մոտ ապագայում չէր կարող նրանց ընդունել և նույնիսկ հնարավորություն չուներ ասելու, թե երբ կընդունի, ուստի նրանց առաջարկում էր, որ հանդիպեին իր առաջին օգնական Ֆոն Ֆլոտովի հետ: Նույն օրը ևեթ նրանց ընդունում է Ֆլոտովը, որի հետ տեսակցությունը որևէ արդյունք չի տալիս: «Մեր հարցերից ոչ մեկին պատասխան չտվեց, – այդ առնչությամբ գրում էր Հ. Օհանջանյանը ՀՀ կառավարությանն ուղղված իր՝ սեպտեմբերի 15-ի հեռագրում, – ասելով, որ դեռ իրենց համար խնդիրը պարզ չէ, և որ այդ խնդիրը հիմա քննվում է Բեռլինում, ուր հավաքվել են Թալեսթ փաշան, իրենց դեսպան Պալափիչինին և այլն, և այնտեղ կպարզվի: Երևում էր, որ այդ ընդունելությունը միայն քաղաքավարության համար են անում, քանի որ մենք եկել ենք...: Վաղը, մյուս օրը վերադառնում ենք Բեռլին, ուր, ինչպես երևում է, ավելի կարևոր է լինելը, որովհետև այնտեղ են լուծվելու մեր խնդիրները»<sup>2</sup>:

Հ. Օհանջանյանը դեռ սեպտեմբերի 9-ին Կ. Պոլսի պատվիրակությանը հեռագրում էր, որ իրենց՝ Վիեննա մեկնելը, երբ Բեռլինում սկսվում էին նման կարևոր բանակցություններ, սխալ էր: «Կարծեմ, որ մենք սխալ արինք՝ այս օրերին գալով այստեղ, – գրում էր նա, – քանի որ Բեռլին լինելու էին այդ բանակցությունները: Այդպես էլ մենք ձեզ հեռագրեցինք, բայց դուք մեզ չպատասխանեցիք: Մենք ստիպված շտապեցինք գալ և զուր տեղը մի շաբաթ կորցնել»<sup>3</sup>:

Այնուամենայնիվ, նրանք որոշում են, մինչև վերադառնալը, տեսակցել ավստրո-հունգարական բանակի գլխավոր հրամատար Ասսի հետ՝ հույս ունենալով, որ նա ավելի որոշակի ըմբռնում կցուցաբերեր հայկա-

կան ցանկությունների հանդեպ<sup>1</sup>: Նրանք նախ հանդիպում են վերջինիս ենթակային ավագ լեյտենանտ Սազերհոֆերին, իսկ սեպտեմբերի 15-ին՝ Ասսին, որը, սակայն, նույնպես միայն խուսափողական մոտեցում է ցուցաբերում: «Նրա պատասխանը եղավ, – գրում էր Օհանջանյանը սեպտեմբերի 16-ին Կ. Պոլսի իր գործընկերներին ուղղված հեռագրում, – որ նա, իհարկե, մենակ այդ խնդիրը որոշել չի կարող, կզեկուցի կայսրին և կբանակցի արտաքին գործոց նախարարի հետ»<sup>2</sup>:

Ամբռնողին, որն, ի դեպ, ազգությամբ հունգար էր, պատվիրակներին խորհուրդ էր տվել Վիեննայից մեկնել Հունգարիա և տեսակցել այդ երկրի ղեկավարի դր. Վեկերլեի, ինչպես նաև հունգարաբնակ մի շարք ազդեցիկ հայերի հետ<sup>3</sup>: Օհանջանյանն ու Գրինֆիլդը որոշել էին այդպես վարվել, բայց Կ. Պոլսի պատվիրակությունը, նկատի ունենալով Բեռլինում սկսված բանակցությունները, սեպտեմբերի 13-ին ուղարկված հեռագրով նրանց հանձնարարել էր «Բուրյանի հետ տեսակցելուց հետո» անմիջապես մեկնել Բեռլին<sup>4</sup>: Քանի որ այդ տեսակցությունն այդպես էլ չկայացավ, պատվիրակները ստիպված էին սեպտեմբերի 16-ին ձեռնունայն վերադառնալ Բեռլին<sup>5</sup>:

Մինչ բանակցագործընթացին անդրադառնալը՝ հարկ է նշել, որ նույնիսկ այդ պատասխանատու և կարևոր իրադրությունում, երբ Ռուսաստանը դարձյալ մուտք էր գործում տարածաշրջան, հայկական կողմը

<sup>1</sup> Տե՛ս անդ, թ. 16: «Զինվորականները, – գրում էր Օհանջանյանը սեպտեմբերի 15-ի իր վերոնշյալ հեռագրում, – ավելի ուշադրություն են դարձնում մեր խնդրի վրա, և կարելի է՝ հաջողվի նրանց համոզել մի բան անել մեզ համար»: Տե՛ս անդ, թ. 26: Միաժամանակ տեղեկացնելով, որ Բուրյանը սեպտեմբերի 15-ին պաշտոնական նույնպիսի դիմել էր բոլոր պատերազմող պետություններին և առաջարկել, նույնիսկ առանց դադարեցնելու պատերազմական գործողությունները, մի չեզոք վայրում բանակցություններ սկսել հաշտության պայմանների շուրջ, Օհանջանյանը նույն հեռագրում Հայոց ազգային խորհրդին և կառավարությանը կոչ էր անում պատրաստ լինել բանակցություններին մասնակցելու համար: Անդ:

<sup>2</sup> Տե՛ս անդ, թ. 30:

<sup>3</sup> Անդ, թ. 24, 49:

<sup>4</sup> Տե՛ս անդ, թ. 49:

<sup>5</sup> Վերադարձի օրը նրանք հանդիպեցին Վիեննայում Հռոմի Պապի ներկայացուցչին, նրան հանձնեցին իրենց մոտ եղած որոշ նյութեր և խնդրեցին, որ Պապը քայլեր ձեռնարկի հօգուտ հայ ժողովրդի: Տե՛ս անդ, թ. 53:

<sup>1</sup> Տե՛ս անդ, թ. 16:

<sup>2</sup> Տե՛ս անդ, թ. 25-26, 30:

<sup>3</sup> Տե՛ս անդ, թ. 14-15:

կան այն ներկայացնող գործիչները բոլոր հարցերում չէ, որ միասնական դիրքորոշում և գործելակերպ էին որդեգրել: Յ. Օհանջանյանն, օրինակ, Ռուսաստանի հետ փոխհարաբերություններում իր պատվիրակության առաջնահերթ խնդիրը համարում էր անկախության երաշխավորումն ու պահպանումը, իսկ Ա. Ջուրաբյանը, թերևս, առավել իրատեսություն ցուցաբերելով, պնդում էր, որ իրենց առաջնահերթ նպատակը պետք է լիներ Բրեստի պայմանագրով գծված սահմանների վերականգնումը:

Ինչպես նշում էր Օհանջանյանը Կ. Պոլսի պատվիրակությանն ուղղված իր՝ սեպտեմբերի 9-ի հեռագրում, այդ իսկ պատճառով Բեռլինում Ռուսաստանի դեսպան Յոժֆեն իրենցից տարբեր բաներ էր լսում: Օհանջանյանը ենթադրում էր, որ Մոսկվայում գտնվող Ջավրիկը նույնպես այնտեղ հավանաբար այլ ուղղությամբ է աշխատել, և անհրաժեշտ էր համարում, որ այդ հարցի շուրջ քաղաքականությունը լիներ միատեսակ և ղեկավարվեր ՅՅ արտգործնախարարության միատեսակ ցուցումներով<sup>1</sup>:

Ա. Ահարոնյանն իր հերթին ՅՅ կառավարությանը գրում էր հետևյալը. «Ա. Ջուրաբյանը տարբեր տեսակետ ունի այդ (անկախության – Ա. Յ.) խնդրի մասին և որոշ չափով դեմ է, որ մենք առանձնապես պնդենք մեր անկախության վրա: Օգոստոսի 30-ին Բեռլինից ստացել ենք Ջուրաբյանի նամակը, որտեղ նա ապացուցում է, որ վերջին ստորագրած ռուս-գերմանական լրացուցիչ պայմանագիրն, որով ընդունվում է միայն Վրաստանի անկախությունը, և Չայաստանը ու Ադրբեջանը մնում են Ռուսաստանի սահմաններում, և որով սերտ կապեր են հաստատվում Ռուսաստանի և Գերմանիայի միջև, մեզ՝ հայերիս համար էլ նպաստավոր է, որովհետև Թուրքիան դրանով ավելի թուլանում է, Բրեստի սահմանները վերականգնում են, և հայերիս համար ապագայում ավելի լավ պերսպեկտիվներ են բացվում: ...Որոշվեց և հանձնարարվեց Ալ. Խատիսյանին գրել Ջուրաբյանին մանրամասն նամակ և, իբրև արտաքին գործոց մինիստր, նրան ցույց տալ իր սխալ հայեցակետը և ընթացքը»<sup>2</sup>:

Ջուրաբյանի հայեցակետը ստեղծված իրադրությունում, թերևս, բնավ էլ սխալ չէր, այլ ավելի շուտ՝ միանգամայն իրատեսական, քանի

<sup>1</sup> Տե՛ս անդ, թ. 14:

<sup>2</sup> Անդ, թ. 45-46:

որ նա հասու էր այն հանգամանքին, որ Ռուսաստանի աշխարհաքաղաքական ձգտումներում Բրեստի պայմանագրով գծված սահմանների հաստատումը և Չայաստանի անկախությունը, ինչպես վկայում էր նաև լրացուցիչ պայմանագիրը, անհամատեղելի էին, իսկ Թուրքիան կարող էր օգտվել այդ հանգամանքից: «Այստեղ բոլորեքյանը, թե՛ դիպլոմատները և թե՛ քաղաքական կուսակցությունները այն կարծիքին են, – նշում էր Ջուրաբյանն իր վերոնշյալ նամակում, – որ Բրեստի պայմանագիրը, անշուշտ, կիրագործվի, որ կարելի է տաճիկներին համոզել: Գուցե դա այդպես լինի, սակայն ենթադրում են, որ Տաճկաստանը, կորցնելով Բաքուն, ...պարտություն կրելով իր կովկասյան քաղաքականության մեջ, կպահանջի որոշ կոմպենսացիա, և ես վախենում եմ՝ միգուցե այդ կոմպենսացիան լինի Չայաստանի հաշվով: Այս թուպեխ մենք աշխատում ենք այն ուղղությամբ, որ Բրեստի պայմանագիրն անպայման իրագործվի»<sup>1</sup>:

Ջուրաբյանը սեպտեմբերի 11-ին ուղարկված մեկ այլ նամակով նույնպես փորձում էր դա ըմբռնելի դարձնել Կ. Պոլսի հայկական պատվիրակությանը, ինչը, սակայն, նրան ակներևաբար չէր հաջողվել: «Սեպտեմբերի 17-ին ստացանք Բեռլինից Ա. Ջուրաբյանի նամակը՝ գրված 11-ից, – նշված է Կ. Պոլսի հայկական պատվիրակության մի զեկուցագրում: – Նա մի շարք առարկություններ է բերում այն կուրսի դեմ, որ մենք (և այդ դեպքում, իհարկե, մեր կառավարության հրահանգով) բռնել ենք՝ պնդելով և ամեն կերպ պաշտպանելով Չայաստանի անկախությունը: Այդ գիծը նա գտնում է սխալ, ինչպես և որևէ անտանտի մեջ մտնելը Թուրքիայի հետ: ... Մի շարք առարկություններ բերելուց հետո Ջուրաբյանը եզրակացնում է, որ առաջին տեղը մենք պետք է տանք ոչ թե անկախության խնդրին կամ անտանտին, այլ Բրեստի պայմանագրի իրագործմանը: Մյուս խնդիրները պետք է թողնել (այդ թվում և անկախության վրա բոլորովին չպնդել), անտանտ չկապել, այլ մնալ չեզոք և բոլորի հետ էլ հավասար բարեկամ»<sup>2</sup>:

Ցավոք, լիովին բացակայում էր նաև համագործակցությունը ՅՅ կառավարության (բնականաբար նաև նրա պատվիրակությունների) և Մոսկվայում գտնվող Չայկական գործերի կոմիսարիատի միջև, որը, Կովկասում Ռուսաստանի քաղաքականության ակտիվացմանը զուգահեռ, ձգտում էր մեծացնել իր դերակատարումը Չայաստանին և հայե-

<sup>1</sup> Տե՛ս անդ, թ. 3:

<sup>2</sup> Անդ, թ. 51-52:

րին վերաբերող խնդիրների լուծման գործում<sup>1</sup>: Բեռլինում Ռուսաստանի դեսպան Յոֆեն սովորաբար ըմբռնում էր ցուցաբերում Բեռլինի հայկական պատվիրակության ցանկությունների հանդեպ և սկզբնական շրջանում սերտորեն համագործակցում էր նրա հետ: Օհանջանյանին դեռ նրա Վիեննա մեկնելուց առաջ Յոֆեն հայտնել էր, որ իրենք ամեն կերպ պետք է պաշտպանեն վրացիների և հայերի պահանջները<sup>2</sup>:

Օհանջանյանը Յոֆեի հետ հանդիպում է նաև սեպտեմբերի 17-ին Վիեննայից վերադառնալուց հետո<sup>3</sup>: Ինչպես նա նշում էր սեպտեմբերի 19-ին 4. Պոլսի հայկական պատվիրակությանն ուղարկած իր զեկուցագրում, Յոֆեն այդ հանդիպման ժամանակ նույնպես պաշտպանում էր այն տեսակետը, որ «մինչև Ռուսաստանի ուժեղանալը և ընդհանուր ռուսական կոնֆեդերացիա» կազմելը (որի մեջ կմտնեն բոլոր ազգերը) պետք է Հայաստանին տալ ազատություն, պայմանով, որ նրանք ապագայում մտնեն իրենց «Ֆեդերացիայի» մեջ և ներկայումս էլ չկազմեն դաշինք Թուրքիայի հետ Ռուսաստանի դեմ<sup>4</sup>:

Յոֆեն նկատի ուներ Բեռլինում Քյամիլ փաշայի՝ իրեն հայտնած այն տեղեկությունը, թե «իրենք հայերի հետ շատ լավ են և նույնիսկ դաշն են կապում»<sup>5</sup>: Ինչպես նշել էր Յոֆեն, այդպիսի պայմաններում Ռուսաստանը չէր կարող համաձայնել Հայաստանի անկախության հետ<sup>6</sup>: «ես, իհարկե, հերքեցի այդ տեղեկությունը, — նշում էր Հ. Օհանջանյանը, — բայց և բացատրեցի նրան, որ մեր դրությունը այնպես է, որ եթե մենք համաձայնության չգանք թուրքերի հետ, հաշտ չլինենք նրանց հետ,

<sup>1</sup> Տե՛ս անդ, թ. 56:

<sup>2</sup> Տե՛ս անդ, թ. 8:

<sup>3</sup> Հանդիպման սկզբում Յոֆեն նրան տեղեկացնում է թուրքերի կողմից Բաքվի գրավման մասին: Նա նաև հաղորդում է, որ ավելի վաղ գերմանացիների ձեռքը մի հեռագիր էր ընկել, որը նրանք կարողացել էին ապաթվայնացնել ու կարդալ: Դրանից պարզ էր դարձել, որ անգլիացիները Բաքվում ունեցել են 2.800 զինվորներ, և որ նրանք այնտեղ երեք գնդից բաղկացած դիվիզիաներ էին կազմում, ընդ որում՝ մեկ գունդը բաղկացած էր անգլիացի, իսկ մյուս երկուսը՝ հայ զինվորներից: Տեղեկացվում էր նաև, որ անգլիացիներն «արդեն սկսել են առևտրական պայմանագրեր կապել «Կասպիսկոյե» ընկերության և «Չերոմորո-Կասպիսկոյե» ընկերության հետ»: Տե՛ս անդ, թ. 56:

<sup>4</sup> Անդ:

<sup>5</sup> Անդ:

<sup>6</sup> Անդ:

բարեկամ չլինենք, նրանք, ունենալով մեզ շրջապատած երեք կողմից, կը կուլ տան մեզ հեշտությամբ, և իրենք՝ ռուսները, ոչ մի հնար չեն ունենա մեզ գալ օգնության: Մենք կարող ենք լինել բարեկամ թուրքերի հետ և միևնույն ժամանակ դաշն ունենալ Ռուսաստանի հետ: ... Վերջը ասաց նույնը, որ ինքը մնում է նույն կարծիքին, որ պետք է մեզ տալ ազատություն, և սպասում է Մոսկվայից պատասխանի»<sup>1</sup>:

Անկախության պահպանման նպատակով Թուրքիայի հետ դաշինքի կնքման հավանականությունը, որի մասին Թուրքիան վաղուց բարձրաձայնում էր, իսկ հայկական կողմը բարձր մակարդակով չէր հերքում, փաստորեն, լրջորեն անհանգստացնում էր ռուսական կողմին, քանի որ այդ դաշինքն ուղղված էր լինելու Ռուսաստանի դեմ, որը սկզբունքորեն դեմ էր իր կազմում գտնվող ազգություններին անկախություն տրամադրելուն:

Հայաստանի Հանրապետության հետ դաշինքի կնքման՝ թուրքական դիտավորությունն, անկասկած, ուներ հեռուն գնացող նպատակներ. թուրքական քաղաքականությանը դա առաջին հերթին անհրաժեշտ էր պանթուրքիզմի՝ իր գաղափարը կյանքի կոչելու համար: Ինչպես իրավամբ նշում է Հ. Ավետիսյանը, «որպես առաջին փուլ՝ թուրքերը ցանկանում էին կազմել կոնֆեդերացիա՝ «սրտակից դաշինք» Հայաստանի հետ, որը Թուրքիայի ղեկավարությամբ արևելյան մեծ ֆեդերացիայի ստեղծման առաջին քայլն էր: Նրա կազմում պետք է լինեին Թուրքիան, Հայաստանը, Ադրբեջանը, Հյուսիսային Կովկասը: Ըստ համաթուրքիզմի տեսաբանների՝ այդ ֆեդերացիան պետք է ճանաչեին ամբողջ Ամերիկան, ամբողջ Եվրոպան և նույնիսկ բոլշևիկները: Կովկասի Լեռնական ժողովուրդները ցանկանում էին միավորել Հյուսիսային և Հարավային Կովկասը՝ որպես հակառուսական պատմեշ: Թուրքիայի հետ «սրտակից դաշինք» կնքելու դեպքում Հայաստանը լրիվ կուլ էր գնալու Թուրքիային, կծուվեր նրա հետ: Այդպիսով կվերանար նաև Հյուսիսային և Հարավային Կովկասի միավորման միջև եղած հակահամաթուրանական սեպը»<sup>2</sup>:

Այդ օրերին, երբ ռուսական և գերմանական արտաքին քաղաքականությունը ձգտում էր Թուրքիային պարտադրել Բրեստի պայմանագրով գծված սահմանների ընդունումը, Բեռլինի պատվիրակությունը թերևս,

<sup>1</sup> Տե՛ս անդ, թ. 57:

<sup>2</sup> Ավետիսյան, Հ., Հայկական հարցը..., էջ 298:

պետք է գիտակցել թուրքական դիվանագիտության հեռահար նպատակները և առաջնահերթորեն պնդել Բրեստի պայմանագրի իրագործումը<sup>1</sup>: Մինչդեռ ինչպես Կ. Պոլսի պատվիրակությունը, Գ. Օհանջանյանը նույնպես հակված էր հետևելու Թուրքիայի հետ դաշինքի գաղափարին: Որքան էլ կարող է արտառոց թվալ, նա չէր սահմանափակվում միայն Գ անկախության պահպանման պահանջներով և Յոֆեի հետ ունեցած վերոնշյալ գրույցի ժամանակ մինչև իսկ առաջ է քաշում Ռուսաստանի կողմից Ադրբեջանի անկախության ճանաչման խնդիրը՝ փաստորեն բացահայտորեն պաշտպանելով Թուրքիայի շահերը: «Երբ հարց բարձրացրի Ադրբեջանի անկախության մասին, – նշում էր Օհանջանյանն իր վերոնշյալ զեկուցագրում, – (Յոֆեն – Ա. Գ.) շատ բուռն կերպով բողոքեց, առարկելով, թե հայերը, վրացիները, իբրև ժողովուրդներ, մոտ են ռուս ժողովրդին և երբեք հակառակ չեն եղել, իսկ թաթարները հակառակ են ռուս ժողովրդին, սրանց չի կարելի վստահել և այլն, ոչ սոցիալիստ են և ոչ բուլշևիկ, հատուկ առարկություններ: ...Կաշխատեմ նրան համոզել համաձայնվել և Ադրբեջանի անկախության»<sup>2</sup>:

Սեկնաբանությունները, թերևս, ավելորդ ենք: Ավելացնենք միայն, որ Գ. Օհանջանյանն, անկասկած, այդպես էր վարվում Կ. Պոլսի հայկական պատվիրակության և Գ Կառավարության գիտությամբ ու նաև ցուցումներով: Ավելին, Ջուրաբյանի՝ սեպտեմբերի 16-ի զեկուցագրից (որին քիչ հետ կանդիդատանք) և այլ տեղեկություններից որոշակիորեն պարզ է դառնում, որ այդ գործելակերպը համաձայնեցվել էր նաև թուրքական կառավարության հետ: Վերջինս Բրեստի պայմանագրի

<sup>1</sup> Երբ Օհանջանյանը Վիեննայից վերադառնալուց առաջ դարձյալ հանդիպեց Ամբոզգիին և գրույցի ընթացքում առաջ քաշեց Գ անկախության խնդիրը, վերջինս նրան խորհուրդ էր տալիս իրատես լինել՝ նշելով, որ «ձևական կողմը այդ խնդրի առանձին նշանակություն չունի, և հարկավոր չէ դրան շատ կարևորություն տալ: Պետք է իրատես լինել անկախ և հաստատ հիմունքների վրա, այն ատեն և ամբողջ աշխարհը ապագա խաղաղության կոնգրեսում կընդունի մեր անկախությունը»: Տե՛ս անդ, ք. 54: Երբ Օհանջանյանը նաև գեներալ Լոսովի մոտ էր բարձրացրել անկախության խնդիրը, վերջինս ասել էր հետևյալը. «Երբ տերիտորիա ունենաք, ինքներդ էլ կկարողանաք խնդիրը լուծել Ռուսաստանի հետ, քանի որ վերջինս լավ է տրամադրված դեպի Չեզ և կզիջի, ինչպես գիջեց վրացիներին: Դետո էլ մենք կընդունենք»: Տե՛ս անդ, ք. 58:

<sup>2</sup> Տե՛ս անդ, ք. 57:

իրագործումը ձախողելու համար ակնհայտորեն հայկական կողմին խոստացել էր Բեռլինի բանակցությունների ժամանակ հանդես գալ Գ անկախության պաշտպանությամբ, թերևս կատարել նաև տարածքային որևէ փոքրիկ զիջում<sup>1</sup>, իսկ դրան հայերի կողմից վճարվող զինը պետք է լիներ Բրեստի պայմանագրից հրաժարումը:

Այս իրավիճակում, ինքնին հասկանալի է, որ Մոսկվայի հայկական գործերի կոմիսարիատը Ավանեսովի ստորագրությամբ այդ օրերին Յոֆեին ուղարկված մի հեռագրում հայտարարում էր, որ «ոչ մի դաշնակցականի հետ հարաբերության մեջ չի մտնի և չի օգնի»՝ միաժամանակ պահանջելով, որ «Դայաստանի վերաբերյալ արտաքին խնդիրները ենթարկվեն (իրենց – Ա. Գ.) քննությանը»<sup>2</sup>:

Յոֆեն այդ հանգամանքներում սկսում է ընդգծված սառը վերաբերմունք ցուցաբերել Օհանջանյանին, ինչը վերջինս հակված էր բացատրել հայկական կոմիսարիատի ճնշմամբ<sup>3</sup>: Օհանջանյանի պատկերացմամբ՝ այդ կոմիսարիատը «ստեղծված է եղել միայն ներքին, տեղական հայկական խնդիրների համար և մինչև հիմա չէին խառնվում արտաքին գործերում», որոնք, ըստ նրա, վարում էին Չիչերինը և Յոֆեն: «Բայց, – շարունակում էր գրել Օհանջանյանը, – իմ համոզմունքն է, որ հիմա արդեն ոչինչ չի կարելի անել, քանի որ հայ բուլշևիկները քիթները խոթել են և արտաքին գործերի մեջ»<sup>4</sup>:

Կ. Պոլսում Ա. Ահարոնյանի ղեկավարած պատվիրակությունն իր հերթին Գերմանիայի և Թուրքիայի ներկայացուցիչների հետ հանդիպումների ժամանակ կարևոր նշանակություն ունեցող հարցերի առնչությամբ բավականին թույլ դիրքորոշում էր ցուցաբերում: Ինչպես արդեն նշվել է, անգամ դեսպան Բեռնշտորֆը նրանց «այն աստիճան

<sup>1</sup> Այդ մասին որոշակի կռահում կատարելու հնարավորություն է տալիս Ջուրաբյանի այն հաղորդումը, որ Թալեթաթը Բեռլին գալու հենց առաջին օրը ասել էր, որ Ալեքսանդրապոլը վերադարձնելու են հայերին, «քանի որ դա հայկական քաղաք է»: Տե՛ս անդ, ք. 51: Ջուրաբյանը նաև տեղեկացնում էր, որ «Թալեթաթի գալով Գերմանիայի արտաքին գործոց մինիստրության մեջ ամրացել է այն կարծիքը, թե հնարավոր է թուրքերին ստիպել հեռանալ մինչև Բրեստի գիծը»: Անդ:

<sup>2</sup> Տե՛ս անդ, ք. 56:

<sup>3</sup> Տե՛ս անդ, ք. 52:

<sup>4</sup> Տե՛ս անդ, ք. 56:

երկչոտ» էր համարում, որ «թուրքերի դիմաց նույնիսկ չեն համարձակվի շարժվել»<sup>1</sup>:

Այդ և վերոնշյալ մյուս իրողությունների համատեքստում պետք է դիտարկել այն հանգամանքը, որ Բեռլինում սկսված բանակցությունների ժամանակ Թալեաթը, մի կողմից, նոր իրավիճակի թելադրանքով համաձայն և պատրաստակամ էր Բրեստի պայմանագիրն իրագործելու հարցում, իսկ մյուս կողմից՝ շարունակում էր պաշտպանել Բաթումի պայմանագիրը՝ հայերի առնչությամբ իրեն ուղղված առարկություններին և պահանջներին ի պատասխան հայտարարելով, որ Թուրքիան հայերի հետ կապված որևէ չլուծված խնդիր չուներ: «Թողնք հայերին հանգիստ,– հայտարարում էր նա:– Մենք նրանց հետ շատ լավ հարաբերությունների մեջ ենք, և մենք ինքներս նրանց հետ կկարգավորենք մեր գործերը առանց ձեռք: Եթե դուք գերմանացիք, չմիջամտե՛ք, մենք հայերի հետ դեռ Բաթումում կվերջացնե՛ինք ամեն խնդիրներ»<sup>2</sup>:

Թալեաթի այդ երկդիմի կեցվածքի մասին սեպտեմբերի 17-ին, Բեռլին վերադառնալուց հետո, տեղեկանում է նաև Յ. Օհանջանյանը Չխենկելու միջոցով: «Չխենկելին ասաց,– այդ առթիվ գրում էր Օհանջանյանը 4. Պոլսի պատվիրակությանն ուղարկած իր գեկուցագրում,– որ Թալեաթ փաշան պնդում է Բրեստի դաշնագրի վրա և միևնույն ժամանակ ասում է բոլորին, թե հայերը գոհ են իրենց դրությունից, և որ իրենք հայերի հետ համաձայնության եկած են, կարիք չկա հիմա այստեղ այդ խնդիրը բարձրացնել: Բացի դրանից՝ Չխենկելին ասում էր, որ դաշնակիցների վրա շատ է ազդել Թալեաթ փաշայի հայտարարությունը, որ հայերը պահանջներ չունեն, և գտնում էր, որ հարկավոր է նրանց ներկայացուցիչների հետ խոսել»<sup>3</sup>:

<sup>1</sup> Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., էջ 552:

<sup>2</sup> Դա հաղորդել է Ջուրաբյանը՝ ըստ Չխենկելու տեղեկությունների, տե՛ս ԳԳ ԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 11, ք. 51:

<sup>3</sup> Տե՛ս անդ, ք. 54-55: Ի դեպ, Վրաստանի ներկայացուցիչ Չխենկելին բեռլինյան բանակցությունների շրջանում հայկական կողմի հանդեպ ուներ ընդգծված համագործակցական դիրքորոշում: Ըստ Յ. Օհանջանյանի՝ նա իրեն հավաստում էր, որ «շարունակում է ամեն տեղ պնդել, որ, առանց հայերին բավարարություն տալու, կովկասյան խնդիրը մնում է չլուծված, և որ իրենց՝ գերմանացիների շահը այդ պահանջում է, և որ եթե հիմա բան չարեցինք, հետո արդեն ուշ կլինի և այլն»: Օհանջանյանը նաև նշում է, որ եթե նախկինում Չխենկելին դեմ էր կոնֆեդերացիայի գաղափարին, ապա այժմ, երբ օրակարգում էր Բրես-

Այդ առումով խոսում է նաև Ա. Ջուրաբյանի՝ սեպտեմբերի 16-ին Կ. Պոլսի հայկական պատվիրակությանն ուղարկված գեկուցագիրը: Նա այնտեղ տեղեկացնում էր, որ բանակցությունները դեռ շարունակվում էին, և դրանց ընթացքն ու արդյունքները գաղտնի էին պահվում: Նա փորձել էր տեսակցել Բեռնշտորֆի հետ, բայց վերջինս նիստ ունենալու պատճառաբանությամբ խուսափել էր նրան հանդիպել:

Ըստ Ջուրաբյանի՝ Բեռնշտորֆը բանակցությունների ընթացքում ջանում էր, որ իրագործվեին Թուրքիայի բոլոր պահանջները: «Տարածաբանությունների գլխավոր կետը այս բուպեխ այն է,– շարունակում էր գրել Ջուրաբյանը,– թե որ պայմանագիրն է վավերացվում Բրեստի», թե՞ Բաթումի, թե՞ մի այլ պայմանագիր կմշակվի: Բերնշտորֆը, աշխատելով ի կատար ածել Տաճկաստանի պահանջները, պահանջում է, որ Բաթումի պայմանագիրը վավերացվի, և, իհարկե, չի զլանում այստեղ հարստահարել ձեր անունը: Իմ կարծիքով՝ անհրաժեշտ է, որ դուք այդտեղից վերջապես կտրուկ կերպով հայտարարեք, որ դուք ձեր պարտքն եք հաշվում պաշտպանել Բրեստի սահմանները: Դա անհրաժեշտ է, որով-

տի պայմանագրի վերահաստատման խնդիրը, Չխենկելին էր շարունակ այդ մասին խոսք բացում ասելով, որ եթե Բրեստի սահմանները տրվեին, Վրաստանն անմիջապես կնախաձեռներ հայերի հետ կոնֆեդերացիայի ստեղծումը: Տե՛ս անդ, ք. 6: Ուշագրավ է, որ կոնֆեդերացիայի գաղափարը պաշտպանելու հետ միաժամանակ վրացիները ստեղծում էին իրենց սեփական դրամային համակարգը: Դրանը կոչվում էր «մարչել» և հավասարազոր էր մարկին կամ շիլլինիզին: Գերմանիան Վրաստանին խոստացել էր տալ 30 միլիոն ոսկե մարկի փոխառություն 5 տոկոսով, և վրացիները մտադիր էին դա, «որպես պահեստ», դնել գերմանական բանկերից մեկում ստանալով 4 տոկոսի եկամուտ (այսինքն՝ տարեկան կորցնում էին միայն 1 տոկոս) և այդ ոսկու դիմաց թողարկել 250-300 միլիոն մարչել: Տե՛ս անդ, ք. 47: Ջուրաբյանն, ի դեպ, սեպտեմբերի 16-ին Կ. Պոլսի հայկական պատվիրակությանը տեղեկացնում էր, որ վրացիները և գերմանացիները ներկայում մեծ ուշադրություն էին դարձնում Բրեստի պայմանագրի այն կետին, որը վերաբերում էր հանրաքվեին: «Մի քանի օր սրանից առաջ,– շարունակում էր գրել նա,– Կովկաս մեկնեց աջարացիների պատվիրակությունը, որը նույն պահանջն է դնում: Համոզված եմ, որ ռեֆերենդումը ձայների մեծամասնությամբ կվճռի անցնել Վրաստան: Մեզ էլ հարկավոր է այդ ուղիով աշխատել»: Տե՛ս անդ, ք. 38: Ըստ Ջուրաբյանի հաղորդման՝ իրեն միաժամանակ «կոնֆեդեցիայի» կերպով հայտնի էր դարձել, որ Վրաստանը ձգտում էր հանրաքվեի միջոցով վերադարձնել նաև Բաթում քաղաքը և շրջանը: Տե՛ս անդ, ք. 51:

հետև թեև Բերնսդորֆը, իհարկե, սեպարատ կերպով չի անում նիստերին իր առաջարկությունները, այնուամենայնիվ նա բոլոր ժամանակ աշխատում է ազդել գերմանացիների վրա որոշ ուղղությամբ: Մեզ համար անհրաժեշտ է, իմ կարծիքով, պարզել, որ մենք, մեր դիրքով ձգտելով անկեղծ բարեկամական հարաբերություններ ստեղծել թուրքերի և, առհասարակ, մեր հարևանների հետ, միաժամանակ նեյտրալ դեր ենք ընդունում այս կոնֆլիկտում, որ զարգանում է Գերմանիայի և Տաճկաստանի միջև: Այդ տեսակետից ձեր պատվիրակության վրա խոշոր պարտականություններ են ընկնում: Իմ ձեռքերը այդ կողմից կապված են այն դիրքով, որը դուք ընդունել եք այդտեղ: Օրինակ, ես անհրաժեշտ էի համարում այս մոմենտին նոր նոտա հրապարակելու՝ պահանջելով Բրեստի սահմանների պահպանումը և Ղարսի նահանգի վերստանալը և ընթերցելու կազմելը, սակայն այդ բանը անկարելի եղավ, որովհետև Թալեաթը այստեղ հանդիսանում է բերան և ձեր կողմից»<sup>1</sup>:

Փաստորեն 4. Պոլսի հայկական պատվիրակությունը, և, բնականաբար, նաև ՀՀ կառավարությունը, առանց կշռադատելու Թուրքիայի հետ դաշինքի կնքման թուրքական պահանջի հեռահար վտանգները, գերադասում էին հանդես գալ դրա օգտին (դա համարելով միջոց Բաթումի պայմանագրի սահմաններով տրված անկախությունը պահպանելու համար), քան ձեռք բերել Բրեստի պայմանագրով գծված սահմանները և մտնել Ռուսաստանի դաշնության մեջ: Բրեստի պայմանագիրը ձախողելու նպատակով նրանց այդ դիրքորոշումը փորձում էր օգտագործել նաև Թալեաթը՝ պնդելով, թե հայերի հետ բոլոր հարցերում արդեն համաձայնության են եկել, և որ «նրանք գոհ են իրենց դրությունից»:

Հայկական կողմում այդ առումով, ինչպես նշվել է, հակառակ դիրքորոշումն ուներ Ա. Ջուրաբյանը: Նույն սեպտեմբերի 16-ի զեկուցագրում նա տեղեկացնում էր, որ ինքը տեսակցություն էր ունեցել Վաև Գերմանիայի արտգործնախարարության գաղտնի խորհրդակցական Գյոպերտի հետ՝ պնդելով, որ անպայման իրագործվի Բրեստի պայմանագիրը: Ջուրաբյանը նրան հայտնել էր, որ հայկական կողմը ոչ մի դեպքում չէր ճանաչելու Բաթումի ապօրինի պայմանագիրը, և որ Բրեստի սահմանները այն նվազագույն սահմաններն էին, որոնց շրջանակում հայերը կարող էին գոյատևել<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս անդ, թ. 36:

<sup>2</sup> Տե՛ս անդ, թ. 37:

Գյոպերտն իր հերթին համոզմունք էր հայտնել, որ բանակցությունները հայերի համար լավ վախճան էին ունենալու՝ նշելով, որ «Թալեաթը բավականին կակուղ է», և որ Գերմանիան խիստ պահանջներ է նրա առջև դրել, որոնց Թալեաթը դեռ չի պատասխանել: Գյոպերտը Ջուրաբյանի հետ խոսել էր նաև անկախության խնդրի մասին և հայտնել, որ Գերմանիան կարող էր այդ հարցում զիջել: «Պարզ է, – այդ առթիվ գրում էր Ջուրաբյանը, – որ Գերմանիան ուզում է Թուրքիային համոզել, որ նա ասպարեզից ետ քաշի անկախության հարցը՝ խոստանալով, փաստորեն, իրական փոխադարձ հարաբերություններում ճանաչել մեր անկախությունը»<sup>1</sup>:

Բանակցագործընթացի մասին Հ. Օհանջանյանին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նաև գեներալ Ֆոն Լոսովը, որին նա հանդիպում է սեպտեմբերի 18-ին: Ըստ Լոսովի՝ իրենք գոհ էին բանակցությունների վերջին երկու օրերի ընթացքից և գրեթե կարող էին ասել, որ հասնում էին իրենց նպատակին, այն է՝ Բրեստի սահմանների վերահաստատմանը: «Մենք համոզում ենք Թալեաթ փաշային, – տեղեկացրել էր նա Օհանջանյանին, – որ միևնույն է, հաշտությունը լինելու է առանց անեքսիոնի: Ավելի լավ է՝ Թուրքիան իր համար այժմվանից բարենպաստ տրամադրություն ստեղծի ապագա համաշխարհային կոնգրեսում իր դեմ ազգեր և ժողովուրդներ չունենալու համար: Լավ է տալ կամով այն, ինչ որ, միևնույն է, մեզնից առնելու են, և դրանով այլևս առիթ չտալ կոնգրեսում այդ խնդիրներով պարապել: Ինչպես երևում է, դա ազդում է Թալեաթի վրա, և նա համաձայնում է, միայն թե ուզում է, որ դա կատարված լինի Թուրքիայի ազատ կամքով և իբրև մի շնորհ վրացի և հայ ժողովուրդներին և կառավարություններին Թուրքիայի կողմից, և այդ բանը պաշտոնապես, հանդիսավոր կերպով կատարվի Պոլսում, ուր նա կզնա այստեղից բոլոր դեղեզացիաների հետ»<sup>2</sup>:

Լոսովն այնուհետև այն համոզումն է արտահայտում, որ մնացյալ հարցերը (երկաթուղի և այլն) հեշտ լուծելի էին, և որ զլխավորը սահմանների խնդիրն էր: Նա Օհանջանյանին խորհուրդ է տալիս հանդիպել

<sup>1</sup> Տե՛ս անդ, թ. 38: Ա. Ջուրաբյանը, որը Բեռլինում մի հիվանդություն էր տարել, առողջական պատճառներով սեպտեմբերի 25-ին մեկնեց Թիֆլիս: Տե՛ս անդ, թ. 51-52:

<sup>2</sup> Տե՛ս անդ, թ. 57-58:

Թալեաթին և այդ ելակետով խոսել նրա հետ, առավել ևս, որ, ինչպես նա էր նշում, «Թալեաթը ժողովներում էլ միշտ ասելիս է եղել, թե հայերի հետ ինքը խոսել է, և նրանք պահանջներ քիչ ունեն, և հեշտությամբ կլուծվեն այդ խնդիրները տաճիկների և հայերի մեջ»<sup>1</sup>:

Ի դեպ, գեներալը, ինչպես տեղեկացնում էր Օհանջանյանը, անձամբ ևս Թալեաթի այդ պնդումներին առարկել էր շատ հիմնավոր կերպով ասելով, որ «հայերը, իհարկե, Պոլսում ուրիշ կերպ չեն կարող խոսել, բայց ուրիշ տեղ, ուր նրանք ավելի ազատ կարող են խոսել, նրանցից մենք ուրիշ բաներ ենք լսում»<sup>2</sup>:

Գերմանական սկզբնաղբյուրները նույնպես հաղորդում են, որ դեռ սեպտեմբերի 7-ին, Վիեննայից Բեռլին վերադառնալով, Թալեաթը հանդիպել էր պետքարտուղար ֆոն Յինթցեին և նրան մեղադրել՝ առանց Թուրքիայի գիտության, Կովկասին վերաբերող հարցերում Ռուսաստանի հետ պայմանավորվածություններ ձեռք բերելու համար<sup>3</sup>:

Երբ պետքարտուղարն, իր հերթին, վկայակոչել էր, հակառակ Գերմանիայի կողմից արտահայտված բողոքներին, Բաթունում Վրաստանի, Չայաստանի և Ադրբեջանի հետ պայմանագրերի կնքման փաստը, Թալեաթը պատասխանել էր, թե ինքը վստահ էր, որ այդ հարցում կհաջողվեր համաձայնության գալ՝ «կատակով» նաև ավելացնելով, թե առանց նման համաձայնության նա չէր կարող վերադառնալ Կոստանդնուպոլիս<sup>4</sup>:

<sup>1</sup> Տես անդ, թ. 58:

<sup>2</sup> Անդ: Ըստ գեներալի հաղորդման՝ բանակցությունները 3-4 օրում ավարտվելու էին: Այդ օրը ևեթ՝ սեպտեմբերի 18-ին, Օհանջանյանին նաև հայտնի է դառնում, որ արդեն հանդիսավոր ճաշկերույթի պատրաստություն էին տեսնում: Անդ: Ավելի վաղ, երբ Օհանջանյանը Լոսովի հետ կայացած մի զրույցի ընթացքում կրկին բարձրացրել էր ՀՀ անկախության խնդիրը, գեներալը նրան հայտնել էր, որ ռուսներն, առհասարակ, հայեր հանդեպ ավելի բարյացակամ էին տրամադրված, քան՝ վրացիների և թաթարների, և արտահայտել էր այն համոզումը, որ Չայաստանի անկախության խնդիրը դրական լուծում կունենար: Ելնելով բանակցությունների ընթացքից՝ նա նաև տեղեկացրել էր, որ «Թալեաթը բավական զիջող է», և հույս էր հայտնել, որ «կհաջողվի ոչնչացնել Բաթումի դաշնագիրը և ընդունել Բրեստինը»: Տես անդ, թ. 51:

<sup>3</sup> Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., էջ 578:

<sup>4</sup> Անդ, էջ 578-579:

Եւ այդ հանդիպման ժամանակ պետքարտուղարին ներկայացրել էր Կովկասի ապագային վերաբերող իր ծրագիրը<sup>1</sup>: Ըստ այդմ՝ Վրաստանը (որից մի քանի շրջաններ պետք է անցնեին Թուրքիային), Չայաստանը և Ադրբեջանը պետք է դառնային բուֆերային պետություններ Ռուսաստանի դեմ: Բաթուն պետք է տրվեր Ադրբեջանին, որը պատրաստ էր Գերմանիային տալ նավթի մատակարարման ցանկացած երաշխիք: Փոխարենը Թալեաթը պատրաստ էր ամբողջ Դոբրուջան թողնել Բուլղարիային՝ շարունակ կրկնելով, որ Թուրքիան ցանկանում էր լավ հարաբերություններ ունենալ Բուլղարիայի հետ:

Այս ամենի մասին մի հեռագրով սեպտեմբերի 8-ին տեղեկացնելով Կ. Պոլսի գերմանական դեսպանին՝ Յինթցեն միաժամանակ հայտնում էր, որ Թալեաթը մի նոր ծրագիր էր մշակել՝ կապված Թուրքմենստանի հետ, այն է՝ 14 միլիոն մուսուլմանական բնակչությամբ<sup>2</sup> այդ երկիրը ռազմական առումով կազմակերպել և մասնակից դարձնել պատերազմին՝ ընդդեմ Անգլիայի և Ռուսաստանի: Թալեաթը միաժամանակ Յինթցեից պահանջել էր այդ ծրագրի իրագործման համար իրեն տրամադրել գերմանական սպաներ և ենթասպաներ: Ինչ վերաբերում էր կովկասյան սահմանների վերաբերյալ Կ. Պոլսում նախատեսված բանակցություններին, ապա Թալեաթը դեմ չէր արտահայտվել այն բանին, որ Բուլղարիան և Ավստրիան նույնպես մասնակցեին դրանց, բայց ընդգծել էր, որ ուզում էր ամենից առաջ համաձայնության գալ Գերմանիայի հետ:

Սեպտեմբերի 8-ին սկսված բանակցություններում, ինչպես արդեն նշվել է, գերմանական կողմը դարձյալ հանդես էր գալիս Բրեստի պայմանագրի պահանջները ճանաչելու պահանջով, որին Թալեաթը ստիպված էր տեղի տալ<sup>3</sup>: Միաժամանակ, սակայն, նա ձգտում էր այդ հարկա-

<sup>1</sup> Անդ, էջ 578: Հանդիպման սկզբում Թալեաթը ֆոն Յինթցեին մեղադրել էր այն հարցում, որ Գերմանիան Կովկասի վերաբերյալ համաձայնություններ էր կնքել Ռուսաստանի հետ՝ առանց Թուրքիային տեղյակ պահելու: Անդ:

<sup>2</sup> Այս տվյալը հաղորդել էր Թալեաթը:

<sup>3</sup> Հատկանշական է, որ, ինչպես վկայում էր սեպտեմբերի 9-ին Գերմանիայի արտգործնախարարության գաղտնի խորհրդակցական Նադոլնիի կողմից ստորագրված մի փաստաթուղթ, արտգործնախարարությունը զիտակցում էր Թիֆլիս-Ջուլֆա երկաթուղին հայկական կողմին հանձնելու նպատակահարմարությունը և կողմ էր դրան: «Թիֆլիս-Ջուլֆա երկաթուղին պետք է մնա Չայաստանին, - նշված էր այդ փաստաթղթում: - Այն դեպի Պարսկաստանի ամենակարևոր հատվածը տանող միակ երկաթուղին է: Նրա հանձնումը Թուրքիային ոչ միայն

դիր զիջումը ներկայացնել՝ որպես Թուրքիայի բարի կամքի դրսևորում: Գերմանական սկզբնաղբյուրներում հաղորդվում է, որ, ըստ բանակցությունների ընթացքում Թալեաթ փաշայի կատարած հաղորդման, նա վրացիների և հայերի հետ իր մինչայժմյան քննարկումներում համոզվել էր, թե Թուրքիայի համար որքան կարևոր էր այդ երկու ժողովուրդների հետ բարիդրացիական հարաբերությունների պահպանումը:

Միաժամանակ, ինչպես հաղորդում էր ֆոն Շթունը Կ. Պոլսի դեսպանի տեղապահին ուղարկած իր՝ սեպտեմբերի 20-ի հեռագրում (դեսպան Բեռնշտորֆն այդ ժամանակ գտնվում էր Բեռլինում), Թալեաթը վստահեցրել էր, որ բացի Կարսից, Արդահանից և Բաթումից, թուրքերի կողմից գրավված մյուս տարածքները պետք է վերադարձվեին: «Ուստի, — այդ առնչությամբ գրում էր ֆոն Շթունը, — կարելի է հուսալ, որ թուրքական կառավարությունը այժմ պատրաստակամություն կցուցաբերի ետ քաշվելու հարցում»<sup>1</sup>, և, ըստ այդմ, նա դեսպանի տեղապահին համձնարարում էր ավստրո-հունգարական դեսպանի հետ միասին հարցի առնչությամբ համապատասխան քայլեր ձեռնարկել թուրքական կառավարության մոտ:

Սա, անշուշտ, հայկական խնդրի առնչությամբ գերմանա-թուրքական հարաբերություններում աննախադեպ առաջընթաց էր, քանի որ թուրքական կողմը, առաջին անգամ հրաժարվելով բոլոր պատրվակներից և խուսանավումներից, համաձայնում էր ճանաչել Բրեստի պայմանագրով գծված սահմանները: Հատկանշական է, որ Թալեաթը միաժամանակ ձգտում էր խափանել Ռուսաստանի մուտքը Կովկաս, այդ նպատակով պաշտպանում էր այնտեղ անկախ պետություններ ստեղծելու գաղափարը՝ թերևս, հույս ունենալով այդ կերպ, ինչպես և Թուրքիայի կողմից Բրեստի պայմանագրի վերահաստատման գործողությունը Կ. Պոլիս տեղափոխելու միջոցով այն ձախողել:

Այս իրավիճակում, ահա, սեպտեմբերի 20-ին տեղի ունեցավ Թալեաթի հանդիպումը Բեռլինի հայկական պատվիրակության հետ<sup>2</sup>: «Թա-

---

դեսպի Պարսկաստան մեր երթևեկությունը կխոչընդոտի, այլև պարսիկների կողմից կհամարվի հյուսիսում Թուրքիայի միջոցով շրջափակում և, ըստ այդմ, հյուսիս-արևմտյան Պարսկաստանի ենթարկում Թուրքիային»: Անդ, էջ 580:

<sup>1</sup> Deutschland und Armenien 1914-1918..., էջ 435:

<sup>2</sup> Օհանջանյանից զեկուցագրից լիովին պարզ չի դառնում՝ արդյոք նա միայնա՞կ է հանդիպել Թալեաթին, թե՞ Ջուրաբյանի կամ Գրինֆիլդի հետ:

լեաթ փաշան ինձ ընդունեց շատ սիրալիր, — գրում էր Օհանջանյանը սեպտեմբերի 23-ին Կ. Պոլսի հայկական պատվիրակությանն ուղղված իր զեկուցագրում, — բայց երևում էր, որ չի ուզում մտնել մեզ հետ մեր խնդրի խորը քննության մեջ: Ասաց, որ նա արդեն ձեզ հետո խոսել է, և որ նա եկել է այն եզրակացության, որ պետք է բավարարություն տալ հայերի տերիտորիալ պահանջներին, հաշտ ապրել հայերի հետ, մոռանալ անցյալը և այլն: Ես հատկապես պնդեցի տերիտորիայի կարևորության վրա մեզ համար, և նա համաձայնվեց մեզ հետ: Հայերի հետ, ճիշտ է, ասում էր, մենք արդեն համաձայնության եկել ենք, մնացել է միայն ձևը գտնել, այդ ձևն էլ կգտնենք Պոլսում: Հատուկ եղել է Ալեքսանդրապոլում, որը պիտի վերադարձվի՝ իբրև հայ քաղաք, և ասաց, որ դժվարություն կա Ախալցխայի վերաբերյալ, որ Հիսենկելին չի համաձայնում plebiscit-ին, որ ինքը առարկում է: Խոսք բարձրացրեց և անկախության մասին, թե Գերմանիան ապահովել է միայն Վրաստանի անկախությունը, իսկ ինքը եկել է առաջարկելու ապահովել և Ադրբեյջանի և Հայաստանի անկախությունը: Առաջարկեց ինձ, որ ազդեմ Յոֆֆեի վրա. նա ընդունի այդ երկու պետությունների անկախությունը»<sup>1</sup>:

Ինչ վերաբերում էր Բաքվին, ապա Թալեաթը նշում էր, որ իր ամբողջ ազդեցությունը գործադրելու էր Ադրբեյջանի վրա, որպեսզի «տնտեսապես նրանք ամեն տեսակ բավարարություն տան Ռուսաստանին»<sup>2</sup>: Տեղեկանալով, ի դեպ, որ Օհանջանյանը դաշնակցական էր, Թալեաթը հայերեն արտաբերել էր հայկական երգի՝ «Անդրանիկը քաջ, գնանք դեպ Սասուն» տողը, ինչը Օհանջանյանը «բավականին անտակտ բան» էր համարում: Վերջինս դրան արծազանքում է՝ Թալեաթին հայտնելով, որ ինքը դեռ երբեք Թուրքիայում չէր եղել և իր գործունեությունը վարել է Ռուսաստանի սահմաններում, որից հետո Թալեաթը նրան ասում է, ինչպես նշում է Օհանջանյանը, որ «Տաճկաստան էլ կան հայեր, պետք է լինել հայերի հետ բարեկամական և հաշտ հարաբերությունների մեջ, և պետք է մեր խնդիրները մենք ինքներս մեր մեջ վերջացնենք, որ ապագայում ոչ ոք չխառնվի մեր փոխադարձ հարաբերությունների մեջ — անկարկ ապագա համաշխարհային կոնգրեսի վրա»<sup>3</sup>:

Հրաժեշտի ժամանակ Թալեաթը Օհանջանյանին խնդրում է դարձյալ այցելել իրեն՝ տեղեկացնելով, որ Բեռլինից մեկնելու էր սեպտեմբե-

<sup>1</sup> Տե՛ս ԳԴ ԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 11, թ. 61-62:

<sup>2</sup> Տե՛ս անդ, թ. 62:

<sup>3</sup> Անդ:

րի 24-ի երեկոյան: Այնուհետև հայտնելով, որ մտադիր էր հանդիպել Յոֆեի հետ, թալեաթը Օհանջանյանից հարցնում է, թե նա այդ առնչությամբ ինչ կարծիքի էր: «Ասացի՛նք,– տեղեկացնում էր Յ. Օհանջանյանը,– որ շատ լավ կլինի, և որ մենք արդեն խոսել ենք նրա հետ հավասարապես Յայաստանի և Ադրբեջանի մասին, և նա խոսք է տվել յուր կարծիքը գրել Մոսկվա՝ թե հարկավոր է համաձայնել նրանց անկախությանը»<sup>1</sup>:

4. Պոլսի հայկական պատվիրակության կողմից թուրքիայի հետ «սրտակից» համաձայնության կամ դաշինքի կնքումը, բարեբախտաբար, կանխվեց սեպտեմբերի երկրորդ կեսին բեռլինյան պատվիրակներից միացած Ուկրաինայում Յայաստանի ներկայացուցիչ Գ. Ջամոյանի և Ռուսաստանի պետ. դումայի նախկին անդամ Մ. Աճեմյանի գործում միջամտությամբ, որն, ի դեպ, փոխարինում էր Ա. Ջուրաբյանին<sup>2</sup>:

Վերոնշյալը, և, առհասարակ, բեռլինյան բանակցությունների ընթացքում իրադրության զարգացումը նկատի առնելով, կարծում ենք՝ ճիշտ կլիներ, որ (առնվազն 4. Պոլսի համաժողովի ակմայտ ծախողումից և բանակցագործընթացի՝ Բեռլին տեղափոխումից հետո) Բեռլինի հայկական պատվիրակությունը, 4. Պոլսի պատվիրակության հետ սերտորեն համագործակցելով հանդերձ, նրանից որևէ կերպ կախման մեջ չդրվեր, քանի որ վերջինիս կաշկանդվածությունը, ինչպես լուսաբանվեց, որոշ դեպքերում կաշկանդում էր նաև նրա գործունեությունը, առավել ևս, երբ ՅՅ կառավարությունը հանրապետության և հայ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող խնդիրների լուծման, թուրքական կառավարության հայաշինջ քաղաքականությանը դի-

<sup>1</sup> Անդ: Թալեաթն այնուհետև հանդիպել էր Յոֆեին, ապա վրացի պատվիրակներ Չխենկելուն ու Նիկոլաձեին, որոնց հետ նրա բանակցությունների մամբանների մասին Օհանջանյանը տեղյակ չէր: Անդ:

<sup>2</sup> Այդ հարցում հայկական կողմի դիրքորոշումը վերջնականապես ճշգրտվեց 1918 թ. հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 15-ը Բեռլինում Յ. Օհանջանյանի նախագահությամբ կայացած քննարկումներում, որոնց մասնակցում էին Մ. Աճեմյանը, Ջ. Գրինֆիլդը, արևմտահայ գործիչ Ս. Ավետիսյանը և Գ. Ջամոյանը: Խորհրդակցության բոլոր մասնակիցները միակարծիք էին թուրքիայի նկատմամբ դիրքորոշման խնդրում գտնելով, որ Յայկական հարցի լուծման բոլոր տարբերակներում Յայաստանը վերջնականապես և անվերադարձ կերպով պետք է դուրս գար «թուրքական ոլորտից և նրա ազդեցությունից»: Տե՛ս Ավետիսյան, Գ., Գայկական հարցը..., էջ 327, 404:

մակայելու հարցում գլխավորապես ապավինում էր Գերմանիայի աջակցությանը:

Ինչևէ, Բեռլինում կայացած բանակցությունների արդյունքում սեպտեմբերի 23-ին Գերմանիայի և Թուրքիայի միջև ստորագրվեց մի գաղտնի համաձայնագիր, որի հիմնական բովանդակությունը կայանում էր հետևյալում. Թուրքիան ճանաչում էր Վրաստանը, Յայաստանը և Ադրբեջանը՝ որպես անկախ պետություններ: Գերմանիան ճանաչում էր դեռ միայն Վրաստանը, բայց հյուպատոսներ էր նշանակելու նաև Յայաստանում և Ադրբեջանում: Թուրքական կառավարությունը Յայաստանից և Ադրբեջանից ետ էր քաշելու իր զորքերը: Երբ թուրքական զորքերը այդ երկու հանրապետություններին պատկանող տարածքներից (բացառությամբ Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղին) դուրս գալիս, Գերմանիան պետք է իր ազդեցությունը գործադրեր Ռուսաստանի վրա, որպեսզի վերջինս ճանաչեր Յայաստանի և Ադրբեջանի հանրապետությունները:

Արձանագրությունում այնուհետև նշվում էր, որ Թուրքիան փորձելու էր Յուսիսային Կովկասում և Թուրքմենստանում ինքնուրույն հանրապետություններ ստեղծել, և որ Գերմանիան նրան այդ հարցում չէր աջակցելու, բայց նաև չէր խոչընդոտելու: Թուրքիան և Գերմանիան գործադրելու էին բոլոր ջանքերը, որպեսզի Քառյակ միությունը Կովկասի հունքից հնարավորինս մեծ շահույթներ ստանար: Ընդ որում Թուրքիան համաձայնում էր, որ Բաքվի նավթարդյունաբերությունը, Բաքու-Թիֆլիս երկաթուղին և նավթամուղը դրվեին Գերմանիայի վերահսկողության ներքո: Նավթը պետք է բաժանվեր Քառյակ միության երկրների, Ռուսաստանի և կովկասյան երկրների միջև: Թուրքիան պետք է Ադրբեջանի վրա իր ազդեցությունը գործադրեր, որպեսզի այնտեղ գերմանացի գաղութարարները նույն ընդունելությունը և վերաբերմունքն ստանային, ինչպես նախկին Ռուսաստանի մյուս մասերում:

Ճանաչվում էր Պարսկաստանի տարածքային ամբողջականությունը և անկախությունը: Ըստ այդմ Թուրքիան պարտավորվում էր Անգլիայի դեմ ձեռնարկվող ռազմական գործողությունների ավարտից հետո Պարսկաստանից ետ քաշել իր զորքերը, իսկ մինչ այդ նա պետք է հնարավորինս դյուրացներ Պարսկաստանի հետ Գերմանիայի երթևեկությունը<sup>1</sup>:

<sup>1</sup> Համաձայնագրի ամբողջական տեքստին ծանոթանալու համար տե՛ս Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., էջ 586-588:

Համաձայնագիրը ստորագրելիս թալեթը հարկ էր համարել նաև բանավոր կերպով հայտարարել, որ ինքը համոզված էր թուրքիայի և կովկասյան կառավարությունների միջև լավ հարաբերությունների հաստատման անհրաժեշտության հարցում և հնարավոր ամեն բան անելու էր, որպեսզի թուրքական կառավարությունը նկատի առնել կովկասյան կառավարությունների տարածքային պահանջները և նրանց հետ բարեկամաբար համաձայնության գար սահմանների հարցում: Սեպտեմբերի 25-ին թուրքիա վերադառնալուց առաջ թալեթը նաև հավաստիացրել էր, որ Կ. Պոլսում կովկասյան կառավարությունների ներկայացուցիչների հետ բանակցելու էր տարածքային հարցերի շուրջ:

Պետքարտուղարը, սեպտեմբերի 25-ին մի հեռագրով գեներալ ֆոն Կրեսին տեղեկացնելով վերոնշյալի մասին, նրան միաժամանակ հայտնում էր, որ գերմանական կողմը պետք է Կ. Պոլսում նախատեսված համաժողովի համար թալեթին որոշ ժամանակ տար, և, եթե բանակցությունների արդյունքում համաձայնություն կայանար, ապա այն կարելի էր համարել իրականացված<sup>1</sup>:

Բեռլինի հայկական պատվիրակությունը հնարավորություն էր ունեցել որևէ ձևաչափով մասնակցել Բեռլինի բանակցություններին: «Պետք է խոստովանել, որ մեզ այստեղ համարյա թե կամ նույնիսկ բոլորովին հաշվի չէին առնում, և մեր ներկայությունը կարծես թե ոչ մի նշանակությունը չունեի,— գրում էր Ահարոնյանը սեպտեմբերի 26-ին Կ. Պոլսի պատվիրակությանն ուղարկած իր զեկուցագրում:— անում էին այնպես, կարծես մենք այստեղ գոյություն էլ չունենք»<sup>2</sup>: Այնուհանդերձ այն հանգամանքը, որ Կ. Պոլսում ծրագրված համաժողովը տեղի չէր ունենալու, այդ օրվա դրությամբ որոշակիորեն պարզ էր նաև Օհանջանյանին: «Կոնֆերանսի խնդիրն, ինչպես երևում է, ջուրն է ընկնելու,— գրում էր նա իր վերոնշյալ զեկուցագրում:— Չորս պետությունները իրար մեջ այստեղ համաձայնության եկել են և կարիք չունին կոնֆերանսի, ուրեմն, մնում է, որ մենք, վրացիները և թաթարները համաձայնության գանք նաև Տաճկաստանի հետ և հետո իրար մեջ, և այդպիսով այլևս

<sup>1</sup> Տես այդ մասին պետքարտուղարի կողմից ֆոն Կրեսին ուղարկված հարողագրությունը, անդ, էջ 584-585:

<sup>2</sup> Տես ՀՀ ԱԱ, ֆ. 200, գ. 2, գ. 11, թ. 64:

կոնֆերանս այն եղանակով և չափերով, ինչ որ առաջ էր ենթադրվում, չէ լինելու»<sup>1</sup>:

Չնայած Հայաստանից և Ադրբեջանից թուրքական զորքերի ետքաշման թուրքական կառավարության հանձնառությանը, Բրեստի պայմանագրով վճռված սահմանների ճանաչման խնդիրն, ինչպես տեսնում ենք, այդ համաձայնագրում հստակ կերպով չէր արտացոլվել: Դա տեղի ունեցավ մեկ այլ «Կովկասում ռազմական իրադրության կարգավորման վերաբերյալ» ռուս-թուրքական համաձայնագրով, որը հոկտեմբերի 2-ին կամ 3-ին ստորագրվեց Բեռլինում Օսմանյան պետության դեսպան Ռիֆաթ փաշայի և Խորհրդային Ռուսաստանի դեսպան Յոնֆեի իբրև իրենց կառավարությունների լիազոր ներկայացուցիչների միջև<sup>2</sup>: Ստորև ներկայացնում ենք երեք կետերից բաղկացած այդ համաձայնագրի հիմնական բովանդակությունը, որն, ինչպես տեսնում ենք, միանգամայն համահունչ էր գերմանա-թուրքական համաձայնագրին: «1. Թուրքական կանոնավոր և անկանոն զորամասերը՝ ներառյալ հրահանգիչներն ու ծառայողները, անհապաղ ետ են քաշվում Կովկասից՝ բացառությամբ Բրեստի խաղաղության պայմանագրի 3-րդ պարբերության 4-րդ հոդվածում հիշատակված շրջանների: Նրանք կարող են իրենց հետ տանել թուրքական ռազմական ամբողջ ունեցածքը: Չորսամասերի ետքաշումը և թուրքական ռազմական ունեցվածքի փոխադրումը պետք է իրագործվեն սույն արձանագրության ստորագրումից հետո չորս շաբաթվա ընթացքում: 2. Վնասների հատուցման պահանջները, որոնք Ռուսաստանը Կովկասում թուրքական գործողությունների կապակցությամբ հանդես կբերի, պետք է ստուգվեն՝ մի խառը քննիչ հանձնաժողովի միջոցով կայացվելիք համաձայնության համապատասխան: 3. Թուրքական և ռուսական կառավարությունները գերմանական կառավարությանը խնդրելու են ստանձնել 1-ին և 2-րդ որոշումների իրագործման, ինչպես նաև Կասպից ծովից բրիտանական հարձակումների դեմ թուրքական զորքերի անվտանգության երաշխավորումը»<sup>3</sup>:

<sup>1</sup> Անդ:

<sup>2</sup> Չնայած համաձայնագրի վավերացման օրը փաստաթղթի մեզ հայտնի օրինակում նշված չէ, այնուհանդերձ Հ. Օհանջանյանի որոշ տեղեկություններից պարզ է դառնում, որ այն ստորագրվել է հոկտեմբերի 2-ին կամ 3-ին: Տես անդ, թ. 73:

<sup>3</sup> Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., էջ 595-596:

Հասկանալի է, որ գորքերի ետքաշման և Բրեստի պայմանագրով գծված սահմանների ճանաչման՝ թուրքական կառավարության՝ համաձայնագրերով վավերացված այդ հանձնառությունը նրան պարզապես պարտադրված էր և ամենևին էլ թուրքական հայաջինջ քաղաքականություն փոփոխություն չէր նշանակում: Դա պարզորոշ փաստում էին նաև բեռլինյան բանակցությունների օրերին Բաքվում տեղի ունեցած հայկական կոտորածները, որոնց ստորև կփորձենք փոքր-ինչ հանգամանալից անդրադառնալ:

Ինչպես Բաքվում արտակարգ իրավիճակների ղեկավար, օսմանյան բանակի ավագ լեյտենանտ, ազգությամբ գերմանացի Պարաքվինն էր վկայում սեպտեմբերի 26-ին գեներալ-լեյտենանտ Ֆոն Չեկտին ուղարկած իր տեղեկագրում, դեռ օգոստոսի 23-ին Մյուլիցի փաշան իրեն հաղորդել էր, որ թաթարները մտադրվել էին թուրքական զորքի՝ Բաքու մտնելուն պես սկսել հայերի կոտորածը: Պարաքվինն այդ մասին բազմիցս տեղեկացրել էր դեպի Բաքու շարժվող թուրքական դիվիզիայի գլխավոր հրամանատար Նուրի փաշային՝ խնդրելով կանխիչ միջոցառումներ ձեռնարկել, և, բացի այդ, նրան էր ներկայացրել քաղաքի գրավման հետ կապված միջոցառումների մի ծրագիր, որի գործադրման դեպքում սկզբից ևեթ կբացառվեին սպանդն ու կողոպուտը: Նուրի փաշան, սակայն, անտարբեր էր գտնվել թե՛ նրա նախազուշացումների և թե՛ վերոնշյալ ծրագրի հանդեպ: Քաղաքի թաթարների մեծագույն մասը, ինչպես վկայում էր Պարաքվինը, բնակվում էր բարձր, 2 կմ երկարություն ունեցող պարիսպներով մեկուսացված մի թաղամասում, և թաղամասի մուտքերը գրավելու միջոցով ջարդարարներին վնասագերծելը որևէ դժվարություն չէր ներկայացնում: Հասկանալի է, որ նրա այդ առաջարկը նույնպես չէր ընդունվել:

Ըստ Պարաքվինի՝ սեպտեմբերի 15-ին, դեռ թուրքերի՝ Բաքու մտնելուց առաջ, քաղաքի տներում շարունակ կրակոցներ էին լսվում, մինչդեռ քաղաքի մոտ մի բարձունքի վրա տեղակայված թուրքական հետևակային զունդն ու մյուս զորամասերը, դրանց հանդեպ միանգամայն անտարբեր կերպով, այդ նույն ժամանակ զբաղված էին մահմեդական Կուրբան-բայրամ տոնին նվիրված՝ ժամեր շարունակ տևող շքերթով: Առավոտյան, երբ թուրքական զորքը դեռ քաղաք չէր մտել, թաթարական ամբոխն արդեն սկսել էր հայ բնակչության զանգվածային սպանող, հետապնդումներն ու կողոպուտը, իսկ կեսօրից քաղաք մտած թուրք զինվորները բնավ չէին փորձում արգելել դա: Ավելին, նրանք

նույնպես միանում էին թալանին<sup>1</sup>: «Փոխանակ բոլոր միջոցներով քաղաքում կարգ ու կանոնի հաստատմամբ զբաղվելու՝ փաշաները, քաղաքի պարետը, գլխավոր շտաբի բոլոր սպաները անգործ թև էին գալիս հյուրանոցի սրահներում,– գրում է Պարաքվինը:– Երբ բողոքներ և խնդրանքներ էին ուղղվում Նուրիին կամ պարետին, դրանք այնպիսի ներքին անտարբերության էին հանդիպում, որ իսկույն ևեթ ակնհայտ էր դառնում լուրջ նախանձախնդրության և ցանկության բացակայությունը: Տեղի ունեցավ մի մեծ ճաշկերույթ, որին մասնակցեցին բոլոր գեներալները և շտաբները քաղաքի պարետի հետ միասին: Երգվեց «Կովկաս» երգը: Անթաքույց հրժվանքով ինձ ներկայացրեցին դրա բովանդակությունը, այն է՝ թուրքիան այսուհետ դարձյալ տեր է դառնում իր հին սեփականությանը՝ Կովկասին: ճաշկերույթի ժամանակ և դրանից հետո քաղաքում սպանդն ու թալանը շարունակվում էին...: Ես չեմ կարող չհիշատակել բազմիցս բարձրաձայն հնչեցված այն տեսակետը, որ թուրքական ղեկավարությունը թաթարներին կամենում էր հնարավորություն տալ վրեժ լուծել հայերից»<sup>2</sup>:

Ինչպես փաստում էր Պարաքվինը, սպանդի, թալանի և բռնաբարությունների անարգել ընթացքը պատճառաբանված էր զորքի անգործությամբ: Այդ պայմաններում հայերի դեմ զանգվածային գործողություն-

<sup>1</sup> «Փողոցներում գրեթե մարդ չկար,– նշում էր Պարաքվինը Բաքվի գրավման ժամանակ մարտական գործողությունների վայր դարձած արվարձաններից մեկում այդ օրը առավոտյան իր կատարած շրջագայությունից հետո:– Խանութներն ու կրպակները, համարյա առանց բացառության, թալանված էին: Տարբեր տեղերում թալանված իրերի կույտեր էին կուտակված, որոնք հավանաբար թաթար կողպատիչներից էին խլվել և մասամբ հսկվում էին առանձին թուրք զինվորների կողմից: ... Չինվորներն ու թաթարներն անարգել փորփորում էին և տանում էին, ինչ իրենց դուր էր գալիս: Արդեն այդ շրջագայության ժամանակ ի հայտ եկան մեծ անկարգությունների անուրանալի հետքերը: Ճանապարհին ընկած էին երկու սպանված երեխաներ: Մի կողմնակի նրբանցքում անմիջապես մեր կողքին որոտաց մի կրակոց: Մի պատուհանից կանայք հուսահատ կերպով օգնություն էին կանչում: Մեր ավտոմեքենաները կանգնեցին, մենք շտապեցինք տուն, բայց ոճրագործները դեպի հետին կողմն էին փախել: Արդեն այն ժամանակ տիրում էր այն ընդհանուր համոզումը, որ քաղաքում յուրաքանչյուր կարգ ու կարգապահություն վերացել էր, և քրիստոնյա բնակչությունը թալանվում, բռնաբարվում ու սպանդի էր ենթարկվում: St'u Deutschland und Armenien 1914-1918..., էջ 441-442:

<sup>2</sup> Անդ, էջ 443:

ները սպառնում էին վերածվել առհասարակ քրիստոնյաների հետապնդումների: Քաղաքում գտնվող չեզոք երկրների հյուպատոսներն ու մյուս օտարերկրացիները, որոնց մեծ մասը հավաքվել էր Մետրոպոլ հյուրանոցում, օգնություն էին ակնկալում գերմանացիներից, մինչդեռ վերջիններս նույնպես ապահովագրված չէին, և Պարաքվինը կարողանում է հասնել միայն այն բանին, որ առանձին գերմանացիների բնակարանների մոտ պահակակետեր կանգնեցվեն: Նա մի գերմանական ընտանիքի խնդրանքով պահակակետ է կանգնեցնում նաև մի երիտասարդ հայ իրավաբանի տան մոտ, որին թաթարները նախկինում բազմիցս սպառնալիքներ էին ուղղել, իսկ տանտիրոջը տեղափոխում է Մետրոպոլ հյուրանոց:

Երեկոյան, այնուամենայնիվ, պարզ է դառնում, որ զենքի սպառնալիքի ներքո կողոպտվել էին մինչև իսկ մի շարք գերմանացիների բնակարաններ: Գերմանացիների կյանքի և գյուքի ապահովման առնչությամբ Նուրի փաշային ուղղված նրա վճռական բողոքներն ու պահանջները որոշ արդյունք տալիս են: Քաղաքի պարետը հեռացվում է, և նրա փոխարեն պարետ է նշանակվում Նասիմ բեյը: Քաղաք են ուղարկվում սպաներ և նոր զնդեր: Հյուրանոցի առջև մի թաթար կողոպտիչ ցուցադրաբար կախաղան է հանվում: Այդ նույն ժամանակ, սակայն, քաղաքում կրակոցներն ու աղմուկը շարունակ ավելի մեծ չափեր էին ընդունում: Հատկանշական է, որ Նուրի փաշայի կարգադրությամբ զուգահեռաբար վերոնշյալ մահմեդական տոնի առթիվ կազմակերպվում էին հրազենային համազարկեր, ինչը նա պատրվակ էր դարձնում քաղաքի տարբեր վայրերում լսվող կրակոցները նույնպես այդ կերպ պատճառաբանելու համար:

Այս ամենից, անշուշտ, որոշակիորեն պարզ է դառնում, թե թուրքական կառավարությունը որպիսի պատասխանատվությամբ և լրջությամբ էր վերաբերում իր գերմանացի դաշնակցին: Պարաքվինի բողոքներն ու պահանջները, սակայն, որևէ էական արդյունքի չհանգեցնելով, ի վերջո պետք է նրա դեմ ուղղվեին: Սեպտեմբերի 18-ի առավոտյան հայտնվում է Արևելյան բանակի հրամանատար գեներալ-լեյտենանտ Հալիլ փաշայի համհարզը և նրան է հանձնում սեպտեմբերի 17-ով թվագրված նրա պաշտոնագրովման հրամանը, որն ուներ հետևյալ բովանդակությունը. «Ձեր պահվածքը և բազմաթիվ բարեկամ ու օտար մարդկանց ներկայությամբ իսլամական բանակի գլխավոր հրամանատար նորին գերագանցություն Նուրի փաշայի դեմ ուղղված ձեր խոսքե-

րը, ինչպես նաև Նուրի փաշայի պաշտոնական բողոքը ստիպում են ինձ վերջ դնել արտակարգ իրավիճակների ղեկավարի՝ Ձեր պաշտոնին: Դուք այսուհետև կլինեք գլխավոր շտաբի տրամադրության ներքո: Ես նրանց արդեն հեռագրել եմ»<sup>1</sup>:

Հրամանի կտրուկ բովանդակությունից ելնելով՝ Պարաքվինն անհնար է համարում իր ծառայությունը շարունակել մինչև գերմանական կառավարությանն այդ մասին տեղեկացնելը և պատասխան ստանալը: Ուստի, իր պարտականությունները փոխանցելով մի թուրքի՝ ավագ լեյտենանտ Բասրի բեյին, նա նույն օրը հեռանում է քաղաքից:

Պարաքվինի՝ որպես ականատեսի վկայությունները որոշ ուշագրավ մանրամասներ են հաղորդում Բաքվում կատարվող իրադարձությունների վերաբերյալ՝ միաժամանակ փաստելով, որ այնտեղ հայերի կոտորածը վաղօրոք նախապատրաստված էր և իրագործվում էր թուրքական կանոնավոր բանակի՝ Նուրի փաշայի ու նրա զինվորականության աջակցությամբ<sup>2</sup>: «Անկարգությունները մեծ մասամբ տեղի էին ունենում տների ներսում,– գրում էր նա:– Այդ պատճառով փողոցներում համեմատաբար քիչ դիակներ կային: Դրանք մեծ մասամբ լցված էին փողոցների անկյուններում, այնպես որ հաճախ միայն հոտի միջոցով էին իրենց վրա ուշադրություն բևեռում: Մի տեղ ես տեսա յոթ դիեր, որոնք, մեծ մասամբ մերկ վիճակում, կիտված էին միմյանց վրա: Նրանց մեջ կային երեխաներ և մի ծննդկան: Գրեթե բոլոր դիակներն ունեին արյու-

<sup>1</sup> ԱՆդ, էջ 446:

<sup>2</sup> «Բաքվում ծանր զանցառություններն ու նողկալի իրադարձությունները չքննարկելու և քաղաքի գրոհման հետ կապելու՝ թուրքական կողմի փորձերի առնչությամբ,– գրում էր Պարաքվինը գեներալ ֆոն Ձեկտին ուղղված իր վերոնշյալ նամակում,– ես կկամենայի դարձյալ ընդգծել, որ կոտորածը դեռ շաբաթներ առաջ ծանուցվել էր և իրականացվեց՝ առանց թուրքական առաջխաղացման հետ որևէ առնչություն ունենալու: Հիմնավորված չէ նաև այն պատճառաբանությունը, թե զորամասերին թույլ չեն տվել քաղաք մտնել, քանի որ նրանց հանդեպ վստահություն չէր տածվում: Անշուշտ, չէր կարելի զինվորներին փոքր պարեկախմբերով քաղաք ուղարկել: Որտեղ դա տեղի ունեցավ, թուրք զինվորականությունը եռանդազին կերպով մասնակցեց կողոպուտին ու անարգումներին: Եթե նրանց գումարտակներով տեղակայեին մեծ հրապարակների վրա և այնտեղից սպաների ղեկավարությամբ մեծ խմբերով ուղարկեին, կարգ ու կանոնը կվերականգնվեր, և զորքը կպահվեր վերահսկողության ներքո»: ԱՆդ, էջ 445-446:

նահուսված տեղեր, որոնք առաջացել էին խզակոթի հարվածներից, և նաև ծակծկված էին: Նկուղներից դիերի հոտ էր փչում: Ես պետք է ընդ-գծեմ, որ սպանդի հետքերով գնալու համար շատ քիչ ժամանակ ունեի, քանի որ բոլոր կողմերից հեղեղված էի օգնության կանչերով: Այնու-հանդերձ անգամ իմ կարծ շրջագայությունների ժամանակ ես հանդի-պում էի նախճիրի՝ այդ ակներև ապացույցներին: Փողոցները հատելու ժամանակ, առանց այլևայլի, այն տպավորությունն էր համակում, որ բոլոր տները՝ նկուղից մինչև տանիք, թալանված էին: ... Մի գերմանացի ինձ պատմեց, որ նա Նուրի փաշայի համհարզի հետ մտել է մի տուն, որտեղ, առանց տարիքի և սեռի խտրության, սպանված ընկած էին 13 վրացիներ: Երբ նա մատնանշել է, որ նրանք վրացիներ, այսինքն, Գեր-մանիայի պաշտպանյալներ էին, ստացել է հետևյալ պատասխանը. «Նրանց համարել են հայեր»<sup>1</sup>:

Թե Բաքվում հայերն ինչպիսի հետևողականությամբ ու անգթու-թյամբ էին հետապնդվում, և թե գերմանացի դաշնակիցների հանդեպ թուրքերն ինչպիսի «պատկառանք» ունեին, վկայում էր նաև երկու գեր-մանացիների գնդակահարության փաստը: Ըստ դանիական հյուպատո-սի հաղորդման՝ նրանց տանը հայ զինվորներ էին ամրացել և պաշտ-պանվում: Թուրքերի մոտենալու ժամանակ նրանք դիմել էին փախուս-տի, իսկ գերմանացի տանտերերն, առանց հանգամանքների պարզա-բանման ու հարցաքննության, գնդակահարվել էին: Մեկ այլ դեպքում մի գերմանուհու հայ ամուսնուն սպանել էին, իսկ կնոջը՝ երկու երեխաների հետ միասին առևանգել, որոնք այդպես էլ չէին հայտնաբերվել<sup>2</sup>:

Պարաքվինն իր տեղեկագրում հույժ անհրաժեշտ էր համարում, թե-կուզ հենց միայն Գերմանիայի տնտեսական շահերի պաշտպանության համար, գերմանական զորամասեր ուղարկել Բաքու և, բացի այդ, ստեղծել մի հանձնաժողով, որը կզբաղվեր գերմանացիների և այլոց դեմ կատարված ոտնձգությունների քննությամբ:

<sup>1</sup> Աճ, էջ 445:

<sup>2</sup> Ըստ Պարաքվինի հաղորդման՝ բազմաթիվ հայերի «խզակոթերով և մըտ-րակներով», «ինչպես անասունների նախիր», քշել և արգելափակել էին առան-ձին, այսպես կոչված, ճանքարներում, որտեղ նրանց դրությունը խիստ անմխի-թար էր, և քաղաքում նաև իր մեկնման ժամանակ, այսինքն սեպտեմբերի 18-ին, շարունակվում էին կրակոցներն ու իրարանցումը: Աճ, էջ 446:

Նման նախաձեռնությամբ փորձեց հանդես գալ գեներալ ֆոն Կրեսը: Տեղեկանալով Բաքվի իրադարձությունների մասին սեպտեմբերի 20-ին նա մի շտապ հեռագիր ուղարկեց Նուրի փաշային՝ պահանջելով համա-ծայնություն տալ գերմանական գումարտակի հրավիրման համար, որը կզբաղվեր բացառապես այնտեղ գտնվող գերմանացիների պաշտպա-նության հարցերով<sup>1</sup>: Նույն օրը նա մի պաշտոնական գրություն ուղար-կեց նաև Թիֆլիսում վրացական կառավարությանն առընթեր՝ Օսմա-նյան պետության զինվորական և դիվանագիտական ներկայացուցիչ Արդուլ Քերիմ փաշային՝ դրան կցելով Նուրի փաշային ուղղված իր հե-ռագրի պատճենը: «Հավաստի աղբյուրներից ստացած իմ տեղեկու-թյունների համաձայն՝ օսմանյան զորքերի քաղաք մտնելուց անմիջա-պես հետո թաթարները սկսել են դաժան կոտորածն ու թալանը,– գրում էր այնտեղ գեներալը:– Առաջին հերթին այդ անգթություններն ուղղված են եղել հայերի դեմ, սակայն զոհերի թվում եղել են նաև բազմաթիվ այ-լազգիներ: Չնայած Նուրի փաշան ուներ բավականաչափ զորախմբեր՝ այդ անգթություններին անմիջապես վերջ տալու համար, ինձ անհաս-կանալի պատճառներով նա ժամանակին համապատասխան միջոցա-ռումներ չի ձեռնարկել, այնպես որ մինչև անգամ սեպտեմբերի 17-ի ե-րեկոյան Բաքվում դեռ կարգուկանոն չէր հաստատվել»<sup>2</sup>:

Գեներալն, ըստ այդմ, Ա. Քերիմին խնդրում էր իր ազդեցությունը գործադրել, որպեսզի Նուրին համաձայնե գերմանական գումարտակ Բաքու ուղարկելու՝ իր առաջարկի հետ, իսկ մինչ այդ՝ գործնական օգ-նություն ցուցաբերել «այն խեղճ մարդկանց, ովքեր այս պահին տառա-

<sup>1</sup> «Ես հավաստի աղբյուրներից տեղեկացել եմ,– գրում էր նա,– որ դժբախ-տաբար Բաքվի գրավումից հետո քաղաքում տեղի ունեցած ջարդերի ժամա-նակ բազմաթիվ գերմանացիներ և Գերմանիայի նախկին քաղաքացիներ նույն-պես դաժանությունների զոհ են դարձել և կորցրել են իրենց ունեցվածքը: Հաշ-վի առնելով այն փաստը, որ Չերո Գերազանցությունը չի կարողացել պաշտ-պանել Գերմանիայի քաղաքացիների կյանքն ու ունեցվածքը, գերմանական կայսրության անունից պաշտոնապես պահանջում եմ տալ ձեր համաձայնու-թյունը գերմանական գումարտակի հրավիրման համար, որի նպատակը կլինի բացառապես իմ համերկրացիների շահերի պաշտպանությունը: Ինչ վերաբե-րում է արդեն տեղի ունեցած հանցագործություններին, ես դրանց կանդրադառ-նամ իմ կառավարության տված ցուցումներից հետո: Սպասում եմ Ձեր պա-տասխանին»: Աճ, հավելված 3, էջ 448:

<sup>2</sup> Աճ, հավելված 2, էջ 447:

պանքների են ենթարկվում կատաղի թաթարների կողմից և կարող են փրկություն ստանալ միայն օսմանյան կանոնավոր զորամիավորումների պաշտպանության միջոցով»<sup>1</sup>:

Սեպտեմբերի 20-ին ֆոն Կրեսը մի գրություն ուղարկեց նաև Թիֆլիսում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Ջաֆարովին՝ նրան խնդրելով իր կառավարությանը տեղեկացնել, որ ինքը հարկադրված է լինելու հատուցում պահանջել Բաքվում թաթարների կողմից գերմանացիների և Գերմանիայի պաշտպանյալ հանդիսացող այլ անձանց հանդեպ իրագործված բռնարարքների համար<sup>2</sup>:

Ֆոն Կրեսի պաշտոնական գրություններին Ա. Քերիմը գրավոր կերպով պատասխանեց սեպտեմբերի 21-ին, իսկ սեպտեմբերի 26-ին ստացվեց Նուրի փաշայի պատասխանը: Աբդուլ Քերիմը հավաստիացնում էր, որ Գերմանիայի քաղաքացիների և նրանց ունեցվածքի հանդեպ ոտնձգությունների վերաբերյալ գեներալին հասած լուրերը եղել են չափազանցված, և հայերի հանդեպ նույնպես ոչ մի դաժանություն չէր գործադրվել: Աննշան արյունալի միջադեպերը, որոնք տեղի էին ունեցել քաղաքի գրավման ժամանակ, ըստ Քերիմի, այդպիսի իրավիճակներում միշտ էլ եղել են, դրանում արտասովոր ոչինչ չկար, և այդ դեպքերը ճիշտ չէր կոտորած անվանել: Հավատացնելով, որ Բաքվում ամեն բան արվել է դրանց կրկնումը կանխելու և կարգապահություն հաստատելու համար, նա գտնում էր, որ այնտեղ գերմանական գումարտակ ուղարկելու հարկ չկար, և որ գումարտակի առկայությունն այնտեղ թուրքական կառավարության համար կստեղծեր միայն անհարմարություններ ու բանբասանքների տեղիք կտար<sup>3</sup>:

Նույն ոգով էր շարադրված նաև Նուրի փաշայի պատասխանը: Նա նույնպես հավաստիացնում էր, որ ֆոն Կրեսի ստացած տեղեկությունները չէին համապատասխանում իրականությանը: Թուրքական զորքերը, ըստ Նուրիի, թշնամու համառ դիմադրության պայմաններում կարողացել էին միայն թեժ պայքարի գնով մտնել քաղաք: Որոշ մուսուլմաններ և հատկապես պարսիկներ, որոնք, իբրև թե, 1918 թ. մարտին հայե-

<sup>1</sup> Անդ:

<sup>2</sup> Անդ, հավելված 4, էջ 448-449: Այս դեպքում, իհարկե, խոսքը հայերին չէր կարող վերաբերել, քանի որ նրանք, ի տարբերություն վրացիների, գերմանական պաշտպանության ներքո չէին գտնվում:

<sup>3</sup> Անդ, հավելված 5, էջ 449-450:

րի կողմից իրականացված մուսուլմանների կոտորածից հետո հուսահատ վիճակում էին գտնվում, օգտվելով առիթից, դիմել էին վայրագությունների, բայց բանակի կողմից շտապ միջոցառումներ էին ձեռնարկվել: Հարյուրավոր մեղավոր մուսուլմաններ դատապարտվել էին մահվան, և դրանից հետո քաղաքում անդորր էր տիրում:

Եթե, այնուամենայնիվ, ինչ-որ ոտնձգություն էր տեղի ունեցել նաև քաղաքում գտնվող գերմանացիների հանդեպ, ապա, ըստ Նուրի փաշայի, Ադրբեջանի կառավարությունը պարտավոր էր փոխհատուցել պատճառված վնասները: Այս հավաստիացումներից հետո նա նույնպես պնդում էր, որ քանի որ թուրքական զորքերն արդեն կարգ ու կանոն էին հաստատել քաղաքում, կարիք չկար գերմանական գումարտակ ուղարկել այնտեղ<sup>1</sup>:

Ինքնին հասկանալի է, որ Ֆոն Կրեսը, չբավարարվելով Աբդուլ Քերիմի և Նուրի փաշայի պարզաբանումներով, հարկ էր համարում Բաքվի դեպքերի և դրանցում Նուրի փաշայի և թուրքական զորամասերի դերակատարության մասին տեղեկացնել նաև գերմանական բարձրագույն զինվորական հրամանատարությանը: Սեպտեմբերի վերջին նա այդօրինակ մի հեռագիր է ուղարկում գերմանական նավահրանոթային հրամակազմի ղեկավարությանը՝ խնդրելով այն փոխանցել նաև բանակի գլխավոր հրամանատարությանը:

Հրամակազմի ղեկավարը, հոկտեմբերի 2-ին ստանալով հեռագիրը, այն, որպես «հույժ գաղտնի», ուղարկում է ինչպես գլխավոր հրամանատարությանն, այնպես էլ կանցլերին: Այնտեղ նշվում էր, որ Բաքու մտած թուրքական զորքն այնքան անփույթ է գործել, որ նավահանգստում գտնվող ավելի քան հարյուր թշնամական նավեր հասցրել են փախուստի դիմել, և միայն փոքրաթիվ նավեր են ընկել թուրքերի ձեռքը: Այնուհետև, տեղեկացնելով Բաքվի գրավումից անմիջապես հետո թաթարական հրոսակների կողմից կոտորածների սանձազերծման մասին, ֆոն Կրեսն ընդգծում էր, որ թուրքական զորքը ոչ միայն ոչինչ չէր ձեռնարկել դրանք կասեցնելու համար, այլև նրա առանձին զորամասեր մասնակցել են այդ կոտորածներին, որոնց ժամանակ սպանվել են նաև շատ գերմանացիներ ու Գերմանիայի պաշտպանյալներ:

Նշելով Պարաքվինի հանիրավի պաշտոնանկության, ինչպես և այն մասին, որ Նուրի փաշան մերժել էր Բաքվում գերմանացիների կյանքի և գույքի ապահովման համար այնտեղ գերմանական զորամաս ուղար-

<sup>1</sup> Անդ, հավելված 6, էջ 450-451:

կելու մասին իր դիմումը<sup>1</sup>։ Ֆոն Կրեսը հեռագրում միաժամանակ խնդրում էր, որ նույն նախաձեռնությամբ հանդես գար նաև գլխավոր հրամանատարությունը<sup>2</sup>։

Բեռլինի և Կ. Պոլսի հայկական պատվիրակությունները մինչև իսկ այդ օրերին, երբ տեղի էին ունեցել Բաքվի հայկական ջարդերը, երբ Թուրքիան գերմանա-թուրքական համաձայնագրով ստանձնել էր իր զորքերի ետքաշման հանձնառությունը, իսկ ռուս-թուրքական համաձայնագրով պետք է ճանաչեր նաև Բրեստի պայմանագրով հաստատված սահմանները, բավականաչափ իրատեսորեն չէին գնահատում Կովկասում ձևավորվող աշխարհաքաղաքական նոր իրադրությունը, որն, առաջին հերթին, պայմանավորված էր տարածաշրջանում խորհրդային Ռուսաստանի մուտքով<sup>3</sup>։ Նրանք շարունակում էին հետևել ՀՀ անկախության առաջնահերթության գաղափարին, երբ այն նույնիսկ բացահայտորեն հակադրվեց ռուսական կառավարության աշխարհաքաղաքական նպատակներին։

Հոկտեմբերի 1-ին Յոֆեն իրեն այցելած Օհանջանյանին և Ջանոյանին տեղեկացրեց, որ Ռուսաստանը Թուրքիային արդեն վերջնագիր է ներկայացրել իր զորքերը ետ քաշելու համար և սպառնացել է պատերազմով, և որ մեկ կամ երկու օր անց ստորագրվելու էր ռուս-թուրքական մի պայմանագիր, որով «Տաճկաստանը մաքրելու է բոլոր երկիրը մինչև Բրեստի սահմանները», իսկ Գերմանիան էլ պետք է դառնար այդ

<sup>1</sup> Սա, իհարկե, չի նշանակում, թե Ֆոն Կրեսը մտահոգված էր սոսկ գերմանացիների կյանքի և գույքի ապահովման հարցով։ Նա կարող էր միայն այդ հիմնավորմամբ գերմանական բանակային հրամանատարությանը դրդել, որ նա վճռականորեն հանդես գար Բաքվում գերմանական զուսմարտակ տեղակայելու օգտին։ Իսկ այնտեղ այդ զորամասի ներկայությունն, անշուշտ, թաթար և թուրք ջարդարարներին այլևս թույլ չէր տա շարունակել սպանողն ու թալանը։

<sup>2</sup> Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., էջ 590-591։

<sup>3</sup> ՌԽՖՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Չիչերինի կողմից արդեն սեպտեմբերի 20-ին Թուրքիայի արտաքին գործերի նախարարությանն ուղարկվել էր մի նոտա, որով Ռուսաստանը չեղյալ էր համարում Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը։ Նոտայի տեքստին ամբողջությամբ ժանդապանալու համար տե՛ս Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու։ Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան 1991, էջ 622-624։

պայմանագրի իրականացման երաշխավորը<sup>1</sup>։ Ընդ որում՝ այդ երաշխավորությունը, ըստ Յոֆեի, իրական էր, այլ ոչ այնպիսին, որ կար Բաքվի վերաբերյալ։ Այնուհետև, ինչպես նշում էր Օհանջանյանն իր հոկտեմբերի 1-ին Կ. Պոլսի պատվիրակությանն ուղարկված զեկուցագրում, Յոֆեն իրենց ասել էր հետևյալը. «Այսպիսով, ուրեմն, մենք ծեղ՝ հայերիդ, փրկում ենք կոտորածից և ոչնչանալուց և հիմա սպասում ենք, որ դուք խոսք չեք բարձրացնի անկախության մասին...»<sup>2</sup>։

«Երբ ես նրան ասացի,– շարունակում էր գրել Օհանջանյանը,– որ ստացել եմ առաջարկություն արտաքին գործոց նախարարությունից՝ բողոքելու այն բանի դեմ, որ Ռուսաստանը մեր անկախությունը չի ընդունում, ուղղակի կատաղեց և փրփուրը բերանին սկսեց ծառախոսել, որ մենք իրենց օգնելու փոխարեն՝ Հայաստանը փրկել տաճիկների կոտորածից, մտածում ենք անկախության մասին և մտածում ենք մեր դասակարգային մանր բուրժուական շահերը ապահովել հայ բանվորության և աշխատավոր գյուղացիության հանդեպ և այլն և այլն։ Սկսվեց 2 և կես ժամվա տաք վիճաբանություն, որից կարելի է գալ այն եզրակացության, որ այդ հաստագլուխներին ոչինչ չի կարելի հասկացնել, և նրանք անկախություն ընդունելու մասին, առանց դրսի ազդեցության, չեն էլ մտածի երբեք։ Այս ունեցեք աչքի առաջ։ Դուրս եկանք՝ ոչինչ չստացած, և նույնիսկ մի բան էլ մենք պարտք մնացինք, որ խանգարում ենք Յոֆեներին փրկել Հայաստանը Տաճկաստանի ճանկերից»<sup>3</sup>։

Հոկտեմբերի 12-ին տեղի ունեցավ մի նոր ուշագրավ հանդիպում Օհանջանյանի և Ռուսաստանի դեսպանի միջև, որի ընթացքում վերջինս գրեթե վերջնագրի լեզվով էր խոսում։ Նա Օհանջանյանին հաղորդում է, որ թեև Թուրքիան համաձայնել է դուրս գալ Կովկասում գրաված տարածքներից, բայց ռուսական կառավարությունը դրանով չէր բավարարվում և պահանջում էր, օրինակ, Բաքուն հանձնել իրեն, պահանջում էր նաև իրականացնել Կարսի և Բաթումի բնակչության ինքնորոշումը և նույնիսկ առաջադրել էր Թուրքահայաստանի ինքնավարության հարցը։ «Ռուսաստանը ներկայումս խզել է արդեն յուր խաղաղ ժամանակի հարաբերությունները Տաճկաստանի հետ,– ասել էր Օհանջանյանին Յո-

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ԱԱ, Ֆ. 200, ց. 2, գ. 11, ք. 73։ Խոսքը վերաբերում է վերոնշյալ ռուս-թուրքական համաձայնագրին։

<sup>2</sup> Աճդ։

<sup>3</sup> Աճդ։

Ֆեն,— և իրավաբանորեն երկու կողմից էլ կարող են սկսվել պատերազմական գործողություններ: Այսպիսի պարագաներում, երբ հայ ժողովրդի համար արդեն վերացել է կոտորածի վտանգը, այլևս ոչ մի դեպքում չի կարող կովկասյան Հայաստանի անկախության մասին խոսք անգամ լինել: Մեր պահանջով տաճիկները հեռանում են Կովկասից, և ձեր երկիրը մնում է Ռուսաստանի մի մասը, ինչպես առաջ էր: Ինչ կապերով նա կլինի կապված մեզ հետ, դա այլ խնդիր է, կլինեք ավտոնոմ և այլն, բայց Ռուս. ֆեդերացիայի մեջ:

Մենք դեռ Վրաստանի անկախությունն էլ չենք ընդունել, Ադրբեյջանինը երբեք չենք ընդունի և այժմյանից գիտենք, որ նրանց հետ կռվելու ենք: Չգիտենք՝ դուք ինչպես եք վերաբերվելու: Ժողովուրդը, իհարկե, մեր կողմն է, դրա մեջ կասկած չկա, իսկ ինչ դիրք կունենա ձեր կառավարությունը, դա չգիտենք: Կարծում ենք, որ դուք, ձեր անձնական խմբային և դասակարգային շահերը պաշտպանելով, միայն պիտի պընդեք ձեր անկախության վրա և, իհարկե, մենք պետք է և ձեզ հետ կռվենք, և ինքը՝ ձեր ժողովուրդը կկռվի ձեր դեմ: Ձեզ մոտ ևս, շատ մոտ ապագայում, երբ արդեն վերացավ ֆիզիքական կոտորածի վտանգը, կսկսվի քաղաքացիական պատերազմը, և մենք կծալւենք, իհարկե: Ցավալին այն է, որ ձեզ մոտ, մենք գիտենք, այդ քաղաքացիական պատերազմը կարող է և ազգային գույն ստանալ:

Ամենաբնականն է, որ դուք հիմա մեզ հետ միասին դուրս գաք Տաճկաստանի դեմ, հայտարարեք, որ դուք Ռուսաստանի հետ եք և նրա հետ միասին դնում եք այս և այս պահանջները: Ուրեմն՝ անկախության մասին այլևս խոսք չի կարող լինել»<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 11, ք. 84-85: Հատկանշական է, որ ՅոՖեն դեռ հուլիսին հայկական կողմին իրազեկել էր Կովկասում Ռուսաստանի կողմից որդեգրված քաղաքական դիրքորոշման մասին, որը լիովին որոշակիացավ սեպտեմբերին: Ինչպես հաղորդում էր Բեռնշտորֆը հուլիսի 18-ին արտգործնախարարությանն ուղարկած իր հեռագրում, Ա. Ահարոնյանը նրան իր մտահոգությունն էր արտահայտել ՅոՖեի կողմից Բեռլինի պատվիրակությանը հայտնած այն կարծիքի համար, որ Ռուսաստանը հարկադրված էր լինելու Վրաստանի անկախությունը ճանաչել, բայց Հայաստանինը և Ադրբեյջանինը չէր ճանաչելու: ՅոՖեն միաժամանակ նշել էր, որ Ռուսաստանը մտադիր էր Գերմանիայի օգնությամբ կամ առանց դրա գեներլ ուժով Թուրքիային ստիպել ետ քաշվել Բրեստ-Լիտովսկի պայմանագրով գծված սահմաններից այն կողմ: «Թվում է, թե ռուսական տիրապետությունից հայերը նույնքան շատ են երկյուղում, ինչպես թուր-

Օհանջանյանի զեկուցագրերը ՅոՖեի հետ իր ունեցած վերոնշյալ հանդիպումների մասին ապահովում են բավականաչափ իրազեկում այդ օրերին տարածաշրջանում Ռուսաստանի աշխարհաքաղաքական նոր ծգտումների և նախաձեռնությունների վերաբերյալ: ՅոՖեի կողմից նրան ներկայացված իրադարձությունների սցենարը ուշագրավ կերպով նույնանում էր այն սցենարի հետ, որ տեղի ունեցավ 1920 թ-ին: Եվ եթե Խորհրդային Ռուսաստանի՝ իբրև ՀՀ անկախությանը սպառնացող պետության հետ համագործակցության մերժումը, որ բնութագրվում էր նաև տարածաշրջանում այդ երկրի՝ առկա և հնարավոր դերակատարման թերազնահատմամբ, աշխարհամարտի ավարտի և տարածաշրջանում աշխարհաքաղաքական ուժերի նոր վերաբաշխման համատեքստում հայկական կողմի համար այդ ժամանակ որոշակի բացասական հետևանքներ չունեցավ, ապա, ինչպես գիտենք, 1920 թ-ին պատկերը բոլորովին այլ էր:

Բեռլինի պատվիրակությանը անկախության գաղափարի պաշտպանության հարցում, թերևս, ոգևորում էր գերմանա-թուրքական համաձայնագրում արտահայտված այն ձևակերպումը, որ Գերմանիան, Հայաստանի և Ադրբեյջանի հանրապետությունները չճանաչելով հանդերձ, պետք է իր ազդեցությունը գործադրեր Ռուսաստանի վրա, որպեսզի վերջինս ճանաչեր այդ հանրապետությունները:<sup>1</sup> Այդ առումով բնութագրական է հոկտեմբերի սկզբին Օհանջանյանի կողմից Գերմանիայի նոր արտգործնախարար դր. Ջոլֆին ներկայացված տեսակետը, որի մասին վերջինս հաղորդում էր բանակային իրամասնատարության ներկայացուցիչ բարոն ֆոն Լեբսներին իր հոկտեմբերի 7-ին ուղարկած հեռագրում: «Բոլշևիկները միայն այն ժամանակ հայերի համար ինչ-որ բան կանեն,— հայտնել էր նրան Օհանջանյանը,— եթե Գերմանիայից կան Անգ-

բակնից»,— գրում էր այդ առնչությամբ դեսպանը: Տե՛ս Deutschland und Armenien 1914-1918..., էջ 414: Այս փաստաթուղթն, ի դեպ, լրացուցիչ կերպով վկայում է, որ Կովկասի խնդիրներում ռուս-գերմանական համագործակցային քաղաքականությունը դեռ հուլիսին բավական որոշակիացել էր:

<sup>1</sup> Դա, անկասկած, տեղի էր ունեցել Թուրքիայի ճնշմամբ, որին, ինչպես նշվել է, ավելի նախընտրելի էր Կովկասում գործ ունենալ փոքրիկ հանրապետությունների, քան Ռուսաստանի հետ, քանի որ այդ դեպքում Թուրքիայի համար այլևս անհնար կլիներ փոփոխել սահմանները կամ, առնվազն, Կովկասում ապահովել իր ազդեցությունը:

լիայի ու ԱՄՆ-ի կողմից նրանց վրա ճնշում գործադրվի: Բուլչևիկներին բանականությունը մատչելի չէ, և նրանք միայն ուժին են արծազանքում»<sup>1</sup>:

Ինչևէ, գերմանա-թուրքական արծանագրությունը, նաև Բրեստում գծված սահմանների ճանաչման թալեաթի կատարած հավաստիացումները, որոնց մասին ԱԳՆ-ն տեղեկացրել էր Բեռլինում գտնվող հայկական պատվիրակությանը, վերջինիս կողմից ընդունվեցին ոգևորությամբ: «Վերջերս Բեռլինում թալեաթ փաշայի հետ վարված բանակցությունների արդյունքը մեզ թույլ է տալիս հուսալ, – նշվում էր Հ. Օհանջանյանի կողմից հոկտեմբերի 1-ին գերմանական արտգործնախարարությանը հանձնված գրության մեջ, – որ թուրքական կառավարությունը, այն բանից հետո, երբ դադարեցրել է Բրեստի սահմանի ճանաչման դեմ իր դիմադրությունը, այժմ մեր տարածքի շուտափույթ ազատումով իր հանձնառությունը գործով կհաստատի: Մենք քաջատեղյակ ենք այն ջանքերին, որոնք գործադրվել են գերմանական կառավարության կողմից այդ մեզ համար ուրախալի արդյունքին հասնելու համար, և խնդրում ենք ընդունել մեր երախտագիտությունը: Մեր այստեղի պատվիրակությունը մեր գոյության ամենածայրահեղ վտանգի պահին ուղարկվեց Բեռլին՝ գերմանական կառավարության մոտ պաշտպանություն և օգնություն որոնելու համար: ... Տարածքների ազատման հարցի շուտափույթ լուծման միջոցով մեր այստեղի պատվիրակության առաջադրանքի ամենահրատապ մասը իրականացված կլինի»<sup>2</sup>:

Ինչպես հաջորդիվ նշում էր Հ. Օհանջանյանը, կային նաև այլ կարևոր հարցեր, որոնց լուծման համար հայկական կողմը դարձյալ Գերմանիայի աջակցության կարիքն ուներ: Խոսքը վերաբերում էր, մասնավորապես, ՀՀ անկախության ճանաչմանը, առևտրային և ֆինանսական համագործակցությանը և այլ հարցերի: Նա միաժամանակ հավաստում էր Գերմանիայի հետ բարեկամական փոխըմբռնմամբ բնութագրվող տևական հարաբերությունների ձևավորման հանրապետության կառավարության ցանկությունը, որի համար հայկական կողմն անհրաժեշտ էր համարում մի մշտական ներկայացուցիչ ունենալ Բեռլինում<sup>3</sup>:

<sup>1</sup> Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., էջ 592:

<sup>2</sup> Աճդ, էջ 588-589:

<sup>3</sup> Աճդ:

Հոկտեմբերի 2-ին արտգործնախարարությանը հանձնված մեկ այլ ուղերձում Հ. Օհանջանյանը տեղեկացնում էր, որ իր կառավարությունն իրեն հանձնարարել էր դարձյալ մատնանշել մի գերմանական դիվանագիտական ներկայացուցչի՝ Երևան ուղարկելու հրատապ անհրաժեշտությունը և միաժամանակ գերմանական կառավարությանը խնդրել, որ նա իր ազդեցությունը գործադրեր Ավստրո-Հունգարիայի վրա՝ այնտեղից նույնպես մի ներկայացուցիչ ուղարկելու համար:

Գերմանիայի ներկայացուցչի ուղարկումը հայկական կողմն անհետաձգելի էր համարում, քանի որ հայ փախստականների վերադարձը դեպի իրենց բնակավայրերը միայն նրա եռանդուն աջակցությամբ կարող էր հնարավոր դառնալ: Փախստականների թշվառ դրությունը, նշվում էր նամակում, օրեցօր ավելի էր ծանրանում, մինչդեռ նրանք առանց պաշտպանության երաշխիքի չէին համարձակվի վերադառնալ թուրքերի կողմից գրավված տարածքները: Նկատի առնելով այդ «տխուր» իրավիճակը՝ հայկական կողմը թախանձագին խնդրում էր ժամ առաջ տեղեկացնել ներկայացուցչի անունը և ֆոն Կրեսին հեռագրով հանձնարարել, որ նա, հայկական կառավարության հետ համաձայնեցված կերպով, հայկական կողմի լիազոր անձանց հետ միասին ստեղծեր մի հանձնաժողով և հոգ տաներ փախստականների վերադարձի ու պաշտպանության համար<sup>1</sup>:

Հայկական կողմին հուզող խնդիրների լուծման հարցում Գերմանիայի աջակցությունը ստանալու ակնկալիքները, սակայն, զինադադարին նախորդող շաբաթներին այլևս ժամանակավրեպ էին: Արդեն սեպտեմբերի 29-ին գերմանական հրամանատարության գլխավոր շտաբում կայսր Վիլհելմ II-ի, պետքարտուղար ֆոն Հինթցեի, կանցլեր ֆոն Հերտլինգի, Պաուլ ֆոն Հինդենբուրգի և շտաբի պետ, բանակի «գլխավոր ստրատեգ» Էրիխ Լուդենդորֆի մասնակցությամբ տեղի ունեցած խորհրդակցությունում միանշանակորեն ընդունվել էր պատերազմում Գերմանիայի անխուսափելի պարտության փաստը, և նրանք ուղիներ էին փնտրում «ջրից չոր դուրս գալու» համար: Ըստ այդմ՝ նույն խորհրդակցությունում ընդունվեց որոշում նախկինում ընդդիմադիր կուսակցությունների միջոցով նոր պառլամենտական կառավարության ձևավորման մասին, որը և պետք է ստանձներ խայտառակ պարտու-

<sup>1</sup> Աճդ, էջ 589-590:

թյան պայմաններում զինադադարի կնքման ու հաշտության պայմանագրի ստորագրման ողջ պատասխանատվությունը<sup>1</sup>:

Յուլիտեմբերի 3-ին արքայազն Մաքս ֆոն Բադենի գլխավորությամբ ձևավորված նոր կառավարությունը նույն օրը ևեթ հարկադրված եղավ դիմել ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնին նրա միջնորդությամբ զինադադար կնքելու խնդրանքով: Ինքնին հասկանալի է, որ այս իրավիճակում, որը Գերմանիայում նաև ներքին քաղաքական կյանքի տևական ապակայունացման սկիզբ դարձավ, այնտեղից հայկական խնդրի առնչությամբ միջամտության ակնկալիքները, մեղմ ասած, ավելի նվազ իրատեսական էին, քան նախկինում:

Բնութագրական է, որ Յ. Օհանջանյանը նույնպես հոկտեմբերի 1-ի դրությամբ հասու էր աշխարհամարտի ավարտով պայմանավորված՝ իրադրության նոր շրջադարձերի հնարավորությանը և շրջահայացության ու զգուշության կոչ էր անում Կ. Պոլսի իր գործընկերներին: «Բուլղարան դուրս է գալիս կռվից,– գրում էր նա այդ օրը նրանց ուղարկած իր զեկուցագրում:– Պատերազմի վերջը երևում է: Գերմանիան դառնում է պառլամենտարիզմի երկիր, որպեսզի հեշտությամբ կարողանա բանակցել դեմոկրատիկ պետությունների հետ հաշտության խնդրի շուրջը: Մենք պիտի լինենք շատ շրջահայաց և զգույշ, շատ բան չխոստանալ, մասնավաճ, որ հիմա Տաճկաստանը ինքը կարիք կունենա մեր պրոտեկցիային Եվրոպայի առջև: Դրանով է բացատրվում նրա առաջարկները անտանտի, ֆեդերացիայի և այլ լավ բաների շուրջը»<sup>2</sup>:

Մի քանի օր անց՝ հոկտեմբերի 14-ին Կ. Պոլսի պատվիրակությանն ուղարկած իր զեկուցագրում, ընդգծելով, որ պատմության անիվը սկսել էր «մոզական արագությամբ» պտտվել, և հայերի համար բացվում էին բոլորովին նոր հորիզոններ և հնարավորություններ, Օհանջանյանը գտնում էր, որ հայկական կողմը պետք է շարունակեր ամրապնդվել մի կետում՝ Կովկասում, բայց մնացյալ խնդիրները չպետք է մոռացության մատներ, այլ իր պահանջները և քաղաքականությունը պետք է հարմարեցնեն «մոտիկ ապագայի, միջազգային կոնգրեսում վարելիք քաղաքականության հետ և նրանից սպասելիքների հետ»<sup>3</sup>: Այդ պատճառով

նա կարծում էր, որ հայերը ոչ ոքի հետ չպետք է կապվեին վերջնական խոստումներով, և որ նրանց դրությունն իր «վերջնական կերպարանքը» պիտի ստանար ապագա միջազգային համաժողովում<sup>1</sup>:

Օհանջանյանը վերոնշյալ զեկուցագրում գտնում էր, որ անհրաժեշտ էր դեռ մինչև խաղաղության համաժողովն իրականացնել Արևմտյան Չայաստանի ինքնավարության ստեղծումը: Ընդ որում՝ հայկական կողմի կարևոր խնդիրը, նրա կարծիքով, պետք է լիներ թուրքերին հրաժարեցնել պանթուրանիզմի ծրագրերից: «Ինձ էլ թվում է,– նշում էր նա,– որ Տաճկահայաստանի ավտոնոմիի հարցը կարելի է այժմյանից դնել և պահանջել իրական գրավականներ նրան իրականացնելու համար: Թուրքիան պիտի հասկանա յուր ներկա ծանր դրությունը և գոհ լինի, եթե մեր օգնությամբ կարողացավ իրան փրկել վերջնական բաժան-բաժան լինելուց:

Մեր գլխավոր նպատակը պետք է լինի հիմա ստիպել տաճիկներին հրաժարվել իրենց՝ մեզ համար կորստաբեր երազներից՝ պանտուրանիզմից: Քանի կմնա տաճիկների մեջ այդ պանտուրանիստական ոգին և ձգտումները, մենք միշտ լինելու ենք ենթակա կոտորվելու վտանգին, որովհետև մենք նրանց ճանապարհի վրա ենք գտնվում»<sup>2</sup>: Ուստի՝ Օհանջանյանի կարծիքով, հայկական կողմն այժմ ևեթ իր ամբողջ եռանդն ու ջանքերը պետք է գործադրեր ԱՄՆ-ին և Եվրոպային համոզելու համար, որ հարկավոր էր «ընդմիջտ փշրել տաճիկների պանթուրանական ցնորքները»: Ըստ նրա՝ ներկան էր, որ ընձեռում էր դրա հազվագյուտ հնարավորությունը, և եթե դա անհապաղ չարվեր, ու նպաստավոր առիթը բաց թողնվեր, ապա հայերն այդպիսի առիթ այլևս չէին ունենա, և նրանց ամբողջ ապագան ենթակա կլիներ կոտորածների վտանգին<sup>3</sup>: «Այս տեսակետը և նպատակակետը աչքի առաջ ունենալով,– շարունակում էր գրել նա,– իմ կարծիքով, մենք պիտի այժմյանից դենք Տաճկահայաստանի ավտոնոմիի հարցը և իրակայացնենք: Իրականացնել ենք արդեն Կովկասահայաստանի ավտոնոմիան, նույնիսկ իրական անկախություն (թեև ոչ իրավաբանական), հետո էլ համաշխարհային կոնգրեսում կդնենք նրանց միացնելու հարցը և ստեղծելու

<sup>1</sup> Informationen zur politischen Bildung, Überarbeitete Neuauflage, München, 2003, էջ 3:

<sup>2</sup> Տե՛ս ԳԳ ԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 11, ք. 74:

<sup>3</sup> Տե՛ս անդ, ք. 83:

<sup>1</sup> Անդ:

<sup>2</sup> Անդ:

<sup>3</sup> Անդ:

միացած Հայաստան, ինչպես լեհացիները ստեղծում են միացած Լեհաստան»<sup>1</sup>:

Հոկտեմբերին, երբ Գերմանիայում Մաքսի ղեկավարությամբ նոր պառլամենտական կառավարություն էր ձևավորվել, ՀՀ կառավարությունը Գերմանիայում և Վրաստանում գտնվող իր ներկայացուցիչների միջոցով շարունակում էր ջանքեր գործադրել հայ փախստականների վերադարձի, հայկական նոր կոտորածների սպառնալիքը վերացնելու և հանրապետության առջև ծառայած այլ խնդիրների լուծման հարցում Գերմանիայի աջակցությունը ստանալու, վերջինիս միջոցով այդ նպատակով Թուրքիայի վրա ճնշում գործադրելու համար:

Այդ հարցում փորձում էր իր աջակցությունը բերել նաև գեներալ ֆոն Կրեսը: Հոկտեմբերի 16-ին Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Ջամալյանը Բաքվի հայ բնակչության ջարդերի վերաբերյալ մի բողոքագիր ուղարկեց Թիֆլիսում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչին, իսկ հաջորդ օրը դրա թարգմանված պատճենը հանձնեց ֆոն Կրեսին՝ խնդրելով Գերմանիայի կառավարությանը տեղեկացնել նամակի և Բաքվի գրավման ժամանակ տեղի ունեցած անլուր դաժանությունների առնչությամբ հայկական կառավարության բողոքների մասին: Նույն օրը ևեթ հոկտեմբերի 17-ին, բողոքագիրը ֆոն Կրեսի կողմից ուղարկվեց նաև կանցլեր Մաքսին: «Որպես Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ, - նշում էր Ջամալյանն այդ նամակում, - պատիվ ունեմ հայտնելու Վրաստանի կառավարությանն առընթեր Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչին, որ, Հայաստանի Հանրապետության կառավարության հավաստի տեղեկությունների համաձայն, Բաքվի գրավմանը հաջորդել է մուսուլմանական ամբոխի կողմից հայ խաղաղ բնակչության դաժան կոտորածը՝ առանց տարիքի և սեռի խտրության: Անխղճորեն թալանվել են հայ բնակիչների բնակարանները: Ձոռների թիվը հասնում է 25-30 հազարի: Երեք օր շարունակ դաժան բարբարոսությունները չեն դադարել, և միայն դրանից հետո իշխանությունները միջոցներ ձեռնարկեցին, ու տեղում բռնված մի քանի ավազակներ պատժվեցին:

Ադրբեջանի կառավարության ձևավորման ընթացքում ձերբակալվել են բազմաթիվ հայեր, հատկապես՝ մտավորականներ: Ինչ վերաբերում է ունևոր հայերին, դրամաշորթները նրանց ստիպել են մեծ գումարներ

վճարել՝ սպառնալով մատնել իշխանություններին: Լքված, խնամքից զուրկ վիրավորները, փողոցներում մնացած երեխաները լրացնում էին թաղաքի դաժան պատկերը: Հաշվի առնելով վերոնշյալը՝ խնդրում են ձեզ Ադրբեջանի կառավարությանը հայտնել Հայաստանի Հանրապետության բողոքը հայ խաղաղ ազգաբնակչության կոտորածի դեմ համապատասխան միջոցառումներ չձեռնարկելու համար: Հայաստանի Հանրապետության կառավարությունը նաև պնդում է, որ մեղավորները պետք է խստորեն պատժվեն, և պետք է արդյունավետ միջոցներ ձեռնարկվեն ողջ մնացած դժբախտ բնակչության դեմ իրականացվող բռնություններին վերջ դնելու համար»<sup>1</sup>:

Հոկտեմբերի 19-ին Ա. Ջամալյանը դարձյալ մի բողոքագիր ներկայացրեց ֆոն Կրեսին, որտեղ, ողջունելով Բաքվի հայ բնակչության կոտորածը կասեցնելու համար նրա գործադրած ջանքերը, նրան խնդրում էր դարձյալ գերմանական կառավարությանը տեղեկացնել այնտեղ տիրող իրադրության մասին: Նա, մասնավորապես, նշում էր, որ Բաքվի հայ բնակչությունը շարունակում էր մնալ նույն «մղձավանջի» մեջ: Այնտեղ հայերի նկատմամբ անմարդկային արարքները շարունակվում էին, և մշտապես իշխում էր սարսափի մթնոլորտը:

Ընդգծելով, որ բոլոր ազդեցիկ հայ մտավորականները ձերբակալված էին և աներևակայելի խոշտանգումների էին ենթարկվում, Ջամալյանը թվարկում էր մի շարք մտավորականների անուններ, որոնք այդ առնչությամբ հաղորդվել էին իրեն<sup>2</sup>: Նա միաժամանակ գեներալին հավաստիացնում էր, որ բանտարկվածների մեծագույն մասը քաղաքականության հետ ոչ մի կապ չուներ: Նրանք, ովքեր կազմակերպել էին Բաքվի հայերի պաշտպանությունը, ժամանակին հեռացել էին քաղաքից, և մտավորականների ձերբակալությունը նա համարում էր «անիմաստ ու դաժան վրեժխնդրություն»:

<sup>1</sup> Deutschland und Armenien 1914-1918..., էջ 436-438:

<sup>2</sup> Խոսքը վերաբերում էր Տիգրան Սահակյանին (բժշկակագիտության թեկնածու), Ջուլնուր Հարությունյանցին (նախկին քաղաքապետ), Արտյոմ Եղիազարյանին, Կոնստանդին Քալանթարյանին (ճարտարագետ), Սամսոն Ամիրովին, Սերժ Մելիքովին, Գևորգ Մելիքովին, Պյոտր Ջուրաբովին, Ստեփան Տիգրանյանին (փաստաբան), Միքայել Աթաբեկյանին (Կովկասի բանկի կառավարիչ), Կոնստանտին Ղիշանյանին (ճարտարագետ), Մանանդյանին (փաստաբան), Ղուբլարյանին (առևտրային բանկի կառավարիչ) և Գրիգոր Օհանջանյանին: Աճ, էջ 439:

Միաժամանակ հայտնելով, որ, ըստ իրեն հասած լուրերի, Բաքվի իշխանությունները մտադիր էին հայերին հավաքել համակենտրոնացման ճամբարներում, որտեղ նրանք մահվան բաժին էին դառնալու, Ջամալյանը գեներալին թախանձագին խնդրում էր «հայ ժողովրդին պաշտպանել նրանց կյանքի և ունեցվածքի հանդեպ կատարվող ոտնձգություններից»:

Հատկանշական է, որ ֆոն Կրեսը, գիտակցելով հանդերձ, որ առանց Բեռլինի և Բանակի գլխավոր հրամանատարության գործուն օջակցության թուրքերի վրա էական ազդեցություն գործել չէր կարող, սեփական նախաձեռնությամբ Բաքու է ուղարկում մի գերմանական պատվիրակություն ավագ լեյտենանտ բարոն ֆոն դեր Գուլթի դեկավարությամբ նրանց հանձնարարելով անել հնարավորը հայերին օգնելու համար: Իսկ եթե դա հնարավոր չլիներ, ապա գեներալը հույս էր փայփայում, որ պատվիրակությունն իր ներկայությամբ գոնե բարոյական ճնշում կգործադրեր թուրքական զորքերի հրամանատարության վրա՝ նրան զերծ պահելով հետագա կամայականություններից<sup>1</sup>: Բացի այդ՝ ֆոն Կրեսը հոկտեմբերի 21-ին կանցլերին է ուղարկում նաև Ջամալյանի վերոնշյալ հոկտեմբերի 19-ի բողոքագիրը<sup>2</sup>:

Նրա ձեռնարկումները, սակայն, էական արդյունք չտվեցին<sup>3</sup>, և դա փաստում էր նաև Գ. Օհանջանյանի կողմից հոկտեմբերի 30-ին Գերմանիայի արտգործնախարարությանը ներկայացված ուղերձը: Վկայակոչելով հայրենիքից ստացված տեղեկությունները՝ նա նախ անդրադառնում էր Բաքվի զրավումից հետո այնտեղ հայ բնակչության դեմ սանձագերծված հալածանքներին ու կոտորածներին<sup>4</sup>, որից հետո բառացի

<sup>1</sup> Անդ, էջ 440:

<sup>2</sup> Անդ, էջ 438-440:

<sup>3</sup> Տե՛ս ինտերնետային ցանցում հրապարակված՝ ֆոն դեր Գուլթի տեղեկագրերը և Բաքվի հայերի կոտորածին վերաբերող մյուս վավերագրերը, [http://iraber.asi-oa.am/3566/1/1990-6\(77\).pdf](http://iraber.asi-oa.am/3566/1/1990-6(77).pdf):

<sup>4</sup> «Հազարավոր խաղաղ հայ բնակիչներ, այդ թվում՝ անվանի հայ մտավորականներ, կանայք, երեխաներ և ծերունիներ սպանողի ենթարկվեցին, – նշված էր տեղեկագրում: – Հայերի բնակարանները, չնչին բացառություններով, կողոպտվեցին, բանտերը լցվեցին հայերով, որտեղ նրանք դեռ այժմ էլ սարսափելի տառապանքների են մատնված: Ազերիներն ու թաթարները այնպես են, որ իրենց թույլատրվել է երեք օր շարունակ սպանել ու թալանել: Եվ նրանք դա արեցին հիմնավորապես ու անխնայ կերպով»: Տե՛ս Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., էջ 593-594:

հղում էր կատարում Հալիլ փաշային կցված մի գերմանացի սպայի՝ Գ. Թիֆլիսի ներկայացուցչին հաղորդած տեղեկություններից: «Բարբարոսությունը, որ կատարվեց Բաքվում, հնարավոր չէ նկարագրել, – նշել էր սպան: – Իմ ուժերից վեր է, որպես քրիստոնյա և եվրոպացի, հանգիստ կերպով դիտել նման ոճրագործությունները: Ես հենց այսօր երեկոյան Հալիլ փաշային կներկայացնեմ իմ հրաժարականը: Թե որքան հայեր են սպանվել, ես ճշգրիտ չեմ կարող ասել: Միգուցե նրանց թիվը շատ մեծ չէ, բայց սպանող կատարվեց բարբարոսական կերպով, և ամբողջ քաղաքը թալանվեց: Ես մի փողոցում տեսա 20-ից 35 շղթայված հայերի և նրանց կողքին մի պահակի: Նրանց ճակատագիրը պարզ էր ինձ, և ինձնից մեծ ջանքեր պահանջվեցին նրանց փրկելու համար: Բայց քանի՜ այդպիսի դեպքերում են մարդիկ զոհված եղել փրկարար օգնությունից: Երբ մենք փողոցներով քայլում էինք, տների միջից շարունակ օգնության ծիչեր էինք լսում: Մենք մի քանի անգամ կարողացանք օգնության հասնել, բայց որքան դեպքերում էլ ոչ...: Մենք միայն չորս գերմանացիներ էինք և չէինք կարող մեծ օգնություն ցուցաբերել, քանի որ, ի վերջո, մեր հանդեպ նույնպես (մահմեդականների – Ա. Գ.) վարքագիծը ապշեցուցիչ էր: Հալիլ փաշան ուղղակիորեն մեղավոր չէ այդ ոճրագործությունների համար: Ամբողջ պատասխանատվությունն ընկնում է Նուրի փաշայի և նրա շտաբի վրա: Եթե նրանք ուզեցնային, կարող էին արգելել կոտորածներն ու կողոպուտը: ... Ես այն տպավորությունն ունեմ, որ նախճիրը նախապես պլանավորված էր: Դա էր պատճառը, որ թուրքերն ամեն ինչ արեցին՝ արշավին (նկատի ունի Բաքվի վրա հարձակումը – Ա. Գ.) գերմանական զորամասերի մասնակցությունը խոչընդոտելու համար»<sup>1</sup>:

Գ. Օհանջանյանը, ուղերձին կից ներկայացնելով Նուխիի ու Արեշի (Ելիզավետպոլ) հայ հոգևորականների տեղեկություններն, ինչպես և Բաքվում կատարված դեպքերին վերաբերող քաղվածքներ Թիֆլիսի «Ковказское Слово» թերթից, միաժամանակ ընդգծում էր, որ Բաքվի զրավումից հետո հայերի կոտորածներ են տեղի ունեցել նաև Նուխիի և Արեշի շրջաններում: Ըստ նրա հաղորդման՝ հայ քահանաներն ու երևելիները սպանվել էին, կանայք և աղջիկները անարգվել, իսկ երեխաներին, մի տեղ հավաքելով, մահակներով էին սպանել: Մահմեդական

<sup>1</sup> Անդ, էջ 594:

հոգևորականները մինչև անգամ այն հայերին, որոնք իրենց կյանքը փրկելու խնդրանքով նրանց դիմել էին և համաձայնել իսլամն ընդունել, պատասխանել էին, թե իրենք «Նուխիի և Արեշի շրջաններում հայերին նույնիսկ մարդկանց հիշողությունից առհասարակ ջնջելու» էին:

Այնուհետև Օհանջանյանն արտագործնախարարությանը ներկայացնում էր 33 թիֆլիսի ներկայացուցչից իր ստացած տեղեկություններն այն մասին, որ թուրքերը մտադրվել էին Ադրբեջանից վերադառնալու ժամանակ այնտեղ թողնել թուրքական հինգերորդ և տասնհինգերորդ դիվիզիաները, որպեսզի նրանք, իբրև թաթարական հանրապետության զինվորներ, թաթարական համազգեստով մասնակցեին հայերի, մասնավորապես Ղարաբաղի հայ բնակչության թալանին ու բնաջնջմանը: «Արդեն այժմ էլ Ղարաբաղից եկող լուրերը խիստ անհանգստացուցիչ են, — նշում էր Օհանջանյանը: — Թուրքական զորամասերը Ասկերանի վրայով առաջ են շարժվել և ռմբակոծում են հայկական գյուղերը: Միանգամայն պարզ է, որ թուրքերն այդ տարածքում նույնպես նախատեսել են հայ բնակչությանը բնաջնջել: Իմ կառավարությունն ինձ հանձնարարել է բողոքել թուրքական զորքերի և թաթարների այդ նոր անմարդկային գործողությունների դեմ»<sup>1</sup>:

Գեներալ ֆոն Կրեսն այլ բան չէր կարող անել, քան հոկտեմբերի 30-ին համահավաք կերպով դարձյալ կանցլերին ուղարկել Բաքվի հայերի կոտորածի վերաբերյալ իր մոտ գտնվող նյութերը, ինչպես և այդ առնչությամբ իր և թուրքական հրամանատարների, դիվանագետների, նաև ադրբեջական կառավարության միջև տեղի ունեցած գրագրությունը՝ դա բացատրելով այդ փաստաթղթերի արխիվավորման անհրաժեշտությամբ: Նա միաժամանակ արձանագրում էր, որ այդ կոտորածները կանխելու համար իր կատարած առաջարկները չեն իրագործվել սոսկ թուրքերի մերժողական կեցվածքի պատճառով, և որ ինքը դրանց իրագործումը հարկադրելու որևէ լծակ չի ունեցել<sup>2</sup>:

Ուշագրավ է, որ չնայած հոկտեմբերի 30-ին Թուրքիան հարկադրված եղավ զինադադար կնքել, և նոյեմբերին թուրքական զորքերը սկսեցին հեռանալ Անդրկովկասում իրենց գրաված տարածքներից, բայց Ախալքալաքի շրջանի փախստական դարձած հայության դրու-

թյունը շարունակում էր մնալ խիստ օրհասական. և դա այն պատճառով, որ այժմ նաև վրացական իշխանություններն էին նրանց արգելում վերադառնալ իրենց հայրենի բնակավայրերը: Դա էր վկայում Ջամալյանի կողմից նոյեմբերին Գերմանիայի արտգործնախարարության միջոցով Գերմանա-հայկական ընկերության փոխնախագահ Ջեյնս Գրինֆիլդին ուղարկված հեռագիրը, որը վերջինս նոյեմբերի 27-ին առաքում է Գ. Օհանջանյանին: «Ջամալյանը ... հեռագրում է, որ Ախալքալաքի շրջանի ամբողջ բնակչությունը անօթևան և առանց որևէ սնունդի Բակուրիանիի լեռներում մատնված է ոչնչացման, — գրում էր Գրինֆիլդը Օհանջանյանին: — Տեղական իշխանությունները նրանց արգելում են իրենց վայրը փոխել: Հայկական կառավարության բոլոր ջանքերն առ այն, որ փախստականներն իրավունք ստանան վերադառնալ թուրքերի կողմից գրավված իրենց հայրենի տարածքները, մնում են անարդյունք: Հիվանդությունները, սովն ու սարսափելի ցուրտը օրական հարյուրավոր զոհեր են խլում: Եթե փախստականներին շատ շուտով հայրենիք վերադառնալու հնարավորություն չտրվի, նրանք բոլորը կմեռնեն: Ջամալյանը խնդրում է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերը չարիքը կանխելու համար և ամենուր, որտեղ Դուք հարկ կհամարեք, ռադիոհեռագրեր ուղարկել: Նա անհամբերությամբ սպասում է պատասխանի: Ես Ջամալյանին հեռագրեցի, որ հեռագիրը փոխանցել են Ձեզ և խնդրեցի Հայաստանի քաղաքական իրադրության վերաբերյալ մանրամասներ հաղորդել ու ամենաարագ կերպով առաքել խաղաղության վեհաժողովի մեր պատվիրակությանը»<sup>1</sup>:

Այն, թե, Ախալքալաքում իրադրությունն այնուհետև ինչպես զարգացավ, որոշակիորեն հայտնի է: Ինչ վերաբերում է Գերմանիային, ապա

<sup>1</sup> Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., էջ 596: Ի դեպ, ֆոն Կրեսը թիֆլիսից հեռանալուց առաջ, ինչպես 33 արտագործնախարարին տեղեկացնում էր Ա. Ջամալյանն իր՝ հոկտեմբերի 26-ի հեռագրում, ցանկություն էր հայտնել իրենց մոտ գտնվող դեղորայքի և մթերքի մի մասը, որ իրենք չէին կարող իրենց հետ տանել. նվիրել հայ գաղթականությանը, և, բացի այդ, հայ գաղթականների կարիքների բավարարմանը ծառայեցնելու նպատակով հայկական կողմին հատկացնել նաև իրենց դրամական միջոցների մի մասը: Տե՛ս 33 ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 91, թ. 9: 33 արտագործնախարարն իր նոյեմբերի 4-ի պատասխան հեռագրում Ջամալյանին հանձնարարում էր ընդառաջել գեներալի առաջարկին: Տե՛ս անդ, թ. 11:

<sup>1</sup> Անդ, էջ 594-595:

<sup>2</sup> Deutschland und Armenien 1914-1918..., էջ 440:

Մաքսի գլխավորած կառավարությունը հոկտեմբերի վերջին և նոյեմբերի սկզբին Անդրկովկասում այլևս որևէ դերակատարման հավակնություն չէր կարող ունենալ և զբաղված էր երկրի ներքին ու արտաքին քաղաքական ճգնաժամի հաղթահարման խնդիրներով: Միաժամանակ գերմանական կառավարությունը հույս էր տածում, թե բեռլինյան վերոնշյալ բանակցություններով և դրանց արդյունքում կնքված համաձայնագրով իր համար հայկական խնդրի առնչությամբ համեմատաբար նպաստավոր իրավիճակ էր ստեղծել մոտավուտ խաղաղության համաժողովում:

Նշված համաձայնագիրը Գերմանիան միաժամանակ համարում էր հայկական խնդրի առնչությամբ թուրքիայի հետ բանակցություններում իր կարևորագույն ձեռքբերումը, ինչը որոշակիորեն համապատասխանում էր իրականությանը: Այդ առումով բնութագրական է գերմանական ԱԳՆ-ի պետքարտուղարի տեղակալ Լանգվերթի կողմից հոկտեմբերի 29-ին ժնևում գտնվող գերմանական ներկայացուցչությանն ուղարկված հետևյալ պարզաբանումը, որը ներկայացնում ենք ամբողջականորեն: «Արդեն հունիսի 4-ին Թուրքիան Բաթումում այն ժամանակ նոր ստեղծված հայկական հանրապետության հետ խաղաղության պայմանագիր է կնքել, որի որոշումները հայերի համար տարածքային առումով շատ աննպաստ էին,– նշում էր պետքարտուղարի տեղակալը:– Թուրքական սահմանը Բրեստ-Լիտովսկի խաղաղության պայմանագրում գծված սահմանից շատ ավելի էր առաջ բերվել: Հայերին մնացող անբերրի լեռնային տարածքը չէր բավականացնում, տեղացի բնակիչներից զատ, Թուրքահայաստանից և թուրքերի գրաված կովկասյան տարածքներից հեռացած բազմաթիվ փախստականներին ապաստան և սնունդ տալու համար: Մենք Բաթումի պայմանագիրը չենք ճանաչել և անմիջապես եռանդուն քայլեր ենք ձեռնարկել՝ թուրքերին Բրեստի խաղաղության պայմանագրի որոշումների պահպանմանը դրդելու համար:

Թուրքական կառավարությունը երկար ժամանակ խուլ էր ձևանում մեր բոլոր առարկությունների հանդեպ: Սկզբնական շրջանում հաջողություն չունեցավ նաև հայ փախստականներին գոնե բերքի հավաքման համար իրենց լքված բնակավայրերը վերադառնալու հնարավորություն տալու՝ մեր փորձը: Միայն սեպտեմբերին Մեծ վեզիրի հետ վարված բանակցություններում մեզ հաջողվեց նրան դրդել, որ ընդա-

ռաջի հայերի ցանկություններին, և ստանալ նրա խոստումը Բաթումի պայմանագրի տարածքային որոշումների վերանայման վերաբերյալ:

Հունիսի սկզբից Բեռլինում գտնվող հայ պատվիրակները գերմանաթուրքական բանակցություններին չեն մասնակցել: Թալեաթ փաշան, սակայն, նրանց հետ զրույցում համապատասխան կերպով տեղեկացրել է նրանց: Այնուհետև, Կոստանդնուպոլիս վերադառնալուց անմիջապես հետո նա մեզ տված իր խոստումը կատարել է և հայկական հանրապետության հետ համաձայնագիր է կնքել հայկական տարածքը մինչև Բրեստ-Լիտովսկի պայմանագրով գծված սահմանը ազատելու և նրան տալու վերաբերյալ»<sup>1</sup>:

Ինքնին հասկանալի է, որ պատերազմի այդ ավարտափուլում ժնև ուղարկված՝ հիշյալ տեղեկությունն ուներ որոշակի քաղաքական նպատակադրում: Այն հանգամանքը, սակայն, որ Գերմանիան սկզբունքորեն դեմ է եղել Թուրքիայի կողմից Բրեստի պայմանագրով նախատեսված սահմանների խախտմանը, կասկածի տեղիք չի կարող տալ: Այլ խնդիր է, անշուշտ, թե նա ինչ չափով էր կարևորում այդ հարցի լուծումը և ինչ չափով օգտագործեց Թուրքիայի վրա իր ազդեցության լծակներն՝ այդ լուծումն իրականության դարձնելու համար:

Պատերազմի վերջին օրերին գերմանական կառավարությունը փորձում էր նաև իրեն սահմանազատել հայ ժողովրդի դեմ թուրքական ոճրագործությունների համապատասխանատվությունից: Այդ հանգամանքը, սակայն, մինչև իսկ նվաստացուցիչ զինադադարի կնքման և դրա հետ կապված՝ վտանգների հեռանկարով հանդերձ, Մաքսի կառավարությանը չխանգարեց Գերմանիայում ապաստանի թույլտվություն հատկացնել ոճրագործներ Թալեաթին և Էնվերին: Հոկտեմբերի 30-ի դրությամբ գերմանական արտագործնախարարությունն արդեն ապաստան տրամադրելու խնդրանք էր ստացել Թալեաթ և Էնվեր փաշաներից<sup>2</sup>, և նույն օրը ևեթ արտագործնախարար դր. Ջուլֆը Կ. Պոլսի գերմանական դեսպանին հրահանգում էր դրական ընթացք տալ նրանց դիմումին:

<sup>1</sup> Deutschland und Armenien 1914-1918..., էջ 451-452: Այն մասին, թե պետքարտուղարի տեղակալը որտեղից է բաղել իր վերջին տեղեկությունը, ցավոք, որևէ հաղորդում չի կատարվում:

<sup>2</sup> Անկասկած՝ նման դիմումներով են հանդես եկել նաև այլ երիտթուրք պարագլուխներ:

Քանի որ այդ փաստաթղթով որոշակիորեն պարզ է դառնում հարցի վերաբերյալ գերմանական կառավարության պաշտոնական դիրքորոշումը, ստորև ներկայացնում ենք դրա հիմնական բովանդակությունը: «Թալեաթ փաշայի և Էնվեր փաշայի համար, որոնք մեզ հետ դաշինքը կնքել են և հավատարիմ կերպով մեր կողքին են եղել, մեր երկիրը բաց է, – նշում էր արտգործնախարարը: – Խնդրում են նրանց ամեն կերպ օգնել, եթե նրանք կարծում են, որ ստիպված են թուրքիայից փախչել քաղաքական հետապնդումների պատճառով: ...Մյուս նախկին իշխանավորների դեպքում խնդիրն այլ է: Նրանց, ովքեր փախուստի միջոցով ուզում են խուսափել հայերի հալածանքների պատասխանատվությունից, մեր կողմից ապաստան չի կարող տրամադրվել: Մենք ամենածանր շրջանում մեր հնարավորության սահմաններում արել ենք ամեն բան՝ սարսափները կանխելու համար և չենք կարող հետին թվով մեզ մեղսակից դարձնել՝ ոճրագործներին պաշտպանելով պատժից: Նմանապես և մենք հիմք չունենք հոգ տանելու նրանց համար, ովքեր իրենց պաշտոնները չարաշահել են՝ ժողովրդին անխնա կողոպտելով, և հիմա պետք է իրենց վաստակած պատիժը կրեն»<sup>1</sup>:

Հայ ժողովրդի այդ երկու դահիճներին Գերմանիայում ապաստան տվող կառավարության կողմից մյուս հանցագործներին ապաստանի մերժումը, բնականաբար, չէր կարող այն բարոյական շարժառիթով թելադրված լինել, որի պատրանքը միտում է ստեղծել այս հանձնարարականը: Այդ մերժման բուն պատճառը, ինչպես վկայում էր նաև նախարարը, Գերմանիային ուղղված մեղսակցության մեղադրանքներից խուսափումն էր, իսկ այն պնդումը, թե Գերմանիան հնարավոր ամեն բան արել է հայերի բնաջնջումը կանխելու կամ արգելելու համար, իհարկե, չէր

<sup>1</sup> Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., էջ 592-593: Ուշագրավ է, որ արդեն հոկտեմբերի 30-ի դրությամբ թուրքական նոր կառավարության ղեկավար Ահմեդ Իզզեթ փաշան գերմանական դեսպանից պաշտոնական պարզաբանում էր պահանջել Թալեաթին և Էնվերին ապաստան տալու՝ Գերմանիայի մտադրության առնչությամբ, և Ջոլֆն իր այս նույն հանձնարարականում այդ մասին դեսպանին հետևյալն էր հրահանգում. «Իզզեթ փաշայի կամեցած պարզաբանումը մենք չենք կարող տալ: Եթե նա նորից կվերադառնա իր հարցին, Դուք պետք է նրան ասեք, որ մենք (հանցագործների – Ա. Յ.) հանձնման պարագայում առաջնորդվում ենք երկու երկրների միջև 1917 թ. հունվարի 11-ին հաստատված՝ Հանձնման պայմանագրով: Անդ:

համապատասխանում իրականությանը: Պաշտոնական Գերմանիան պատերազմի ողջ ժամանակամիջոցում երբևէ չփորձեց իր թուրք դաշնակցի հետ, ի նպաստ բնաջնջվող հայերի, խոսել հարկադրանքի լեզվով, ինչը նա հաջողությամբ կարող էր անել, և դա փաստարկվում է ոչ միայն խնդրո առարկա իրադարձությունների համալիր դիտարկման միջոցով, այլև գերմանացի այն բարձրաստիճան դիվանագետների և զինվորականների վկայություններով, որոնք, բնաջնջվող ժողովրդի հանդեպ անտարբեր չլինելով, նաև իրատես էին և փորձում էին այդ իրատեսությունը ներշնչել իրենց կառավարությանը:

## ՎԵՐՋԱԲԱՆ

Թուրքական զորքերը 1918 թ. գարնանը Բրեստի պայմանագրով Օսմանյան պետությանը տրված տարածքների գրավումից հետո շարունակեցին ներխուժումը դեպի Կովկաս, ինչը, չնայած թուրքական կառավարության կողմից հայերի հանդեպ խաղաղասիրական քաղաքականության դեռ Բրեստի պայմանագրի կնքումից առաջ կատարած հավաստիացումներին, ուղեկցվում էր նոր հայկական կոտորածներով: Թեպետ գերմանական կառավարությունը բնավ չահագրգռված չէր Թուրքիայի կողմից զավթված տարածքների հայաթափումով, այնուհանդերձ շարունակում էր դրան հակազդել ամուլ նախագուշացումների և առարկությունների միջոցով, որոնց անարդյունավետությունը Գերմանիայի համար նախկինում ևս լիովին փաստարկված էր:

Ամռան սկզբից, երբ Թուրքիան անդրկովկասյան երեք հանրապետությունների հետ Բաթումում պայմանագրեր ստորագրեց և Բաքվի գրավման ու Կովկասում գերիշխանության հասնելու հավակնություններ էր հանդես բերում, երկու դաշնակիցների հարաբերություններում ի հայտ եկան որոշակի լարվածություն և հակասություններ, քանի որ թուրքական նկրտումներն էպես վտանգում էին Գերմանիայի տնտեսաքաղաքական շահերը Կովկասում: Դա էր այն գլխավոր դրդապատճառը, որ Գերմանիային հարկադրում էր շարունակ հանդես գալ թուրքական զորքերի ետքաշման և Բրեստի պայմանագրի վերահաստատման պահանջով. հանգամանք, որ լիովին համապատասխանում էր խիստ ծանր դրության մեջ Գերմանիայի և Ավստրո-Յունգարիայի աջակցությանն ապավինած Հայաստանի Հանրապետության և, առհասարակ, համայն հայության շահերին:

Արդեն հունիսից Գերմանիան զգալիորեն կարծրացրեց Թուրքիայի հանդեպ այդ հարցում իր որդեգրած դիրքորոշումը, որին թուրքական կառավարությունը շարունակում էր հակադարձել համապատասխան խոստումների շրայլման և դրանք տարբեր պատրվակներով չկատարելու գործելակերպով: Որոշ ժամանակ անց, սակայն, երբ Գերմանիան պատրաստակամություն ցուցաբերեց Կովկասին վերաբերող խնդիրներում համագործակցել Խորհրդային Ռուսաստանի հետ, Թուրքիան այլևս չէր կարող խուսափել Բրեստի պայմանագրի ճանաչումից: Դա, ի-

հարկե, ամենևին էլ բեկում չէր արձանագրում թուրքական կառավարության հայաջինջ քաղաքականության հարցում, որը հետևողականորեն շարունակվեց մինչև իսկ այն բանից հետո, երբ թուրքական կառավարությունը բեռլինյան բանակցությունների արդյունքում հանձն առավ ծանաչել Բրեստի պայմանագրով ամրագրված սահմանները: Դրա փաստացի վկայությունն էին Բաքվում 1918 թ. սեպտեմբերին տեղի ունեցած հայկական կոտորածները, որոնք մեծագրությունում լուսաբանվել են գերմանական սկզբնաղբյուրների տեղեկությունների հիման վրա:

Հատկանշական է, որ Ռուսաստանը, դառնալով Բրեստի պայմանագրով հաստատված սահմանների վերականգնման երաշխավոր, սկզբունքորեն դեմ էր անդրկովկասյան հանրապետությունների անկախության ճանաչմանը, ինչը ՀՀ կառավարության և նրա Բեռլինի պատվիրակության համար ստեղծել էր խիստ բարդ իրավիճակ: Այդ պայմաններում Թուրքիայի, Գերմանիայի և Ռուսաստանի հետ Հայաստանի Հանրապետության երկկողմ փոխհարաբերությունների լուսաբանումը որոշ ուշագրավ եզրահանգումների հնարավորություն է ընձեռում, որոնք նպաստում են նաև հաջորդ տարիներին ՀՀ արտաքին քաղաքական ռազմավարությունն առավել համակողմանի ընկալելու համար:

Մեծագրությունում քննական լուսաբանման է ենթարկվել նաև գերմանական առանձին քաղաքական և ռազմական բարձրաստիճան գործիչների որդեգրած դիրքորոշումը հայությանը հուզող և նրա համար կենսական նշանակություն ունեցող խնդիրների հանդեպ: Ներկայացվում են այն ներհակությունները, զանազանությունն ու առանձնահատկությունները, որոնցով բնութագրվում էր նրանց գործելակերպը:

Բեռլինում և Կ. Պոլսում գտնվող ՀՀ պատվիրակությունների գործունեության պարզաբանումը նույնպես կատարվում է այն բազմազան առնչությունների համատեքստում, որոնցից այն որոշակիորեն ներգործվել է: Իրադարձություններին հետադարձ հայացք նետելիս, թերևս, պարզ է դառնում, որ եթե ՀՀ կառավարությունը հանրապետության և հայ ժողովրդի համար հույժ կարևոր, կենսական նշանակություն ունեցող խնդիրների լուծման, թուրքական կառավարության հայաջինջ քաղաքականությանը դիմակայելու հարցում ապավինում էր Գերմանիայի աջակցությանը, ապա Բեռլինի հայկական պատվիրակությունը, Կ. Պոլսի պատվիրակության հետ սերտորեն համագործակցելով հանդերձ, առնվազն Կ. Պոլսում նախատեսված բանակցագործընթացի ծախսողու-

մից և այն Բեռլին տեղափոխելուց հետո չպետք է նրանից որևէ կերպ կախման մեջ դրվեր, քանի որ վերջինիս կաշկանդվածությունը առանձին դեպքերում կաշկանդում էր նաև նրա գործունեությունը:

Ինչևէ, չնայած թուրքական կառավարությունն, ի վերջո, հարկադրված եղավ ընդունել Բրեստի պայմանագրի վերահաստատման Գերմանիայի պահանջը, այնուհանդերձ պատերազմի ավարտափուլում դա այլևս ժամանակավրեպ էր, իսկ առջևում սպասվում էին այլ մարտահրավերներ, որոնց դիմակայումը պետք է դառնար Հայաստանի առաջին հանրապետության նոր գերխնդիրը:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մուտք .....3

### ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Բրեստի և Բաթումի պայմանագրերի միջև ընկած ժամանակահատվածում .....6

### ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Գերմանա-թուրքական փոխհարաբերությունների նոր զարգացումների համատեքստում .....39

### ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Հայկական խնդիրը Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ 1918 թ. աշնանը ..... 124

Վերջաբան..... 188

## ԱՇՈՏ ՀԱՅՐՈՒՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ  
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ  
1918 ԹՎԱԿԱՆԻՆ

Ստորագրված է տպագրության 01.04.2013: Տառատեսակը  
Arial Armenian: Չափսը՝ 60x84 1/16: Թուղթը՝ օֆսեթ 70գ.:  
Տպագրությունը՝ օֆսեթ: 12 տպ. մամուլ:  
Տպաքանակը՝ 300 օրինակ:

**«ԳԵՎՈՐԳ - ՀՐԱՅՐ» ՍՊԸ**



Հրատարակչություն  
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:  
Ֆեռ.՝ 52.79.74, 52.79.47  
Էլ. փոստ [lusakn@rambler.ru](mailto:lusakn@rambler.ru)